Ոգի-Նաիրի
Vogi-Nairi

Immanuel MIFSUD

JUTTA HEIM

Traduzzjoni għall-Armen minn
Astghik Atabekyan

Immanuel MIFSUD

JUTTA HEIM

Translation into Armenian by
Astghik Atabekyan

Vogi-Nairi, Stepanakert

Իմանուել ՄԻՖՍՈՒԴ

ՅՈՒՏԱ ՀԱՅՄ

Անգլերենից թարգմանությունը՝
Աստղիկ ԱԹԱԲԵԿՅԱՆԻ

Ստեփանակերտ 2021

ՀՏԴ 82-31 Միֆսուդ
ԳՄԴ 84(4Մ)-44
Մ 788

«Գեղarm» հանդեսի մատենաշար

Իմանուել ՄԻՖՍՈՒԴ
Մ 788 **Յուտա Հայմ / Իմանուել Միֆսուդ**
Թարգմ. անգլերենից՝ Աստղիկ Աթաբեկյան:
Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հրատ., 2021, 144 էջ:

Իմանուել Միֆսուդը Մալթայի ժամանակակից նշանավոր գրողներից է, որի ստեղծագործությունները լայն ճանաչում են գտել հայրենիքում, եւ շարունակաբար թարգմանվելով՝ դրանք հայտնի են դառնում նաեւ այլ երկրներում: Հայ ընթերցողին ներկայացվող նրա «Յուտա Հայմ» վեպը/2015/, կարելի է ասել՝ իդեալական սիրո պատմություն է իր հետեւանքներով, երբ ծերացող մարդը հոգեւոր հենարան է փնտրում իրենից խուսանավող իրականության մեջ:

Ի.Միֆսուդը մալթացի առաջին գրողն է, ով արժանացել է Եվրոպական Միության մրցանակին գրականության ասպարեզում:

Translation was funded by the National Book Council's
Malta Book Fund 2021

Թարգմանությունը ֆինանսավորել է
Մալթայի Գրքի ազգային խորհուրդը՝
Գրքի հիմնադրամի միջոցով /2021/

Գիրքն առաջին անգամ մալթերեն հրատարակել է
Մալթայի գրքի ակումբը, 2014թ.:

ISBN 978-9939-1-1405-7

ՀՏԴ 82-31 Միֆսուդ
ԳՄԴ 84(4Մ)-44

© Immanuel Mifsud
© «Ոգի-Նաիրի» (թարգմանության համար), 2021

Հայրենակից թեբեացի՛ք, տեսե՛ք, ահա՛, Էդիպուսին,
Որը լուծեց հանելուկը հռչակավոր: Այր էր հզոր,
Նրա բախտին նախանձով էր նայում ամեն քաղաքացի:
Սակայն ահեղ դժբախտության ի՜նչ հորձանքի մեջ հայտնվեց:
Ուստի մարդիկ մահկանացու, մինչ սպասում են վերջին օրվան,
Պիտի տեսնեն, որ բարեբախտ մեկը չկա, նախքան հատի
Նա սահմանը իր գոյության եւ անհաղորդ մնա վշտին[1]:

Ավարտ: Կարճատեւ լռություն: Հետո՝ խլացնող ծափահարություններ, որոնք էլ ավելի են ուժգնանում, երբ հայտնվում է արքան ու քայլում դեպի կենտրոն, Յոկաստայի հետ ձեռք ձեռքի տված մոտենում է բեմեզրին. դեմքը քրտինքի մեջ կորած է, աչքերը փայլում են, երբ նայում է հանդիսատեսին: Հետո Յոկաստան բաց է թողնում նրա ձեռքն ու երկու քայլ հետ գնում. ծափահարություններն ուժգնանում են, դառնում ավելի խելահեղ: Լույսերն ընկնում են նրա քունքերն ի վար հոսող քրտինքին. այնտեղ՝ կենտրոնում, ամենազոր արքան է, որը խորտակվել էր, իջել հատակը, ու հիմա բոլորն ակնածանքով են նայում արքայական վեհությանը. խոնարհվում է նա, շնորհակալություն հայտնում, ապա դուրս գալիս բեմից, հետո նորից վերադառնում ու նորից դուրս գալիս:

Այդ պահին քնից կտրուկ վեր է թռչում, տեսնում, որ լույսը վառ է թողել, իսկ մահճակալի կողքի սեղանիկի փոքրիկ ժամացույցը խնդրում է վեր կենալ, տաքսի կանչել ու օդանավակայան մեկնել: Հետո հանկարծ զնգում է գլխին մոտիկ շագանակագույն հեռախոսը.

-Առավոտյան ժամը հինգն է, սը՛ր:

Պատուհանից հետեւում էր տղամարդուն, որը նարնջագույն փարոսներով ուղղորդում էր օդաչուին դեպի այն տեղը, որտեղ օդանավը պետք է կանգ առնի: Սպասասրահում մարդկանց նոսր խումբ է: Թվաց՝ մի ամբողջ դար անցավ, մինչեւ օդանավի աստիճանները բացվեցին: Այդ ընթացքում Էրիկ Սերին թուլացնում է անվտանգության գոտին, գլխավերեւի պահարանից հանում փոքրիկ պայուսակը, ծալում բաճկոնն ու խոր շունչ քաշում: Նորից Ռոքում էր: Ի՞նչ արած. ցանկացած նոր սկիզբ մի օր պիտի ավարտվի: Զբոսաշրջիկներից մի քանիսն իրար կամ կողքիններին հարցնում են, թե ինչու է այսքան ծգծգվում, ինչու արագ չեն բացում դուռն ու դուրս թողնում բոլորին, բայց ոչ ոք չգիտի պատասխանը: Էրիկ Սերին նորից նստում է ու նայում պատուհանից. ուզում է տեսնել՝ սպասասրահում հավաքված մարդկանցից ով է իրեն սպասում: Մի քանի մարդ է տեսնում, բայց չի ճանաչում նրանց: Նաեւ նկատում է, թե դրոշներն ինչպես են հանկարծ սկսում ծածանվել. այսօր դրանք կեղտոտ չեն, գույներն էլ բոլորովին խամրած չեն: Վերջապես աստիճանները բացվում են, եւ ուղեւորները սկսում են իջնել: Ինքնաթիռի դռան մոտ նրան դիմավորում է տաք զեփյուռը: Սպասասրահի ճանապարհին զբոսաշրջիկները սկսում են հանել բաճկոնները:

Տարածքը հսկում են ռազմական ոստիկաններն ու կախ ընկած լեզուներով շները:

Անձնագիրը Բեռլինի Ֆոլքսպարկի խոտի գույնն ունի: Կնիքն իջնում է անձնագրի պատահական էջի վրա՝ նշելով նրա վերադարձի ամսաթիվը՝ մարտի 30, 1980 թ.:

-Եվ այսպես, ինչքա՞ն փող ծախսեցիք:

Ի՞նչ կարելի է ասել խիստ հայացքով ու բարալիկ բեղերով մաքսատան աշխատողին:

-Գնելու ի՞նչ կա որ: Ոչ մի բան:

-Ի՞նչ եք գնել:

-Ոչինչ:

-Ոչի՞նչ:

-Բոլորովին ոչինչ:

-Իսկ հուշանվերնե՞ր:

-Ծաղրու՞մ եք: Ի՞նչ հուշանվերներ:

Նրա կողքին մի ճաղատ մարդ քրտինքի մեջ կորչում է, երբ մյուս սպան

փորփրում է ճամպրուկը: Ծալված հագուստի թեւքերից շոկոլադի սալիկներ են ընկնում:

-Շոկոլա՞դ էլ չեք գնել:

-Ինչու՞ պիտի գնեի:

-Շոկոլադ չե՞ք սիրում:

-Ի՞նչ:

-Հուշանվերների մասի՞ն ինչ կասեք:

-Ոչինչ: Չէ՞ որ արդեն ամեն ինչ ասացի:

-Բացեք, նայենք:

Նա բարձրացնում է ճամպրուկը, որը լիքն է կեղտոտ հագուստով, ու երբ բացում է, նկատում է, թե մյուս սպան ինչպես է բարձրահասակ կնոջը հրամայում պայուսակի վերեւի շարքից վերցնել կեղտոտ ներքնազգեստը, որ տեսնի, թե դրա տակ ինչ կա:

-Իսկ սա հուշանվեր չէ՞:

-Ոչ թե հուշանվեր է, այլ փափուկ արջուկ դստրիկիս համար:

-Փափուկ արջու՞կ:

-Փափուկ արջուկ, դստերս համար: Որ խաղա, պա՞րզ է:

-Ուրեմն, այնուամենայնիվ, ինչ-որ բան գնել եք:

-Աղջկաս համար փափուկ արջուկ եմ գնել:

-Իսկ ձեր կնոջ համար ոչինչ չե՞ք գնել:

-Գիրք:

-Գի՞րք: Ուրեմն տիկինը կարդալ է սիրում, հա՞:

-Կուզե՞ ք նայել:

Քրիստա Վուլֆ. «Kindheitmuster»

-Նա գերմանուհի՞ է:

-Ո՞վ, Քրիստա Վու՞լֆը:

-Ձեր կինը:

Ճաղատ տղամարդը գոռում է: Բարձրահասակ կնոջ ամուսինը զգուշորեն հինգանոց է մեկնում սպային, որը կնոջը խնդրում է փակել պայուսակը: Ճաղատ տղամարդու կինը փորփրում է պայուսակն ու հանում դրամապանակը:

«Բարի գալուստ Մալթա»:

Սերին նայում է իր դիմաց կանգնած սպային ու հիշում մոխրագույն կոստյումով տղամարդուն: Կոստյումավորը բարձրահասակ էր ու կոկիկ: Նկատում է, թե ինքնաթիռում կողքին նստած զբոսաշրջիկն ինչպես է անցնում կողքով, ձեռքին փոքրիկ պայուսակ. նայում է իր կողմն ու ձեռ-

քով անում: Ինքնաթիռում նա հարցրեց, թե ուր կարելի է գնալ յոթնօրյա արձակուրդի ընթացքում, հատկապես երեկոները: Սերիի միտքն ամբողջությամբ մոխրագույն կոստյումով տղամարդու հետ էր, որը «Մոկաբա» սրճարանում ուշադիր զննում էր իրեն: Աղջիկը հարցրեց, թե արդյոք Վալետայում է ապրում, ինչով է զբաղվում, ամուսնացած է թե ոչ, երեխաներ ունի թե չունի: Հետո լռեց, երբ տեսավ, թե ինչպես հանեց Իբսենի պիեսների ժողովածուն ու սկսեց կարդալ: Մոխրագույն կոստյումով տղամարդը: Առավոտյան նա նստած էր նույն սեղանի առաջ, որտեղ նախորդ օրն ինքն էր նստել, այն օրը, երբ առաջին անգամ հանդիպեց Յուտա Հայմին: Նրա առաջ մի գավաթ սուրճ ու սենդվիչ կամ մի կտոր թխվածք կար: Հայտնվել էր իրենից անմիջապես հետո, նստել երկու սեղան այն կողմ, պատվիրել ու աչքերը հառել իր վրա: Սկզբում չէր նկատել, որովհետեւ Յուտային էր փնտրում, ու երբ վերջապես տեսավ, ժպտաց, բայց Յուտան անմիջապես փախցրեց հայացքը: Նա չհասկացավ: Մի քանի ժամ առաջ միասին էին, անկողնում, Արեւելյան Բեռլինում, Մարցանի մռայլ շենքի ութերորդ հարկի երկսենյականոց բնակարանում: Մի քանի ժամ առաջ նայում էր նրա երկար, ուղիղ, շեկ մազերին:

-Դե լավ:

Էրիկ Սերին փակում է պայուսակը:

-Փափուկ արջուկը չմոռանաք:

Դուրս գալիս նկատում է, թե ճաղատ տղամարդն ինչպես է ոտքերով տրորում շոկոլադը՝ անիծելով կառավարությանը, մաքսավորն ու ոստիկանը սառը հետեւում են նրան, իսկ կնոջ դեմքը ողողված է արցունքներով, ու ձեռքը դողում է բաց դրամապանակի վրա: Նա նայում է զինվորին, որի կողքին դուրս ընկած լեզվով շունն է: Ահա վերջապես երեւում է դուռը, որից դուրս կգա: Եվ ահա դուստրը փայլող դեմքով եւ ուրախ բացականչելով նետվում է նրա կողմ:

«Մոկաբա» սրճարանում նստած՝ նայում է դուրս եւ ուսումնասիրում հրապարակի դատարկությունը:

Մարտ ամիսն է, բայց դեռ ձմեռային եղանակ է: Կանաչ համազգեստով ոստիկանության սպաները վերուվար են անում՝ կանգ առնելով անճաշակ շատրվանի դիմաց, որտեղ մի քանի մարդ ինչ-որ բան են կարդում՝ նայելով ընդարձակ տարածության մեջ ու սիգարետի ծխի ամպեր բաց թողնելով: Երբեմն-երբեմն կանայք դուրս են գալիս Կենտրոնական հանրախանութից ու դատարկ պայուսակները ձեռքին՝ անցնում նրանց կողքով, իսկ կանաչ համազգեստավորներն ուշադիր հետեւում են այնքան, մինչեւ կորցնում են հետաքրքրությունն ու գնում իրենց գործին: Ալեքսանդերպլաց: Էրիկ Սերին հանում է դրամապանակը, ստուգում, թե ինչքան փող ունի ու հասկանում, որ ունեցածով կարող է գնել ավելին, քան նշված է ճաշացանկում: Ծեկ մազերով երիտասարդ կինը մոտենում ու հարցնում է, թե ինչ կուզեր: Նարնջի հյութ եւ մի բաժակ ջուր: Աչքերն ասես երկու լքված արձան լինեն բաց տարածության մեջ. նույն հայացքն է, ինչ այն ժամանակ, երբ տեսավ նրան մետրոյում, մինչեւ դուրս եկավ գետնի տակից ու հայտնվեց հրապարակում, որտեղ նրան դիմավորեց կտրող ցուրտը, ընդարձակ տարածությունն ու գորշությունը: «Չառլի» անցակետում նույն հայացքով էին նայում նաեւ զինվորները, որոնք ստուգեցին նրա անձնագիրը, ու այնտեղ էլ երկինքը մոխրագույն էր, իսկ լռությունն՝ անսովոր:

-Ո՞ր ժամին ես դուրս գալիս աշխատանքից:

Էրիկը ժպտում է, բայց աղջկա աչքերը հեռուն են նայում:

-Եթե ուզես, կարող եմ տուն ուղեկցել:

-Բայց ո՞վ ասաց, որ մենակ եմ ապրում:

-Եթե չէ, կարող ես իմ հյուրանոց գալ: Մոտակայքում է, ընդամենը մի քանի քայլի վրա: Բայց կարծում եմ՝ քո տունն ավելի հարմար կլինի: Մեզ ավելի քիչ աչքեր կհետեւեն, չէ՞:

-Յոթին:

-Յոթին տեղում կլինեմ:

Չի սիրում ոստիկաններին ու համազգեստավորներին: Մինչ հետեւում է, թե ճաղատ տղամարդն ինչպես է բողոքում ու ոտքի տակ տալիս շոկոլադի սալիկները, հայացքն ընկնում է ինքնածիգով զինվորին, որը կանգնած է սրահ տանող դռան շեմին եւ կրծոտում է շուրթը: Հենց որ դուրս է գալիս սրահ, նկատում է թռչկոտող Միլդրեդին եւ Ալեքսանդրային, որը փորձում է հանդարտեցնել նրան: Երեխայի ուրախությունը, նրա ժպտուն դե՛մքը:

-Ուշացար:

-Մի դար անցավ, մինչեւ վերջապես աստիճանը տեղադրեցին, ու մենք դուրս եկանք ինքնաթիռից:

-Հետո՞:

-Դե, հետո երկար հերթ էր, որովհետեւ միայն մի աշխատող էր դրոշմում անձնագրերը:

-Ուղեբեռը ստանալն էլ ահագին երկար տեւեց, չէ՞:

-Դե հա, այնտեղ էլ ծգծգեցին:

-Քո ճամպրուկը քրքրեցի՞ն:

-Բնականաբա՛ր:

Միլդրեդը խաղում է փափուկ արջուկով: Ալեքսանդրան նայում է նրան ու ժպտում: Էրիկը սուրճ է պատրաստում ու նորից փորձում վերհիշել տղամարդու հայացքը, որը մոխրաշագանակագույն կոստյումով էր, որից թանձր գոլորշի ու շատ հաճելի բույր էր տարածվում: Իրենից երկու սեղան այն կողմ նստած, բաժակը ափսեի կողքին դրած մոխրագույն կոստյումով տղամարդն ուսումնասիրում է ամեն մի քայլը: Հետո, հենց որ հայտնվում է շեկ մազերով երիտասարդ կինը, որն ապրում է Մարցան փողոցի ութերորդ հարկի փոքրիկ բնակարանում, մոխրագույն կոստյումավորը թեթեւ շարժվում է տեղում: Նույնիսկ Էրիկ Սերին է շարժվում, փոքր-ինչ ավելի ինքնավստահ: Բայց աղջիկը նույնիսկ չի թարթում աչքերը. հայացքը մնում է հատակին գամված: Ընդամենը մի քանի ժամ առաջ ինչքա՜ն կիրք կար այս աչքերի մեջ: Նույնիսկ երբ հաճույքից կիսափակ էին, այնքան կիրք էին ճառագայթում, որ Էրիկը ոգեւորվում էր:

Ու ականջներում զրնգում էին աղջկա խոր շնչառությունն ու տնքոցները, ու պատկերացնում էր, թե նա ինչպես է միաժամանակ ժպտում ու դեմքը ծամածռում: Այդ երկսեռյականոց բնակարանում Էրիկ Սերին նորից գտավ սերն ու կորցրեց ժամանակի զգացումը: Մի քանի վայրկյան նույ-

նիսկ տարածությունը չէր զգում. այնքան հուզված էր, որ մոռացավ, որ օտար երկրում է: Օտար երկրում սեր անելը նման չէր հայրենիքում սեր անելուն. ուրիշ էր, ինչպես ուրիշ էր լռությունը կամ սավանների հոտը: Նույնիսկ մթությունն էր ուրիշ: Աղջիկն ուզում էր հանգցնել լույսը, մինչ Էրիկը կմոտենար իրեն, եւ հենց որ հանգցրեց, խավարի մեջ ողջ-ողջ թաղվելու սովորական անհարմարավետության փոխարեն անհամբերության զգացում ունեցավ, ինչպես երեխաները, որոնք փորձում են կռահել, թե ինչ կա ամուր փաթաթված փաթեթի մեջ: Նույնիսկ համն էր ուրիշ, նման չէր Ալեքսանդրայի, Լիզայի համին, շոկոլադի համին, որ նորից հաճույքով վայելել էր, սուրճի համին: Ամեն ինչ այլ էր, ամեն ինչ ավելի լավ էր:

-Կարծում ես՝ էլի կհանդիպե՞նք:

-Վաղը առավոտյան շուտ պիտի աշխատանքի գնամ:

-Ինչքա՞ն շուտ:

-Ժամը վեցին ավտոբուս կնստեմ: Հիմա մնա այստեղ: Ուշ է, ինքնուրույն չես գտնի ճանապարհը, իսկ վաղը առավոտյան ստիպված կլինես շատ վաղ արթնանալ: Գնամ, սուրճ եփեմ, հա՞:

-Սպասիր, ես կեփեմ: Սուրճը քա՞ղցր ես սիրում:

Երբ դուրս սողաց սավանների տակից, մարմինը սառեց: Ալյումինե սպասքապահարանից հանեց սուրճի կիսադատարկ փաթեթը, միացրեց թեյնիկն ու սպասեց, հետո մեջքով շրջվեց շիկահեր երիտասարդ կնոջը, որը հայացքը գամել էր իր թիկունքին:

-Տխուր տեղ է, չէ՞:

-Տխու՞ր ես:

-Քո մասին եմ խոսում, ոչ թե իմ:

-Ես քեզ եմ հանդիպել, ինչի՞ց դժգոհեմ:

-Վայելու՞մ ես:

-Այո, իհարկե: Իսկ դու՞:

-Սիրուն տու՞ն ունես:

-Աշխարհի ամենասիրուն տունը չէ, բայց վատն էլ չէ: Մայրիկիս տունն ավելի վատն էր: Ավելի ճիշտ՝ այլանդակ էր:

-Քեզ այստեղ դու՞ր է գալիս:

-Կարող էինք իմ հյուրանոց գնալ, բայց մտածեցի՝ չես ուզի: Ամենուր հետաքրքրասեր աչքեր են:

-Չէ, չէի ուզի:

-Կարծում եմ՝ այնքան ազատ չես, որ ուզածդ ժամանակ ուզածդ տեղը գնաս:

-Գնա՞մ: Ինչ է, ուզում ես, որ ինձ գնդակահարե՞ն:

-Իսկապե՞ս, կրակու՞մ են:

-Իհարկե: Մի երկու տարի առաջ այդպիսի դեպք եղավ: Ես նրան ճանաչում էի:

-Ուզում էր անցնե՞լ սահմանը:

-Արգելված է խոսել նման բաների մասին:

-Ո՞վ էր:

-Կարեւոր չէ:

-Ճանաչու՞մ էիր նրան:

-Խնդրու՛մ եմ, վերջ տուր:

-Այստեղ ի՞նչն է ճնշում քեզ:

-Շատ բաներ:

-Օրինա՞կ:

-Շատ բաներ: Պատից այն կողմ ուրիշ աշխարհ է: Պատը տեսա՞ր:

-Տեսա: Ախր ես մյուս կողմից եմ եկել, չէ՞:

-Ուրեմն հասկանում ես, թե այստեղ ինչու է տխուր: Էլ ի՞նչ պատմեմ: Պատից այն կողմ ոչ ոքի չեն սպանում, որովհետեւ ոչ ոք չի ուզում այս կողմ գալ: Իսկ դու վաղը չէ մյուս օրը գնում ես:

-Եթե ուզես, կարող եմ էլի գալ:

-Էլի՞ գալ: Այստե՞ղ:

-Քո տուն: Եթե ուզես:

-Շաքար մնացե՞լ է:

-Կսպասե՞ս ինձ:

-Եթե չի մնացել, մի փոքր փաթեթ սառնաշաքար ունեմ, արի գցենք սուրճի մեջ: Մեկը ես, մեկը դու: Երկար չմնաս, թե չէ կմրսես:

Էրիկը մի քանի սառնաշաքար գտավ ու գցեց բաժակների մեջ:

-Ասա՛, ընտանիք ունե՞ս:

-Քույր ունեմ, տասնհինգ տարեկան է: Եվ մայր: Մայրս ու հայրս ամուսնալուծվեցին քրոջս ծնունդից հետո, ու մայրս երբեք չհաշտվեց այդ իրողության հետ: Ուշքի չի գալիս: Նրանք Բեռլինից դուրս են ապրում, երկու ժամվա հեռավորության վրա: Չգիտեմ, թե հայրս որտեղ է ապրում: Մոտ մի տարի առաջ պատահաբար նկատեցի նրան, կամ գուցե նա չէր, ուղղակի շատ նման էր: Երեք շաբաթը մեկ այցելում եմ նրան: Իսկ դու՞:

-Ես ի՞նչ:

-Ենթադրում եմ, որ ամուսնացած ես: Երեխաներ ունե՞ս:

-Դուստր:

-Անունն ի՞նչ է:

-Միլդրեդ: Վեց տարեկան է:

-Ընտանիքդ չի՞ եկել քեզ հետ:

-Չէ, ես մենակ եմ եկել:

-Չե՞ս սիրում նրանց:

Վրա հասած լռության մեջ նրանք լսեցին փողոցի աղմուկը. երեւի ինչ-որ հարբած տղամարդ էր: Նրանք կարդում էին միմյանց մտքերը, կռահում, թե որն է լինելու հաջորդ նախադասությունը: Էրիկ Սերին երբեք չի մտածում սիրո մասին, հատկապես վերջերս: Աշխատավայրում սովորել է որսալ պահն ու ապրել ամեն մի վայրկյանով: Իրադարձությունները ծավալվում են այնպես, ինչպես թատրոնում. նախ դեկորացիաները տեղադրում են, հետո հավաքում՝ պատրաստվելով հաջորդ ներկայացմանը. մի վարագույրը բարձրանում է, մյուսը՝ իջնում, իջնում է, որ նորից բարձրանա ու նոր տեսարան ներկայացնի: Այ այսպես, հեշտ ու գեղեցիկ: Իրոք, ամեն ինչ շատ է հեշտացել: Նույնիսկ բնակարան ներխուժելը, բետոնի մեջ բացված անցքը, նարնջագույն ալյումինե խոհանոցն ու բազմոց-մահճակալը, որն անհրաժեշտության դեպքում բացվում ու փակվում է. շա՛տ հեշտ է: «Յոթին: Ժամը յոթին դուրս կգամ»: Ութն անց մեկ րոպե արդեն այստեղ էին: Ինն անց մեկ րոպե պառկած էին: Հեշտ ու հանգիստ:

-Պատմի՛ր ինձ քո երկրի մասին: Երեւի լավն է, չէ՞: Ծովը, արեւը: Արեւը հրաշք է:

-Քեզ նման հրաշք է:

Յուտան ժպտում է ու համբուրում նրան, հետո մեկնում թեւն ու սկսում փնտրել ծխախոտի տուփը: Լուցկին վառվում է նրա աչքի առաջ. խավարի մեջ լսվում է, թե նա ինչպես է ներս քաշում ծուխը, իսկ Էրիկը շոյում է նրա մերկ, փափլիկ ուսը:

-Առավոտյան վաղ ենք արթնանալու:

-Ես կվերադառնամ: Երեւի հոկտեմբերին: Ի՞նչ կասես:

-Ոչ ոք հետ չի գալիս այստեղ:

-Ես կգամ՝ քեզ տեսնելու:

-Հոկտեմբերի՞ն:

-Կփորձեմ հոկտեմբերին, այո:

-Հոկտեմբերը սարերի հետեւում է: Հոկտեմբերին նորից ձմեռ կլինի:

-Աշուն:

-Հոկտեմբերը շատ տարօրինակ ամիս է: Աշունը հրաշալի է. տերեւները սիրուն գույներ են հագնում:

-Քեզ նման սիրուն:

-Աշխատանքից հետո տարբեր բաներ եմ գնում, նայած թե ինչի կարիք ունեմ, իսկ կիրակի օրերին, երբ ազատ եմ լինում, գնում եմ այգի՝ զբոսնելու, իսկ երբեմն նույնիսկ նստում եմ նստարանին ու գիրք եմ կարդում:

-Կարդու՞մ ես:

-Կարդում կամ մտածում եմ: Երբեմն քթիս տակ երգում եմ:

-Երբ հոկտեմբերին վերադառնամ, միասին կգնանք: Կգտնենք այն նստարանը, որի վրա սովորաբար նստում ու երգում ես: Միասին կնստենք քո նստարանին:

-Նստարան չունեմ: Ուղղակի նստում եմ որտեղ պատահի: Երբեմն չեմ էլ կարողանում նստել. արդեն ցրտում է:

-Հոկտեմբեր է: Ինձ թվում է՝ հոկտեմբերին ավելի գեղեցիկ ես:

-Մոխրամանն ու՞ր դրեցինք:

Ամեն ինչ պարզ է ու գեղեցիկ. սիգարետը հանգցնելուն պես անմիջապես ննջում է՝ գլուխը Էրիկին հենած, Էրիկը շարունակում է ուսումնասիրել իրեն շրջապատող խավարը, աղջիկը շրջվում է, արդեն խոր քնի մեջ, Էրիկը նույնպես քնով է անցնում ու ննջում մինչեւ այն պահը, երբ զարթուցիչն ազդարարում է առավոտյան հինգը, ու նա բացում է աչքերն ու տեսնում, որ աղջիկն արդեն հագնվել է: Էրիկը ձգվում է ու դեռ սառած աչքերով վեր կենում, մոտենում անկյունում դրված լվացարանին, որ լվանա դեմքը: Սառցաջուրն արթնացնում է նրան, ու երբ շրջվում է, տեսնում է իր հագուստը երկու աթոռներից մեկի թիկնակին, իսկ սեղանի վրա նրան սպասում է մի գավաթ սուրճ ու շոկոլադի մի փոքր կտոր: Խնդրում է, որ շտապի, հանում է սավանն ու ծալում բազմոց-մահճակալը: Ավտոբուսի մեջ ոչ մի բառ չեն փոխանակում: Ոչ ոք չի խոսում, ոչ ոք չի իջեցնում գլուխը, չի նայում ներքեւ: Մետրոն նրանց դիմավորում է այրված գազի ջերմ հոտով:

-Ի՞նչ ես անելու:

-Քեզ հետ սրճարան կգամ:

-Չէ: Մենք դեռ բաց չենք հաճախորդների համար:

-Նրանք գլխի կընկնեն, որ անցյալ գիշեր այնտեղ չեմ եղել:

-Նրանք շատ վաղուց են գլխի ընկել, այնպես որ մի՛ անհանգստացիր: Գիտե՞ս՝ ինչպես հասնես հյուրանոց:

-Հա, հրապարակի դիմաց է, չէ՞: Ավելի ուշ կգամ, մոտավորապես ժամը տասին: Այսօր մինչեւ ժամը յո՞թն ես աշխատում:

-Ժամը տասին չգաս: Այդ ժամին ոչ ոք չի լինում:

-Ավելի ուշ կգամ:

-Նրա անունը Դիթմար էր:

-Դիթմա՞ր:

-Դիթմար Ծվայցեր: Մեկ-երկու տարի առաջ էր:

-Պարզ է: Ճանաչու՞մ էիր նրան:

-Մոռացի՛ր: Մոռացի՛ր, կուշանամ:

Հյուրանոցի սենյակում նստում է ու երբ արթնանում է, հասկանում է, որ արդեն մի քանի ժամ է անցել: Մոտավորապես ցերեկվա երեքին գնում է այնտեղ, ու քիչ անց ներս է գալիս մոխրագույն կոստյումով տղամարդը: Ու երբ աղջիկը բերում է պատվերը, ոչ խոսում է նրա հետ, ոչ էլ նայում դեմ-քին:

-Արջուկի անունն ի՞նչ դնենք, հայրի՛կ:

-Հմմ... արի մտածենք... Ուզու՞մ ես՝ Էրիկ դնենք:

-Քո անունո՞վ:

-Գուցե Հոնեքեր:

-Չէ՛:

-Ուրեմն Կառլ:

-Կա՞ռլ:

-Հա, արի անունը Կառլ դնենք: Կամ Ալեքսանդր: Արի Ալեքսանդր դնենք:

-Ալեքսանդրը մայրիկի անվան նման է: Հետո էլ շատ երկար է:

-Ուրեմն Կառլ:

-Հա, Կառլ:

Հինգ րոպե հետո լույսն անջատվում է:

-Ահա՛, նորից:

-Մոմեր ունե՞նք, Ալեքսանդրա:

-Չեմ կարծում: Երեկ հոսանքն էլի անջատել էին, բոլոր մոմերը վառեցի:

-Դե ապրե՛ս, ի՞նչ ասեմ:

-Իսկ ի՞նչ էիր ուզում:

-Չգիտե՞ս, որ ամեն երկու օրը մեկ հոսանքն անջատում են:

-Երեկ նույնիսկ ջուր չենք ունեցել:

Ալեքսանդրան ուզում էր սկսել սղոցել, թե ինչու իրեն բերեց-գցեց այս քարե սալիկի մեջ, որտեղ հեռախոսը քեզ կապում է մարդկանց հետ, որոնց համարը երբեք չես հավաքել, որտեղ էլեկտրականությունն ու ջուրը երկու օրը մեկ անջատում են, որտեղ ոչ մի խելքը գլխին գրադարան չկա, ավտոբուսի վարորդները հայհոյում են ու հավելյալ փող վերցնում, որովհետեւ իրենց լեզվով չես խոսում, որտեղ աղբը թափում են բաց երկնքի տակ, այլ ոչ թե այնտեղ, որտեղ պիտի թափեն: Ահա, ուր որ է Ալեքսանդրան կբացի ճշմարտության տոպրակը:

Ժամանակն անցնում է, իսկ նրանք նայում են իրենց պարուրած դատարկ մթությանը:

-Արեւելյան Բեռլինը լա՞վն է:

-Տգեղ է՝ երբեմնի գեղեցկության որոշ նշույլներով: Ընդհանուր առմամբ գորշ է: Լուռ: Ավելի ճիշտ՝ ոչ թե լուռ, այլ խլացած:

-Սոցիալիստական, մի խոսքով:
-Ճիշտ է:
-Մու՞թ է:
-Երեկոյան մութ է: Առավոտյան... դե, եղանակը մռայլ էր, մութ էր:
-Այնտեղ հոսանքի անջատումներ լինու՞մ են:
-Չգիտեմ: Այնտեղ եղած ժամանակ չկար:
-Դե լավ է: Կարո՞ղ ես գտնել սիգարետներս, Էրիկ:

Լուցկին վառվում է նրա աչքի առաջ. խավարի մեջ լսվում է, թե ինչպես է փչում ծուխը: Նրա առաջ տարածվում է Ալեքսանդերպլացի դատարկությունը, ասես իր հետ տուն է բերել: Լռությունը, որ իջնում է խավարի հետ, նման է պատը պարուրած լռությանը. պատը տեսել էր գորշ փողոցներով քայլելիս, երբ անցնում էր ճանապարհն ու թեքվում որտեղ ուզեր, երբ ուզեր: Ալեքսանդրան իր դիմաց է, բայց դեմքը համարյա չի երևում այն պահերին, երբ սիգարետը խցկում է շրթունքների արանքը, ու մոխիրը մի ակնթարթ փայլատակում է: Եթե մինչև քնելն էլեկտրականությունը միացնեն, կգրի Յուտային: Երբ դուրս եկան նրա բնակարանից, գրի առավ փողոցի համարն ու անունը: Կգրի Յուտային, կասի, որ չի հասկանում, թե ինչու անուշադրության մատնեց իրեն ու իմանալով, որ սպասում է սրճարանի դիմաց, ժամը յոթին իր մոտ քայլելու փոխարեն ընկերուհու հետ շտապեց դեպի մետրոյի մուտքն ու անհետացավ բաճկոնների ու փակ անձրևանոցների արանքում:

Յուտա Հայմ:

-Գնամ, քնեմ:
-Հիմա ես էլ կգամ: Գուցե հոսանքը միացնեն, հասցնեմ ինչ-որ գործ անել:
-Եթե ուզում ես վաղն առավոտյան շուտ արթնանալ, շատ երկար մի՛ մնա: Աշխատանքի ես, չէ՞:
-Վաղը պետական տոն է:

Ալեքսանդրան խարխափելով գնում է դեպի մահճակալը, իսկ Էրիկը դեռ մի քիչ մնում է՝ նայելով խավարի մեջ, որը միաժամանակ թե՛ ահռելի է թվում, թե՛ նեղլիկ ու ճնշված: Մի ձեռքը սեղանի մակերեսին է, մյուսի մատներով տրորում է գրպանում թաքցրած թղթի կտորը, որի վրա Յուտայի հասցեն է խզբզած: Պետք է սպասել, մինչև հոսանքը միացնեն, որ նամակ գրի նրան:

«Սիրելի՛ Յուտա: Չգիտեմ, թե քեզ ինչ է եղել: Նախորդ գիշերն ուզում էի Բեռլինում անցկացնել, քեզ հետ: Երեւի մոռացել ես, չէ՞: Շատ արագ մոռացար ինձ: Կարծում էի՝ էլի կիանդիպենք: Ուզում էի տեսնել քեզ: Հոկտեմբերին այցի կգամ: Գուցե մի քանի օր արձակուրդ վերցնես, ու մենք ավելի շատ ժամանակ անցկացնենք միասին: Ի՞նչ կասես: Կարծում էի՝ միասին կգնանք Ռոստոկ՝ ծովը տեսնելու: Կամ անտառ: Հոկտեմբերին ծառերը շատ սիրուն կլինեն: Շարունակ մտածում եմ մեր գիշերվա մասին: Այնքա՛ն բան կուզեի ասել, բայց ժամանակ չունեինք: Պատկերացնու՞մ ես՝ ինչքան եմ տխրում ամեն անգամ, երբ ստիպված եմ լինում հապճեպ հեռանալ երկրից: Սպասեցի քեզ, բայց այնքան արագ գնացիր, որ չկարողացա հասնել քո հետեւից: Հետո կորցրի քեզ մետրոյում: Վերադարձա հյուրանոց ու փորձեցի զանգելու տարբերակ գտնել, բայց չգիտեի որտեղ փնտրել հեռախոսահամարդ: Խնդրեցի, որ տեղեկատու բերեն, բայց հյուրանոցի աշխատողներն ասացին, որ անհնար է: Գաղափար չունեմ, թե ինչու այդպես ասացին: Ու ես կորցրի քեզ: Յուտա, սիրահարվել եմ քեզ: Գիտեմ, չպիտի ասեմ, բայց ճշմարտությունը դա է: Այն պահից, երբ անհետացար Ալեքսանդերպլացում, անդադար մտածում եմ քո մասին: Նորից կիանդիպենք հոկտեմբերին: Դու ասացիր, որ հոկտեմբերը սարերի հետեւում է: Ճիշտ է, բայց մի օր կգա: Իսկ մինչ այդ կշարունակեմ գրել քեզ: Գրանցի՛ր հասցես: Գրի՛ր ինձ: Սիրում եմ քեզ, Յուտա:

Էրիկ»:

Ապրիլ:
Մայիս:
Հունիս:
Հուլիս:
Օգոստոս:
Սեպտեմբեր:
Նոյեմբեր:

Բազմոցին ընկած՝ Էրիկը փոխում է ալիքները, որ լուրերի թողարկումը գտնի: Նրա կողքին ռադիոն է եւ նոթատետր, որում ինչ-որ նշումներ է անում: Ակնոցը թառել է քթին, սիգարետը վառվում է մոխրամանի մեջ, որը լիքն է գարշահոտ մոխրով ու տրորված ծխուկներով:

-Հայրիկ, ես գնացի:

-Հիմա՞:

-Հա: Աշխատանքի ես գնում, չէ՞: Ինձ կտանե՞ս:

-Ոչ այսօր, Միլդրեդ:

-Հեռուստացույցից չես կտրվում:

-Հա, այսօր չեմ կարողանում կտրվել: Երեկ ինչպե՞ս անցավ:

-Որտե՞ղ:

-Ռեստորանում: Այնտեղ էիր, չէ՞: Ամեն օ՞ր ես աշխատում:

-Համարյա: Գիտես, մայրիկն այնքան էլ ուրախ չէր, երբ այնտեղ աշխատանքի անցա:

-Ինչու՞ ասացիր նրան:

-Ի՞նչ իմանամ: Նրա տնից ոչ շատ հեռու «Մաքդոնալդս» կա, առաջարկեցի, որ գնանք այնտեղ, ու չես պատկերացնի, թե ինչպես ծամածռեց դեմքը: Հետո ասացի, որ աշխատում եմ առաքման կետում, ու դեմքն էլ ավելի ծռմռվեց:

-Իմ մասին խոսեցի՞ք:

-Իսկ դու ի՞նչ ես կարծում: Ինձ հարցրեց, թե արդյոք ընկերուհի ունես:

-Եվ ի՞նչ ասացիր:

-Ասացի՝ հայրիկի կյանքում միշտ էլ ինչ-որ հետաքրքիր պատմություն է լինում:

-Միլ, եթե պիտի գնաս, շուտ դուրս արի, ես չեմ կարող քեզ մեքենայով տեղ հասցնել:

-Շա՛տ սիրալիր ես: Ավելի ուշ դուրս կգամ:

-Քեզ համար ինչ-որ բան պահե՞մ:

-Չէ, երեւի ընկերուհուս տանը կքնեմ:

-Դու՛ գիտես:

-Հայրիկ, ես ստեցի... դե, երբ ասացի, թե իբր մայրիկն ինձ հարցրել է՝ ընկերուհի ունես, թե չէ: Հոգուդ հետ էի խաղում: Բայց մի քիչ խոսեցինք, երբ ինձ օդանավակայան էր տանում:

-Ի՞նչ: Մի ամբողջ շաբաթ էր անցել, ու միայն վերջին պահի՞ն հարցրեց իմ մասին:

-Հայրիկ, մայրիկը քեզ նման չէ: Դու լավ գիտես, որ նման չէ: Բացի այդ, նա այլեւս մենակ չէ:

-Գիտեմ:

-Դու՞ ինչու ես մենակ, հայրի՛կ:

-Միլդրեդ, քո կարծիքով այս քննարկման համար հարմա՞ր պահ է:

-Չէ: Լավ, ես գնացի: Չմոռանաս, աշխատանքից հետո տուն չեմ գալու:

-Դա դեռ կտեսնենք:

-Չէ, հաստատ չեմ գա. որոշել եմ ընկերուհուս տանը մնալ:

-Բայց վաղը դաս ունես, չէ՞:

-Ուղիղ դասի կգնամ, իսկ երեկոյան կգամ տուն:

Դուստրը հանգիստ փակում է դուռը: Հեռուստացույցով անհավանական տեսարաններ են: Պատի դիմաց, որ նա տեսել էր տարիներ առաջ, հավաքված են մարդիկ ու քանդում են այն: Ոմանք կախվում են պատից, մագլցում, որ նստեն վրան: Բրանդենբուրգյան դարպասի առաջ հսկայական բազմություն է՝ փայլող դեմքերով, ժպտուն, սիրալիր. շամպայն են խմում: Եվ ահա նորից հիշում է Յուտա Հայմին՝ շիկահեր երիտասարդ կնոջը, որի մոտ պիտի վերադառնար ինը տարի առաջ՝ հոկտեմբերին, բայց այդ տարվա հոկտեմբերն այդպես էլ չեկավ: Մեկ ամսվա ընթացքում մոտ վեց նամակ գրեց: Սպասեց մեկ ամիս, նույնիսկ վեց շաբաթ, բայց Յուտա Հայմն այդպես էլ չպատասխանեց: Նրա նամակները երբեք հետ չեին գալիս: Հերթով ուսումնասիրում է բոլոր դեմքերը, որոնց վրա կանգ է առնում տեսախցիկը, փորձում է գտնել աղջկան, որի հետ սեր էր արել բազմոց-մահճակալին, Արեւելյան Բեռլինում, գորշ Մարցանի ութերորդ հարկի բնակարանում: Պատկերացրեք, եթե հանկարծ Յուրի Ժիվագոն տրամվայից նկատեր փողոցով քայլող իր Լարային՝ գեղեցիկ, շեկ մազերը հետ գցած: Ու թե հիմա տեսներ նրան հեռուստացույցով, ի՞նչ կլիներ: Ուրախությունից սրտի կաթվա՞ծ կունենար: Ի վերջո, Յուտա Հայմի պատմությունը կրկնվում է մի քանի անգամ, այլ երկրներում, որտեղ չկան վարչակարգեր, չկան մոխրագույն համազգեստով տղամարդիկ, որոնք նստում են երկու սեղան այն կողմ ու աչք չեն կտրում քեզնից: Հոկտեմբերն ինչու՞ այսքան ուշացավ: Գուցե որովհետեւ մինչեւ հոկտեմբեր Ալեքսանդրան հավաքեց ճամպրուկներն ու հեռացավ, իսկ ինքը մնաց դստեր հետ, ու էլի պատմություններ եղան, որոնք շարունակվեցին մի քանի օր: Հետո սեւ համազգեստով, վահաններով ու մահակներով զինված հատուկ ուժերն

արցունքաբեր գազ ցրեցին ամբոխի մեջ: Ավիրված շենքեր ու տներ: Օդանավակայանի վերից վար խուզարկություն: Ծեծուջարդից հետո՝ բաց գանգերով մարդիկ: Քանդված բազրիքներ: Ահարկու բեռնատարներ: Գիշերային խավար՝ առանց էլեկտրականության: Երիտասարդի լուսանկար՝ իր իսկ արյան լճակում. մարտիրոս, այդպես են նրան անվանում, ազգի հերոս, համենայն դեպս, ազգի կեսի համար: Մի գիշեր պատշգամբում կանգնած՝ նայում էր ներքեւ՝ անցնող-դարձող մեքենաներին. շչակներն աղմկում էին, մարդիկ դրոշներ էին ծածանում, սատկած ճագարներ թափահարում, իսկ հետո մաշկում, շոգեխաշում ու ուտում, իսկ հարեւանները փողոցում գրկում էին իրար ու երգում: Հետո տեսավ, թե նրանք ինչ թերահավատությամբ են նայում իրար: Արյունահեղություն տեսավ, ամենուր արյուն՝ պատերի վրա, սպիտակ սալիկների վրա, հագուստի վրա, մեքենաների դռների վրա, ատամների վրա, շոգեխաշած մսի ու սպագետիի կաթսաների մեջ. արյո՛ւն:

Երեկոյան վեցն անց կեսին, Ալեքսանդերպլացի մառախուղի ու լռության մեջ կանգնած սպասում էր. մինչեւ ոսկորները սառած՝ աչքը չէր կտրում «Մոկաբայից»: Ժամանակ առ ժամանակ նայում էր ժամացույցին: Այդ օրը կարծես տասնհինգամյա տղա լիներ, որը սպասում է, թե ընկերուհին երբ դուրս կգա դպրոցից՝ իրեն ընդառաջ: Յոթն անց տասը որպեին տեսավ շտապ դուրս վազող երկու կնոջ ու թեթեւություն զգաց: Վերարկուով տղամարդ էլ կար, որին կարծես թե տեսել էր այդ առավոտ, ավելի վաղ, բայց ուշադրություն չէր դարձրել: Սկսեց քայլել երիտասարդ կանանց կողմը, որոնք ցրտից կուչ էին եկել, բայց երկուսն էլ գլուխները կախ շտապում էին դեպի մետրոյի մուտքը: Դանդաղեցրեց քայլերն ու հետ մնաց նրանցից: Ոստիկաններ կային, որոնցից չորսը սովորականի նման բարձրանում-իջնում էր, իսկ փանքերի խումբը՝ մազերը ծովային ոգնիների պես ցցած, պարապ-սարապ թրեւ էր գալիս ու բարձր խոսում: «Բեռլինշտադտ» հյուրանոցի լույսն ընկել է մի քանի մետր այն կողմ՝ Ալեքսանդերպլաց, իսկ աշխարհի ժամացույցը հիշեցնում է, որ այնտեղ, պատից այն կողմ, աշխարհն է: Այս երկու երիտասարդ կանայք, որոնցից մեկը Յուտա Հայմն է, շտապ քայլում են դեպի մետրոյի մուտքը: Նա էլ է շտապում, իսկ թիկունքում աննկատ կանգնած վերարկուով մարդը դանդաղ շարժվում է առաջ: Ծփոթված է, սիրտն արագ խփում է, նա տեսնում է ծիծաղող ու ծխող փանքերին, ոստիկանության սպաներին, որոնք նայում են իրեն, հետո նրանցից մեկը կանգնեցնում է, հարցնում, թե արդյոք մոլորվել է, ու նա բացատրում է, որ գնում է մետրո: Սպան հարցնում է նրան, թե որ կողմ է գնում, ու նա լարված ու շփոթված ժպտում է ու ասում, թե թատրոն է գնում:

-Ավելի լավ է տաքսի պատվիրեք, պարո՞ն: Այս ժամերին մետրոն բազմամարդ է: Զբոսաշրջիկների համար ցանկալի է տաքսի նստել: Լավագույն տաքսի ծառայությունն ա՛յ այստեղ է: Ավելի լավը չեք գտնի:

Ու նա նայում է Ալեքսանդերպլացի հսկայական տարածությանը, խավարի մեջ Յուտա Հայմի անհետացող հետքերին: Ու լսում է ինչ-որ մեկի ոտնաձայները, տեսնում տղամարդուն, որի հագին հիմա կաշվե բաճկոն է, ու զարմանում է, թե ա՛յ քեզ զուգադիպություն. այն տղամարդը, որն առավոտյան իրենից երկու սեղան այն կողմ էր նստած, նույնպես քայլում է դեպի կայարան: Հյուրանոցի համարում պառկած՝ մտքով անցնում էր տաք-

սի նստել ու գնալ աղջկա բնակարան: Ու հիմա բարկանում է, որ ավելի շուտ չէր մտածել: Իսկ եթե նա տանը չլինի՞:

-Ահա հասցեն:

Վարորդը սեւեռուն նայում է նրան: Հետո նորից է նայում, երբ Մարցան հասնելուն պես խնդրում է, որ սպասի: Ու նորից հայացքը գամում է նրան, երբ հինգ րոպե հետո տեսնում է, թե նա ինչպես է մենակ վերադառնում ու խնդրում, որ իրեն տանի հետ՝ հյուրանոց:

Վերջին անգամ էր, որ տեսավ Յուտա Հայմին. աղջիկն արագ մտավ մետրո, Ալեքսանդրպլացից, մի ուրիշ երիտասարդ կնոջ հետ թեւանցուկ: Երբ սեղմեց դռան զանգը, նկատեց մոտ հիսուն տարեկան մի կնոջ, որը ծիկրակում էր դռան շեմից, իսկ հետո ներս գնաց ու դուռն իր հետեւից փակեց: Հայացքը ծանոթ էր. քաղաքում մնալու ամբողջ ընթացքում նույն հայացքն էր ուղեկցում նրան հրապարակում, խանութներում, որ ողողված էին սոցիալիզմով. այդպես էր նայում նոր սերունդը, եւ արեւը, որ հիմա ավելի պայծառ էր շողում: Այդ հայացքը նրան ուղեկցում է այն պահից, երբ անձնագիրն ու վիզան ձեռքին կտրեց-անցավ սահմանը, այն պահից, երբ կուչ եկավ ու անցավ բետոնե պատի միջով, որի մոտ գինված պահակ էր կանգնած: Դռան երրորդ անիմաստ զանգից հետո զգաց, թե խավարն ինչպես է ծանրանում վրան, ու մեքենայով հյուրանոց վերադարձավ:

Հեռուստացույցով փառահեղ տեսարաններով նորությունների թողարկումն էր, եւ նա ուշադիր զննում էր դեմքերը. արդյոք կնկատի՞ նրան, որի հետ սեր էր արել ութերորդ հարկի բնակարանում. նորից նշմարվում է Ալեքսանդրպլացը, մռայլ ու սեւ, սառը, լուռ, խլացած, կանաչ համազգեստավորներով հսկվող: Ալեքսանդրպլաց: Արեւելյան Բեռլին: Հրապարակի, փողոցների դատարկությունը, որոնցով քայլել էր, որոնցով Յուտա Հայմն իրեն տարել էր նախորդ գիշեր: Ոչինչ չի կարող անել: Նա քայլում է, նայում շուրջը, քայլում է, նայում շուրջն ու ոչինչ չի տեսնում: Ոչինչ չի զգում: Հեշտ է: Այնքա՛ն հեշտ է: Ծուտով նորից կտեսնի Ալեքսանդրային, Միլդրեդին. նորից նայում է արեւին, որ ծագում ու շողում է Արեւելքից: Ամենուր դատարկություն է, ինչպես այս երկու ոստիկանների աչքերի դատարկությունը, որոնք նրան խորհուրդ տվեցին տաքսի նստել ու գնալ թատրոն: Ոչինչ: Ու լռությունը, որ շրջապատում է նրան, նման է Յուտա Հայմի աչքերում ծվարած լռությանը, երբ այդ առավոտ մոտեցավ իրեն՝ սպասարկելու: Աչքերը քնից ծանրացել էին, ոտքերը ցավում էին հրապարակի հսկայական տարածության մեջ աննպատակ թափառելուց: Ցրտում

էր, սառնամանիք էր: Ոչ մի բան անուն չուներ: Նույնիսկ Յուտա Հայմը: Նույնիսկ Էրիկը:

Հյուրանոցից ընկնող լույսն ու ընդունարանի աշխատողի դեմքն ինչ-որ հարմարավետ մթնոլորտ էին ստեղծում: Բայց իր ամբողջ գորշությամբ ու շատրվանին նայող մարդկանցով հանդերձ՝ Ալեքսանդերպլացը, այնուամենայնիվ, գեղեցիկ էր:

-Սը՞ր:

-Կխնդրեի վաղը առավոտյան արթնացնել ինձ:

-Ժամը քանիսի՞ն, սը՛ր:

-Լավ կլինի՝ հինգին: Ասացեք ինձ, մի՛սս, այսօր մինչեւ ժամը քանի՞սն եք աշխատելու:

Նրա աչքերն Ալեքսանդերպլացի երանգի էին, ձայնը՝ Ալեքսանդերպլացի տեմբրի:

-Յոթը:

-Առավոտյան յո՞թը:

-Ճիշտ այդպես, պարո՛ն: Ուրիշ ինչո՞վ կարող եմ օգտակար լինել:

-Սա իմ վերջին երեկոն է այստեղ:

-Այո, գիտեմ, այստեղ նշված է, պարո՛ն: Հուսով եմ՝ հասցրեցիք շրջել քաղաքում եւ երջանիկ հիշողություններ կտանեք ձեզ հետ:

-Դրա համար էի հարցնում, թե ժամը քանիսին եք ավարտում աշխատանքը, մի՛սս:

Հիմա աղջիկը ժպտում է, ու դեմքի արտահայտությունն ուրիշ է:

-Վախենամ՝ չեմ կարող այստեղից դուրս գալ: Բայց եթե ուզում եք, ձեզ համար ինչ-որ բան կմտածեմ: Չէի ցանկանա, որ այստեղից հիասթափված հեռանաք:

-Ոչ, ոչ: Վաղը ժամը հինգին արթնացրեք ինձ: Եթե հանկարծ ազատ ժամանակ ունենաք, գիտեք, թե որ սենյակում եմ:

Շատ հեշտ: Տասներկուերորդ հարկ բարձրացող վերելակում ահա դարչնագույն մազերով այս կինն է. բաճկոնը դեռ կոճկված է, պայուսակն ուսին է, նայում է Էրիկին: Կինը նայում է ձեռքի թղթի փոքրիկ կտորին ու դուրս գալիս ութերորդ հարկում: Վերելակի դուռը փակվում է ու նորից բացվում է մի հարկ վերեւ, որտեղ մի ուրիշ կին է մտնում. շատ նման է վերելակից դուրս եկած կնոջը: Նա սեղմում է կոճակը, որ իջնի: Վերելակը բարձրանում է ու կանգ առնում տասներկուերորդ հարկում:

Առավոտյան ժամը հինգին հեռախոսը զնգում է, բայց նա արդեն արթուն է:

-Առավոտյան հինգն է, պարո՛ն:

Ի վերջո, բոլորովին էլ կարեւոր չէ: Նա գիտեր, որ կարեւոր չէ: Ալեքսանդրայի հեռանալու օրն արեւոտ ու տաք էր: Ուզում էր նրան տանել օդանավակայան, բայց Ալեքսանդրան պնդեց, որ տաքսի կկանչի: Ասաց՝ չի ուզում, որ իրեն ճանապարհեն: Միլդրեդը սկսեց լաց լինել, որովհետեւ բան էր կորցրել:

-Մենք օդանավակայան կգանք քեզ հետ: Երեխան ուզում է, չե՞ս տեսնում:

Մտածում եմ քո մասին: Դու ոգեւորում ես ինձ: Տենչում եմ քեզ: Իսկապես: Երազում տեսնում եմ քեզ մերկ, տեսնում եմ, թե ինչպես ես տենչում ինձ: Երազում եմ, որ տնքաս ու աղաչես, որ շարունակեմ: Աղաչես, որ չդադարեմ: Երկուսով ազատվում ենք կապանքներից ու բղավում, որովհետեւ մեզ ոչ ոք չի լսում: Երազում եմ քեզ տեսնել մերկ-մերկ, մեջքով ինձ շրջված, ու հայացքս հաճույքով սահի մեջքդ ի վար: Ծա՛տ եմ ուզում քեզ: Ավելի ու ավելի շատ: Չգիտեմ, թե ինչու եմ երեւակայում. չէ՞ որ իրականում երբեք չեմ տեսել: Դու անջատեցիր լույսն ու մեջքով դարձար ինձ: Զգում էի, թե ինչպես ես հանում հագուստդ, բայց չէի տեսնում քեզ: Զգում էի ուրվագծերդ: Իսկ դու... դու տեսնում էիր ինձ, երբ արթնանում էիր առավոտյան: Բայց ես քեզ չէի տեսնում: Քեզ երբեք մերկ չեմ տեսել: Ու հիմա պիտի հարցնեմ՝ ո՞վ ես դու: Գիտեմ անունդ, գիտեմ հոտդ, աչքերդ ու թեւերդ, ներսից գիտեմ քեզ, բայց չգիտեմ, թե ինչ տեսք ունես:

Նրա անունը Յուտա Հայմ էր:

Մի պատմություն եմ կարդում կնոջ մասին, որի ամուսնությունն ընդամենը չորսուկես օր տեւեց: Շաբաթ օրը ընկերը գրասենյակից նրան վերցնում է «Ֆոլքսվագենով», որը կինը վերջերս էր գնել, ու նրանք ուղեւորվում են կառավարական բյուրո: Այնտեղ սպասում է նա՝ որդու եւ որդու հարսնացուի հետ: Կնոջ որդին էլ է այնտեղ ընկերոջ հետ, եւ հայրը, եւ մի օրիորդ, որը վերջերս գրեթե ամեն օր ժամանակ է անցկացնում հոր տանը: Հատուկ այդ առիթի համար տղամարդը մուգ կոստյում է հագել ու հարդարել մորուքը: Կինը յասամանագույն զգեստով է, իսկ ընկերը նրան փոքրիկ ծաղկեփունջ է բերել՝ սպիտակ ու վարդագույն վարդերով: Վարդագույնը յասամանագույնի հետ այնքան էլ չի սազում, բայց մի՞թե դա կարեւոր է:

Չորեքշաբթի կեսօրին կինը կանգնած է նրա կողքին, շտապ օգնության բաժանմունքում: Տղամարդու շուրջ խողովակներ ու սարքեր են, իսկ էկրաններին թվեր են երեւում: Ցերեկվա ժամը երեքին բուժքույրը հանում է բոլոր խողովակները՝ նախապես անջատելով սարքերը, եւ խնդրում, որ կինը սպասի միջանցքում, մինչեւ իրենք կպատրաստեն հիվանդին: Ուրբաթ օրը՝ առավոտյան, գործընկերը վերցնում է կնոջը «Վոլքսվագենով», որը վերջերս է գնել, եւ նրանք միասին ուղեւորվում են դիակիզարան: Որդին սպասում է այնտեղ իր հարսնացուի հետ: Կնոջ որդին էլ՝ ընկերոջ հետ, ինչպես նաեւ հայրն ու այն օրիորդը: Այդ օրը նա դարձյալ յասամանագույն զգեստով է, իսկ ձեռքին կարմիր վարդերի փունջն է, որ այնքա՛ն չի սազում զգեստին, բայց մի՞թե դա կարեւոր է:

Հասնում եմ պատմության ավարտին ու նորից մտածում քո մասին: Մտածում եմ, թե ինչպես է մերկանում մարմինդ, ինչպես եմ ուզում քեզ, ինչպես եմ ուզում, որ իմը լինես, որ քեզ ամուր սեղմեմ կրծքիս, պարեմ քեզ հետ, ու քո կամքով տրվես իմ անզուսպ համառությանը:

Ու հիշում եմ այն օրերը, երբ դեռ եկեղեցի էի գնում ու նկատեցի Բելային՝ բարձրակրունկ կոշիկներով, բարձր ու խիտ մազափնջով: Ուզում եմ շարունակել գրել: Քո մասին եմ մտածում: Քո ձեռքերի, մատների մասին, որոնք բռնել են սուրճի բաժակը, որի հատակին լուծվում է սառնաշաքարը: Այն մատների, որ սահում էին մարմնիս վրայով: Բելան միշտ շպարով էր: Նրա դեմքը նկար էր՝ ջրաներկի բոլոր երանգներով: Ասում էին՝ Սիթիում է աշխատում: Առաջ տեսնում էի նրան, երբ վաղ առավոտյան կամ երեկոյան տուն էր հասնում: Այդպես էին ասում: Բելայի մասին շատ բան էին խոսում, իսկ նա ամեն ինչ այլ կերպ էր անում. երեւում էր, որ նրա կյան-

քում ամեն ինչ թարս էր: Առավոտյան ոչ թե դուրս էր գալիս տնից, այլ տուն էր գալիս, իսկ այն ժամին, երբ պիտի տուն գար, գնում էր: Իսկ Մարիոնը՝ տիկին Ագնեսի դուստրը, տնից դուրս էր գալիս առավոտյան՝ ձեռքին խոզովակի պես ոլորած գծապատկերային թուղթ, թեւի տակ մի քանի դասագիրք ու եւս մի քանի գիրք, որոնք երեւում էին դարչնագույն պայուսակի բացվածքից: Տիկին Ագնեսը ոտքը կախ էր գցում դարպասի հետեւում, հայացքով հետեւում նրան ու ձեռքով անում այնքան ժամանակ, մինչեւ Մարիոնը վերջապես անհետանում էր փողոցի անկյունում: Հաճախ Բելան հայտնվում էր հենց այդ պահին, դանդաղ քայլում դեպի իր տուն, ու երբ մոտենում էր, տիկին Ագնեսը մտնում էր ներս: Տիկին Ագնեսը երեւի երբեք չէր նկատում, թե Գեման ինչպես է ծիկրակում վերեւի պատշգամբից ու սպասում: Նա էլ էր ներս մտնում, երբ գալիս էր դուստրը՝ Բելան. գնում էր՝ աղջկա համար սուրճ պատրաստելու: Ես այս ամենը տեսնում էի, մինչ մայրս աղի կարագ էր քսում հացի երկու կտորի վրա, մեկ-երկու ձու էր խաշում ու աղ դրած միսը տրորում: Բելան եւ Մարիոնը: Մարիոնը գեղեցիկ դեմք ուներ: Երբեմն ինձ թվում էր, թե քրոջս մեծ տիկնիկի դեմքն է: Բելայի դեմքը գեղեցիկ չէր, բայց հետո... պարանոցից ներքեւ... Իսկ ինչպե՞ս էր քայլում, ի՞նչ ծուլորեն էր ճոճում ազդրերը: Մարիոնը միշտ շտապում էր, առավոտյան գնում էր դպրոց, կեսօրից հետո գալիս էր տուն, երեկոյան գնում էր պատարագի, հետո տուն, հետո մասնակցում Կաթոլիկ շարժմանը, հետո նորից տուն գնում: Իսկ շաբաթ առավոտները, մինչ Բելան կհայտնվեր, երեւում էր մուտքի դռան մոտ՝ ձեռքին երկու դույլ, աթոռակ ու առաստաղի խոզանակ, ու սկսում էր աշխատել տան ճակատային մասի վրա: Շաբաթ օրերը մուգ կանաչ վերնազգեստ ու շագանակագույն կիսաշրջազգեստ էր հագնում: Մուտքի դուռը, պատուհանն ու վերնափեղկը խոզանակով սրբելուց հետո կանգնում էր աթոռակին, որ լվանա վերնափեղկը, դուռը, իսկ հետո՝ շերտավարագույրները: Մի քանի անգամ իջնում-բարձրանում էր: Հագին վարդագույն հողաթափեր էին, ճիշտ քրոջս սվիտերի գույնին: Հետո ցողում էր մայթը, տան շեմն ու շերտավարագույրները: Այդ պահին հայտնվում էր Բելան՝ ծխախոտը մատների արանքում, ծույլ-ծույլ քայլելով: Մարիոնին հաջողվում էր ամեն ինչ արագ ներս տանել ու փակել դուռը: Բելան մտնում էր տուն, հետեւից փակում դուռը: Տասնհինգ րոպե հետո հայտնվում էր Գեման, զամբյուղը ձեռքին, ու քայլերն ուղղում դեպի Մերիի բանջարեղենի խանութ: Մարիոնն ու Բելան: Եվ Յուտա Հայմը: Մեր փողոցում մեքենաները շատ չէին: Երբեմն կիրակի օրերին՝ կեսօրից հետո, դեղին մեքենա էր անցնում, ու երբ կանգնում ու ազ-

դանշան էր տալիս, Բելան դուրս էր գալիս, նստում ու գնում: Երբեմն էլ մեքենան ոչ թե գնում էր, այլ մնում տեղում, Բելան նստում էր մի սպիտակահեր տղամարդու եւ նրան նման մի ուրիշ տղամարդու հետ, որը հետեւի նստարանին էր: Մի ժամ հետո մեքենայի շուրջ սիգարետի ծխուկներ էին հայտնվում: Կիրակի օրերին գնում էի ժամը ութի պատարագին: Նստում էի աջ կողմում, որտեղից քահանան համարյա չի երեւում, բայց փոխարենը շատ լավ երեւում էր Մարիոնը, որն ի խորոց սրտի երգում էր երգչախմբի մյուս աղջիկների եւ եկեղեցու սպասավորների հետ. «Nadurawk ja hobz tas-Sema, frott l-imhabba l-izjed bnin».[2] Նա մոտենում էր հաղորդության սեղանին, վերադառնում իր տեղը՝ գլուխը կախ ու ձեռքերը խաչած, հետո աչքերը փակ ծնկի իջնում: Ու վերջին անգամ խաչակնքելուց հետո Մարիոնը մյուս աղջիկների ու սպասավոր տղաների հետ երգում էր «Fil-Hlewwa ta' Mejju»[3]-ը: Մարիոնը: Պատշգամբում, տիկին Դեպասկալի, Միսս Գրիմայի ու միսս Կամենզուլիի հետ: Հետո մոտենում էր Դուն Վիկտորը, ու Մարիոնը չգիտես ինչու հանկարծ լռում էր ու կախում գլուխը: Մի քիչ թափառելուց հետո հրաժեշտ էր տալիս բոլորին, դուրս գալիս ու մտնում Վերոնկայի հրուշակեղենի խանութ: Ես «Մարս» սալիկ էի խնդրում, իսկ Մարիոնը ռիկոտա պանրով գլանակներ ու սինիզզա կամ քաղցր կլոր փքաբլիթներ էր վերցնում, որի մեջտեղի ճեղքից սպիտակ, հյութեղ կրեմ էր ծորում: Երբեմն ժպտում էր ինձ, Վերոնկային: Հետո կտրում-անցնում էր հրապարակն ու շտապում տուն: Երբեմն կանգ էր առնում հրապարակում: Ալեքսանդերպլաց. զինվորները, ցուրտը, դատարկությունը, գորշությունը, հյուրանոցը, ժամացույցը, շատրվանը ու մարդիկ, որ նայում են քեզ այնպես, ինչպես ոստիկաններն են նայում, երբ հյուրանոցից դուրս ես գալիս, անցնում փողոցն ու քայլում մետրոյի կողմ: Ալեքսանդերպլացն ու այն մատուցողուհին: Յուտա Հայմը: Ժամանակ առ ժամանակ ստիպված կանգ է առնում, որովհետեւ հանկարծ հրապարակի մյուս կողմից հայտնվում է պարոն Մագրին, որը մի ժամանակ դասավանդել է զարմիկիս: Նա այնքան լայն է ժպտում... Մարիոնը: Պարոն Մագրին էլ է ժպտում: Մարիոնը երբեմն խոնարհում է հայացքն ու ավելի լայն ժպտում, հետո նայում է շուրջը: Պարոն Մագրին շուրջը չի նայում, այլ ուղիղ Մարիոնին. ինձ թվում է՝ աղջկա դեմքին է նայում: Տեսնում եմ, թե ինչպես է նայում Մարիոնի դեմքին: Ժպտում է: Մարիոնն էլ է ժպտում: Միայն ես չեմ ժպտում: Ժպտում են, հետո սկսում զրուցել: Բելան իջնում է ավտոբուսից ու անցնում հրապարակը, իսկ պարոն Մագրին նայում է նրան, իսկ Մարիոնը հետեւում է, թե նա ինչպես է նայում Բելային, որը ոչ ոքի չի նայում: Բայց հանկարծ «Աստղային

կազինի»[4] ծածկապատշգամբում հայտնվում է մեկը. մի ձեռքով թեյի բաժակ է բռնել, մյուսով՝ փոքրիկ վանդակ, որի մեջ աշխույժ թռչնակ կա, հետո ներսից դուրս են թափվում մի քանիսը, որոնց ձեռքերում գարեջրի գավաթներ են: Բելան թեքվում է անկյունում ու անհետանում: Մարիոնը ժպտում է պարոն Մագրիի կողքին, համարյա հրապարակի կենտրոնում: Մարիոնն ու պարոն Մագրին: Մարիոնը՝ պարոն Մագրիի հետ:

Երբ տիկին Ազնեսը մահացավ, մեր փողոցից շատերը գնացին նրա թաղմանը: Այնտեղ էր Էմման իր երկու երիտասարդ եղբորորդիների եւ նրանց մայրիկի՝ Բելայի հետ, այնտեղ էր տիկին Դեպասկալը՝ հենված իր փայլփլուն գավազանին, ինչպես նաեւ պարոն Մագրին տիկին Մագրիի հետ, որը դասավանդել էր քրոջս մինչեւ ամուսնանալը: Մարիոնն առաջվա պես շտապում էր դպրոց, ամեն շաբաթ առավոտ բարձրանում աթոռակին՝ քիթը սեղմելով մուտքի դռանը, ժամը ութին գնում էր պատարագի, ամեն կիրակի երգում էր: Նա դեռ գեղեցիկ էր:

Այն ժամանակ հայրս Il-Helsien-ի[5] իր օրինակը ծալում էր չորս մասի ու խցկում պիջակի գրպանը: Ես շատ հաճախ էի գնում զուգարան, բայց շաբաթ-կիրակի օրերին՝ հատկապես. շաբաթ օրերին՝ ռավիոլայով ու տոմատի սոուսով լանչից անմիջապես առաջ, իսկ կիրակի օրերին՝ հենց որ մակարոնը եփում էր գազօջախում: Ոտքերիս ծայրերի վրա ներս էի մտնում, հետեւիցս փակում դուռն ու ինձ հետ տանում Մարիոնին ու Բելային: Ես ժպտում էի Մարիոնին, ժպտում էի նաեւ Բելային: Հետո կտրում էի Բելայի գլուխն ու դնում հատակին, պոկում Մարիոնի գլուխն ու ամրացնում Բելայի պարանոցին: Ու գրկում էի նրան, գլուխս թաղում նրա կրծքերի արանքն ու քթով տրորում պարանոցը, որից ոսկե շղթաներ էին կախված: Մատներս այնքան էին ձգվում ու դողում, որ դառնում էին լպրծուն, իսկ շունչս համարյա կտրվում էր: Չշտապեցի ու տեսա, թե Մարիոնն ինչպես է ծուլորեն քայլում. հագին ոչ թե վարդագույն հողաթափեր էին, այլ բարձրակրունկ կոշիկներ, ձեռքին առաստաղի խոզանակի փոխարեն սիգարետ էր: Նա ինձ տեսավ հրապարակում. շուրթերին ռիկոտա էր քսվել. ժպտում էր ինձ: Երբեմն այնքան դանդաղ էր քայլում, որ մինչեւ հասնում էր ինձ, շունչս կտրվում էր, քրտինքի մեջ կորչում էի: Մարիոնն ու Բելան: Շաբաթ եւ կիրակի: Երբեմն՝ նաեւ շաբաթվա օրերին: Երբեմն՝ գրեթե ամեն օր՝ կիրակիից մինչեւ շաբաթ:

Պատից այն կողմ ուրիշ աշխարհ էր: Պատը տեսե՞լ ես: Երբ պառկեցին, ու երբ կինը զգաց, թե նա ինչպես ձեռքով թեթեւ շոյեց իր մեջքը, անջատեց լույսը: Լսում էր, թե ինչպես է հանում սվիտրը, արձակում կրծկալը, ու նրան թվում էր, թե կռանում է, որ կախի այն բազմոց-մահճակալի կողքին դրված աթոռից: Ամեն ինչ կատարվեց խավարի մեջ: Ամեն ինչ զգաց: Ոչինչ չտեսավ: Թռիչքի ամբողջ ընթացքում կնոջ մասին էր մտածում: Մի անգամ էլ վերհիշեց սյուժեն՝ այս անգամ մենակ: Բեռլինի «Ծտադտ» հյուրանոցը, հրապարակը, «Չառլի» անցակետը, զինված զինվորներին, որոնք հսկում են, ամեն վայրկյան աչքերով լուսանկարում քեզ՝ կիսով չափ թաքնվելով կեպիի տակ: Անձնագիր, ելք, մուտք ազատ աշխարհ: Բեռլին Տեգել, առավոտյան ժամը 8:40. քո մասին եմ մտածում: Դու ինձ ոգեւորում ես: Ուզում եմ քեզ: Այնքա՜ն եմ ուզում: Ալեքսանդերպլաց: Արեւելյան Բեռլին: Ներսս դատարկվում է, երբ սկսում եմ մտածել տան, փողոցի, քաղաքի մասին, որտեղ ապրում եմ, երկրի մասին: Յուտա Հայմը պատմելու շատ բան ուներ, բայց զսպում էր իրեն: Յուտա Հայմն ինչերի՜ միջով էր անցել, որտեղի՞ց գիտեր այս պատմությունները: Այնտեղ ոչ ոք պատմություններ չգիտի:

Ալեքսանդերպլացում դեռ ցուրտ է: Առավոտյան մարդիկ սպասում են ավտոբուսի կամ մետրոյի. նրանց աչքերը դեռ բացվում-փակվում են ծածկոցների տակ: Աչքերը կիսափակ են. թագավորում է լռությունը, դատարկությունը, հրապարակի գորշությունը: Այս մարդիկ հրապարակն են կրում իրենց աչքերի մեջ: Ալեքսանդերպլացը Յուտա Հայմի աչքերում է, երբ նա մատը սահեցնում է սուրճի բաժակի շուրջ: Նրանց աչքերի մեջ ուշ հետկեսօրի խավարն է: Ինչպես խավարը, որ պատում է տունը, նույնիսկ այսօր, երբ հոսանքն անջատված է: Եվ հիմա, երբ կինը քնած է մահճակալի մի անկյունում, իսկ դուստրը՝ իր ննջասենյակում, նա զգում է ուսերին իջած ծանրությունն ու խավարը: Երեւի քնած է եղել, իսկ Յուտա Հայմը բացել է իր փոքրիկ ուսապարկն ու արագ տեղավորել դրանք, իսկ ինքը ոչինչ չի նկատել. գուցե ծալել է, որ ուշադրություն չգրավեն, իսկ ինքը չի նկատել ու բերել է իր հետ: Անընդհատ փորձում է մոռանալ, բայց մոռանալու փոխարեն ավելի վառ է հիշում ...

Նույնիսկ ինքնաթիռի մեջ քո մասին էի մտածում: Քո մարմնի, որ այնքան շատ էի ուզում, որին այնքա՜ն էի ուզում տիրանալ, սեղմել ինձ. ուզում եմ, որ պարես ինձ հետ, կամավոր տրվես ինձ: Բարձրում, ինքնաթիռի

մեջ, երազում եմ, թե ինչպես ես տնքում. երազում եմ տեսնել քեզ վախեցած, նյարդային, երբ դեմքս թաղում եմ կրծքիդ մեջ: Ուզում եմ դեմքիս զգալ ջերմությունդ, խոնավությունդ, ուզում եմ զգալ բույրդ, բույրը, որ թաքնված է քո ներսում:

-Էրիկ:
-Ինչ:
-Հոսանքը տվեցի՞ն:
-Տվեցին, հետո նորից անջատեցին:
-Ի՞նչ ես անում:
-Գալիս եմ: Դու գնա քնիր: Շատ ուշ է:

Ստածում եմ քո մասին ու խղճում եմ քեզ: Քո պատմությունը երջանիկ ավարտ չունի: Ու դու տառապում ես: Ցանկությունս այնքա՛ն մեծ է: Քեզ եմ ուզում, քո մարմինը: Ալեքսանդրան, խավարը: Երկու օր առաջ էլ խավարի մեջ էի: Ու լռության: Ու նաեւ պառկած էի մի կնոջ կողքին: Յուտա Հայմի: Պետք է որ շատ ուշ լիներ: Ինձ այդպես է թվում: Հենց որ իջանք ավտոբուսից, շտապ քայլեցինք Մարցանի ուղիղ ու մութ փողոցներով, աչքերը գետնից չկտրելով, մինչեւ հասանք բազմահարկ շենքին, վերելակին, մեր հարկին, Յուտա Հայմի բնակարանի փոքրիկ բանալու անցքին: Երկար ժամանակ չէինք խոսում: Ես թերթում էի ամսագրերը, որոնք թափված էին մուտքի դռան մոտ դրված սուրճի սեղանին, իսկ նա բացում էր մուգ նարնջագույն բազմոց-մահճակալը: Նույնիսկ ցնցուղ չընդունեցինք: Պառկեցինք: Հետո խավար տիրեց: Հետո նա մարմնիս վրա էր, քրտինքի մեջ կորած, ու ես լսում էի, թե ինչպես է վայելում հաճույքի գերագույն պահը: Երբ սկսում է գոռալ, ձեռքով փակում եմ բերանը, բայց նա ուժով ու կոպիտ հրում է ձեռքս: Հաճույքի պահին ազատվում է ցավից, հիասթափությունից, դատարկությունից, Ալեքսանդերպլացից, որ այնքա՛ն լայն է ու գորշ: Ու խղճուկ: Եվ գեղեցիկ, որովհետեւ խղճուկ է: Գորշ կոստյումով տղամարդը: Այս բոլոր մակերեսները, որ հիմա աչքի առաջ են, կարծես խավարից են հյուսված: Միայնակ եմ: Կարծես ինձ հետ բերել եմ Ալեքսանդերպլացը, այն Ալեքսանդերպլացը, որտեղ ցնցվեցի, երբ տեսա ինձ մոտեցող երկու ոստիկանին, որոնք հարցրին, թե ուր եմ գնում: Կամ հրապարակը առավոտյան վեցից անմիջապես հետո, որն ինձ ասում էր, թե գնալուս ժամանակն է՝ հիշեցնելով, որ խոստացել եմ հոկտեմբերին վերադառնալ: Բայց մինչեւ հոկտեմբեր դեռ այնքա՛ն ժամանակ կա: Ժամանակը

շա՛տ երկար է: Այնքա՛ն երկար: Այդ լռությունը: Այս լռությունը: Այն կարծես աննկատ սողոսկել է բաճկոնիդ գրպանի մեջ, ու դու չիմանալով այն բերել ես քեզ հետ:

Նա վերջապես գնում է քնելու: Միլդրեդը քնած է՝ արջուկը գրկում: Ալեքսանդրան կծկված քնած է մահճակալի իր կողմում: Էրիկը պառկում է ու փակում աչքերը: Ու անմիջապես ննջում է, շատ հեշտ ու հանգիստ: Ու ոչ, մինչեւ առավոտ երազ չի տեսնում:

Էմման առաջնակարգ դերձակ էր: Հագուստ էր կարում հաճախորդների համար: Միջանցքից բացվող հյուրասենյակը ծառայում էր որպես հանդերձարան, որտեղ կանայք փորձում էին իրենց զգեստները: Էմմայի մոտ գալիս էին երկու տեսակ հաճախորդներ. ըստ տեսակի էլ նրանց հրավիրում էր տարբեր օրերի: Հարուստները, որոնք գալիս էին Սլիմայից կամ Վաճառականների փողոցից՝ երկու Բարակկաների մեջտեղից[6], շոր փորձելու էին գալիս երկուշաբթի եւ հինգշաբթի: Չորեքշաբթի եւ ուրբաթ օրերն այն կանանց համար էին, որոնք աշխատում էին Սիթիի մյուս փողոցում: Երեքշաբթիները թշվառների համար էին: Էմմայի ամուսինը նրան մենակ էր թողել երեք մանկահասակ աղջիկների հետ: Երբ փոքրը դարձավ տասնվեց տարեկան, Էմման իմացավ, որ իրեն ընդամենը մի քանի ամսվա կյանք է մնացել: Ու մի օր՝ շաբաթ առավոտյան, Էմման աղջիկների հետ գնաց Վաճառականների փողոց՝ մի քանի մետր սեւ կտոր (ամենաթանկ սեւ կտորը) ու նաեւ աստառ, կոճակներ ու սեւ թել գնելու: Հաջորդ մի քանի շաբաթվա ընթացքում Էմման չորս զգեստ կարեց. մեկը մեծի, մյուսը միջնեկի, մեկն էլ՝ ամենափոքր դստեր համար: Մի զգեստ էլ իր համար կարեց, որ իրեն դրանով հողին հանձնեն: Ամենափոքրի շորի վերջին ծալակարը դնելուց մի շաբաթ հետո Էմման փորձեց իր սեւ զգեստը, իսկ հաջորդ օրն աղջիկները փորձեցին:

Լիզան: Էրիկը վաղուց է ճանաչում նրան: Կարելի է ասել, մանկուց: Այո, հենց այդպես էլ կա: Աղջիկն իրենից երկու տարով մեծ էր: Երբ Էրիկն ինքնաթիռ նստեց, մեկնեց պատը տեսնելու, իսկ հետո հանդիպեց Յուտա Հայմին, Լիզան արդեն ամուսնացած էր, ուներ տասնամյա դուստր, որդի ու ամուսին, որը նրան չէր սիրում:

-Մայրիկը պաշտում է քեզ: Կարծում է, որ մեր սերնդի լավագույն դերասաններից ես:

Առաջին նախադասությունն էր, որ ասաց նրան:

-Ծնորհակալ եմ ջերմ խոսքերի համար: Շատ գեղեցիկ մայր ունես, գիտե՞ս:

Այդ օրը նա սպիտակ վերնազգեստով էր, դարչնագույն կարճ փեշով, բարձրակրունկ կոշիկներով, մազերը բարձր հավաքած: Էրիկը նայեց նրա շուրթերին ու նկատեց, որ կարմիր են: Այդ օրը տանն արտասվել էին, որովհետեւ քահանան հրաժարվել էր նրանց տուն մտնել ու օրհնել. հայրը մահացու մեղք էր գործել: Հոր համար բոլորովին միեւնույն էր, բայց մայրն

արտասվում էր՝ կարծելով, որ առանց Աստծո սրբազան ջրի անեծք կիջնի տան ու տանն ապրողների վրա: Իսկ պատկերացնու՞մ եք, թե ինչ կասեն հարեւանները, հատկապես տիկին Ագնեսը: Նա տնից դուրս էր եկել զայրացած ու վիրավորված, ինչ-որ մեկին տեսնելու ցանկությամբ, բայց ոչ մեկին չտեսավ ու ի վերջո հայտնվեց Վալետայում, իր նմանների շրջապատում. ինչ-որ մեկը ծանոթացրեց նրանց: Անունը Լիզա էր: Նրանք որոշ ժամանակ հանդիպում էին, գնում Վալետայի գիշերային ակումբ: Լիզայի հայրը հեռացել էր տնից. ասում էին՝ ուրիշ կնոջ մոտ է գնացել. մայրը բավական ազատամիտ էր, հագուստ էր կարում տարբեր հաճախորդների համար, գնում էր թատրոն, իսկ ամուսնու հեռանալուց հետո՝ երբեմն նույնիսկ պարահանդես: Երկար ժամանակ հանդիպում էին, խոսում, ծիծաղում, սեր անում մայրիկի մեծ մահճակալի վրա, տատիկի ամառանոցում: Դա Ալեքսանդերպլացից առաջ էր: Բայց ոչ շատ առաջ: Երբ Լիզան ամուսնացավ հյուսիսից եկած շիկահեր տղամարդու հետ, նա զայրացավ: Շատ զայրացավ: Երբ հանդիպեց Լիզային ու նկատեց, որ մատին ամուսնական մատանի կա, հազիվ կարողացավ մի երկու բառ ասել: Ու երբ ինքն էլ ամուսնացավ հյուսիսցի մի շիկահերի հետ, Լիզան բարկացավ:

-Ախր ասում էիր, որ երբեք չես ամուսնանա:

-Մենք երեխա ենք ունենալու:

-Ստախոս: Դրա համար չէ, որ ամուսնացել ես: Կարծում ես՝ չգիտե՞մ պատմությունդ: Լոնդոն, հիպիներ, ծուխ, սեր:

-Նա մենակ էր:

-Ու դրա համա՞ր ամուսնացար: Քեզ համար խաղուպար է, հա՞:

-Իհարկե: Իսկ ի՞նչ կարող էի անել:

-Ուզում ես ասել՝ ստեղծված ես ամուսնության համա՞ր:

-Իսկ դու՞:

-Իսկ քո կարծիքո՞վ:

-Հաստա՞տ ուզում ես լսել կարծիքս:

-Չէ: Ոչինչ մի ասա: Իմ գործը չէ, ինձ համար մեկ է, թե ինչ ես մտածում: Մի խոսքով, շնորհավորում եմ:

Եվ հետագա տարիների լռությունը կախվեց նրանց գլխին այն օրը, երբ Լիզան մոտեցավ նրան. Կլավդիոսի թույնը քիչ առաջ սպանել էր նրան բեմի վրա, եւ նա ժպտաց Լիզային, Լիզան էլ նրան ժպտաց, ու երբ հարցրեց, թե ինչպես է, Լիզան չպատասխանեց, հետո փոքրիկ խաղեր եղան, ժպիտներ, հայացքներ ու կատակներ: Հիշողություններն արթնացան. հիշեցին մայրիկի անկողինը, տատիկի ամառանոցը, որ հիմա Լիզայինն էր: Հիշեց

Ալեքսանդերպլացը, Յուտա Հայմին եւ նամակները, որ շարունակ գնում էին պատից այն կողմ, քաղաք, ու ոչ ոք չգիտեր՝ հասնու՞մ են հասցեատիրոջը, թե ոչ, եւ Ալեքսանդրային, եւ Միլդրեդին, եւ նվերը (չէ՛, փափուկ արջուկից ու գրքից բացի էլի նվեր կար), որ թաքցրել էր սպիտակեղենի մեջ, այնքան լավ էր թաքցրել, որ մաքսավորը չէր նկատել:

-Բեռլինը գեղեցի՞կ քաղաք է:

-Նույնիսկ չգիտեմ: Երեւի գեղեցիկ է: Բայց քեզ հաստատ դուր չի գա:

-Այնտեղ պատ կա, չէ՞:

-Այո, շատ երկար:

-Ու բա՞րձր:

-Ահագին բարձր:

Մի երկար պատ է անցնում մահճակալի երկայնքով: Այդ օրը նա չէր զգացել, իսկ աղջիկը զգացել էր: Ուզում էր վայելել նրա ջերմ բույրը, երբ հիշում էր սուրճի մեջ հալչող սառնաշաքարը, ներքեւից հայացքը, առաջին հայացքը «Մոկաբայում», եւ Ալեքսանդերպլացը՝ ընդարձակ, սառն ու անձայն: Այնպես սեղմվեց Էրիկին, ինչպես երիտասարդ տարիներին, Լոնդոնից առաջ: Հետո ագրեսիվ դարձավ, դեմքը ծամածռվեց, ատամները կրճտացին:

-Ես քեզ բան եմ բերել Գերմանիայից:

Բայց նա Էրիկին անկողին տարավ ու ասաց, որ կարոտել է, կարոտել է մարմնի հպումը. ախր այնքան վաղուց չէին հանդիպել: Հետո Էրիկն ուզում էր խոսել դիտաշտարակում պատի երկայնքով կանգնած զինված ժամապահների մասին, լռության մասին, մետրոյում անիմաստ նայող մարդկանց մասին, ցուրտ ու գորշ եղանակի մասին: Նույնիսկ ուզում էր հիշատակել այն գորշ շենքն ու ութերորդ հարկի բնակարանը: Ախ, այնքա՜ն էր ուզում խոսել Յուտա Հայմի մասին, նրա երկար շեկ մազերի, նրա մատների ու թեւերի, ազդրերի, մի քիչ խռպոտ ձայնի եւ սառնաշաքարների մասին, որ շաքարի փոխարեն գցում էր սուրճի մեջ (դրանք էլ հաստատ սրճարանից էր գողացել): Բայց փոխարենը թույլ տվեց, որ աղջիկը հեծնի իրեն ու աչքերն իր աչքերին գամած՝ իր ներսն առնի, այնքան, մինչեւ շունչը կտրվի, ու աչքերում արցունքներ հայտնվեն: Սովորական օր էր: Ամեն ինչ սովորականի պես էր, բացի նվերից: Տնօրենը 8:30-ին գնաց: Նա գիտեր, որ Ալեքսանդրան 9:45-ին է դուրս գալու: Ժամը տասին զանգեց՝ մատը պատրաստ պահած, որ եթե Ալեքսանդրան պատասխանի, անմիջապես անջատի: Եթե Էրիկը վերցներ (միշտ էլ այդպես է եղել), կշշնջար այնպես, որ հասկանալի լիներ, ու Էրիկը մեքենայով կմոտենար գրասենյակի

մասնաշենքին, նրանք կգնային այն տունը, որտեղ աղջիկն ապրում էր ամուսնու հետ, ամառանոց, որ մի ժամանակ տատիկինն էր, Աստված հոգին լուսավորի: Կինն առաջինը կմտներ, կհամոզվեր, որ ամուսինը գնացել է աշխատանքի: Կփնթփնթար, եթե գուլպաներն ու վարտիքը թողած լիներ հատակին, մահճակալի մոտ: Հետո Էրիկը նրա հետեւից ներս կգնար, մի քիչ կխաղային, գործի կանցնեին, ձայները գլուխները կգցեին, շնչահեղձ կլինեին, կհանդարտվեին, կշտապեին լոգարան, արագ կհագնվեին ու կվերադառնային աշխատանքի:

Բայց այսօր, հենց որ հատակից հավաքեց ամուսնու վարտիքն ու գուլպաները, նրա հետ ներս մտավ Յուտա Հայմն ու իրենից շուտ հանվեց: Նույնիսկ իրենից շուտ պառկեց մահճակալին: Ու երեւի իրենից շուտ էլ հագուստից շունչը կտրվեց: Իսկ նա չնկատեց: Կամ գուցե նկատեց: Ու մեքենայի մեջ, երբ վերադառնում էին գրասենյակ, հարցրեց, թե Էրիկն իր մարմնի որ մասն է ամենից շատ սիրում, հետո հարցրեց, թե որը չի սիրում, ու չհավատաց, երբ նա ասաց, թե բոլորն էլ սիրում է:

-Դե լավ, վերջ տուր:

-Արդեն ասել եմ, չէ՞:

-Լավ: Հիմա անունը ասա:

-Յուտա Հայմ:

-Մազերի գույնը:

-Շեկ:

-Երկա՞ր: Կա՞րճ:

-Երկար:

-Բարձրահասա՞կ, թե ցածրահասակ:

-Միջին:

-Դեմքը լա՞յն է, թե նիհարիկ:

-Լայն է: Համարյա կլորաթշիկ:

-Ի՞նչ դաժան ես, ստոր: Խո՛զ:

Մի քանի ամիս տեւած լռություն: Երկար լռություն: Մինչեւ հոկտեմբեր: Հեռախոսազանգ: Ալեքսանդրան ընդմիշտ հեռանում է: Նրա ժպիտը:

-Չէ, կարող ենք հանդիպել քո տանը:

-Անշուշտ:

Մինչ այդ Յուտա Հայմի դեմքը լղոզվել էր. նա սկսել էր հալչել չիրականության ոլորտներում, ինչպես հալվեց-անհետացավ մետրոյի բազմության մեջ, երբ ընկերուհու հետ շտապ անցավ Ալեքսանդերպլացը, իսկ գորշ կոստյումավորը կրկնակոխ գնաց զբոսաշրջիկի հետեւից: Դրան հաջոր-

դեցին երկար սիրախաղերը բազմոցի վրա, լոգարանում, խոհանոցում, տանիքի զուգարանում, հետնաբակում: Ամեն անգամ, երբ հաճույքից հեւում էր, ճչում էր, որ սիրում է նրան, սիրում է այն օրից, երբ տեսավ նրան՝ կարճ դարչնագույն փեշով ու սպիտակ վերնազգեստով:

Լիզան հիմար է: Բայց ախր եթե հիմար չլիներ, նրանց կապն այդքան երկար չէր տեւի: Երբ գնաց Լիզայի տուն, ամուսնու անկողինը դեռ չէր սառել. նա ժպտում էր, ծամածռում դեմքն ու շատախոսում գրքերի մասին, որոնք Էրիկը երբեք չէր կարդացել ու իրեն երբեք չէր ստիպի կարդալ: Երբ Ալեքսանդրան գնաց, ու Ալեքսանդրայի փոխարեն Լիզան սկսեց իր տուն գալ, հասկացավ, թե ինչ ապուշն է եղել: Ալեքսանդրան երազել անգամ չէր կարող դրա մասին: Երբեմն, շատ հազվադեպ, նրանք ոչինչ չէին անում, փռվում էին հետնաբակում, մանդարին ուտում, չինական թեյ խմում: Լիզան հրաշալի մարմին ուներ, ուղղակի կատարյալ: Նույնիսկ երկրորդ հղիությունից հետո կարողացել էր պահպանել կազմվածքը: Բոլորը խոսում էին նրա մարմնի մասին, իսկ նա բարձր հավաքում էր մազերը, օդանավակայաններում գնում ամենաթանկ օծանելիքը: Ամեն անգամ, երբ հանում էր շորերը, Էրիկի հայացքն ընկնում էր նախ ոտքերի մատներին՝ կլորացրած եղունգներով, կատարյալ ու փայլուն կարմիր լաքով, հետո նայում էր նրա փարթամ կրծքին ու մազերին, որ միշտ այնքան նրբագեղ էին ու այնքա՜ն բնական:

-Մենք պիտի խոսենք:

Բայց այդ օրը ոչնչի մասին չէր ուզում խոսել, բացի նախորդ օրվա իրադարձություններից. հարյուրավոր մարդիկ գնացել էին քաղաք՝ պատը քանդելու: Աչքերը լայն բացած նստել էր հեռուստացույցի առաջ. գուցե Յուտա Հայմն այդ մարդկանց մեջ է:

-Մի բան պիտի ասեմ քեզ: Լուրջ հարց է: Դեմ չե՞ս:

Հեռուստացույցով մի տեսանյութը հաջորդում էր մյուսին: Հարյուրավոր մարդիկ բարձրանում էին պատի վրա: Պատն արդեն ցանկապատի բարձրության էր, ճոճվում էր ու քիչ էր մնում փլվեր վերեւ մագլցող, նույնիսկ հեծնող կամ պատի մյուս կողմն անցնել փորձող մարդկանց ծանրությունից: Գուցե հենց այս բազմության մեջ էր այն կինը, որը սուրճի մեջ սառնաշաքար էր գցում, որովհետեւ շաքար չուներ: Գուցե այնտեղ էր՝ հիշողություններով կամ առանց հիշողությունների, երկար նամակներով, որոնց այդպես էլ երբեք չպատասխանեց: Գուցե այնտեղ էր, շամպայն էր խմում, գրկում ինչ-որ մեկին, ժպտում, ծիծաղում, ուրախությունից լաց լինում: Պատը:

-Զարմանալի է, չէ՞: Բոլորովին անսպասելի է: Նույնիսկ նրանք չէին սպասում:

-Դեմ չե՞ս, եթե անջատեմ: Ուզում եմ մի բան ասել: Կարեւոր է: Խնդրում եմ:

Էրիկն իջեցնում է ձայնը:

-Չէ, անջատիր, Էրիկ: Ծատ լուրջ բան պիտի ասեմ:

-Ի՞նչ է եղել:

-Երկու օր առաջ բժշկի մոտ էի: Լուրջ հիվանդություն ունեմ: Կրծքիս մեջ ուռուցք կա:

Իր ուղարկած նամակներից մեկում (որոնց Յուտան երբեք չէր պատասխանում) գրել էր. «Ամեն անգամ, երբ ինքնաթիռ եմ նստում, մտածում եմ քո մասին: Այնքա՛ն եմ ուզում քեզ: Այս մեծ բարձրության վրա երազում եմ, թե ինչպես ես տնքում. երազում եմ քո մասին՝ վախվորած ու նյարդային, երբ դեմքս թաղում եմ մարմնիդ մեջ: Ուզում եմ զգալ դեմքիդ ջերմությունը, խոնավությունը, ուզում եմ բույրդ զգալ, բույրը, որ թաքնված է ներսումդ: Ափսոս, որ շատ ուշ հանդիպեցի քեզ, շա՛տ ուշ: Պետք է գաղտնի պահել: Բայց ի՞նչը: Իմ մեծ ցանկությունը. ուզում եմ, որ միասին քայլենք, անցնենք հրապարակը, որտեղ վերջին անգամ տեսա քեզ: Քայլենք պատի ստվերում՝ նայելով, թե զինվորներն ինչպես են հետեւում մեզ՝ ձեռք ձեռքի տված, գրկախառնված քայլողներիս: Ինչու՞ չես պատասխանում»:

Իսկ կարմիր վարդերով ու սրտերով բացիկի վրա գրել էր. «Մտածում եմ քո մասին ու խղճում եմ քեզ: Տհաճ պատմության մեջ ես ընկել: Ու տառապում ես: Ինչքա՛ն եմ ուզում քեզ, քո մարմինը. խելքս թռցնում եմ: Կուզեի նորից տեսնել քեզ անկողնում, այն կիսաշրջազգեստով, որի կողքերից երկար կտրվածքներ կան, սպիտակ, թմբլիկ ազդրերդ մերկ են, գեղեցիկ: Ուզում եմ տեսնել, թե ինչպես ես հանում շորերդ ու անկողնում մերկ պառկած՝ սպասում ինձ: Ուզում եմ, որ մարմնիս վրա լինես, հեւասպառ, քրտնած: Ուզում եմ շշմել, ապշել իմ տեսածից: Հենց այսպես, առանց վախի, առանց ամոթի: Այնպես բղավիր, որ թոքերդ պատռվեն, դու՛րս թող ցավը, հիասթափությունը, տխրությունը»:

Այս բացիկից հետո հեռախոսազանգ ստացավ. «Հենց հիմա արի իմ հետեւից: Սովորական մուտքից: Խելագարվում եմ, երբ այդպես ես գրում: Գիտես, չէ՞: Դե սպասում եմ»:

Լռություն:

Լռություն, երբ ոչ ոք չի խոսում: Նա հիշում է Յուտայի խոսքերը. ասում էր, թե ինչ անկարեւոր է ինքը, ինչքան փոքր ու աննշան: Ասում էր, որ Գերմանիան մեծ է, բայց հրապարակը կարծես ավելի մեծ է: Այն պահին, երբ տեսավ, թե Յուտան ինչպես ընկերուհու հետ շտապ անցավ հրապարակը, ու երբ ոստիկանները մոտեցան իրեն ու հարցրին, թե ուր է գնում, երբ հասկացավ, որ կորցրեց նրան, անսահման փոքր ու անզոր թվաց իրեն: Ճիշտ այնպես, ինչպես «Չառլի» անցակետում եւ օդանավակայանում, երբ բացում էր ուղեբեռը: Մետրոյի մարդիկ, այդ խավարի մեջ, ցուրտ արեւա-

ծագին հերթով ասում էին, որ ասելիք չունեն. այստեղ ոչ ոք չի խոսում, բոլորը լուռ են: Մետրոյում: Իսկ տա՞նը: Տանը լռությունը շարունակվում էր: Մարդիկ չէին կարող իր նման լինել, բոլորը տարբեր էին: Տանը լռություն էր, որը խախտում էր միայն Միլդրեդի լացը, կամ ստերեոն, որ լռեցնում էր մնացած ամեն ինչ: Լռություն՝ տան ամեն մի անկյունում, ամեն մի սենյակում, բոլոր նկարների շրջանակներից, բոլոր հայելիներից, իր ու Ալեքսանդրայի շուրթերից կախված լռությունից: Մոտ օրերս կգնանք ծով, կամ էլ զբոսանքի կգնանք: Բայց ամեն անգամ անձրեւ է գալիս, կամ քամի է փչում, կամ ջերմաստիճանն է կտրուկ իջնում, կամ ցուրտ է՝ դրսում ու ներսում: Ինչպես հայրական տան լռությունը, այն հյուղակի, որտեղ մի ժամանակ ապրում էին: Տան լռությունն այն օրը, երբ մի քանի փողոց այն կողմ քաղաքական հավաք եղավ: Դրսում աղմուկ-աղաղակ էր, առաջնորդը հայտարարությամբ էր հանդես գալիս, զանգերը ղողանջում էին եկեղեցու աշտարակից: Ու նրանք լռեցին՝ սպասելով, թե ծերունին երբ կվերադառնա ու կխոսի հենց նոր լսածի մասին, թե արքեպիսկոպոսն ինչպես գրողի ծոցն ուղարկեց իրեն, կպատմի ծխական քահանայի ու Պապի մասին: Եվ հետո, գոռում-գոչյուններից, ծափահարություններից ու զանգերից հետո, որոնք մի քանի ժամ չէին լռում, հոր պատմությունից հետո նորից լռություն տիրեց: Կան բաներ, որոնք հայտնի են, բայց երբեք չեն քննարկվում: Երբեք ոչ ոք ոչինչ չէր քննարկում: Ու որքան շատ ժամանակ էր անցնում, այնքան ամեն ինչ պարուրվում էր լռությամբ: Հարցերն այնքա՞ն շատ էին: Չափից շատ: Բայց լռությունը հեշտ էր տրվում, համենայն դեպս Էրիկ Սերիին. ընտելացել էր դրան: Այնքան էր ընտելացել, որ չէր հասկանում, թե Լիզան ինչու է շատախոսում, երբ իրենք սեր են անում:

Ալեքսանդրա. Մենք պիտի խոսենք, Էրիկ:

Մայր. Պիտի խոսենք, Էրիկ:

Միլդրեդ. Հայրիկ, քեզ ասելու բան ունեմ: Լուրջ հարց է:

Հայրն անշարժացավ, երբ վարագույրն ընկավ արքեպիսկոպոսի վրա. չբղավեց, Il-Helsien-ի իր օրինակը չմտցրեց կնոջ կամ մեկ ուրիշի աչքը: Ընկավ անկյունում ու անշարժացավ: Ու լռության մեջ կնքեց մահկանացուն:

Ու նույնիսկ հիմա Լիզան քննարկելու ինչ-որ լուրջ հարց ունի: Հիմա անշարժանալու Էրիկ Սերիի հերթն է:

Լռությունը: Լիզան լռությունը հավաքել էր փեշի մեջ, կոճկել վերարկուն ու հեռացել: Էրիկը գիտեր, որ Լիզան տխմար է: Բայց հիմա, երբ անշարժ

նայում էր հեռուստացույցին՝ ուշադիր ուսումնասիրելով բոլոր մանրամասները, ինքն իրեն ասաց, որ Լիզան շուտով կհեռանա: Ասաց նաեւ, որ պիտի օգնի նրան: Բայց ախր նա ամուսին ունի, չէ՞: Երեխաներ, քույր-եղբայրներ ունի: Նորից հայտնվում է դուստրն ու հարցնում, թե ինչու է մինչեւ հիմա նստած հեռուստացույցի առաջ: Բայց նա աչքը չի կտրում մարդկանցից, որոնք գրկախառնվում են ու փորձում բռունցքներով քանդել պատը: Ասում է ինքն իրեն, որ պարտավոր է մի բան անել: Դստերն ասում է, որ շատ կուզեր այնտեղ լինել: Ու մտածում է բոլոր նամակների մասին, որոնք այդպես էլ անպատասխան մնացին, օրինակ, այս մեկի. «Պատկերացնում եմ, հիմա արդեն պառկած ես բազմոց-մահճակալիդ: Ամսագիր ես կարդում կամ պատրաստվում ես վաղվան: Կամ գուցե իմ ուղարկած նամակն ես վերընթերցում: Ուզում եմ տեսնել քեզ քնած: Փակում եմ աչքերս ու փորձում պատկերացնել: Ջանք եմ գործադրում: Ինչ-որ մեկը բացում է բազմաբնակարան շենքի դուռը: Դատելով աղմուկից՝ փորձում է զգույշ ներս գալ, բայց չի ստացվում: Տեսնում եմ, թե ինչպես ես պառկում, ու ոգեւորվում եմ, երբ նկատում եմ ժանյակ հիշեցնող սեւ բլրակդ, որը մատնում է քեզ: Ո՞րն է քո բույրը: Թույլ տուր դիպչեմ քեզ, գոնե մատներով շոյեմ ճեղքը, որ կորչում-անհետանում է մարմնիդ խոր խորքերում: Այս առավոտ աղջիկս ներս վազեց՝ ձեռքին բաց վարդագույն ծրար: Չեմ ասի, թե սիրտս սկսեց արագ բաբախել, բայց հանկարծահաս երջանկություն զգացի: Դրոշմանիշերը, սակայն, գերմանական չէին, ու երբ բացեցի, հասկացա, որ ինձ բնավ հետաքրքիր չեն»:

Ահա մի քիչ էլ է բացում աչքերը: Ինքն է մեղավոր: Ինը տարի առաջ՝ հոկտեմբերին, պետք էր մի անգամ էլ գնալ, հատել սահմանը, անցնել Ալեքսանդերպլացն ու նստել «Մոկաբա» սրճարանի առաջին իսկ պատահած սեղանի առաջ ու նորից նույն ձեւով, նույն կիսաժպիտով նայել շուրջը: Բայց այդ հոկտեմբերն այդպես էլ չեկավ: Չեկան նաեւ հաջորդ հոկտեմբերները:

Վեր կացավ տեղից, որ զանգի նրան, բայց հասկացավ, որ այդ ժամին ամուսինը գուցե կողքին լինի: Տասը-տասնհինգ րոպեն բավական էր, որ ասեր, թե բժիշկն ինչ է ասել, եւ որ դեռ երկար չեն կարողանա հանդիպել: Իսկ գուցե այլեւս երբեք չհանդիպեն: Գուցե էլ երբեք լուր չունենա նրանից: Երանի նորից տեղեկություն ստանար: Ի՞նչ եղան իր ուղարկած բացիկները: Իսկ ի՞նչ եղան Գերմանիա ուղարկած նամակները: Որտե՞ղ են հիմա: Հեռուստացույցով հաղորդում-քննարկում է պատի մասին, ու ինտելեկտու-

ալ տեսքով մի կերպար հիշատակում է գաղտնի ծառայության մասին: Այդ օրը «Մոկաբա» սրճարանի մոխրագույն կոստյումովը հենց նա էր: Այն օրը, երբ Յուտային տեսավ ընկերուհու հետ, հայացքը վար, գլուխը կախ, նույնիսկ իր կողմը չնայելով Ալեքսանդերպլացն անցնելիս: Քսանչորս ժամ առաջ նրա հետ կիսում էր Ալեքսանդերպլացը: Յուտա Հայմի հետ: Արդեն տասը տարի է, որ այս անունը նրանից անբաժան է: Մարմինն էլ վաղուց նրա մոտ է: Ցկար, հիվանդ: Իրենը չէ: Գուցե հիմա նորովի բացահայտի ամուսնուն: «Իսկ ես,-մտածեց Էրիկ Սերին,- ես էլ ինձ նորովի կբացահայտեմ»: Ինչեւէ, ժամանակն է: Ժամանակն է, որ թաղի իր շրջապատի մեռյալներին ու շարժվի առաջ. նայելով դստերը՝ հասկանում էր, որ նա արդեն երիտասարդ կին է: Ի՞նչ է կարողացել տալ նրան: Դիակների գարշահոտը, որոնք ամեն գիշեր անկողին էին մտնում իր հետ: Նրա մայրը... որ հավաքեց իրերն ու իր երկիր վերադարձավ: Նույնիսկ Լիզան ուր որ է դիակի կվերածվի: Եվ անունների այն երկար ցանկը, որ միշտ այդքան խնամքով թաքցրել է նրանից: Չէր ճանաչում նրանց: Երբեք չէր լսել նրանց մասին:

Ահա այսպիսի գեղեցիկ պատմություն մի կնոջ մասին, որը հեռվից էր սիրում: 1987 թվական: Մայիս: Քվեարկության հաջորդ օրը նա հեռացավ՝ դստերը թողնելով հորաքրոջ հետ, ու ճանապարհ ընկավ դեպի օդանավակայան: Յոթ տարի առաջ մենակ մտավ մեծ հրապարակի կենտրոնի սրճարան ու դուրս եկավ երկարամազ շիկահերի հետ: Նրանք նստեցին մետրո, հետո ավտոբուս, ապա հասան պատի մեծ անցքին, ու այնտեղ նրա կյանքը փոխվեց: Հիմա, սպասման այս երկարուձիգ գիշերը, նա նստում է պիցցերիայում, հետեւում, թե սեւահերն ինչպես է տանում ափսեներն ու գինու շշերը, որոնք կուտակվել են կենտրոնում, ու ամեն անգամ կողքով անցնելիս ժպտում է: Հետո նստում է իր սեղանի առաջ, ծխում, ու ծխի թանձր քուլաները, որ բաց է թողնում շուրթերից ու քթից, ոչնչացնում են պիցցա ուտելու նրա ցանկությունը:

-Վերջերս ձեր երկրում էի: Մի շաբաթ այնտեղ անցկացրի:

-Համարյա այդքան ժամանակ էլ ես եմ այստեղ:

-Ճաշի ժամին նորից կհանդիպենք:

-Անկասկած: Եթե, իհարկե, քեզ ավելի շուտ չտեսնեմ:

-Թեթեւ տար: Սա Սիրակուզան է, հասկանու՞մ ես:

Պատերը ծածկված են խզբզանքով: Պատուհանից բարձր երաժշտություն է լսվում: Կողքով մոտոցիկլետ է անցնում: Corriere della Sera-ն հայտարարում է կառավարության երկար սպասված փոփոխության մասին: Ճուկայից փչում է նոր բռնած ձկան ու ծովամթերքի հոտը: Նա համարյա խաբում է ինքն իրեն, որ լավ է ճանաչում ցրիչներին եւ անցնող-դարձող մարդկանց: Ծովի հոտը: Մազ էր մնացել, որ հայրը հայտնվեր գերեզմանոցի մռայլ մասում ու թաղվեր այնտեղ՝ աղբահորում: Միասին էին լողափին, երբ հոր սիրտը խառնեց, ու ինքը նրա կողքին էր, երբ հոգին տվեց: Երբ աչքերն ոլորեց ու մի վերջին անգամ խոր շունչ քաշեց, նրա պատվին վերջին հրաժեշտ կազմակերպեցին, ու նա նկատեց, որ շուրթերն իրենից անկախ ինչ-ոչ բան են քրթմնջում: Համբուրեց խաչը, որ ֆրանցիսկյան հիվանդանոցի վանականը մոտեցրեց իրեն: Սհաջրա աշտարակի մոտ էին, երբ հոր սիրտը խառնեց. հետեւում էին հանկարծ ջրի մակերես դուրս եկած մի տղամարդու, որի ձեռքին երկար շոշափուկներով ութոտնուկ էր: Նայում էին ծովին: Այդ օրը հայրն իր հետ խոսեց մոր մասին: Պատմեց, թե խեղճ կինն ինչ փորձությունների միջով է անցել: Հետո նկատեցին, թե ինչպես դուրս եկավ սուզորդը, ութոտնուկը ձեռքին, ու հայրը խնդրեց իրեն

տուն տանել, որովհետեւ հոգնած էր: Երբ կարդաց Corriere della Sera-ի զեկույցը, ու զգաց փայտե արկղերից փչող հոտը, նորից տեսավ հորը, նրա թավ բեղերը, երբ տուն մտնելիս անիծում էր արքեպիսկոպոսին ու պատմում, որ եկեղեցու աշտարակների զանգերը ոչ մի վայրկյան չեն լռում: Հայրը մահացավ՝ այդպես էլ փառքի չհասած: Մահացավ հրդեհներից առաջ, պայթյուններից ու ծրարով ռումբերից առաջ, խռովությունից ու արցունքաբեր գազից, պատահական հրածգությունից առաջ: Երբ նրան ինչ-որ կերպ հաջողվեց զանգել հեռախոսախցիկից, որը լիքն էր մերկ կանանց նկարներով, քույրն ասաց, որ նախորդ գիշերվանից շարասյուների ձայնը չի լռել: Ասաց, որ հիմա գործազրկություն է, եւ որ հարուստ մարդիկ, որ միշտ ամեն ինչից շահում են, շուտով ավելի կհարստանան: Ասաց, որ շատերն աշխատանք են փնտրում, եւ վաղ թե ուշ ամեն ինչ արքեպիսկոպոսի հսկողության տակ կլինի: Արքեպիսկոպոսը դեռ հետապնդում էր իրենց. հիմա ծնողների տանը քույրն էր ապրում: Այդ տանն արքեպիսկոպոսն ամենամեծ զոհն էր... նրան նույնիսկ մեղադրում էին հոր մահվան մեջ, ու քիչ էր մնում մոր մահվան մեղավոր էլ ճանաչեին: Հաջորդ օրը վերադարձավ պիցցերիա ու ճանապարհին անցավ շուկայի միջով, որից ծովի հատակի հոտ էր փչում, իսկ արկղերի մեջ ութոտնուկներ էին լցրած: Հայրը: Մի անգամ՝ կեսգիշերին, երբ մեքենայով անցնում էր հրապարակով, հենց այնտեղ, եկեղեցու դիմաց, տեսել էր կրակի ճիրաններում հայտնված ակումբը: Վառվող բենզինի ու ատելության անտանելի գարշահոտ էր: Տարիներ առաջ այդ հրապարակը խլանում էր եկեղեցու ականջ ծակող զանգերից, իսկ հիմա եկեղեցին վառվում էր: Այդ օրն ինչ-որ մեկն ազդագիր էր կախել. ««Տորկայի» կրակները կայրեն ձեր հոգին»[7]: Ի՞նչ կասեր ծերուկը, եթե տեսներ սա: Երեւի էլի արքեպիսկոպոսի նախնիներին կհիշեր: Խոշոր հրդեհ էր, հրշեջները ջրի շիթերն ուղղում էին այդ կողմ. զանգերը լուռ էին: Ալեքսանդրան իրավացի էր. այս երկիրը մարդկանց համար չէ: Կարծում էր, թե պատմությունը բոլորովին այլ շարունակություն կունենա: Կինն էլ էր կարծում: Երբ նրան խնդրեց իր հետ իր երկիր գալ, մի վայրկյան անգամ չմտածեց: Բայց պատմությունը տգեղ վախճան ունեցավ: Կրակը շատ էր, ջուրը՝ քիչ: Եվ ահա նորից այստեղ էր, պիցցերիայում, նորից ժպտում էր, քմծիծաղ տալիս ու նորից նստում սեղանի առաջ՝ ծխելու:

-Երեկ նույնիսկ անունդ չհարցրեցի:

-Վալենտինա:

-Վալենտինա: Վալենտինա անունով մորաքույր ունեի: Արդեն ծեր էր, երբ իմացա նրա մասին: Կարմիր դեմք ուներ, իսկ մազերը հետ էր տանում

ու հաստ պոչ կապում: Նրա ամուսինը՝ հորեղբայրս, կոշկակար էր: Տասնչորս երեխա ունեին:

Վալենտինան ժպտում է մորաքրոջ պատմության վրա: Վալենտինա: Վալենտինան նրան հարցնում է նոր կառավարության մասին, հիշատակում է Corriere della Sera-ի հաղորդած լուրը: Բայց Էրիկ Սերին ուզում է խոսել այդ երեկոյի մասին, երբ Վալենտինան ժպտաց ու վեր կացավ, որ սպասարկի հենց նոր ներս մտած ինչ-որ հաճախորդի: Այդ գիշեր՝ վաղ մայիսյան մի օր, լուսնի լույսի տակ, երբ Վալենտինայի հետ քայլում էր Սիրակուզայի խավարում, մտածում էր Յուտա Հայմի ու Ալեքսանդերպլացի մասին: Յուտա Հայմն այդպես էլ երբեք չպատասխանեց: Երբեմն մտածում էր նրա մասին, բայց դեմքը սկսել էր տարրալուծվել ու ցրվել, ինչպես իր ուղարկած նամակները: Երբ նրանք կտրեցին-անցան Պիացցա Դուոմոն, փորձեց նորից ուսումնասիրել այն գերմանացի կնոջ դիմագծերը, փորձեց պատկերացնել գորշությունն ու հաշվել «Շտադտ Բեռլին» հյուրանոցի հարկերը: Վաղ մայիսյան այդ լուռ գիշերվա մեջ զեփյուռն ու Վալենտինայի օծանելիքը փորձում էին սրբել Յուտա Հայմի հետքերը:

-Կուզե՞ս ինչենք ծովափ: Կարող ենք ոտքով գնալ: Հեռու չի, չէ՞:

-Շատ ուշ է ծովի մոտ զբոսնելու համար: Կմրսենք:

-Կարծու՞մ ես:

Սեղանին մրգաման էր՝ նարինջ, խնձոր, բանան: Երկու բաժակ սուրճ եւ բերնեբերան լցված շաքարաման: Ստերեոն եւ ռեպորտաժը Մալթայից «Ռայ Ունոյի»[8] մասին: Իսկ հիմա՝ մոխրաման, MS-ի կիսադատարկ տուփ ու մի էժան վառիչ: Երբ նայում է իր երկրի պատկերներին, լսում է լոգարանում թափվող ջրի ձայնը: Չգիտի՝ շարունակի՞ հեռուստացույց նայել, թե գնա լոգարան ու ջրի տակ մտնի նրա հետ: Հաղորդումն ավարտվել է: Նայում է շուրջը. արնագույն հյուրասենյակը, արնագույն գորգը, սուրճի սեղանը՝ անկյունում կիտված ամսագրերով ու թերթերով, պատերից կախած արեւելյան բնապատկերները, պատի խոռոչում մի քանի գիրք, Գեր տիկնոջ թրծակավից արձանիկը, լուսանկարներ, Վալենտինան՝ հայացքը հառած կապույտ ծովին, Վալենտինան՝ ճերմակ մազերը մանուշակագույն երանգով ներկած կնոջ հետ գրկախառնված, Վալենտինան՝ բարետես տղամարդու հետ, շրջապատված Ալպյան լեռներով, Վալենտինան եւ նույն տղամարդը՝ ֆուտբոլի մարզադաշտում, համերգի ժամանակ, Վալենտինան՝ մոտոցիկլետի վրա, Վալենտինան՝ «Ֆիատ Ունոյի» ղեկին, Վալենտինան՝ նույն բարետես երիտասարդ տղամարդու հետ, որն ալ ֆրեսկո սուրճ է խմում: Ցուրը կտրուկ անջատվում է: Մոտակայքից ոստիկանական

ազդանշաններ են լսվում: Ո՞վ գիտի, գուցե Լիզան ինչ-որ առիթ է նշում: Գուցե նրան տուն է կանչում. աղջիկը գաղափար չունի, որ ինքը Սիցիլիայում է: Ծաբաթներ առաջ, երբ անշնչացած պառկած էր, Լիզան ասաց, որ երբեք ավելի վայրագ տղամարդու չի հանդիպել: «Իսկական վայրենի: Ամայի դաշտում վազող վագրի կամ եղնիկի պես»: Երբ այդպես ասաց, թվաց, թե աչքերով ոչնչացրեց իրեն: Այն օրվանից, ինչ Ալեքսանդրան հեռացել էր, վագրն ազատ թափառում էր: Միլդրեդն անընդհատ հարցնում է նրա մասին, բայց շատ արագ հարմարվեց մոր բացակայության հետ: Տասնչորս տարեկանում երիտասարդ կին է դարձել. հորաքրոջ կամ ընկերների հետ ավելի շատ ժամանակ է անցկացնում, քան տանը: Ո՞վ գիտի, երբեւէ մտածու՞մ է իր մասին. չէ՞ որ այսքան ժամանակ չի տեսել: Թատրոնում աշխատանքի պատճառով ուշ էր վերադառնում, իսկ առավոտները հիմնականում Լիզային էր նվիրում... իրականում ոչ միշտ, բայց բավական հաճախ: Երբեմն հոգնում է, ուժասպառ լինում, բայց հետո հանձնվում է, հանուն հին ընկերության, ու որովհետեւ գիտի, որ Լիզան կարիքներ ունի, որոնք միայն ինքը կարող է հասկանալ: Դուստրն էլ մոր կրկնօրինակն է. մի շիկահեր տղա է գտել, գլուխը կորցրել նրա համար, իսկ հետո լքել: Իսկ որդին հիվանդ է, հոգեպես ու ֆիզիկապես տկար: Ամուսինն արդեն մի քանի տարի է, ինչ խելքը թռցրել է, ու նաեւ կնոջն է կորցրել: Մի քանի անգամ հանդիպել է Լիզայի ամուսնուն, դեռ այն ժամանակ, երբ ամուսնալուծված չէին: Առաջին անգամ, երբ տեսավ, զարմացավ, որ Լիզայի պես կինը կարող էր կյանքը կապել այդպիսի անպետք արարածի հետ: Երկրորդ անգամ, երբ հանդիպեցին ինչ-որ մեկի հարսանյաց արարողության ժամանակ ու զրուցեցին, չգիտեր, թե ինչ առիթ հորիներ ու շուտ հեռանար: Վերջին անգամ, երբ տեսավ նրան, նույնիսկ չբարեւեցին իրար. նա երեւի չճանաչեց էլ իրեն: Լիզան հավանաբար լավ է ապրում. ի վերջո, նա բարձր դասից է. հաճախում էր միանձնուհիների դպրոց, դաշնամուրի ու բալետի դասերի, տատիկի ամառանոց, իսկ տղամարդը հեռու է այդ ամենից, ահա այստեղ, ընդարձակ բնակարանում է, որը Վալենտինայինն է. հենց նոր հայտնվեց Վալենտինան՝ մազերը չորացնելով ու սիգարետի տուփը փնտրելով:

-Եթե ուզում ես, կարող ենք դիսկոտեկ գնալ: Կամ մի ուրիշ տեղ:

-Ծովափ:

-Մոռացի՛ր ծովափի մասին: Եթե հունիս ամիսը լիներ, կարելի էր:

-Ի՞նչ ես ուզում: Սովորաբար այսպիսի օրերին ի՞նչ ես անում:

-Երբ երեկոյան ազատ եմ լինում, ընկերներիս եմ հյուր գնում կամ մնում եմ տանը, հեռուստացույց եմ նայում:

-Ինձ համար միեւնույն է:

-Սիգարե՞տ: Վերցրու, եթե ուզում ես: Էլի սուրճ կխմե՞ս:

Լիզայի հետ միշտ կամ առավոտ էր կամ ցերեկ: Երեկո՝ երբեք: Ժամանակ առ ժամանակ նա օգտվում է առիթից ու դուրս գալիս իր գործընկերուհի-դերասանուհիներից մեկի հետ, բայց սովորաբար մենակ է լինում: Այսօր Վալենտինայի առաջարկությունը բացառություն էր: Աչքերն ու մազերը մուգ են, ինչպես իրենը, իսկ մատներն ասես կնճռոտ լինեն:

-Հաճա՞խ ես ճամփորդում:

-Այդքան էլ չէ: Կախված է նրանից, թե ինչքան փող եմ խնայում: Դու՞:

-Ես էլ:

-Ինչո՞վ ես զբաղվում:

-Դերասան եմ, դերասանի վարպետություն եմ դասավանդում:

-Ես մատուցողուհի եմ:

Նրանք ժպտում են:

-Ավարտելուց հետո չկարողացա կարգին գործ գտնել: Հետո որոշ ժամանակ աշխատում էի Միլանում, գրասենյակում, բայց Միլանն ինձ համար չէ: Ես այստեղ եմ ծնվել ու որոշ ժամանակ հետո սկսեցի կարոտել այս տգեղ քաղաքը: Եվ ընդհանրապես, Միլանում ոչ ծկան հոտ է գալիս, ոչ էլ ծովի:

-Դրա համար էլ տուն վերադարձար:

-Դրա համար էլ տուն վերադարձա: Այստեղ աշխատանք չկա, ու առաջին իսկ առաջարկն ընդունեցի: Մինչ այստեղ ընդունվելը չորս տարբեր պիցցերիաներում եմ աշխատել:

-Երջանի՞կ ես:

-Չեմ բողոքում:

-Ես էլ արտագաղթեցի, բայց արդյունքում էլի հետ գնացի տուն:

-Ինչու՞:

-Մինչեւ հիմա չգիտեմ, թե ինչու վերադարձա: Այդ երկիրը ոչնչով չի գրավում:

-Ես այնտեղ լավ ժամանակ եմ անցկացրել:

-Իհարկե, ընդամենը մի շաբաթ, իսկ ես՝ մի ամբողջ կյանք:

-Ճիշտ որ:

-Որտե՞ղ ես շրջագայել:

-Հաճախ չեմ լինում արտասահմանում:

-Ո՞ր երկրում ես լավ ժամանակ անցկացրել:

-Չգիտեմ: Երեւի Գերմանիայում: Բեռլինում:

-Բեռլինու՞մ: Պատը տեսա՞ր:

-Պա՞տը, իհարկե: Սահմանն էլ անցա: Երկու Գերմանիաներում էլ եղել եմ:

Բեռլին:

«Սիրելի՛ Յուտա,

Անցած բոլոր տարիներին անդադար սիրել եմ քեզ. անվերջ գրել եմ ու ջնջել, գրել ու պատռել, հետո նորից գրել՝ իմ ներսում անմար պահելով քո կրակը: Դու սաղմ էիր, որ ապրում էր իմ ներսում, աճում, աճում ու միեւնույն ժամանակ միշտ նույնը մնում, հավերժական սաղմ, որին երբեք լույս աշխարհ չեմ բերի: Քեզ ի՞նչ է եղել, Յուտա: Եթե կարողանայիր, կցատկեիր պատի վրայով, մեջքով կդառնայիր դիտաշտարակների հսկիչներին, որոնք ինքնաձիգները չէին բարձրացնի՝ մարմնիդ մեջ անցքեր փորելու, այլ թեւերը կբարձրացնեին, որ ողջունեին քեզ: Հետո կշրջվեիր, դու էլ նրանց ձեռքով կանեիր ու կքայլեիր դեպի ինձ: Ու լրիվ կմոռանայիր գորշ շաղախի մեջ բացված անցքը, սառնաշաքարը, որ լուծվում էր թույլ սուրճի մեջ, ու ցուրտը, որ ասես մերկացնում է քեզ հրապարակի կենտրոնում: Կմոռանայիր ու կգայիր ինձ մոտ: Ես կորցրել եմ քեզ ուղարկած նամակների հաշիվը, Յուտա: Երանի այստեղ լինեիր: Երանի իմը լինեիր: Երանի հանեիր շորերդ հյուրասենյակի կենտրոնում, ջահի տակ, լույսերն անջատած, մեջքով դեպի պատուհանը: Հյուրասենյակում դաշնամուրը լուռ է: Նա էլ է սպասում: Երանի դանդաղ քայլեիր իմ կողմ, նստեիր աթոռին, բարձրացնեիր դաշնամուրի կափարիչն ու նվագեիր: Ես նայում եմ դաշնամուրի ոտնակին դրած ոտքիդ մատներին: Երբ նստում ես, ազդրերդ կարծես մի քիչ ուռչում են, իսկ փորդ ու կուրծքդ կախվում են: Երանի մոտենայի ու դիպչեի քեզ: Երանի ծնկի գայի ու քիթս խցկեի ողնաշարիդ մեջ, քանի դեռ նվագում ես: Զգում եմ հոտդ: Վայելում եմ սպիտակ մեջքիդ բույրը, որ հասնում է ինձ: Եվ պարանոցիդ բույրը: Իսկ եթե նվագեիր, իսկ ես սիրեի՞ քեզ: Ի՞նչ ես կարծում, ո՞ր նոտաները կսխալվեիր: Այտս սեղմում եմ քո հարթ, հարթ ազդրին ու իջնում ներքեւ, պտտվում ծնկիդ շուրջ, հետո էլի իջնում ոտքդ ի վար, հասնում ոտնակը սեղմած մատներիդ: Հետո հանկարծ դադարում ես նվագել ու մեղմ հրում ես ինձ, հրում-իջեցնում հատակին: Վեր ես կենում, մերկ քայլում ու մահճակալին չհասած՝ կանգնում միջանցքի կենտրոնում: Ինչպե՞ս չնայեմ, երբ աչքիս առաջ քեզ նման կին է: Երբ նայում եմ մեջքիդ, մարմնիդ, ամեն մի նշանին, ամեն կնճիռին, ազդ-

րերիդ ու բարակ, բարակ երակներիդ, որ նախ երեւում են մաշկիդ վրա, ապա գալարվելով մտնում մաշկիդ տակ, սրունքիցդ վեր: Ինչպե՞ս չնայեմ, երբ այսքան տարի ցանկացել եմ քեզ ու ապրել եմ հույսով, ու հիմա մեռնում եմ հուսահատությունից: Ինչպե՞ս չնայեմ քեզ: Ու միեւնույն է, երբեք ոչինչ չես ասում: Ու միեւնույն է, լուռ ես մնում: Լուռ, ինչպես մահճակալդ: Լուռ, ինչպես միջանցքը: Լուռ, ինչպես ալիքները, որ իմ ներսում բախվում են իրար: Լուռ, ինչպես սիրտս, որ արագ բաբախում է ցանկությունից՝ հեւ-հեւ, մահացու: Լուռ, ինչպես երկինքը: Լուռ, ինչպես ոտնաթաթերդ սպիտակ սալիկների վրա: Լուռ, ինչպես աչքերս, որ զննում են քեզ, ձեռքերս, որ ելնում են՝ քեզ դիպչելու: Գրի՛ր ինձ»:

Այդ գիշեր անդադար ծխեց: Վալենտինան, նրա քույրը՝ Ֆիուսին, նրանց ընկերները՝ Պատրիցիան, Ագատան ու Նելան: Կոկորդը, թվում է, ուր որ է կպայթի, աչքերն ասես չորացած ածուխ լինեն Մուրատիի ու ՄՏ-ի ծխի թանձր մառախուղի մեջ, չոր, ինչպես խոսող ու թունդ մուգ կարմիր գինի խմող կոկորդը: Մի պահ մտովի պատկերացրեց քրոջը. այսքան տարի անց գաղափար չուներ, թե ինչ է նա զգում, երբ լսում է շարասյան ձայնը: Նույնիսկ հորը պատկերացրեց, վարագույրների արանքից թաքուն, ապշահար նայելիս: Տեսավ մորը, որ թաքնվել էր պատշգամբի խավարի մեջ: Եվ Բելայի մորը՝ այն մյուսին, որ երեւի վշտից տառապում էր: Նա չէր պատմել քրոջը, որ քվեարկել է փոփոխությունների օգտին, բայց նա երեւի գլխի էր ընկել: Բայց մի՞թե դա կարեւոր է, հատկապես հիմա, երբ ամեն կողմից շրջապատված է մարդկանց հայացքներով ու ալկոհոլով, որն արդեն սկսում է ազդել նրա վրա. ծիծաղը, անիմաստ պատմությունները, բոլորի հետ հերթով պարելը: Իր ու Վալենտինայի համբույրը: Ճնշումն իր աջ ձեռքին: Կարճ արտահայտությունները նրա ականջին: Գրկախառնությունը: Դիսկոտեկի շոգը: Գունավոր լույսերը, որ վառվում-մարում էին Վասկո Ռոսիի ռիթմի տակ: Մթությունը: Լռությունն ու սառն օդը: Դեռ մայիս է, մայիսի սկիզբ: Մյուսները հեռանում են, հրաժեշտ տալիս, իսկ Վալենտինան բռնում է նրա ձեռքը, ու նրանք լուռ մտնում են բնակարան, որը պատրաստվում է լուսաբացին:

-Կարող եմ տաքսի կանչել:

-Այս ժամի՞ն: Կատա՞կ ես անում: Կարող ես իմ տանը մնալ:

Լոգարանի պատուհանի տակ ներքին բակ կա, իսկ տանիքներից վեր երեւում է եկեղեցու աշտարակը: Ինչ-որ տեղ հրապարակ կա, որտեղ բոլո-

րովին վերջերս Վալենտինան առաջարկեց, որ ավելի արագ քայլեն: Հրապարակում ցուրտ էր:

Յուտա Հայմը նրան խնդրեց բացել բազմոց-մահճակալը, իսկ ինքը հայացքով հետեւում էր, թե Յուտան ինչպես է տարածում սավանն ու բամբակե ծածկոցը, իսկ հետո՝ փետրե վերմակը: Նայում էր Յուտային, Յուտան էլ իրեն էր նայում ու ժպտում: Մի պահ մտածեց Ալեքսանդրայի մասին, առաջին անգամվա մասին, երբ կիսեցին անկողինը: Բայց հետո Յուտան գնաց ատամները լվանալու, ու այդ ընթացքում նա միացրեց անկյունում դրած փոքր նարնջագույն հեռուստացույցն ու դիտեց Հյոնեկերի կոչը բազմությանը:

Հետո տեսավ Ալեքսանդերպլացը: Նրա աչքում այն տափակ տանիքների ու ինքնագնացների համադրություն էր, ու եթե չի սխալվում, կատուների, որոնք վազվզում ու քսմսվում են փողոցի անկյուններին: Ու հանկարծ գիշերվա չորսին լսեց զանգերի ղողանջը, ու թաղամասի ինչ-որ հատվածում մեքենայի շարժիչ միացավ: Հիշում էր մետրոյի ցուրտն առավոտյան ժամը վեցին, իր սառած աչքերը, լռությունն ու ալարկոտությունը: «Վաղը պիտի շուտ արթնանանք»:

-Բայց ինչպե՞ս ես արթնանալու, որ աշխատանքի գնաս:

-Թող այդ մասին ես մտածեմ: Բազմոցը քեզ համար եմ բացել: Միայն մի բարձ ունեմ, բայց կարող ես նաեւ բազմոցի բարձերը վերցնել: Եթե մթությունից վախենում ես, բացի՛ր վարագույրները, բայց շուտով լուսաբաց է, ու արեւը հենց դիմացից է ծագում:

-Ինձ լրիվ մենա՞կ ես թողնելու:

-Խե՛ղճ մարդ: Մենակությունից վախենու՞մ ես:

-Շատ:

Նա տեսնում է Յուտայի ժպիտը ու երբ ուզում է գրկել նրան, Յուտան բարի գիշեր է մաղթում, գնում իր ննջասենյակ ու հետեւից փակում դուռը:

Մինիավտոբուս, տասներկու մարդ. առանց դադարի ուղեւորությունը տեւում է մոտավորապես երկուսուկես ժամ: Մանր անձրեւը չի դադարել այն պահից, երբ վարորդը միացրեց շարժիչը: Սովորականից ավելի շուտ մթնեց: Տասներկու մարդ, վարորդ եւ ցածր երաժշտություն: Այդ տասներկուսի մեջ մի զույգ կա, մոտավորապես յոթանասուն տարեկան. երկրորդ շարքում են նստած: Նրանց դիմաց երկու երիտասարդ կա, երկուսն էլ գիրքն են կարդում, տղան՝ Եժի Անջեեւսկու «Մոխիր եւ ալմաստը», իսկ աղջիկը՝ Ալֆրեդ Դյոբլինի «Բեռլին Ալեքսանդերպլացը»: Նաեւ մի կին կա, որ շատ մեծ զամբյուղը դրել է հատակին ու փակել ճանապարհը: Ժամանակ առ ժամանակ լաց է լինում, հետո արագ սրբում արցունքները: Մինիավտոբուս բարձրանալուց առաջ գրկել էր մի շատ ավելի երիտասարդ տղամարդու, եւ տպավորություն էր, թե տղան անհամբեր սպասում է, թե ավտոբուսը երբ կշարժվի: Հետեւի շարքի մեջտեղում, որտեղ կողք կողքի հինգ նստարան կա, փոքր պայուսակով մի կին է, մտքերի մեջ խորասուզված: Նամակ է կարդում, որ ինչ-որ մեկը նրան ուղարկել է արտասահմանից. ժամանակ չի ունեցել կարդալու, այն փոստատուփի մեջ է գտել այն ժամանակ, երբ դուրս է եկել՝ ավտոբուս նստելու: Սկզբում մի քանիսը զրույցի բռնվեցին, բայց հիմա, երբ արդեն մի ժամ է, ինչ ճանապարհին են, բոլորը քնով են անցել: Ոմանք խոր քնած են: Նեղ փողոցներն արդեն վաղուց մնացել են հետեւում. ամբողջ տեսադաշտը հիմա զբաղեցնում են մանուշակագույն ու գորշ մարգագետինները: Երբեմն նրանցից առաջ են անցնում արագասլաց մեքենաներ, իսկ մոտոցիկլետներն ու բարձր բեռնատարները մեջտեղի գծով են անցնում: Չնայած ավտոբուսի մեջ տասներեք մարդ կա, կատարյալ լռություն է, ու նույնիսկ ռադիոյի երաժշտությունը չի լսվում: Մանր անձրեւը շարունակվում է ու հիմա ավելի է ուժեղանում: Առաջին շարքի երիտասարդները փակել են գրքերը, փակել աչքերն ու սեղմվել իրար: Մեծ զամբյուղով կինն էլ լաց չի լինում: Ծուտով մեքենան կսահի, կթեքվի ձախ, կկորցնի հավասարակշռությունն ու վթարի կենթարկվի: Բայց մինչ այդ երիտասարդ կինը, որը կարդում է «Բեռլին Ալեքսանդերպլացը», կանաչ կոնֆետ է ուտում, իսկ երիտասարդ տղամարդը զգացել է նրա շարժումը, արթնացել ու համբուրում է նրա այտը: Մի քանի վայրկյան հետո արտասվող կինը թեքվում է կողք, վերցնում մեծ զամբյուղը, որը փակել է ճանապարհը, բարձրացնում, որ հանի հացի փաթեթն ու ուտի: Ավտոբուսի աղոտ լույսի մեջ միանգամից չի գտնում այն: Հետո

ամեն ինչ կատարվում է միանգամից, ու ոչ ոք չի հասկանում, թե ինչ եղավ: Մինիավտոբուսը կորցնում է վերահսկողությունն ու ուժեղ բախվում կայանած բեռնատարին: Բախման հուժկու ցնցումից հետեւի շարքի մեջտեղում նստած կինն առաջ է թռչում ու բախվում դիմապակուն: Հենց այդ գիշեր կինը մահանում է մոտակա հիվանդանոցի վերակենդանացման բաժնում: Մյուս ուղեւորներից մի քանիսին էլ տանում են նույն հիվանդանոց, ծանր վիճակում, իսկ վարորդի դեմքին քերծվածքներ կան: Հաջորդ օրը վաղ առավոտյան բոլորին դուրս են գրում հիվանդանոցից:

«Երանի գոնե մի անգամ պատասխանեիր: Գոնե մի անգամ կյանքի նշաններ ցույց տայիր: Այդպես էլ չհասկացա, թե ինչու երբեք չես գրում: Հիշում եմ գրեթե ամեն ինչ: Նույնիսկ այն բազմոցը: Սենյակը: Նույնիսկ սփռոցի նախշերն այն օրը, երբ առաջին անգամ տեսա քեզ, երբ սպասում էիր իմ պատվերին: Եվ հրապարակը: Երբեմն մտածում եմ՝ գուցե դեռ այնտեղ ես աշխատում, գուցե ամեն օր սպասարկում ես բազմաթիվ մարդկանց: Եվ այո, մտածում եմ՝ ինձնից հետո հանդիպե՞լ ես ուրիշի, ինչ-որ մեկին տարե՞լ ես քո տուն: Ու չնայած շատ ժամանակ է անցել, դեռ հավատում եմ, որ մի օր նորից կհանդիպենք: Դեռ սպասում եմ: Լինում են դեպքեր, երբ սկսում եմ անհանգստանալ, որ չես պատասխանում, որովհետեւ քեզ ինչ-որ բան է պատահել: Գուցե վատ բան: Միտքը ճնշում է ինձ, փորձում եմ ինձնից վանել այն՝ նորից նայելով պատուհանից, որ տեսնեմ, թե ինչպես ես վերադառնում աշխատանքից, հանում հագուստդ ու սպասում, մինչեւ ջուրը եռա, իսկ ես անթարթ նայում եմ քեզ, միլիմետր առ միլիմետր, կնճիռ առ կնճիռ զննում՝ գլխից մինչեւ ոտնաթաթեր: Երբեմն չեմ կարողանում տեսնել քեզ, իսկ երբեմն տեսնում եմ, թե ինչպես ես ներս գալիս, կամ ինձ բախտ է վիճակվում տեսնել քեզ ցնցուղից դուրս գալիս, սրբիչը գլխիդ կապած, մարմինդ ցամքոցով փաթաթած կամ մերկ: Երբ չեմ կարողանում տեսնել քեզ, մնում են տգեղ մտքերն ու վախը. երբ կարողանում եմ, ներսումս մնում է միայն հիասթափությունը, որ էլ երբեք չեմ տեսնի, ու չգիտեմ, թե ինչու: Սիրելի Յուտա, երանի պատասխանեիր: Գոնե մի անգամ»:

Երբ վերադարձավ, ամպամած էր:

Պատուհանից հետեւում էր տղամարդուն, որը նարնջագույն ազդանշանային լույսերով օդաչուին ուղղորդում էր դեպի այն տեղը, որտեղ օդանավը պիտի վայրէջք կատարի: Սրահում մի քանի մարդ կա: Թվաց՝ մի ամբողջ դար անցավ, մինչեւ օդանավի աստիճանները բացվեցին: Օդանավի դռան մոտ նրան դիմավորեց տաք զեփյուռը: Ցերմ ու գորշ: Մայիս ամիսն էր: Օդանավակայանի շենքում խոր շունչ քաշեց, հետո նորից, հետո էլի մի անգամ՝ փորձելով զգալ օդի փոփոխությունը, որի մասին հայտարարել էր «Corriere della Sera»-ն: Մեքենայի մեջ քույրը նորությունների տարափ տեղաց նրա գլխին, բայց Միլդրեդից, տնից կամ հարեւաններից ոչ մի լուր չկար: Բոլոր տեղեկություններն ուղիղ թերթից էր ստանում, որը հիմա ամեն օր տագնապալի խորագրերով նյութեր էր տպում. նման բան չէր եղել նախորդ տարիներին:

-Տեսնենք, թե ինչ կլինի մեզ հետ:

-Իսկ ի՞նչ ես սպասում:

-Չգիտեմ: Պատկերացրու՝ ինչ կլիներ, եթե հայրիկն այստեղ լիներ:

-Երկրորդ թաղում կլիներ:

-Պատկերացնու՞մ ես՝ ինչքան տառապեց ու այդպես էլ չվայելեց փառքի պտուղները:

-Ավելի լավ: Թե չէ հիմա վատ կզգար, քեզ նման:

-Իսկ դու լա՞վ ես: Երջանի՞կ ես:

-Երբեմն փոփոխությունն օգտակար է լինում, քույրի՛կ: Հասկանու՞մ ես:

-Հայրիկը հենց դա էր ուզում լսել:

-Երեխայի դասերը լա՞վ են:

Քույրը պատմելու ավելի կարեւոր բան ուներ: Նա հիշեցրեց եկեղեցու զանգերի մասին, այն մարդկանց մասին, որոնք հավաքվել էին եկեղեցու ներքին բակում ու բղավում էին: Հիշեցրեց մորաքույր Մարիի Ֆրանսի մասին, որը մագլցում էր եկեղեցուն մոտիկ պատը, որ կախի գովազդային վահանակը. վրան գրված էր «Տորկայի կրակը կայրի հոգիդ», եւ Փրկչի դեմքով դագաղը[9], որն ուզում էր կախել եկեղեցու պատշգամբից: Ու թե ինչպես էր սինյորան նրան ստիպում բարձրաձայն կարդալ «Lehen is-Sewwa»-ն[10] ու ասում, որ կան լավ թերթեր եւ այնպիսիք, որոնք քեզ դժոխքի դուռն են հասցնում: Բայց Էրիկ Սերին մտածում էր աղջկա մասին, որի հետ պարեց այն գիշեր, երբ նա իրեն ծանոթացրեց քրոջ ու ընկերների

հետ, ու ուզում էր վերադառնալ մանկության հիշողություններին, որոնք պատմեց հաջորդ առավոտ, երբ արթնացավ ու աղոտ տեսավ, թե ինչպես է գիշերազգեստով սուրճ եփում ու բուլկի տաքացնում: Երբ բացեց աչքերը, իսկ դա եղավ մոտավորապես կեսօրին, տեսավ, թե աղջիկն ինչպես է ժպտում իրեն: Մազերը մի քիչ գզգզված էին. սովորականից խռպոտ ձայնով բարի լույս մաղթեց նրան:

-Տեսնու՞մ ես: Գիշերը ոչ ոք չեկավ ու չտարավ քեզ: Ասում էի, չէ՞, մենակությունից վախենալ պետք չէ: Լա՞վ քնեցիր:

-Նորմալ, թեեւ կարելի էր ավելի լավ քնել:

-Բազմոցը շա՞տ չոր էր:

-Ծա՛տ: Քո մահճակալը հաստատ ավելի փափուկ է:

-Մյուս անգամ մահճակալս քեզ կտամ, իսկ ես բազմոցին կքնեմ:

-Այսինքն՝ այս գիշե՞ր:

-Այս գիշեր հյուրանոցում կքնես, եթե Նելային չզանգես: Կարծում եմ՝ Նելայի մոտ ժամանակդ ավելի լավ կանցնի: Նրա համարը կտամ, կամ կարող ենք դուրս գալուց առաջ զանգել նրան:

-Ու՞ր ենք գնում:

-Դու հյուրանոց, իսկ ես գնացքով Միլան կգնամ:

-Միլա՞ն:

-Միլան:

-Վաղը կվերադառնա՞ս:

-Չէ, երկուշաբթի երեկոյան եմ վերադառնալու:

-Ուրեմն մինչեւ շաբաթ հետ չե՞ս գա:

-Մենք կզանգենք Նելային: Նելան սիրունիկ է, չէ՞:

Ու թեեւ ծաղրում էր նրան, ժպիտն այնքա՜ն անուշիկ էր: Մի գիշերը չափազանց քիչ էր. ինքը մի սենյակում, աղջիկը՝ մյուս: Առավոտն էլ կարճ էր, մինչեւ այն պահը, երբ արդեն պետք էր գնացքով ճանապարհել նրան: Մի քիչ պատմեց իր մանկության, պատանեկության, երիտասարդության վաղ տարիների մասին: Պատմեց, թե ինչ էր սիրում, ինչ չէր սիրում, ինչն էր անհանգստացնում, ինչն էր երջանկացնում: Պատմեց իր հայրիկի, քույրիկի ու ընկերների մասին: Աշխատանքի մասին (ճիշտ է, բողոքելու բան չուներ, թեեւ կաշվից դուրս էր գալիս), ընտանիքի մասին, որի պիցցերիայում ինքն աշխատում էր: Պատմեց նրան արեւի ու ծովի մասին, պատմեց, թե երիտասարդ տարիքում ինչպես մի անգամ Բեռլին մեկնեց: Պատմեց նաեւ, թե ով էր լուսանկարների տղամարդը: Հետո հրաժեշտ տվեց ու գնացք նստեց: Իսկ Էրիկը մնաց կայարանում, ու երբ նա երեւաց պատուհանի մեջ,

ժպտաց մելամաղձոտ աչքերով ու խոստում տվեց: Նրա ձայնն արձագանքեց կայարանով մեկ: Սուլոցից ցնցվեց. գնացքն ու հրաժեշտի պահը հուզեցին նրան: Ցուրտը դանդաղ բարձրանում էր նավահանգստից. երեւացին տգեղ կերպարներ, ու տաքսին, որը նրան հետ բերեց հյուրանոց: Երբ տեղ հասավ, մտածեց՝ զանգի՞ Նելային, թե ոչ: Գուցե Վալենտինայի ծաղրական ժպիտի տակ ինչ-որ բա՞ն է թաքնված: Հետո նորից մտածեց, որ Նելան իսկապես բոլորից ամենագեղեցիկն է: Նա խաղաց Վալենտինայի տված դեղին թղթի հետ, որի մի կողմում իր հասցեն էր, մյուս կողմում՝ Նելայի հեռախոսի համարը: Դուրս եկավ, գնաց պիցցերիա, բայց հիմա, երբ Վալենտինան կողքին չէր, ոչ ոք նրան ուշադրություն չդարձրեց, իսկ պատվեր վերցնող մատուցողուհին նույնիսկ աչքը չկտրեց սեղանից, երբ սպասում էր պատվերին: Կողքին Corriere della Sera-ն էր, Ռոքից նորություն չկար. եղածը եղած էր: Պիցցայից ու մի քանի շիշ գարեջրից հետո վերադարձավ հյուրանոց ու քնեց:

Միլդրեդը «Կապպա» ու «Լաքոստ» ապրանքանիշի վերնաշապիկներ էր ուզում, որոնք կարելի է էժան գնով ձեռք բերել շուկայի տաղավարներում, կեղծ շապիկներ, ու կոշիկներ, որոնք իսկականից գրեթե ոչնչով չէին տարբերվում: Երբ բացեց բարակ, զոլավոր պլաստիկե տոպրակներն ու հանեց շապիկները, կոշիկներն ու հաստ կազմերով քառակուսի տետրերը, հայրը նստեց ու սկսեց գրել բացիկի վրա, որը վերադառնալուն պես գնել էր օդանավակայանից:

-Հայրիկ, հորաքույր Թեսն ասում է, որ շուտով կկորցնենք այն ամենը, ինչ ունենք:

-Ի՞նչ կկորցնենք:

-Ամեն ինչ: Հիմա հարուստներն ավելի կհարստանան, իսկ...

-Երեւում է՝ մորաքույր Թեսը վերջերս վատ է քնում:

-Անդադար խոսում է, հայրիկ: Ամբողջ շաբաթ նորություններ է նայում ու բարկանում: Երբեք չեմ մտածել, որ սրտին այսքան մոտ կընդունի: Չգիտեմ էլ՝ քանի անգամ է հարցրել՝ գիտե՞մ, թե ում օգտին ես քվեարկել: Իսկ հորեղբայր Ֆրեդն ուղղակի լռում է:

-Հորեղբայր Ֆրե՞դը:

-Խնդրել է, որ իրեն այդպես անվանեմ:

-Մորաքույր Թեսն իր տարիքի համար բավական աշխույժ է:

Ճիշտ որ, միայն դեմքերն ու անուններն են փոխվում: Հետո՞: Երբ նշան արեցի քվեաթերթիկի վրա, պատկերացրի, թե հայրիկն ինչպես է ինձ նայում խցիկից: Պատկերացրի, թե ինչպես է ներս գալիս, որ տեսնի՝ կատարե՞լ եմ իր հրամանը, թե ոչ: Քվես տալուց հետո խոր շունչ եմ քաշում ու շտապ դուրս գալիս դասարանից: Ուզում էի ասել՝ հայրիկ, դու ճիշտ ես, բայց ես հոգնել եմ ամեն օր պատահող ահարկու դեպքերից: Արդեն զզվել եմ այրվող շենքերից ու թալանված տներից: Կինս հեռացավ, որովհետեւ էլ չէր դիմանում խնդիրներին: Հետո ամեն ինչ գրողի ծոցը գնաց, հայրի՛կ: Դրա համա՞ր քեզ անիծեցին ու բանադրեցին: Կստահ եմ, պատճառը դա չէ, որովհետեւ ես քեզ լավ եմ ճանաչում: Քեզ դուր չէր գա տեսնել այրվող եկեղեցիները, հատուկ համազգեստով ոստիկաններին, որոնք արցունքաբեր գազ էին բաց թողնում: Դրանից քո սիրտն էլ կխառներ: Դու էլ անհարմար կզգայիր, ինչպես ես: Ճիշտ եմ, չէ՞, հայրիկ: Մենք այդպիսին չենք: Ու թեեւ նավանորոգարանի սովորական ատաղձագործ էիր, բեռնատարով ոչ մի տեղ չէիր ներխուժի, չէիր ջարդի, չէիր ոչնչացնի: Դու այդպիսին չէիր,

հայրիկ: Ու թեեւ երբեք չէիր անի այն, ինչ ես արեցի, միեւնույն է, ինձ չէիր դատապարտի: Այդպես եմ կարծում: Դու ինձ սիրում էիր, հայրի՛կ: Ես էլ քեզ էի սիրում: Մի ժամանակ դպրոցում ինձ շատ էին նեղացնում, ասում էին, որ հայրս դեմ էր Պապին, Հիսուսին ու Աստծուն: Ու հասկանում էի, որ հայր Անտոն Բայադան ինձ ու քրոջս բոլորովին այլ կերպ է նայում, քան մյուս երեխաներին: Տեղս չէի գտնում, երբ երեխաները ծաղրում էին ինձ, որովհետեւ հայրս չէր գնում հաղորդության: Բայց այն ժամանակ, Հա՛յր, ինչ-որ բան սխալ գնաց:

-... դա հերիք չէր, մայրիկը զանգեց. նույնիսկ Լոնդոնում բոլորն իմացել էին այդ մասին: Հորաքույր Թեսն է՛լ ավելի ոգեւորվեց:

-Մայրդ է՞լ էր իմացել: Ինչպե՞ս:

-Չգիտեմ:

-Ի՞նչ ասացիր նրան:

-Հիմնականում նրա հետ հորաքույր Թեսն էր խոսում: Ես միայն ասացի, որ այստեղ չես: Դե, հայրիկ, ու՞մ օգտին քվեարկեցիր:

-Կարեւոր չէ, Միլդրեդ, անուշի՛կս: Դու միայն դպրոցի մասին մտածիր, ուրիշ ոչնչի: Երբ մեծանաս, ամեն ինչ կհասկանաս:

-Բայց հիմա էլ փոքր չեմ:

Ալեքսանդրան զանգում է ամեն տարի՝ տարեմուտին ու աղջկա ծննդյան տարեդարձին: Երեւի էլ չի հիշում իր ծննդյան օրը, իսկ ինքը հիշում է Ալեքսանդրայինը, թեեւ երբեք չի զանգում: Մինչեւ հիմա հիշում է ամեն ինչ, բոլոր ամսաթվերը: Ալեքսանդրան չդիմացավ, ոչ երկրին, ոչ նրան: Էրիկի մոտ թողեց աղջնակին ու ժամանակ առ ժամանակ գալիս է այցի, բայց Էրիկը միշտ այնպես է դասավորում, որ երբ Ալեքսանդրան գա, ինքն արտասահմանում լինի: Նա շատ բան է հիշում: Քինգս Ռոուդի մի խանութում իրենց հանդիպումից ամիսներ անց հորը հոգեվարքի մեջ հիվանդանոց տեղափոխեցին: Ալեքսանդրան մոռացավ հուլունքների ու մազերին ամրացրած ծաղիկների, նրա կողքին անցկացրած օրերի մասին: Էրիկն էլ մոռացավ, որովհետեւ Լոնդոնը ծերացել էր, իսկ ինքն այն ասոցացնում էր Կրիշնայի ու համայնքային կանոնների հետ: Նույնիսկ ծաղիկներն էին խանգարում: Առավոտյան, երբ իմացավ, որ ծերունուն հիվանդանոց են տեղափոխել, հասկացավ, որ պատերը, սավաններն ու սպիտակ խալաթներն ավելի գրավիչ են, քան վառ գույները, ու որ ավելի գեղեցիկ են այն մարդիկ, որոնց կոպերը կախվում են ոչ թե քիմիական միջոցներից, այլ մահվան ծանրությունից: Ալեքսանդրան գնացել էր սուրճ բերելու, երբ հայրը ծամածռեց դեմքը, հազաց ու մահացավ: Կողքին միայն նա էր՝ մինչեւ

գոտկատեղ հասնող թավ մազերով օտարականը, որն ինչ-որ կապ ուներ իր հետ: Ծերունին մահացավ մեկի կողքին, որի անունն անգամ չգիտեր, որին բոլորովին չէր ճանաչում: Առաջին անգամ չէր, որ մահ էր տեսնում: Այդ օրը՝ կեսօրից հետո, գնաց Սգայրա աշտարակի թատրոն: Մայրը քրոջը թատրոն էր ուղարկել իր հետեւից. հայրը մահամերձ էր: Աղջիկը սպասեց, մինչեւ եղբայրն արտասանեց վերջին տողը, ու հենց որ իջավ բեմից, գնացին. վարագույրի բարձրանալուց հետո բեմ չբարձրացավ: Երբ տուն հասան, տեսան ֆրանցիսկյան վանականին, խաչը ձեռքին, տեսան, թե ինչպես թույլ համբուրեց Քրիստոսի մահամերձ մարմինը: Բուժքույրը մոտեցավ նրան ու ասաց.

-Նա մեռած է:

Ու նա նշան արեց, որ գիտի այդ մասին, ու կանգնեց դրսում՝ միջանցքում, Ալեքսանդրային սպասելու: Հոր դեմքը համարյա բոսորագույն էր վերջին անգամ, երբ նրան տեսավ պառկած, մահվան ճիրաններում, անկողնուն գամված, վախճանին պատրաստ: Նա բոսորագույն էր, տգեղ ու ահարկու: Որոշ ժամանակ երազում տեսնում էր այդ գույնը: Հետո հեռվում լսեց բացվող դռան ձայնն ու միջանցքի եզրին տեսավ Ալեքսանդրային, ձեռքին սուրճի երկու պլաստմասե բաժակ: Սուրճը կարծես թե տաք էր. Ալեքսանդրան բաժակները բռնել էր մատների ծայրով: Հետո նկատեց նրան ու անմիջապես հասկացավ, թե ինչու է դուրս եկել բաժանմունքից, կամ լսեց լռությունը, որ տարածվում էր նրա դեմքից, ու քարացավ, արցունքները ողողեցին դեմքը: Էրիկը մոտեցավ՝ նրան գրկելու ու զգաց, թե տաք սուրճն ինչպես է կաթում ոտքին: Ալեքսանդրան սկսեց արտասվել. նա ոռնում էր, ամբողջ ուժով փորձում ազատվել Էրիկի թեւերից, որ գնա հոր մոտ, խփում նրան, գոռում, ասում, որ ստում է, որ ճիշտ չէ, որ սխալվում է, նույնիսկ բուժքույրն է սխալվում: Երբեք չէր պատկերացրել, որ Ալեքսանդրան իրեն այդպես կպահի: Վաղուց չէր ճանաչում նրան, բայց Քինգս Ռոուդում իրենց հանդիպման հաջորդ իսկ օրվանից սկսեցին միասին ապրել այս խմբի հետ, որը հանդիպում էր Գանդալֆի այգում, կանաչ ուտում ու վիտամիններ խմում: Այն Ալեքսանդրան, որին նա հիշում էր, միշտ ծխում ու կարդում էր, միշտ իրեն քարշ էր տալիս Քեմդեն քաղաք՝ պոեզիա կարդալու ու ֆրանսիացի փիլիսոփաների, հատկապես Սիմոնա դե Բովուարի վերջին գրքերի հետ ծանոթանալու: Այդ օրը՝ հիվանդանոցից հեռանալուց հետո, նրանք չմիացան մյուսներին: Հյուրատուն գտան ու չնայած ուժասպառ էին, ամբողջ գիշեր արթուն մնացին: Որոշեցին դուրս գալ, գնալ մի տեղ, որտեղ երկինքը կապույտ է, որտեղ արեւ է, ծով ու սո-

ցիալիզմ: Հոր թաղման արարողությունից մի քանի օր հետո, երբ քույրերն ու եղբայրները որոշեցին մի քիչ ապրել Լոնդոնում, իսկ մայրը նրանց հետ մնաց, մինչեւ նրանց ճանապարհները բաժանվեցին, Մերիլբոուն Ռոուդի սպան հարցրեց Էրիկին ու Ալեքսանդրային, թե արդյոք պատրաստ են համբուրվել սիրել իրար հիվանդության ու առողջության մեջ, կյանքի լավ ու վատ պահերին, ու երկուսն էլ ասացին՝ այո. ասաց, որ կարող են համբուրվել, ու ընտանիքի անդամները սկսեցին ծափահարել ու կոնֆետիներ նետել:

Այդ օրը՝ արարողությունից մի քանի ժամ առաջ, հեռագիր էր ուղարկել տուն՝ լուրը նրանց հայտնելու: Պատկերացնում էր, թե մայրն ինչպես է նեղվելու ու լաց լինելու: Միշտ հիշում էր մորն արտասվելիս: Իսկ քույրը չգիտեր, թե ինչ անի:

Բոլոր հարսանիքներից, որոնց Էրիկը ներկա էր եղել մինչ այդ ու դրանից հետո, այս մեկն ամենատխուրն էր:

Տունը դատարկ էր: Փողոցը փոխել էր տեսքը: Հետո հիշեց Միլդրեդին: Հետո՝ թատրոնն ու Լիզային: Լոնդոնը հիմա հեռավոր քաղաք էր, ու նրա պատմություններն իր հետ հեռվում էին: Ծաղիկների ու կանաչ տերեւների բույրը, գողացած բնակարաններում բանտված այգիների բույրը, գիշերների բույրը, որոնց մթությունը խախտում էին կիթառի լարերը, «Մարքիի» ուրախությունն ու ոգեւորությունը, ամեն ինչ կորել էր ինչ-որ տեղ, ծովում, պատից այն կողմ:

Ալեքսանդրայի հեռանալու օրը նրան տարավ հյուրանոց, չնայած կինն ուզում էր մենակ գնալ: Նրանց դեմքը ոչինչ չէր արտահայտում. ձախողում, որ Էրիկը վաղուց էր կանխատեսել, իսկ Ալեքսանդրան՝ շատ ավելի վաղ: Պայուսակը հանձնելուց հետո գրկեց աղջկան, որը դեռ լաց էր լինում, որովհետեւ տանն ինչ-որ բան էր կորցրել, հետո գրկեց Էրիկին ու խնդրեց, որ հոգ տանի իր ու փոքրիկի մասին: Հասկացրեց նրան, որ բարձրանա սրահ ու հետեւի, թե օդանավն ինչպես է օդ բարձրանում ու անհետանում հեռվում: Հետո Էրիկը գնաց տուն ու տունը նորից դատարկ գտավ: Մտածեց՝ գուցե զանգի քրոջը, խնդրի, որ որոշ ժամանակով տանի աղջկան, կամ գուցե զանգի Լիզային, նրա հետ ծանոթանալուց հետո առաջին անգամ ցերեկը զանգի: Հավաքեց հեռախոսի առաջին մի քանի համարը, հետո անջատեց: Յուտա Հայմ: Ընկավ գրասեղանի վրա ու սկսեց նամակ գրել:

«Այսօր վարագույրն իջավ: Խելագարությո՞ն էր, իսկական խելագարությո՞ն, թե՞ ուղղակի կատակերգություն, որ մոտենում էր ավարտին: Սովորաբար, երբ վարագույրն իջնում է, մենք հավաքվում ենք կուլիսներում

ու մեկ առ մեկ դուրս ենք գալիս՝ հանդիսատեսի առաջ խոնարհվելու: Բայց այսօրվա վարագույրն այլ է: Ծափահարություններ չկան: Ու հիմա ես չեմ օգտագործի արտահայտություններ, որոնք մեզ՝ միայն թատրոնի մարդկանց են հասկանալի: Ուզում եմ, որ իմանաս, որ այսուհետ կարող եմ նաեւ այստեղ տեսնել քեզ: Բայց ինչպե՞ս հասնես այստեղ, եթե ամեն անկյունում պահակներ կան: Ու ինչու՞ երբեք չես գրում ինձ»:

Աչքի անցկացրեց երեկոյի իր առաջին ներկայացման տողերը:

Նորա - Իմ գիտակցությունը դեռ երբեք այնքան արթուն չի եղել եւ ուշք ու միտքս այնքան տեղը չի եղել, ինչպես հիմա:

Հելմեր - Եվ դու արթուն գիտակցությամբ, ուշք ու միտքդ տեղը, թողնում ես ամուսնուդ եւ երեխաների՞դ:

Նորա - Այո՛:

Հելմեր - Մնում է, ուրեմն, մի բան ենթադրել:

Նորա - Այսինքն՝ ի՞նչ:

Հելմեր - Որ դու ինձ այլեւս չես սիրում:

Նորա - Այո, այդպես է:

Հելմեր - Նո՛րա... Եվ այդ դու՞ ես ասում:

Նորա - Ա՛խ, ինձ համար էլ ցավ է այդ ասելը, Թո՛րվալդ: Դու ինձ հետ միշտ այնպես սիրալիր ես եղել: Բայց հիմա ոչինչ չեմ կարող անել: Ես քեզ այլեւս չեմ սիրում:

Հելմեր - Այդ նու՞յնպես որոշել ես արթուն գիտակցությամբ եւ ուշք ու միտքդ տեղը:

Նորա - Այո՛, գիտակցությունս լրիվ տեղը: Այդ պատճառով էլ չեմ կամենում այստեղ մնալ:

Հելմեր - Եվ կարո՞ղ ես բացատրել պատճառը, թե ես ինչու՛ կորցրի քո սերը:

Նորա - Այո՛, կարող եմ: Այդ պատահեց այս երեկո, երբ հրաշքն ուշացավ եւ ստիպեց սպասել: Ես տեսա, որ դու այն մարդը չես, որի տեղն ընդունում էի քեզ:

Հելմեր - Պարզ բացատրիր, քեզ բոլորովին չեմ հասկանում[11]:

Երբ բեմական շպարը թարմացնում են, վերադառնում է իր հանդերձարան ու սպասում, որ կանչեն վերջին արարին մասնակցելու: Մենակ է, հայելու դիմաց, լույսը շողում է նրա դեմքին, ու նա հանկարծ խղճում է ինքն իրեն: Միգուցե վերադառնամ Ալեքսանդերպլաց, բախտս փորձեմ, կատարեմ խոստումս, որ Ժամանակին չեմ կատարել: Գիտի, Լիզան սպասում է այնտեղ, տոմսարկղի մոտ, փշերի վրա:

-Էրիկ: Սու՞րճ:

-Ոչ: Ծնորհակալություն:

-Տասը րոպե:

Ալեքսանդրան միշտ գալիս էր պրեմիերային: Նստում էր օթյակում, բեմին շատ մոտ, ու նայում էր ուղիղ իրեն: Երբեք չէր ծափահարում, երբ վարագույրն իջնում էր, ասում էր, որ ծափահարությունները նյարդայնացնում են իրեն, որովհետեւ փչացնում են տրամադրությունը: Հետո գնում էր կուլիսներ, ուղիղ նրա հանդերձարան ու օգնում, որ փոխի հագուստը, մաքրի շպարը: Երբեմն նույնիսկ նրա փոխարեն էր ամեն ինչ անում: Մաքրում էր շպարն ու նայում ուղիղ աչքերի մեջ:

-Նայի՛ր ինձ:

-Ի՞նչ: Ո՞նց էր:

-Ընտիր, բայց հիմա արի մաքրենք դեմքդ:

Գուցե ես ավելի լավն էի շպարով:

Հելմեր - Բայց դու իմ կինն ես եւ՛ հիմա, եւ՛ ապագայում էլ, ինչ էլ որ դառնաս:

Նորա - Լսի՛ր, Թորվալդ... Երբ կինը թողնում է ամուսնուն, ինչպես հիմա ես եմ թողնում, ամուսինը, ասում են, ըստ օրենքի կնոջ հանդեպ բոլոր պարտականություններից ազատ է: Ես, համենայն դեպս, քեզ բոլորովին ազատ եմ թողնում պարտականությունից: Քեզ ոչ մի բանով կաշկանդված մի՛ համարի, ինչպես եւ ես ինձ չեմ համարի: Երկուսս էլ պետք է լրիվ ազատ լինենք: Ահա քո մատանին: Իսկ իմը տուր ինձ:

Հելմեր - Մատանի՞ն նույնպես:

Նորա - Այո՛, դա նույնպես:

Հելմեր - Ահա՛:

Նորա - Այսպես: Այժմ ամեն ինչ վերջացած է: Ահա այստեղ եմ դնում բանալիները: Տանը ինչ որ կա՝ աղախինն ինձանից լավ գիտե ամեն բան: Վաղը, երբ այստեղ չեմ լինի, Քրիստինեն կգա հավաքելու իմ իրերը, որ բերել եմ մեր տնից: Թող ուղարկեն ինձ:

Հելմեր - Լա՛վ, լա՛վ, իհարկե: Նո՛րա, դու ինձ երբեք էլ չե՞ս հիշելու:

Նորա - Ոչ, ես, երեւի, հաճախ պիտի հիշեմ քեզ էլ, երեխաներին էլ, տունն էլ:

Հելմեր - Քեզ նամակ գրել կարելի՞ է, Նո՛րա:

Նորա - Ո՛չ... երբե՛ք: Այդ չի կարելի:

Հելմեր: Բայց քեզ հարկավոր կլինի ուղարկել...

Նորա - Ոչինչ, ինձ բոլորովին ոչինչ հարկավոր չէ:

Հելմեր - Գուցե օգնել քեզ, կարիք եղած դեպքում:

Նորա - Ո՛չ, ասում եմ: Օտար մարդուց ես ոչինչ չեմ վերցնի:

Հելմեր -: Նորա՛... մի՞թե ես ընդմիշտ քեզ համար միայն օտար պիտի մնամ:

Նորա - Ա՛խ, Թո՛րվալդ, դրա համար պետք է, որ հրաշքների հրաշքը տեղի ունենա:

Հելմեր - Ասա՛, ինչպիսի՞ հրաշք:

Նորա - Այնպիսի հրաշք, որ դու էլ, ես էլ այնքա՛ն փոխվենք... Ո՛չ, Թո՛ր-վալդ, ես այլեւս հրաշքների չեմ հավատում:

Հելմեր - Իսկ ես հավատալու եմ: Դե՛, բոլորն ասա: Այնքան փոխվենք, որ... [12]

Չի լսում վերջին երկու տողը, բայց հանկարծ հանդիսատեսը ոգեւոր-ված ծափահարում է, վարագույրն իջնում է, նորից բարձրանում, իսկ տղամարդն ու կինը կենտրոնում են, խոնարհվելով, իրենցից գոհ, ու կինը սեղմում է նրա ձեռքը, ու նա զգում է, որ կինը լիարժեք երջանիկ է: Նորան: Իր հանդերձարանում մաքրում է շպարն ու անկյունում թողնում կոստյու-մը, հետո նորից սիգարետ վառում: Դրսում՝ միջանցքում, աղմուկ է. մորու-քավոր ռեժիսորը ներս է գալիս, որ շնորհավորի բոլորին, բացի նրանից: Հետո հայտնվում է կինը, որ ասի, որ բոլորով դուրս են գալիս նշելու, բայց Էրիկը հոգնած է:

-Խնդրում եմ, Էրիկ, արի՛ մեզ հետ:

-Չէ, հոգնած եմ, գնամ քնեմ: Կներեք: Բոլորդ կեցցեք:

Իրականում այդ գիշեր չքնեց: Պառկել էր՝ հայացքն առաստաղին գամած: Քունը չէր տանում, չնայած շատ ուշ էլ չէր: Ամեն անգամ, երբ աչքերը փակում էր, հայտնվում էր նրա դեմքը՝ այնպիսի արտահայտությամբ, որ սովորաբար լինում է բաժանումից որպեներ առաջ: Աչքերը գեղեցիկ էին, ու կարծում էր, որ նաեւ արցունքոտ էին: Վստահ չէր: Նայեց, թե աղջիկն ինչպես մեջքով դարձավ իրեն: Նայեց, թե ինչպես շտապ-շտապ հեռացավ: Նայեց, թե ինչպես անհետացավ, իսկ հետո պատուհանից տեսավ նրա դեմքը, ու նա իրեն ձեռքով արեց: Թվաց, թե փողոցից ինչ-որ հայտարարության արձագանք է լսում ու փորձեց կարոտաբաղձության նոտաներ որսալ: Հետո զնգաց հեռախոսը:

-Էրի՞կ:

-Այո:

-Նելան է:

-Նե՛լա:

-Լսիր, զբաղվա՞ծ ես: Ներքեւում եմ, ընդունարանում: Կուզե՞ս դուրս գանք, թե՞ շատ ուշ է:

-Հինգ րոպե ժամանակ տուր:

-Մի՛ շտապիր:

Կարմիր «Ֆիատ Ունոյում» նստած՝ Վասկո Ռոսին մտածում է՝ գուցե գնա Ռոքսի բար, մի բաժակ վիսկի խմի: Նելան քշում է ու չգիտի, թե ուր է գնում:

-Երեկվա տե՞ղը:

-Ուր ուզես:

-Արի ուրիշ տեղ գնանք:

-Ինձ համար մեկ է:

-Դե պատմիր, առավոտյան ո՞նց արթնացար:

-Բավական ուշ:

-Իսկ Վալեն մեկնեց, հա՞:

-Հա: Նրան կայարան տարա:

-Հետո՞:

-Գնացի մի բան ուտելու, հետո՝ հյուրանոց, հետո էլ դու զանգեցիր: Բայց որտեղի՞ց իմացար, թե որ հյուրանոցում եմ:

-Ա՛խ, Էրիկ, Էրիկ: Ինչ է, չգիտե՞ս, որ մենք շփվում ենք: Ախր Վալենտինան ինձ ասել է: Առավոտյան զանգեց, երբ մալթացի պարոնը դեռ քնած

էր, ու խնդրեց, որ հոգ տանեմ քո մասին, քանի դեռ այստեղ ես: Տեսնու՞մ ես՝ ինչքան է սիրում քեզ: Ուրիշ կնոջ է խնդրում հոգ տանել քո մասին:

Նելան քրքջում է, բայց Էրիկի լռությունը նրան ստիպում է պահախցիկում փնտրել սիգարետի տուփը:

-Լողա՞փ ենք գնում:

-Չէ, չէ: Մի լավ տեղ կա, շատ դերասաններ, քո միջավայրից, հենց այնտեղ են հավաքվում: Կուզե՞ս:

Էրիկը կնախընտրեր լողափ գնալ, միայն թե մեքենայի մեջ նստած մնար, կամ ավելի լավ կլիներ մնար հյուրանոցի իր սենյակում: Նելան նախորդ երեկո իր շուրջ հավաքվածներից ամենագեղեցիկն էր, բայց Վալենտինայի հրաժեշտի ժեստը դեռ աչքի առաջ էր. նա թափահարեց ձեռքը, մի բան, որ Յուտա Հայմը երբեք չարեց: Թեկուզ հենց Վասկոյի հանդեպ հարգանքից ելնելով (որը պատահաբար թե ոչ, այսօր էլ խաղում է այստեղ) ճիշտ կլինի, որ գնան «Ռոքսի» բար: Թույլ գունավոր լույսերը տարօրինակ ստվերներ են գցում Նելայի ճանաչած մարդկանց դեմքերին: Մյուս կողմից, նրանք հիշեցնում են լոնդոնյան բնակարանի հուլունքավոր բնակիչներին: Մյուս կողմից էլ, թվում է, երբեք այստեղ չի եղել: Մեկը, Մարիոնկա անունով, արդեն հարբած է ու փորձում է մեդիտացիա անել իր առաջ դրած օղու շշի հետ: Կողքին երիտասարդ տղա է, որը մի քանի հոգու հետ աննպատակ ծիծաղում է: Էրիկը չի կարողանում հասկանալ, թե այս երկու սեղանների շուրջ նստածներից որն է իր խմբից, որը՝ ոչ: Ծուխը տարբեր գույն ու հոտ ունի: Բարձր երաժշտություն: Նելայի ձեռքը՝ իր ձեռքում: Ուսը՝ ուսին: Գլուխը՝ իր ուսին: Դեմքը՝ դեմքին: Շուրթը՝ շրթին: Լռություն, որ ավելի խլացնող է, քան էլեկտրոնային կիթառը: Ամեն ինչ հեշտ է: Մարիոնի ու Բելայի ժամանակ նա վախենում էր, որ կանանց հարցում իր հաջողությունը սահմանափակ է, ինչպես սահմանափակ էր մաթեմատիկայի եւ առհասարակ դպրոցական կրթության հանդեպ ոգեւորությունը: Այն ժամանակ չէր էլ կարող պատկերացնել, որ կյանքում ամեն ինչ այսքան հեշտ կդասավորվի: Մելամաղձության վայրկյանները հազվադեպ էին, ու նա գրեթե չէր հասկանում արցունքների իմաստը: Այն օրվանից, երբ հայրը մահացու մեղք գործեց, ամեն ինչ տեղն ընկավ: Հետո սկսվեցին իր մահացու մեղքերը, բայց տարբերությունն այն էր, որ նա երբեք դրանք սրտին մոտ չընդունեց: Ավելին, երբեմն անհանգստանում էր քրոջ համար, որը չափից շատ լուրջ էր ընդունել դայակի իր գործը:

-Ընկեր չունե՞ս, Թես:

Քույրը կարմրեց ու կախեց գլուխը:

-Քո գործը չէ, հասկացա՞ր:

-Ի՞նչ է եղել:

-Ասում եմ՝ քո գործը չէ:

Դեռ այն ժամանակ, երբ հոր անուշահոտ քսուքով մազերը մի կողմի վրա էր սանրում, գլխում կպչուն միտք ծնվեց, թե ականջները շատ մեծ են, ցցված: Եվ ի վերջո ինքն իրեն համոզեց, որ բոլորովին էլ այդպես չէ, հիմա էլ սկսեց տառապել ներքեւի շուրթի պատճառով, որը վերեւինի համեմատ շատ հաստ էր թվում: Իսկ ատամներն ուղիղ չէին, ոչ էլ մարգարտի պես ճերմակ: Հետո սկսեց լուրջ մտահոգվել, երբ ընկերների դեմքին մազեր աճեցին, իսկ ինքը դեռ փողոցներով քայլում էր քրոջ դեմքի պես հարթ դեմքով: Երեւի արդեն քոլեջում էր, երբ առաջին անգամ սափրվեց: Բայց հետո հայտնվեց Լիզան՝ սպիտակ վերնազգեստով ու դարչնագույն կիսաշրջազգեստով, ու այդ պահից ամեն ինչ այնքան հեշտացավ. էլ ոչ մի խոչընդոտ, ամեն ինչ սահուն ընկավ իր տեղը, առանց ջանքի. հետո եղավ Լոնդոն կատարած ուղեւորությունը, Ալեքսանդրան եւ պատմության մնացած մասը: Այդ թվում եւ՝ անկողինները, որոնցից մեկն էլ Բեռլինում: Անխոհեմ էր կյանքը, ինչպես այն գիշերը բարում՝ գունավոր լույսերով, որոնք տարօրինակ ստվերներ էին գցում իրեն անծանոթ մարդկանց դեմքերին, որոնք խմիչք էին լցնում բաժակների մեջ ու միանգամից խմում: Ինչպես իր դիմաց նստած կինը, որ խոր քնած էր, կողքի տղամարդուն հենված, իսկ տղամարդն էլ փորձում էր ազատվել նրանից ու աննպատակ ծիծաղում էր:

-Գնա՞նք:

-Գնա՞նք: Ու՞ր:

-Իմ տուն կգա՞ս:

-Իհարկե, ինչու՞ չէ:

-Գիտես, չէ՞, քեզ բազմոցին չեմ թողնի: Արի, գնացինք:

-Երեւում է՝ դու եւ Վալենտինան երկար ու հաճելի զրույց եք ունեցել այս առավոտ:

-Մենք լավ ընկերներ ենք ու ամեն ինչ պատմում ենք իրար:

-Ամեն ի՞նչ:

-Ամեն ինչ:

-Ուրեմն վաղը զանգելու ես եւ ամեն ինչ զեկուցելու՞ ես նրան:

-Իսկ դու ի՞նչ ես կարծում:

-Չգիտեմ:

-Վալենտինան քեզ շատ է սիրում: Չէր ուզի, որ մենակ մնաս ու տառա-

պես: Նա էր քո մասին հոգ տանում, հասկանու՞մ ես:

Մայիս է: Գաղափար չունեմ, թե ժամը քանիսն է: Դրսում են: Նելան բռնում է Էրիկի ձեռքն ու շտապում դեպի կարմիր «Ֆիատ Ունոն», որ կայանած է դիմացի մայթին:

-Կուզե՞ս՝ մեքենայով իջնենք լողափ:

-Մոռացի՛ր լողափի մասին: Նախ հեռու է, հետո էլ ցուրտ է:

Հրապարակում ցուրտ է: Ա՛խ, ինչքա՛ն է թափառել՝ հուսալով, որ կտեսնի ծուլորեն դեպի տուն քայլող Բելային: Բայց մինչեւ առավոտ Բելան այդպես էլ չերեւաց փողոցի անկյունում: Ժամանակն անցկացնում էր պատշգամբում, քամին փչում էր, դեմքը սառույցի պես սառչում էր, ու հույս էր փայփայում, որ կտեսնի նրան: Հրապարակի ցուրտը զգաց միայն, երբ ոստիկանները մոտեցան: Փողոցի խավարում, հրապարակի խավարում, պատշգամբի խավարում, կուչ գալով ցրտից ու պաշտպանվելով մոր հետաքրքրասեր աչքից, մոր, որը դեռ չի հասկացել, թե վերջերս ինչու է այսքան հաճախ դուրս գալիս պատշգամբ: Մռայլ փողոցներում, սեւ տարածության մեջ սլացող «Ֆիատ Ունոյի» խավարը: Հետո՝ թրթռացող լույսերը:

-Հասանք:

-Հարմա՞ր է, որ քո տանը մնամ:

Նելան քմծիծաղ է տալիս:

-Իհարկե, ու կարծում եմ՝ դեռ երկար ժամանակ ես մնալու:

-Ժամը քանիսի՞ն ես արթնանում, որ աշխատանքի գնաս:

Նելան նորից քրքջում է:

-Դրա համար մի՛ անհանգստացիր:

-Վաղու՞ց ես ճանաչում նրան:

-Ու՞մ: Վալենտինայի՞ն:

-Այո:

-Երեւի տասներեք տարեկանից: Դպրոցից: Լավ ընկերուհիներ մնացինք: Միշտ միասին էինք: Երբ Միլանում էր, հազվադեպ էինք հանդիպում, բայց հետո վերադարձավ այստեղ:

-Ի՞նչ կարող ես պատմել նրա մասին:

-Ոչինչ: Եթե պատմելու բան լինի, ինքը քեզ կպատմի:

-Էլ երբեք չեմ տեսնի նրան:

-Ո՞վ գիտի:

Ինչպես Յուտա Հայմին երբեք չտեսավ: Նրան գրած վերջին նամակներից մեկն ուղարկելիս, երբ դեռ չէր կորցրել հույսը, մտքի ծայրով անցավ,

որ Յուտա Հայմը մահացել է: Գուցե մեկնել է ծնողներին տեսնելու, ու ճանապարհին մեքենան վթարվել է: Հնարավոր է: Չի բացառվում նաեւ, որ ինչ-որ մեկը ստանում է նամակներն ու անմիջապես աղբարկղը նետում: Գուցե նա հիմա խաղաղ հանգչում է:

Նելան: Այնքա՜ն հեշտ էր Նելայի հետ այդ գիշերը, առաջին գիշերը: Բարձրացան Նելայի բնակարան: Խմիչք լցրեցին: Հետո՝ բազմոցի վրա: Ցնցուղի տակ: Նելայի լայն մահճակալին, որի վրա փափուկ խաղալիքներ էին: Մեծ, անուշահոտ ծածկոցի տակ: Անուշահոտ, ինչպես Նելայի խոնավ մազերը, ինչպես նրա մարմնի խոնավությունը: Նելան, որի համար այնքան հեշտ էր սեր անել իր հետ այդ գիշեր: Գիշերը սահեց-անցավ: Նույնիսկ արեւածագի առաջին ճառագայթները որսացին, որոնք ներս ընկան ննջարանի դիմացի հյուրասենյակի լայն պատուհանից: Նելան՝ այն աղջիկը, որն ասում էր, որ վաղուց տղամարդու հետ գիշեր չի անցկացրել: Եվ Էրիկը, որն ականջներին չէր հավատում: Քեզ նման կի՞նը: Անհնար է: Երեւի կարգին տղամարդ չի պատահել: Ամեն մեկն ապրում է իր համար: Բայց գոնե մի գիշեր, թեկուզ մի գիշեր. անհնար է: Ուրեմն համապատասխանու՞մ եմ նրա չափանիշներին: Ի՞նչ ես կարծում: Գաղափար չունեմ: Դե լավ, վերջ տուր: Չէ, իսկապես գաղափար չունեմ: Բայց ի՞նչ կարծիքի ես: Չգիտեմ: Վերջացրու՛: Չե՞ս ուզում ասել: Ի՞նչ ասեմ: Լավ, արի ջուր չծեծենք: Ասա՛, ի՞նչ ես ուզում ասել: Համապատասխանու՞մ եմ: Հա՞: Ի՞նչ ես կարծում: Չգիտեմ: Ասա՛: Ինչ է, չե՞ս ուզում ասել: Ի՞նչ ասեմ: Համապատասխանում ես, թե չէ՞: Միանշանակ: Դու էլ:

Արեւը ոչ թե արթնացրեց, այլ քնեցրեց նրանց:

Էրիկն ուժասպառ էր: Հրաժեշտ տվեց բոլորին ու հիշեցրեց, որ վաղը նորից կհանդիպեն:

-Էրիկ, հաստա՞տ չես գալիս: Երկար չենք մնա դրսում:

-Վաղը կհանդիպենք: Գնամ, քնեմ:

Բայց երբ պտտում է մուտքի դռան բանալին, հեռախոսի զանգ է լսում: Այս ժամին ո՞վ կարող է լինել: Փորձում է անտեսել, բայց զանգը համառորեն շարունակվում է:

-Ալո:

-Ողջույն, իմ սիրելի՛ Թորվալդ: Նորան է:

-Ողջույն, Տանյա, ի՞նչ կա այս ժամին:

-Գնում ես քնելու՞, իմ սիրելի՛ Թորվալդ:

-Այո, այսօր հոգնած եմ: Երեւի պրեմիերայի պատճառով: Դու, ինչ է, մյուսների հետ դուրս չէի՞ր գալու:

-Չուզեցի:
-Պարզ է: Ուրեմն տուն ես գնացել:
-Մենակ եմ: Ինչպես դու:
-Ճիշտ որ:
-Թե՞ աղջիկդ քեզ մոտ է:
-Չէ, հորաքրոջ տանն է:
-Դե, ուրեմն կարող ես սուրճի հրավիրել ինձ:
-Այս ժամի՞ն:
-Ինչու՞ ոչ:
-Վաղը էլի ներկայացում ունենք, Տան:
-Եվ ի՞նչ:
-Անկեղծ, չգիտեմ: Շատ հոգնած եմ, այլապես կմիանայի ձեզ:
-Ես նրանց հետ չեմ: Ախր ասացի, չէ՞, մենակ եմ:
-Ինչու՞ նրանց հետ չգնացիր: Ինձ թվաց՝ երեկոյան դուրս գալու միտքը քոնն էր:
-Միտքն իմն էր, բայց երբ հասկացա, որ չես գալու, հետաքրքրությունս կորավ: Հիմա մենակ ես, չէ՞: Թե՞ Ալեքսանդրան քեզ մոտ է:
-Մենակ եմ:
-Դե ուրեմն...
-Ուրեմն ի՞նչ:
-Երկուսս էլ մենակ ենք:
-Համարյա կեսգիշեր է, Տան:
-Ճիշտ է:
-Իսկ գուցե վա՞ղը: Ի՞նչ կասես:
-Էրիկ, ո՞վ գիտի՝ վաղը ինչ կլինի:
-Ինչպե՞ս թե: Վաղը ներկայացում ունենք:
-Ճիշտ է, ու դու ներկայացումից հետո կանհետանաս, որովհետեւ հոգնած ես, չէ՞:
-Իսկ դու հոգնա՞ծ չես:
-Մի քիչ:
Երբ մոտեցավ, Տանյայից շպարի հոտ էր փչում: Նույն սանրվածքն է, ինչ այն օրը, երբ ներկայացումից հետո Էրիկի հետ դուրս եկավ բեմ: Գիշերն անցկացրեց Էրիկի հետ, անկողնու մի կողմում, այն անկողնու, որը մի շաբաթ առաջ Ալեքսանդրայի հետ էր կիսել: Պարզվեց՝ Էրիկի համար ամեն ինչ այնքա՛ն հեշտ է. նույն մահճակալը, նույն սավանները, ինչ Ալեքսանդրայի ժամանակ, անկողնու նույն կողմը, որտեղ հիմա հանգիստ

քնած է Տանյան: Իր փորձից գիտեր՝ ինչպես հասկանալ՝ կինը հետաքրքրված է, թե ոչ: Բացի այդ, դերասանները հատուկ գաղտնի լեզու են մշակել, որ հեշտ հասկանան իրար: Կար ժամանակ, երբ գիտեր, որ Տանյան հետաքրքրված է կամ գոնե ինչ-որ չափով հետաքրքրված է իրենով: Բայց ամեն ինչ այնքան հեշտ ստացվեց, չափազանց հեշտ: Լիզան կուզեր խլել այդ գիշերը, բայց այն բարի լուրը, որ Ալեքսանդրան անվերադարձ մեկնել է այնտեղ, որտեղից եկել էր, դեռ չէր հասել նրան: Տանյան նրանից առաջ էր իմացել ու օգտվել էր առիթից: Մինչ Տանյան հանգիստ ննջում է Ալեքսանդրայի մահճակալին, Էրիկը, չնայած հոգնածությանը, անկողնուց դուրս է սահում ու մոտենում իր գրասեղանին: Նրա առաջ թղթի սպիտակ կտոր է, որ շողում է գրասեղանի լուսամփոփից ընկնող աղոտ դեղին լույսից: Սիրելի՛ Յուտա, չեմ ասի, թե ազնիվ եմ: Եվ դա լավ է, որովհետեւ այլապես մենք չէինք հանդիպի: Չգիտեմ՝ ինչու չես պատասխանում նամակներիս: Դրանք երեւի հասնում են քեզ, այլապես կվերադառնային՝ փոստային դրոշմանիշը վրան: Այս նամակը գրում եմ կեսգիշերին: Այստեղից ոչ շատ հեռու արդեն տաղավարներ են կառուցում շաբաթ առավոտյան բացվելիք շուկայի համար: Յուտա, հիմա միայնակ եմ: Նա գնացել է: Մի՛ անհանգստացիր, պատճառը դու չես: Եթե նույնիսկ դու ես, էական չէ: Այստեղ մռայլ է, թեեւ դու չես սիրում, երբ կլոր տարին արեւը փայլում է գլխավերեւում: Բայց դա կարեւոր չէ, եւ ես սա ասում եմ միայն նրա համար, որ հանգիստ լինես ու չմտածես, թե կապ ունես այս պատմության հետ: Դու միայն իմն ես, իմ անձնական պատմությունը: Ու չնայած չես պատասխանում, չեմ պատկերացնում, թե երբեւէ կանհետանաս իմ կյանքից: Երազում եմ ձայնդ լսել: Երազում տեսնում եմ դեմքդ, ձեռքերդ, կուրծքդ, քայլելուդ ձեւը: Հետո հիշում եմ, թե ինչպես փախար ընկերուհուդ հետ, ու չեմ հասկանում, թե ինչու այդպես վարվեցիր ինձ հետ: Յուտա, գրի՛ր ինձ: Հենց որ կարդաս սա, գրի՛ր ինձ: Գրի՛ր, Յուտա:

Հիմա, երբ անջատել էր լուսամփոփը, ու աչքերը հարմարվել էին խավարին, ինչ-որ տեղ մոտակայքում նկատում է լուսաբացի առաջին նշույլները: Առավոտ է: Ծուտով կլուսանա, իսկ նա դեռ չի քնել: Տանյան վերեւի հարկում է. հենց այդպես, առանց զգուշացնելու: Նա հիշում է գրասեղանին դրած սիգարետներն ու վառիչը: Սիգարետը: Սիգարետը՝ խաղաղության, խավարի մեջ: Չնայած քունը տանում է, չի բարձրանում վերեւ՝ ննջարան: Տանյան վերեւում է, ու չնայած վաղուց աշխատում է նրա հետ, չնայած վերջին գիշերը միասին են անցկացրել, նա իրեն օտար է, անծանոթ: Օտար, ինչպես Յուտա Հայմը, բայց ուրիշ: Երբեք առանձնապես չի

հետաքրքրվել Տանյայով: Լավ դերասանուհի է, հանդիսատեսն ու գործընկեր-դերասանները հիանում են նրանով. գեղեցիկ է, ճիշտ է, բայց Էրիկ Սերիի համար Տանյան ուղղակի դերասանուհի է, որի հետ նա հաճախ է աշխատում, ոչ ավելին: Այնպե՛ս է ուզում արթնացնել նրան, խնդրել, որ հեռանա, որովհետեւ զբաղված է, հիմա պարտականություններ ունի՝ իր ու դստեր նկատմամբ, որ քնած է հորաքրոջ տանը: Պիտի հոգ տանի աղջկա մասին, ավելի շատ ժամանակ անցկացնի նրա հետ: Լավ է, որ չամուսնացած հորաքույր ունի, որը տատիկի փոխարեն սիրում է նրան, սիրում է այնպես, ինչպես սեփական դստերը կսիրեր: Հենց որ Թեսին իմացավ, որ Ալեքսանդրան հեռացել է, եղբորն ասաց, որ չանհանգստանա, շարունակի իր գործով զբաղվել թատրոնում, իսկ ինքը հոգ կտանի դստեր մասին: Հեշտ ու հանգիստ: Էրիկը ներս է քաշում ծխի վերջին քուլան, փակում աչքերը, մոռանում ամեն ինչ, նույնիսկ շուկայից աստիճանաբար բարձրացող աղմուկը:

-Բարի լույս, Էրիկ:

Նրա դիմաց Տանյայի մերկ մարմինն է՝ աղոտ, լողզված:

-Ինն անց կես է:

-Արդե՞ն:

-Երեկ գիշեր վախեցրի՞ քեզ:

Էրիկը նայում է ժամացույցին: Տասին քսան է պակաս:

-Առավոտյան վաղ իջա, որ ստուգեմ՝ պատուհանները փակ են թե չէ. մանր անձրեւ էր մաղում: Հետո մի քիչ գիրք կարդացի ու նորից ննջեցի:

-Ուզում ես, որ հիմա՞ գնամ:

-Դու՛ որոշիր:

-Կարո՞ղ ենք գոնե սուրճ խմել:

-Մնա, ինչքան ուզում ես, Տա՛ն:

-Չէ, բնակարանումս խառնաշփոթ է, ավելի լավ է գնամ, մի քիչ հավաքեմ: Այսօր մեր երկրորդ գիշերն է:

-Մի բան խնդրեմ, կանե՞ս, Տա՛ն: Չեմ ուզում դուրս գալ:

-Իհարկե, ասա:

-Այս նամակն իմ փոխարեն կուղարկե՞ս:

Տանյան նայում է ծրարին: Բեռլին:

-Մի օր գնա՞նք այնտեղ:

-Ու՞ր:

-Բեռլին:

Բեռլինում պատ կա, որը քաղաքը բաժանում է երկու մասի: Բեռլինում

հրապարակ կա, Ալեքսանդերպլաց: Բեռլինում շատ է հանդիպում մոխրագույնը, ինչպես եւ մուգ կանաչը: Բեռլինում բազմաթիվ մարդիկ կան, ու դժվար է նկարագրել նրանց: Կանաչ համազգեստով ոստիկաններ կան ու մոխրագույն կոստյումներով ու բաճկոններով կերպարներ, որոնք գիշերները փայլփլում են: Յուտա Հայմն էլ է Բեռլինում: Յուտա Հայմը երբեք չպատասխանեց նրան: Երբեք: Բայց Վալենտինան ամիսը մեկ անգամ կամ վեց ամիսը մեկ նամակներ է ուղարկում Էրիկին: Իհարկե, ոչ մի արտասովոր բան չի գրում, համենայն դեպս ոչ այն, ինչ Էրիկը կցանկանար, օրինակ, «Գրում եմ պիցցերիայից: Այսօր այն այնքան էլ մարդաշատ չէ: Երեկ Նելայի հետ էի: Նա բարեւում է քեզ» կամ «Երանի թողնեի պիցցերիայի աշխատանքը, բայց վստահ չեմ, որ հիմա ուրիշ բան կգտնեմ: Եթե գտնեմ, դուրս կգամ» կամ «Գուցե վերադառնամ Միլան», իսկ մի անգամ էլ գրեց «Նելան ու ես բարեւներ ենք ուղարկում քեզ Բեռլինից»: Վալենտինան, Նելան եւ Յուտա Հայմը:

Այն օրը, երբ Վասկո Ռոսին հեռացավ Սիցիլիայից, վերադարձավ կարմիր «Ֆիատ Ունոյով» ու շարունակեց իր անկազմակերպ կյանքը. նա երբեք չի քնում, չհաշված այն երեք օր ու գիշերը, որն անկացրեց Նելայի հետ: Ծրջում էին կարմիր «Ֆիատ Ունոյով», մերկ պառկում որտեղ ուզում էին ու երբեք չէին մտածում ժամանակի մասին: Օդանավակայանի մոտ զգացմունքները սկսում են խեղդել աղջկան, բայց Էրիկը շարունակում է փորփրել իր պայուսակը՝ փնտրելով կանաչ անձնագիրը, իսկ Վասկոն նրան ապահով թռիչք է մաղթում, «forse non c'incontreremo mai, ognuno a rincorrere l suoi guai, ognuno col suo viaggio, ognuno diverso, e ognuno in fondo perso dentro l fatti suoi!»[13]: Քսան րոպե տեւողությամբ թռիչք դեպի նոր աշխարհ: Մայիսը՝ իր ջերմ, գորշ զեփյուռով:

Լիզայի մասին վատ լուրերից հետո Իտալիայից նամակ եկավ: Նելայից: Առաջին նամակն էր: Նելան առանձնապես ցանկություն չուներ գրել նրան, բայց պարտավոր էր: Նելան գրում էր, որ մահը վրա է հասնում, երբ ամենաքիչն ես սպասում: Նա էլ չէր սպասում: Ոչ ոք չէր սպասում: Էրիկը սպասում էր Յուտա Հայմի նամակներին, բայց ապարդյուն: Քիչ թե շատ ընտելացել էր անիմաստ սպասելուն: Եվ ահա վերջին նախադասությունը, որ գրել էր վերադարձի օրը, կախարդական մայիս ամսին, բացիկի վրա, որտեղ երեւում էր հզոր ամրոցի հետեւում թաքնված արեւը, բոսորագույն երկինք հասնող եկեղեցու աշտարակները. «Հուսամ՝ կպատասխանես նամակիս»: Մոտավորապես ամիսը մեկ նամակ էր ստանում, որ միշտ ավարտվում էին այսպես՝ «մինչեւ նորից հանդիպենք»:

-Ի՞նչ է պատահել:

Հասկանում է, որ Էրիկը քնից վեր է թռել, ու ձեռքը դնում է նրա խոնավ ճակատին:

-Ոչինչ: Հոսանքն էին անջատել:

Էրիկը հասկանում է, որ քրտնում է ու այրվում:

-Հիսու՛ս Քրիստոս: Այս շաբաթ արդեն երկրորդ անգամ է: Դեռ ամառվա կեսն է:

-Ոչինչ չենք կարող անել:

-Քո կարծիքով ժամը քանի՞սն է:

-Մոտավորապես չորսը: Երկուսն անց կեսից արթուն եմ:

-Իսկ ինչու՞ չարթնացրիր ինձ:

-Ինչի՞ համար: Որ հովհարով զովացնեի՞ր:

-Դե, կարող էինք իրար զովացնել:

Էրիկը դժվարությամբ տեղից վեր է կենում. մեջքը խոնավ է, սավանը՝ ջրի մեջ կորած: Նա հետեւում է աղոտ լույսին, որը հուշում է պատշգամբի դռան տեղը, ու դուրս է գալիս բաց պատշգամբ: Առանձնապես շատ բան չի փոխվում. նրան դիմավորում է երեկվա, նախորդ օրվա, երկու ամիս առաջվա կիզիչ տապը, որ փաթաթվում է ծառերի ճյուղերին, հոգեվարքի մեջ կառչում տերեւներից: Նա ծգվում է ու զգում, թե ինչ հոգնած է: Այս հանդարտությունը հիվանդացնում է նրան, իսկ կատարյալ լռությունը՝ նյարդայնացնում: Վերջերս համարյա չի քնում: Վախենում է անկողին մտնել: Լռությունը, խաղաղությունը, խավարը, միայնությունը օրվա ընթացքում մի քանի անգամ գրոհում են, իսկ գիշերը ոչ մի քայլ չեն հեռանում նրանից: Վերջերս շատ եմ հիշում այդ մասին:

-Ցուր եմ բերել քեզ: Էլ սառը չէ, որովհետեւ հոսանքը վաղուց են անջատել:

Մեծ բաժակ է, մինչեւ եզրը լցված: Միանգամից խմում է կեսը:

-Հիմա ի՞նչ ենք անելու:

-Կսպասենք, մինչեւ միացնեն: Ուրիշ էլ ի՞նչ:

-Առավոտյան պիտի տուն գնամ: Միլդրեդը որոշ ժամանակով բերելու է աղջկան:

-Ո՞ր ժամին:

-Մոտավորապես յոթն անց կես դուրս կգամ: Երեւի երկար չի տեւի, շուտ հետ կգամ:

-Ես քեզ կտանեմ:

-Ոչ մի դեպքում: Խցանումներ են, շատ կուշանաս: Ինքնուրույն կգնամ, ավտոբուս կնստեմ. երբ կհասնեմ, կհասնեմ: Եթե յոթն անց կես դուրս գամ, մինչեւ ինը տանը կլինեմ:

-Ինչ էլ վստա՞հ ես:

Սեպտեմբերի վերջին շաբաթն է: Առավոտյան ժամը վեցին բոլոր փողոցների անկյուններում հայտնվում են դպրոցական համազգեստով երեխաների խմբեր, որոնք սպասում են ավտոբուսներին: Խցանումներն ավելի երկար են, վարորդները՝ ավելի բարկացած: Ավելի երկար: Ավելի բարկացած: Էրիկը զարմացած նայում է ավտոբուսի կանգառում սպասող բազմությանը եւ իր առաջ օձի նման գալարվող մեքենաների երկար շարքին:

-Լավ է, որ լսեցի խորհուրդդ:

-Ասում էի, չէ՞: Հաստատ տեղ չէիր հասնի: Կուշանայիր, իսկ Միլդրեդը կհարցներ, թե օրվա այս ժամին ուր ես:

-Մտքովս չէր անցել:

-Ի՞նչ կասեիր:

-Գաղափար չունեմ:

-Վաղը գա՞մ քո հետեւից, թե՞ Միլդրեդը քեզ կուղեկցի:

-Վա՞ղը:

-Էրիկ, վաղը պիտի հիվանդանոց գնաս: Ժամը ութին բժշկի մոտ պիտի լինես, ինչը նշանակում է, որ առնվազն ժամը յոթին պետք է տեղում լինես: Մի օրով արձակուրդ եմ վերցրել ու կարող եմ քեզ մեքենայով տանել, բայց եթե ուզում ես Միլդրեդի հետ գնալ, ոչ մի խնդիր:

-Ես Միլիին նույնիսկ չեմ ասել, որ բժշկի եմ:

-Դե ուրեմն որոշիր՝ ե՞ս տանեմ քեզ, թե նա:

-Գիտես, կարող եմ մենակ գնալ:

-Շա՛տ ապրես: Այս շոգին: Ավտոբուսների քաոսի մեջ: Մի խոսքով, որոշիր՝ ինձ հետ ես գնում, թե նրա:

-Չէ, ավելի լավ է նրա հետ չգնամ: Նույնիսկ չգիտեմ, թե վաղը ինչ գրաֆիկով է աշխատում:

-Դե ուրեմն իմացիր՝ մտադի՞ր է վաղը աղջկան քեզ մոտ թողնել. եթե այո, խնդիր կունենանք:

-Չէ, նա կարող է Թեսիի մոտ մնալ: Այսօր է իմ տուն գալու, որովհետեւ Թեսին պիտի հիվանդանոց գնա: Միայն այսօր: Ընտիր քույր-եղբայր ենք, հիվանդանոցներից դուրս չենք գալիս:

-Դու էլ վաղուց չես տեսել Թեսիին: Լավ կլինի՝ այս շաբաթ մի օր այցելես:

-Ճիշտ է: Վաղն առավոտյան կգա՞ս իմ հետեւից:

-Չէ, այսօր երեկոյան կգամ, իսկ վաղն առավոտյան միասին դուրս կգանք: Չե՞ս տեսնում՝ երթեւեկությունն ինչ վիճակում է:

-Ուրեմն ինձ մո՞տ կմնաս:

-Եթե ուզում ես, իմ տանը մնա: Ուղղակի քո տունը հիվանդանոցին ավելի մոտ է:

Հիվանդանոցի սպասասրահը բազմամարդ է: Ոմանք ասում են, որ արդեն երկու ժամ է, ինչ սպասում են: Մյուսներն էլ պնդում են, որ բժիշկ-խորհրդատուները դեռ չեն եկել: Մի մարդ գոռում է, թե բուժքույրն իր ծանոթներին հերթից առաջ է գցել: Նրա կողքին կանգնած կինն ասում է, որ իր մայրը, որը նստած է մյուս կողքին, դեղորայքի կարիք ունի, բայց դեղեր ընդհանրապես չկան: Նրա կողքին նստած կինը հիշեցնում է, որ մանր ձկները երբեք մեծ ձուկ կուլ չեն տալիս: Կինը գլուխը բարձրացնում է գլուխկոտրուկից ու ասում, որ փոփոխությունների ուժեղ քամի է փչում, ու ոչ ոք ի զորու չէ սանձել այն: Բոլորը համաձայնում են: Մի ժամանակ Լիզան գալիս էր այս բաժանմունքներից մեկը, շունչը պահած սպասում բժշկի խորհրդատվությանը: Թերթիկի վրա նշված ժամից մեկուկես ժամ հետո Էրիկ Սերիին հրավիրում են մի սենյակ, որտեղ բազմաթիվ էկրաններ ու տարօրինակ սարքավորումներ կան:

-Էրիկ Սերի՞:

-Այո:

Բուժքույրը հանում է ակնոցը:

-Տիկին, խնդրում եմ, դրսում սպասեք:

-Կարելի՞ է՝ նա էլ ներս գա:

-Բժիշկը հիմա կգնի ձեզ, եւ դուք պետք է մենակ լինեք, դե, սարքավորումների պատճառով: Կարող եք հանել վերնաշապիկը, որպեսզի էլեկտրասրտագրություն անենք: Դենիս, զանգե՞լ ես սրտաբանական բաժանմունք:

Դենիսը՝ մյուս բուժքույրը, թողնում է գործն ու հեռախոսի վրա չորս կոճակ սեղմում: Էրիկ Սերին նայում է շուրջը տեղադրված տարօրինակ սարքերին, հետո՝ Դենիսին. վերջինս նկատում է նրա հայացքն ու ժպտում: Հետո վերջապես նայում է մուգ կապույտ համազգեստով բուժքրոջը, որը հավանաբար մոռացել է, թե ինչպես են ժպտում: Բուժքրոջ մուգ կապույտ աչ-

քերը շատ փոքր են դեմքի համեմատ, բայց շուրթերը գեղեցիկ են: Երեւի արդեն վաթսունին մոտ է:

-Պարո՛ն Սերի, խնդրում եմ, կիանե՞ք ձեր վերնաշապիկը: Եվ պառկեք: Ոչ, ոչ, հանե՛ք: Տաբատի կոճակները նույնպես արձակեք:

Լուրը հայտնելուց հետո Լիզան խզեց նրա հետ բոլոր կապերը: Էրիկը մի քանի անգամ զանգեց, բայց նա այդպես էլ չպատասխանեց: Էրիկը մի անգամ նրան տեսավ հորդ անձրեւի տակ աշխատանքի շտապելիս, անձրեւանոցի տակ պատսպարված: Հանդարտվեց: Զանգեց նրա աշխատավայր:

-Ի՞նչ ես ուզում:

-Իսկ դու ի՞նչ ես կարծում: Ուզում եմ տեսնել քեզ:

-Ինձ հանգիստ թող, Էրիկ:

-Հանգի՞ստ թողնեմ:

-Այո, ուղղակի հանգիստ թող, լա՞վ: Հանգիստ թող:

-Ազատ ժամանակ չունե՞ս:

-Ինչի՞ համար:

-Դե վերջ տուր:

-Ուրեմն հիմա քո կյանքում ոչ ոք չկա՞: Քեզ նման չէ:

-Ե՞րբ գամ:

-Քեզ դուր չի գա, երբ տեսնես ինձ:

-Իսկ եթե ասեմ, որ այսօր արդեն տեսե՞լ եմ քեզ:

-Ե՞րբ:

-Երբ աշխատանքի էիր գնում:

Մութն ընկնելուց հետո Լիզան գնաց Էրիկի տուն. առաջ երբեք նման բան չէր անի: Կանգնեց մուտքի դռան առաջ: Բաճկոնը չափազանց մեծ էր, ճտքավոր կոշիկներն անձրեւից թրջվել էին: Գլխին մուգ բերետ էր: Լիզան, դռան մոտ կանգնած, անթարթ նայում էր Էրիկին, Էրիկն էլ՝ Լիզային:

-Ներս արի: Ինչու՞ ես այդտեղ կանգնել:

-Իսկապե՞ս ուզում ես, որ ներս գամ:

-Սուրճ կխմե՞ս: Հանի՛ր բաճկոնդ:

Լիզան դանդաղ հանում է բաճկոնն ու գցում աթոռին, որը պատահաբար կողքին է:

-Հիմա՞ ինչ:

Լիզան չի շարժվում: Կանգնած նայում է նրան, նա էլ՝ Լիզային: Թվում է՝ գիրացել է. մի տեսակ ուռած է: Դեմքն ավելի լայն է, մարմինը՝ նույնպես:

-Միգուցե ամեն ինչ հանե՞ս: Այնքա՛ն եմ սպասել այս օրվան:

-Ամեն ի՞նչ:

-Առաջվա պես: Լիզա, գոնե հասկանու՞մ ես, թե ինչ վաղուց չենք հանդիպել:

-Ուզում ես, որ ամեն ինչ հանե՞մ: Գլխա՞րկս էլ: Թե՞ գլխարկս թողնեմ:

-Ամեն ինչ:

-Չեմ կարծում, թե քեզ դուր կգա:

-Ի՞նչը դուր չի գա:

-Այն, ինչ տեսնես:

-Հետո սուրճ կեփենք, ի՞նչ կասես:

Լիզան շարունակում է նայել Էրիկին ու տեսնում է, որ նա սկսում է դանդաղ հանել հագուստը՝ իրեն ժպտալով: Էրիկը երբեք այսպես չի հանվել:

-Ի՞նչ ես անում:

-Հանվում եմ: Գիտե՞ս՝ ինչ վաղուց չենք հանդիպել:

-Վստահ եմ, որ այս ընթացքում զսպել ես քեզ:

-Ճիշտ է:

-Կարծում ես՝ կհավատա՞մ:

-Լիզա, գուցե վատ եմ վարվել քեզ հետ, բայց երբեք չեմ ստել: Վաղուց քսան տարեկան չեմ:

-Բայց դեռ ուզում ես ինձ:

-Իսկապես ուզում եմ:

-Չնայած նրան, որ...

Էրիկին նման չէր: Ինքն էլ գիտի: Նա երբեք այդպես չէր հանվում: Սովորաբար թողնում էր, որ Լիզան հանի իր հագուստը: Բայց ոչ այսօր: Սա ինչ-որ նոր խաղ է: Լիզայի հետ միշտ մի նորություն է լինում: Երեւի հենց դա է պատճառը, որ նա այսքան տարի անց դեռ տարված է Լիզայով: Նա գիտի, թե ինչ է սիրում Էրիկը, Էրիկը գիտի, թե ինչ է սիրում Լիզան: Նրանք ճանաչում են իրար, չնայած Լիզան էլ է շատ փոխվել: Էրիկի դեմքին տարօրինակ ժպիտ է, իսկ աչքերը մի փոքր նեղացել են, ասես ուզում է կենտրոնանալ իր բացահայտման վրա: Լիզան սկսում է հանվել՝ աչքը Էրիկից չկտրելով. Էրիկն էլ նրան է անթարթ նայում:

-Ասա, որ ուզում ես ինձ:

-Ինչ է, չգիտե՞ս:

-Ասա՛:

-Ուզում եմ քեզ:

-Ինչքա՞ն:

-Չեմ հասկանում, այս խաղերը պարտադի՞ր են:

-Չե՞ս ուզում խաղալ:

-Բառախաղեր չեմ սիրում:

-Ծա՞տ ես ուզում ինձ:

-Անտանելի՜: Իսկ հիմա հանվիր:

-Գիտես, երբեք չեմ տեսել, թե ինչպես ես հանվում: Միշտ մտածել եմ, որ վախենում ես իմ ներկայությամբ շորերդ հանել:

-Վախենու՞մ եմ:

-Հա, վախենում ես: Քանի տարի է հանդիպում ենք, ու երբեք այսպես չես արել: Քեզ ի՞նչ եղավ:

-Մի՛ հարցրու, թե չէ ամեն ինչ կփչացնես: Ծարունակի՛ր:

Հիմա երկուսն էլ մերկ են, դեմ դիմաց կանգնած:

-Դու գիտես, որ դեռ գեղեցիկ ես:

-Իսկ կուրծքս՝ ոչ: Տեսնու՞մ ես՝ որ մասում են կարերը:

Էրիկն ուշադիր նայում է ու նկատում տգեղ սպին ձախ կրծքին: Բայց որքան շատ է նայում բծին, այնքան շատ է ուզում նրան: Գրկում է Լիզային:

-Սպասիր, Էրիկ: Ինչքա՞ն ես ուզում ինձ:

-Ահավոր շատ: Ինչ է, չգիտե՞ս:

-Վստա՞հ ես:

-Լսիր, միայն մի բան ասա: Ինչու՞ ես այստեղ եկել:

-Դու ինձ կանչեցիր, ես էլ եկա:

-Բայց ուզու՞մ էիր, թե՞ չէ:

-Ինչքա՞ն ես ուզում ինձ:

-Այսպես երկա՞ր ենք շարունակելու:

-Եթե ուզում ես ինձ, ասա, թե ինչքան:

Փոխանակ ասելու, թե որքան է ուզում նրան, Էրիկը փլվում է բազկաթոռին:

-Ա՛յ այսքան: Տեսա՞ր:

-Տեղից մի՛ շարժվեք, պարո՛ն Սերի: Հիմա սարքը կմիացնենք, լա՞վ: Երեւում է՝ լարերից մեկը դուրս է եկել: Հիմա մի՛ շարժվեք, թե չէ նորից դուրս կգա:

Մատները թեթեւ սահում են կրծավանդակն ի վար, ու նա զգում է գելի սառը հպումը: Աղոտ սուլոց է լսվում, հետո էկրանի վրա ատամնավոր գագաթներով փոքրիկ սարեր են հայտնվում: Պրոֆեսոր Սավոնան, սպիտակ վերարկուն հագին, մարմարե դեմքով նայում է էկրանին, հետո դնում է ակնոցն ու նայում փեյջերին:

-Դենիս, զանգիր թատրոն, ասա, որ մոտավորապես քառասունհինգ րոպեից տեղում կլինեմ:

Դենիսը հեռախոսի վրա չորս կոճակ է սեղմում ու զանգին պատասխանողին ասում, որ պրոֆեսոր Սավոնան քառասունհինգ րոպեից տեղում կլինի:

-ԷՍԳ[14], լավ: Կարմեն, հիմա նրան պատրաստեք սիրտը նկարելու:

-Դա է՞լ պիտի անենք, պրոֆեսո՛ր:

-Վատ չէր լինի:

Կարմենն իր մուգ կապույտ համազգեստով վեր է կենում տեղից ու անջատում սարքը:

-Դենիս, կարող ես զանգել: Սրտագրությունն արեցինք:

Դենիսը սեղմում է հեռախոսի չորս կոճակը: Պատասխանին սպասելիս նայում է Էրիկին ու ժպտում:

-Ինչպե՞ս եք, պարո՛ն Սերի:

-Ոչինչ, պրոֆեսո՛ր:

-Ի՞նչ է նշանակում ոչինչ: Ցավեր ունե՞ք: Կրծքավանդակում որեւէ ճնշող բան կա՞:

-Չէ, առանձնապես չկա: Բայց երբեմն հոգնածություն եմ զգում:

-Քի՞չ, թե՞ շատ:

-Դե, սովորականից շատ:

-Այո, բայց վերջերս եք լուրջ վիրահատության ենթարկվել, հետեւաբար դա սպասելի է, չէ՞: Թատրոն զանգեցի՞ր, Դենիս:

-Այո, պրոֆեսո՛ր: Գելը հիմա՞ քսեմ, պրոֆեսո՛ր:

-Այո, Կարմեն, խնդրում եմ:

Կարմենը հեռացնում է լարերը, սեղմում գելի սրվակը, ու Էրիկը կրծքավանդակին սառնություն է զգում: Մանրիկ աչքերը դատարկ նայում են մի կետի՝ նրա աչքերի ու կրծքավանդակի միջեւ: Տղամարդու կրծքավանդակի:

-Ինչքա՞ն ես սիրում ինձ:

-Այսքա՛ն ժամանակ է անցել, իսկ դու դեռ նույն հարցն ես տալիս:

-Իսկ դու դեռ խուսափում ես դրանից:

-Շատ երկար եմ սպասել քեզ: Զանգերին չէիր պատասխանում:

-Ուրիշ գործեր ունեի: Պետք է որ իմանաս:

-Գիտեմ:

-Չէ, չգիտես: Ահա, նայի՛ր:

Լիզան հանում է բերետը՝ անթարթ նայելով նրա աչքերի մեջ: Հետեւում

է, թե Էրիկն ինչպես է թուքը կուլ տալիս, երբ տեսնում է իր ճաղատ գլուխը՝ սպիտակ, փայլուն, տարօրինակ ու մարմնի համեմատ փոքր: Կամ չափազանց մեծ: Աղավաղված օվալածեւ կատարելություն: Տգեղ:

Լռություն:

-Դեռ ուզու՞մ ես ինձ:

Կեսգիշերին մոտ Լիզան դուրս է գալիս տնից՝ գլուխը բերետով ծածկած: Էրիկը երկար ժամանակ մերկ է մնում, հետո մտնում է տաք ջրով լի լոգարանը: Աչքերի առաջ Լիզայի մերկ մարմինն է, հագուստից ազատված, ամեն ինչից ազատված. հարթ մաշկ, փափուկ ու սպիտակ, բացի պտուկներից, որոնցից մեկը սեղմված է: Աչքի առաջ Լիզայի լրիվ նոր մարմինն է: Եվ ահա այնտեղ, տաք ջրի տակ նորից ոգեւորվում է, երբ հիշում է Լիզայի տնքոցը, բարձր գոռոցը, լացը՝ առանց տխրության: Այդ օրը Սերին սիրել էր Լիզայի ամբողջ մարմինը, սանտիմետր առ սանտիմետր: Լիզան, ինչպես երբեք, ամբողջությամբ տրվել էր նրան. Էրիկին իրենն էր դարձրել, օգտվել նրանից, ինչպես ուզել էր, ինչպես Էրիկն էր միշտ ուզել, բայց զսպել էր իրեն: Լիզան ազատություն էր տվել մի քանի ամիս տեւած հուսահատությանն ու վախին, մեջքով շրջվել մահին, որն այցի էր եկել իրեն, մոտեցել ու ժպտացել, հաղթահարել էր ցավը, սրտխառնոցը, գիշերներ տեւած լացն ու խավարի աչքերի մեջ նայելը, դատարկությունը, որ մտքից դուրս չէր գալիս, սեւ ու սպիտակ տեսարանները վախճանի, որը երբեք չէր պատկերացրել, անգույն տեսարանները, որտեղ մայրն էր, տարիներ առաջ: Ու նորից բարձր ճչացել էր, մի քանի անգամ, այնքան, որ Էրիկը կորցրել էր հաշիվը: Լիզան էլ էր կորցրել հաշիվը: Էրիկը հանձնվել էր, թողել, որ Լիզան ցավեցնի իրեն, ուզածի պես օգտագործի: Թողել էր, որ հաշվված կրծքով սեղմվի իրեն. նրան դուր էր գալիս Լիզայի մարմնի այդ տգեղ ծալքը: Լիզան ստիպում էր, որ անդադար նայի իրեն՝ դեմքին, տարօրինակ գլխին, սպիհին, հետքին, տկարությանը: Տնքոցները չէին դադարում. հեւոց, թանձր քրտինք, սուր հոտեր, լպրծունություն՝ երկուսից էլ. սեղմվող ձեռքեր, սրտի ռիթմ, սրտխփոց, շնչահեղձություն, ժպիտներ ու ծիծաղ, վավաշոտ հայացք ու ծամածռություն, քրքիջ՝ մահվան երեսին. մեկ ժամ կամ ավելի երկար: Այսքան տարի հետո եւ միայն այսօր՝ նաեւ Էրիկը, նաեւ Էրիկը:

Յուտա Հայմի հետ ամեն ինչ այլ էր: Արեւելյան Բեռլինի բազմաբնակարան շենքի ութերորդ հարկում մատները երկչոտ էին: Ճարժվում էին խավարի մեջ, ծածկոցի տակ: Միտքը խաղաղ էր այդ գիշեր: Ոչինչ չէր մտածում, բացի ամենակարեւորից. իրեն հաջողվել էր նույնիսկ այստեղ կին

գտնել ու առանց առանձնակի ջանքի գնալ նրա տուն, մտնել նրա անկողին, նրա կյանք: Ու քանի դեռ ծածկոցի տակ էր, չգիտեր՝ որքան հեշտ էր եղել այնտեղ հասնել, այնքան հեշտ էր լինելու ընդամենը մեկ օր անց հայտնվել դրսում: Ամեն ինչ շատ հեշտ էր: Նա նույնիսկ ընդունեց Լիզայի նոր մարմինն այնպես, ասես վաղուց էր ճանաչում: Առաջին հանդիպումից հետո էլ ցնցումներ չեղան, բացի հաճույքի ալիքից, ոչ թե մեկ, ոչ թե երկու անգամ, այլ ավելի: Նույնիսկ հիմա, լոգարանի տաք ջրի մեջ սուզված, հաճույքի նույն դողն էր զգում, ինչպես այն ժամանակ, երբ շաբաթօրյա հետեսօրի լոգանքների ընթացքում հիշում էր Մարիոնին ու Բելային:

Պրոֆեսոր Սավոնան մատները զգուշորեն հեռացնում է տղամարդու կրծքավանդակից, կռանում է, սառը կրծքադիտակով փորձում որսալ խնդիրը: Բժշկուհու թեւերի տակից օծանելիքի ու օճառի թարմ հոտ է գալիս: Հետո հետ է քաշվում, գործիքը հանում ականջներից, որոնք զարդարված են արցունքի նման երկու սպիտակ քարով:

-Պարո՛ն Սերի, ամեն ինչ կարգին է: Հագնվեք, ես ձեզ մի քանի բան կասեմ: Բայց նախ հանգստացեք: Կարմեն, օգնիր պարոն Սերիին, եթե դժվար չէ:

-Կարող եք մաքրել կրծքավանդակը:

Լպրծու՞ն է: Մածուցիկ գելը քսվում է մեծ անձեռոցիկին: Ծանրացել է, դեն են նետում: Էրիկը ոտքի է կանգնում, ձեռքը մեկնում աթոռի թիկնակին նետված վերնաշապկին: Կոճկում է շապիկը, գոտին ձգում:

-Մի ամսից նորից կստուգեմ: Առայժմ ամեն ինչ կարգին է, պարո՛ն Սերի: Կարեւորն այն է, որ շարունակեք խմել ձեր դեղերը, ամեն ինչ սրտին մոտ չընդունեք ու խուսափեք անիմաստ սթրեսից: Մնացած հարցերում՝ վայելեք կյանքը, ամեն օր զբոսնեք, բայց խուսափեք արեւի ճառագայթներից, լավ սնվեք, բայց շատ ծանր սնունդ մի՛ օգտագործեք, շատ միրգ ու բանջարեղեն կերեք: Հնարավորինս խուսափեք աստիճաններ բարձրանալուց, անպայման լավ քնեք եւ շատ հեղուկ ընդունեք:

-Հոգնածության մասին ի՞նչ կասեք, պրոֆեսոր:

-Հոգնածությունը կանցնի, մի՛ անհանգստացեք: Մի՛ մոռացեք, ձեր սիրտը լուրջ տրավմայի է ենթարկվել: Ծոգն էլ է վատ անդրադառնում ձեզ վրա, էլ չեմ խոսում հարավային քամիների մասին: Մի՛ անհանգստացեք: Թեթեւ տարեք, լա՞վ:

Պրոֆեսոր Սավոնան ինչ-որ բան է շշնջում Կարմենի ականջին, բայց հենց որ տեսնում է, որ Էրիկը դեռ կոճկում է վերնաշապիկն ու նայում իրեն, լռում է ու թեթեւ ժպտում նրան: Այս սարքավորումները, էկրանները,

որոնց վրա տարբեր գույների տարօրինակ թվեր են թրթռում՝ բաց կանաչ, բաց դեղին, նարնջագույն ու սպիտակ: Փայլատակումներ, կտրուկ էլեկտրոնային ձայներ: Դենիսը նորից է զանգում. Դենիսը մուգ աչքեր ունի, իսկ դեմքը Լիզային է հիշեցնում: Հոնքերը կոկիկ են, համաչափ ու մուգ, թարթիչները սեւ են ներկած, աչքերի շուրջ կապույտ ստվերաներկ է, այտերը վարդագույն են, իսկ շուրթերը՝ մուգ կարմիր, չորացած արյան գույնի, ինչպես կրքավանդակի սպին: Նա նման է Լիզային՝ դերձակուհու դստերը, բանադրանքին հաջորդած օրերին, երբ վերջապես սկսել էր հավատալ, որ էլ երբեք չի լսի արքեպիսկոպոսի ձայնը:

Հենց որ դուրս է գալիս կլինիկայից, տեսնում է նրան, անկյունում սպասող բազմաթիվ մարդկանց հետ նստած, ամսագիր կարդալիս:

-Ամեն ինչ կարգի՞ն է, սիրելի՛ս: Ի՞նչ ասացին:

-Ասացին, որ ամեն ինչ կարգին է:

-Տեսնու՞մ ես: Կուզե՞ս գնանք, մի բան ուտենք: Գնա՞նք:

-Կարելի է: Արի մեր սիրած տեղը գնանք:

Մատուցողուհու անունը Ռոզալի է, այսօր մազերը հետ է սանրել: Նա արդեն սովորել է, որ այս երկուսը գալիս են՝ մի շիշ գազով ջուր խմելու եւ թարմ աղցան ուտելու: Տղամարդուն դիմում է «պարոն Էրիկ» անունով, ու երբեմն հիշեցնում է այն ժամանակները, երբ դեռ փոքր էր ու հեռուստացույցով նայում էր նրա սերիալները: Էրիկը նրան անվանում է «միսս»:

-Պարո՛ն Էրիկ, բարի լույս: Սովորականի պե՞ս:

-Ի՞նչ կուզես, Էրիկ:

-Ջուր: Մեծ շշով:

-Գազով, չէ՞:

-Չէ, այսօր սովորական:

-Պարոն Էրիկի համար սովորական: Իսկ միսսի՞:

-Ես մի մեծ շիշ Կոկա-կոլա կխմեի եւ տոստ: Տոստ կուզե՞ս, Էր:

-Չէ, ոչինչ չեմ ուզում: Միայն ջուր:

-Պիտի մի բան ուտես: Մենք վաղուց ենք դուրս եկել տնից:

-Միայն ջուր:

Վերջերս Յուտա Հայմը նորից է հայտնվում: Մի քանի օր առաջ սկսեց գրել նրան. «Սիրելի՛ Յուտա, վերջին անգամ շա՛տ վաղուց ենք հանդիպել: Ինչպե՞ս ես: Ի՞նչ կա Բեռլինում: Երեւի շատ բան է փոխվել մեր վերջին հանդիպումից: Պատն այլեւս չկա, ու հաստատ էլ շաքարի փոխարեն սառնաշաքար չես օգտագործում: Յուտա, ես մեռնում եմ: Լուրջ հիվանդ եմ ու շուտով կմեռնեմ: Գոնե այս անգամ կպատասխանե՞ս նամակիս»:

Հետո ճմռթեց թղթի կտորը:

-Կուզեի Բեռլին մեկնել: Մեկ շաբաթով կամ տասը օրով:

-Ե՞րբ:

-Հնարավորինս շուտ:

-Ինչու՞ ես շտապում:

-Կուզեի մեռնելուց մեկնել:

-Էրիկ, հերիք է անհեթեթ բաներ խոսես: Հենց նոր դուրս եկար հիվանդանոցից, քեզ ասացին, որ ամեն ինչ կարգին է: Վերջ տուր:

-Ճիշտն ասած՝ չեմ հավատում պրոֆեսորի ասածներին:

-Բայց ինչու՞ պիտի ստի:

-Լիզայի համար էլ ասացին, որ լավ կլինի: Երկու տարի էլ չծգեց:

-Լիզայի դեպքն ուրիշ էր: Թացն ու չորն իրար մի՛ խառնիր: Ամեն դեպքում, ես կարող եմ արձակուրդ վերցնել, ու միասին կմեկնենք:

-Չէ, դու չես գա: Ես մենակ եմ գնալու:

-Ու կարծում ես՝ թույլ կտամ, որ մենա՞կ մեկնես:

-Մենակ եմ մեկնելու:

«Մենակ եմ մեկնելու, որովհետեւ ուզում եմ տեսնել Յուտա Հայմին: Ուզում եմ վերադառնալ այն սրճարանը, որտեղ առաջին անգամ տեսա նրան, խոսեցի նրա հետ, հարցրի, թե ինչու չէր պատասխանում նամակներիս: Ուզում եմ նորից տեսնել նրան. տեսնել, թե ինչպես է փոխվել, ժամանակն ինչպես է փոխել նրան: Տեսնել, թե ում հետ է ամուսնացել: Տեսնել, թե ինչքան է փոխվել»:

-Հետո կքննարկենք: Ինքնագլուխ ծրագրեր մի՛ կազմիր, Էրիկ:

-Մի րոպե առաջ ասում էիր, որ լավ եմ, իսկ հիմա չես ուզում, որ մենակ մեկնեմ Բեռլին: Ուրեմն դու էլ չես հավատում, որ լավ եմ:

-Էրիկ, չեմ ասում, որ վիճակդ վատ է, ուղղակի լավ կլինի մենակ չգնաս: Առավել եւս որ հրաժարվում ես բջջային հեռախոս տանել հետդ: Ինչպե՞ս իմանամ, թե ինչ ես անում Բեռլինում: Ի դեպ, ինչու՞ հենց Բեռլին:

«Բեռլինում մի կին կա, որին մի անգամ եմ տեսել: Անունը Յուտա Հայմ է: Գաղափար չունեմ, թե նրան ինչ է եղել: Կփնտրեմ: Ուզում եմ մեռնելուց առաջ մի անգամ էլ տեսնել: Գիտեմ, որ շուտով մեռնելու եմ: Ուզում եմ տեսնել նրան: Ուզում եմ նորից հանդիպել նրան: Յուտա Հայմին: Նրան հանդիպեցի Ալեքսանդերպլացում: Ուզում եմ Ալեքսանդերպլացը մի անգամ էլ տեսնել: Այս անգամ գորշ համազգեստով տղամարդիկ չեն լինի»:

-Ուզում եմ վերադառնալ: Ասե՞լ եմ, որ շատ վաղուց եմ եղել Բեռլինում: Ալեքսանդրայի հեռանալուց առաջ: Ոչ վաղուց:

-Ու քեզ շատ է դուր եկել: Ես երբեք չեմ եղել Բեռլինում:

-Դու շատ ժամանակ ունես, կհասցնես, իսկ ես՝ ոչ:

-Բայց ինչու՞ հենց Բեռլին: Ամեն տեղ եղել ես: Ինչու՞ հենց Բեռլին:

Տարիների ընթացքում այնքան մարդ է անհետացել: Ինչպես, օրինակ, Լիզայի մայրիկը, որը միշտ հոգ էր տանում նրա մասին ու այնքա՛ն գեղեցիկ էր: Հենց Լիզան: Երբ մտավ եկեղեցի, որտեղ արդեն նվագում էր երգեհոնը, հիշեց վերջին հանդիպումը. Լիզան հանեց բերետը՝ հյուրասենյակի ջահի տակ բացելով փայլուն գլուխը, մոտենալով նրան, իսկ նա դողում էր ու անթարթ նայում Լիզային: Դագաղը դրված է շարքերի արանքում: Եկեղեցուց դարերի, անցած-գնացած ժամանակների հոտ է փչում. շուրջը զնող հայացքներ են, որոնց նա լավ է ճանաչում: Դագաղի մեջ դրված դիակին էլ լավ է ճանաչում: Ճանաչում էր, երբ նա դուրս եկավ իր տնից՝ բերետով ու լայն բաճկոնով: Դռնից դուրս գալուց ու խավարի մեջ թաքնվելուց առաջ դիակը մի անգամ էլ շրջվեց իր կողմն ու ասաց.

-Ցտեսություն, Էրիկ:

-Օրդ լա՞վ անցավ,-հարցրեց Էրիկը:

Դիակը մի քիչ մտածեց, հետո ասաց.

-Ինչ է, չգիտե՞ս. ոչ ոք երբեւէ ինձ այսքան հաճույք չի պատճառել, ինչպես դու: Սիրում եմ քեզ, Էրիկ, բայց պիտի մի բան ասեմ:

Ու դիակը նորից փակեց դուռը, դուռը, որ դեռ կիսաբաց էր, ու որի միջով ցուրտը ներս էր սողոսկում, ու ասաց.

-Լսիր, Էրիկ: Գուցե հիմա ճիշտ ժամանակն է, որ ասեմ: Դու միակը չէիր, հասկանու՞մ ես: Ներիր, եթե ստել եմ քեզ: Բայց դու լավագույնն էիր: Առայժմ, մնաս բարով:

Հետո օդային համբույր ուղարկեց, բացեց դուռն ու դուրս եկավ:

Էրիկ Սերին մտավ տաք ջրով լի լոգարանը՝ համարյա երջանիկ, որ միակը չի եղել. այդպես պատմությունն ավելի էր խճճվում, ավելի իրական դառնում: Նա նորից ոգեւորվեց հոտավետ ջրի տակ: Երբեք չէր հավատացել ստին, ու հիմա, երբ այն, ինչ միշտ իմացել էր, հաստատվել էր, գրեթե երջանիկ էր սկզբից մինչեւ վերջ անճաշակ ու էժանագին պատմության համար: Բոլորը ճանաչում էին Լիզային: Այդ փայլուն գլուխը, կարված կուրծքը: Ծարժումները՝ սովորականից ավելի զգայական: Նրա բղավոցները, իր բղավոցները: Լոգարանում, տաք ջրի տակ, Էրիկ Սերին նորից վայելեց ազատության ձայնը, իր շնչառության ձայնը:

Հետո, համարյա մեկ շաբաթ անց, Էրիկը սկսեց զանգել, զանգել ու զանգել նորից, այնքան, մինչեւ հոգնեց զանգելուց, զզվեց զանգելուց, հե-

տո սկսեց նորից զանգել, մինչեւ վերջապես շարքերի արանքում դագաղի մեջ դրված դիակը վերցրեց հեռախոսն ու ասաց, որ էլ երբեք չի տեսնի նրան:

-Այդ ինչպե՞ս:

-Էլ երբեք չեմ տեսնի քեզ, Էրիկ: Երբ քեզ հետ եմ, ինձ թվում է, թե ստոր եմ, վավաշոտ: Էլ չեմ ուզում:

-Ես քեզ երբեք ոչինչ չեմ ստիպել: Ամեն ինչ եղել է քո համաձայնությամբ: Մենք միշտ արել ենք այն, ինչ դու ես ուզել:

-Ճիշտ է: Ուրեմն այս անգամ էլ այդպես կանենք: Էլ չեմ ուզում: Ամեն անգամ, քո տնից դուրս գալիս, ինձ թվում է՝ ստորի մեկն եմ: Էլ չեմ ուզում:

-Լավ, հասկացա, բայց գոնե խոսել, քննարկել կարող ենք, չէ՞:

-Չէ, չենք կարող: Հոգնել եմ:

-Դու ստոր չես:

-Չգիտեմ, թե ինչ եմ, Էրիկ: Բայց գիտեմ, թե ինչ եմ զգում, հասկանու՞մ ես: Էժան, կեղտոտ, ստոր, զզվելի կերպար եմ... Ա՛խ, չգիտեմ: Ամեն ինչ վերջացած է, Էրիկ:

-Բայց մենք արդեն մի քանի տարի է՝ ճանաչում ենք իրար: Ախր չես կարող հենց այդպես, անսպասելի...

-Էրիկ, քո կյանքում ամեն ինչ լավ է, դու դեռ բարետես ես, ինչպես երիտասարդ տարիներին, դեռ առողջ ես: Տեսքդ այնպիսին է, ինչպես այն ժամանակ: Իմ պատմությունն այլ է: Հիմա ինձ հանգիստ թող: Էլ չեմ ուզում ստոր լինել: Ցտեսություն:

Ցտեսություն, բայց ոչ՝ առայժմ:

Այդ դագաղում պառկած է մի դիակ, որին Էրիկը լավ է ճանաչում: Ճանաչում էր, երբ այն երիտասարդ էր, երբ ամուսնացած էր, ճանաչում էր, երբ իր հետ էր անկողնում: Գիտեր, որ գեղեցիկ է, ավելի գեղեցիկ, քան Նելան, քան Տանյան, ակնհայտորեն ավելի գեղեցիկ, քան Ալեքսանդրան, Բելան ու Մարիոնը, ավելի գեղեցիկ, քան մյուսները: Քան Յուտա Հայմը:

-Բեռլինում ինչ-որ մեկի տուն կգնաս, թե՞ հյուրանոցում կմնաս:

Յուտա Հայմ, Բեռլին, Ալեքսանդերպլաց, Մարցան, ութերորդ հարկ, բնակարանի պստլիկ անցք, բազմոց, որ վերածվում է մահճակալի: Բեռլին: Բեռլին:

-Այն երեւի անճանաչելիորեն փոխվել է: Հյուրանոցում կմնամ, ուրիշ էլ որտե՞ղ:

Ամեն ինչ այնքա՛ն հեշտ էր: Ծատ հեշտ: Բացի հայելուց: Այսօր՝ վաղ առավոտյան, երբ ձեռքը, որը հիմա բարձրացնում է կոկա-կոլայի շիշը,

մեղմ շոյեց մեջքը, որ արթնացնի, թեեւ ինքն արդեն արթուն էր, եւ ավելի ուշ, երբ նայեց հայելու մեջ ու գիտակցեց, թե ինչ դժվար է ընդունել, որ հայելու մեջ ինքն է. ճերմակ մազերը՝ վաղուց հանգցրած ծխախոտի գարշահոտ մոխրի պես փխրուն, աչքերը՝ ակնոցի ոսպնյակների հետեւում նեղացած, աչքերի տակ առաջացած պարկերը, կախված ծնոտը, գունատ շուրթերը: Ճիշտ է, ամեն անգամ, երբ հանդիպում է մի վաղեմի ծանոթի, ինչն այնքան էլ հաճախ չի պատահում, նրան ասում են, թե չի փոխվել, բոլորովին չի ծերացել, կամ հիմա է՛լ ավելի բարետես է ու հասուն: Բայց երբ Էրիկը նայում է Էրիկ Սերիին, նկատում է մանրուքներ, որոնք ուրիշ ոչ ոք չի կարող նկատել: Դեռ այն ժամանակ, երբ լրտեսում էր Մարիոնին ու Բելային, այն օրերին, երբ Լիզայի հետ առաջին անգամ ընկղմվեց Մեղքերի ծովում, աչքերն ավելի մեծ էին, մուգ շագանակագույն, մի տեսակ կարոտից տանջված, կարոտ, որ չէր զգում, բայց սիրում էր ցույց տալ, հատկապես ցանկալի կանանց. մազերը թանձր էին ու երկար, ալիքաձեւ ու մուգ շագանակագույն: Քիթը նրբիկ էր, շուրթերը՝ փոքր-ինչ կոր, որ կանանց էր հատուկ, կատարյալ համաչափ. մարմինը բարեկազմ էր ու առողջ, ու ամեն անգամ, երբ հանում էր հագուստը, կանայք հոգոց էին հանում՝ տեսնելով նրա մկանուտ կազմվածքը, կրծքավանդակը, հետույքի կորագիծը, ոտքերի նրբագեղությունը: Ովքեր դիպչում էին նրան, եւ ում նա էր դիպչում, ամեն անգամ ապշում էին մաշկը շոշափելիս: Զարմանալի չէ, որ դեռ այն ժամանակ ամեն ինչ այսքան հեշտ ստացվեց: Նա հիշում է, թե միսս Սալիբան՝ իր առաջին ուսուցիչներից մեկը, ինչպես էր կսմթում իր այտերն ու կանչում մյուս ուսուցիչներին՝ հազիվ քսանն անց երիտասարդ կանանց, որ նրանք էլ կսմթեն ու զգան նրա մաշկը: Ու նրանցով շրջապատված՝ ձեւացնում էր, թե ամաչում է, ու վայելում էր նրանց ուշադրությունը, ամուսնական մատանիներով զարդարված մատների հպումը, վարդագույնի կամ սադափագույնի թեթեւ երանգով ներկված եղունգները: Եվ միսս Սալիբան կսմթում էր նրա այտն ամեն անգամ, երբ ճիշտ էր պատասխանում, ու զզզզում հաստ, շեկլիկ մազերը: Հիմա, երբ աղջիկը մոտենում է մահճակալին, որտեղ պառկած է կողքի վրա, մոտենում է թիկունքից ու ձեռքը սահեցնում թեւի ու կրծքավանդակի արանքը, Էրիկը զգում է, թե մանրիկ, մանրիկ համբույրներն ինչպես են թեթեւ խուտուտ տալիս իր մեջքը, զգում է մարմնով անցնող դողը. նույնիսկ հիմա, այս տարիքում, այս առողջական վիճակում՝ նա պառկած է այստեղ, մեջքն աղջկան դարձրած, ու մտորում է իր զառամյալ տարիքի մասին: Պատկերացնում է Էրիկ Սերիին հայելու մեջ այս առավոտ, երբ չուզելով նայեց նրան: Գիշերը, երբ ահա ուր որ է կը-

նի, լսում է, թե ինչպես է բաբախում սիրտը, ինչպես ժամացույցը, որի սլաքները կանգ են առել. սլաքներն ուզում են շարժվել, պտտվել ու նորից աշխատել՝ չհոգնելով նույն շրջանի մեջ անվերջ պտտվելուց: Եթե միայն կարողանար կյանքը նորից սկսել, էլի կնայեր Կաթոլիկ շարժման երգչախմբում երգող Մարիոնին, վաղ առավոտյան Վալետայից վերադարձող Բելային, Լիզայի մայրիկին, որն օր օրի ավելի էր ծերանում ու գեղեցկանում, իսկ հետո մի օր անսպասելիորեն հեռացավ, կնայեր Լիզային: Էլի կմեկներ Լոնդոն, կգնար Քարնաբի փողոց, Քինգս փողոց ու Գանդալֆի այգի: Ի՜նչ հեշտ էր եղել կյանքը, ու այս բոլոր վայրերը հայրական տան պես ծանոթ էին ու հարազատ: Այն գիշերը, որն անցկացրեց Վալենտինայի տանը, նրա ընկերուհի Նելայի տանն անցկացրած մի քանի օրը: Հիշեց մյուսներին, որ այդ ամբողջ ընթացքում կամ դրանից հետո հանդիպել էին կյանքի ճանապարհին, հիշեց, թե ինչ ցանկալի էր նրանց համար: Էրիկ Սերին՝ իր ոսկե մարմնով, փակված, ցուցափեղկում դրված, որ բոլորը նայեն ու վայելեն՝ միայն հայացքներով, երազներում ու ցանկություններում: Երբեմն զարմանում է, որ դեռ հիշում է ամեն ինչ: Գուցե թատերական կրթությունը, երկարաշունչ սցենարները, որ անգիր էր անում, լավացրել էին հիշողությունը: Ալեքսանդրան՝ իր երկար, հարթ, մինչեւ գոտկատեղ հասնող մազերով, ժպտում էր, միշտ ժպտում, մատների արանքում կանեփի ամուր փաթաթած գլանակով, փնչացնում էր բավականությամբ ու միայն իրեն հատուկ քնքշությամբ: Հետո հայտնվեց Միլդրեդը: Ու իսկապես, Միլդրեդը վերջին վրձնահարվածն էր, Արքա Էրիկի թագի մարգարիտը: Այդ տարօրինակ հարսանիքը Մերիլբոունում, հետո՝ Միլդրեդը: Միլդրեդը, այո, սոցիալիստական տարիներին, որոնք սկսվեցին բանվորների երթերով եւ ավարտվեցին նրանով, որ աշխատողների գլխավերեւում արցունքաբեր գազի ամպեր հայտնվեցին: Ինչպես սոցիալիզմը Յուտա Հայմի հայրենիքում, որտեղ նա սուրճի մեջ սառնաշաքար էր գցում, բացվող մահճակալի վրա սեր էր անում անծանոթների հետ ու հաջորդ առավոտ անսպասելի անհետանում: Հետո, այս թափորի վերջում կանգնած է այն կինը, որն ամբողջ ընթացքում կողքին էր, որն ամեն ինչ տվել էր իրեն, ու որին ինքը ոչինչ չէր տվել: Նա լուռ էր, ավելի լուռ, քան Մարիոնը՝ Մարիամ Աստվածածնի կամ խաչի վրա նրա որդու մասին մտորելիս: Նա ապրում էր ամուսնու ստվերում ու ամբողջ կյանքում լուռ էր մնացել, այնքան լուռ, որ մեռավ լռության մեջ, ու ոչ ոք չնկատեց դա: Տղամարդն ուր որ է շունչը փչելու էր Կլեոպատրայի թեւերի մեջ, երբ Թեսին իրենց մորը գտավ միջանցքում, բազկաթոռին նստած, բերանը կիսաբաց, մի թեւը կախած,

մյուսը՝ կրծքավանդակին: Որոշ ժամանակ անց կայսրության ամենանշանավոր գեներալը նորից ոտքի ելավ ու Տանյա Բարտոլոյի հետ ձեռք ձեռքի տված դուրս եկավ, երբ վարագույրը բարձրացավ, ու նրանց բեմ հրավիրեցին: Հետո վարագույրը վերջնականապես իջավ, եւ Ալեքսանդրան վազեց հանդերձարան՝ լուրն ատամներով սեղմած:

-Էրիկ, էլի ամբողջ գիշեր արթու՞ն ես մնացել:

-Շատ ուշ քնեցի ու լույսը բացվելուն պես արթնացա:

-Ինչու՞ չարթնացրիր ինձ, քալբի՛[15]:

«Քալբի»: Իմ սիրտ: Բաբախող սիրտ: Սիրտ, որ բաբախում էր ժամացույցի նման, որն ուր որ է կանգ կառնի. սլաքներն անշարժ են, ժամանակի զգացողությունը կորցրած, ժամանակի, որը պիտի չափեր ու ցույց տար: Այդ սրտում այնքա՛ն մարդ կար, նրա անցյալում այնքա՛ն կին կար: Սիրտ: «Քալբի»:

Միլդրեդ: Կարելի է ասել՝ Միլդրեդն առանց մայրիկի է մեծացել: Մեծ հաշվով նաեւ առանց հոր է մեծացել. կյանքի մեծ մասն ապրել է պառաված հորաքրոջ հետ, որը նրան պատմում էր Աստծո մասին, սոցիալիզմի մասին, որն իրականում երբեք չէր տեսել, բացատրում էր Քրիստոսի եւ եկեղեցու տարբերությունը: Միլդրեդը մեծացել էր այս եւ այլ բազում պատմություններով: Միլդրեդը ոչ թե իր, այլ հորաքրոջ հետ էր ապրել: Հոր համար բարդ չէր եղել դստեր խնամքը թողնել չամուսնացած քրոջ ուսերին, որպեսզի շարունակի ընդլայնել իր թագավորությունը: Եվ հիմա, հիմա, երբ դուստրն արդեն կին է ու մայր, ուզում է, որ նա վերադառնա, թեկուզ կարճ ժամանակ մնա իր գրկում, թեկուզ մի քիչ, որ հասցնի իրեն նորից երիտասարդ զգալ: Երիտասարդ հայրիկ եւ գեղեցիկ երիտասարդ շիկահեր անգլուհի մայրիկ: Գեղեցիկ: Շիկահեր: Յուտա Հայմը, նրան մեջքով շրջված, հանվում է մթության մեջ: Բեռլին: Ալեքսանդերպլացը՝ շիկահեր, մռայլ, մեռած ու եռացող, իսկ այնտեղի կանայք՝ այնքա՛ն գեղեցիկ ու այնքա՛ն քմահաճ: Իր նման քմահաճ: Իսկապես քմահաճ, ինչպես Լիզան, ինչպես Տանյան, ինչպես Նելան, ինչպես Բելան, որը Վալետայում անցկացրած գիշերվանից հետո տուն էր եկել: Ալեքսանդերպլաց: Հետո տեսավ մորը՝ մենակ, անկյունում: Նույնիսկ կիրակի օրերին կամ հատուկ առիթներին չէր գալիս միասին ճաշելու: Ուտելիքը վերցնում էր, դեմքով դեպի պատը շրջվում, ստամոքսը սեղմում խոհանոցի լվացարանին, կանգնած ուտում: Ու ոչ ոք չէր անհանգստանում: Այն ժամանակ արքեպիսկոպոսն ու Փրկիչն այնքան էին խոսում, որ մայրիկն անհանգստանում էր. վախենում էր, որ Աստված դրանից կզայրանա, ու առաջվանից է՛լ ավելի էր լռում:

Լինում են գիշերներ, երբ փորձում է կողք կողքի դնել այն մի քանի նախադասությունները, որոնք հիշում է կնոջ խոսքից, բայց մեկ էջից ավելի չի ստացվում, եթե բաց թողնենք տերողորմյաներն ու աղոթքները, որոնք անդադար կրկնում էր քթի տակ: Երբեմն փորձում է մտովի պատկերել նրա դեմքը, բայց միակ բանը, որ տեսնում է, կիսափակ աչքերն են ու կիսաբաց բերանը: Ու այսպիսի գիշերներին զգում է իրեն շրջապատող խոր լռությունը, երբ ինչ-որ բան նրան ստիպում է խավարի մեջ կինոթատրոնի էկրան պատկերացնել: Լռություն է տիրում: Մոր հետ Սհայրա աշտարակում երբեք ցերեկ չի լինում:

Հենց այսպիսի գիշերներին, որ վերջերս հաճախակի են դարձել, նախընտրում է մնալ ներքեւում, հանգիստ քրքրել դարակները, առանց աղմուկ բարձրացնելու, ինչ-որ բան փնտրելով, ինքն էլ չգիտի, թե ինչ: Քրքրում է հագուստի կույտերը, ինչ-որ բան փնտրում, ինքն էլ չգիտի, թե ինչ, բայց մի բան, որ վաղուց ձեռքին չի եղել: Դեղահաբերի տուփեր, տարբեր մանրուք ու լուսանկարներ: Իր ու Լիզայի լուսանկարները: Լիզան ժպտում է՝ ուղիղ նայելով տեսախցիկին: Կիսամերկ Լիզան փորձում է համոզել, որ չանի այն լուսանկարը, որը հիմա աչքի առաջ է, գիշերվա կեսին. հիմա Լիզայից միայն հիշողություն է մնացել, որն ի տարբերություն Լիզայի, չի մեռնում: Մի շաբաթ առաջ, երբ նույն գիշերային ծեսն էր կատարում, շիկահեր անգլուհու նկարը ձեռքին՝ սեղմեց հեռախոսի կոճակները:

-Ալո, Ալեքսանդրա Ուոլքոթն է: Ցավում եմ, բայց հիմա չեմ կարող պատասխանել ձեր զանգին: Խնդրում եմ հաղորդագրություն թողնել ազդանշանից հետո: Բի՛հիհիփ:

Լռություն: Նա անջատում է: Սպասում է տասնհինգ րոպե: Հավաքում է նույն համարը, լսում նույն հաղորդագրությունն Ալեքսանդրա Ուոլքոթի ձայնով, որ լսել էր տարիներ առաջ, կամ գրեթե նույն ձայնով, որովհետեւ հիմա մի քիչ ավելի խռպոտ է: Սպասում է տասնհինգ րոպե: Հավաքում է նույն համարը, նորից լսում նույն հաղորդագրությունն Ալեքսանդրա Ուոլքոթի ձայնով, նույն ձայնով, որ լսեց տասնհինգ րոպե առաջ, նույն ձայնով, որ լսել էր տարիներ առաջ, ու որը գուցե փոքր-ինչ խզվել էր այսքան տարվա ծխախոտից ու ալկոհոլից հետո: Նա լավ է հիշում Ալեքսանդրային՝ քրտինքի մեջ կորած, խոնավ երկար մազերը դեմքին կպած, դեմքը պատի ծեփի պես ճերմակ, ոտքերը մեկնած՝ Միլդրեդի լույս աշխարհ գալուն սպասելիս: Ահա այդ լուսանկարը. Ալեքսանդրայի դեմքին հարկադրված ժպիտ է, Էրիկը քմծիծաղ է տալիս, իսկ փոքրիկը, որի դեմքը պատված է կնճիռներով, մուգ կարմիր է, ճաղատ ու լաց է լինում: Մազեր չունի: Ինչ-

պես այն անիմաստ գիշերը Լիզայի հետ, բազմասերիանոց ֆիլմի վերջին մասում, որում արդեն քանի տարի խաղում է: Իսկ մի ուրիշ գիշերվա լռության մեջ նրան հաջողվում է ողջ մնալ՝ առանց կրծքավանդակին սեղմող ճնշման. նայում է մեռած Լիզային ու ոգեւորվում, հանում հագուստը, մինչեւ հուզմունքից քունքերին քրտինքի կաթիլներ են հայտնվում, հետո ծամածռում է դեմքն ու լուռ հասնում հաճույքի գագաթնակետին: Հայացքը չի կտրում մեռած կնոջից: Ու արտասվում է: Գիտեր, որ Լիզան հիվանդանոցում է, անշարժ պառկած, բայց երբեք չգնաց նրան տեսնելու, որովհետեւ Լիզան ասել էր, որ էլ չի ուզում տեսնել իրեն, որովհետեւ ամեն անգամ, երբ հիշում էր իրենց տեսարանները, զզվում է իրենից: Եվ հիմա, լուսանկարը ձեռքին, նորից պղծեց Լիզային, ու նորից պղծեց ինքն իրեն: Երբ Լիզան մահացավ, Տանյան նրան զանգեց այդ լուրը հայտնելու: Հարցրեց թաղման մասին ու հանգիստ անջատեց հեռախոսը: Այդ գիշեր չքնեց: Պատկերացնում էր, թե ինչպես է Լիզան, մերկ ու ճաղատ, մտնում իր տուն: Պատկերացնում էր նրան ամեն մի անկյունում, որտեղ միասին էին եղել, հատկապես վերջին գիշերը: Բոլոր սենյակները կարծես վանում էին նրան. ամենուր Լիզային հիշեցնող տեսարաններ էին: Բոլոր սենյակներում: Բարեբախտաբար, տանը մենակ չէր. նրա հետ էին նաեւ Միլդրեդն ու նրա փոքրիկ դուստրը: Մի վայրկյան աչք չէր փակել:

-Ցավե՞ր ունեիր:

-Չէ:

-Հաստա՞տ: Էրիկ, պետք չէ ինձնից որեւէ բան թաքցնել, հասկանու՞մ ես: Մի՛ թաքցրու: Եթե ցավում էր, ասա՝ ցավում էր:

-Ցավեր չունեի: Գնացի քնելու՝ մտածելով, որ պիտի հիվանդանոց գնամ, բայց չկարողացա: Ամեն ինչ կարգին էր: Մի՛ անհանգստացիր:

-Ինչու՞ ինձ չարթնացրիր:

-Կարիք չկար:

Վերջին ժամանակներս Էրիկը երբեմն մտածում է, որ մի օր գուցե նրան ամուսնության առաջարկ անի: Ու՞մ է հետաքրքիր, որ աղջիկը երիտասարդ է, կարող էր իր դուստրը լինել: Այդպես հաճախ է պատահում: Էրիկը կասկած չունի, նա սիրում է իրեն, շատ է սիրում, ի տարբերություն նրանից առաջ եկած-անցածների: Գիտի, որ Էրիկը մահից հետո ոչինչ չի կարող թողնել իրեն. աղջիկն այնքան գումար է վաստակում իր բիզնեսից, որ կարող է նրան թաղել կանխիկ փողի մեջ: Սիրում է Էրիկին, իսկ դրանից ավելի կարեւոր բան կա՞: Պարզվում է՝ սա էլ է հեշտ. չնայած իր տարիքին ու հիվանդությանը՝ կմնա կողքին, հոգ կտանի իր մասին, կհոգա կարիք-

ներն ու կուղեկցի ուղեւորությունների ընթացքում: Միայն թե ոչ Բեռլին, ոչ Ալեքսանդերպլաց: Այնտեղ մենակ կգնա:

ԿՍ0376, Մալթա-Բեռլին Տեգել:

Մի պատմություն կար... չի հիշում, թե որտեղ է կարդացել կամ ումից է լսել: Մի կնոջ մասին էր, որի ամուսնությունը չորսուկես օր տեւեց: Շաբաթ օրը՝ ժամը 9-ին, կնոջ ընկերը, որը նաեւ գործընկերն էր, կնոջ գնած «Ֆոլքսվագենով» գնում է նրա հետեւից: Ժամը 11-ին հասնում են տեղի բյուրո: Այնտեղ են տղամարդը՝ որդու եւ որդու հարսնացուի հետ: Կնոջ որդին նույնպես այնտեղ է իր ընկերոջ հետ: Նաեւ՝ կնոջ հայրն ու մի աղջիկ, որը վերջերս համարյա ամեն օր հանդիպում է հոր հետ: Նրան սպասող տղամարդը հատուկ այդ առիթի համար մուգ կոստյում է հագել: Շատ էլեգանտ է: Նույնիսկ մորուքն է հարդարել: Կինը բաց մանուշակագույն զգեստով է: Ձեռքին սպիտակ ու վարդագույն ծաղիկների փունջ է: Ծաղիկներն ընկերն էր բերել, իր գնած «Ֆոլքսվագենով»: Չորեքշաբթի՝ ժամը 12-ին, մանուշակագույն զգեստով կինը, որն ամուսնանում էր մուգ կոստյումով տղամարդու հետ, կանգնած է շտապ օգնության բաժանմունքում: Նրա կողքին անշարժ պառկած է տղամարդը, որը մուգ կոստյումով էր, եւ որի հետ ամուսնացել էր շաբաթ օրը: Նրա մերկ մարմինը ծածկված է լարերով ու խողովակներով, իսկ շուրջը սարքեր են, որոնց վրա տարբեր գույնի թվեր են թարթում: Ժամը երեքին սարքերն անջատվում են, թվերն անհետանում են: Մեծ դարչնագույն աչքերով բուժքույրն ամեն ինչ անջատում է ու հավաքում սարքը: Ուրբաթ օրը՝ ժամը 9-ին, մանուշակագույն զգեստով ամուսնացող կնոջ ընկերը նրա հետեւից գնում է իր գնած «Ֆոլքսվագենով»: Հետեւի նստարանին մուգ կարմիր վարդերի փունջ է իր ընկերուհու-գործընկերուհու համար: Ընկերուհի-գործընկերուհին կորցրել է ամուսնուն: Մի ամբողջ գիշեր սեր է արել նրա հետ քաղաքից դուրս գետամերձ փոքրիկ տանը. ավելի սիրուն գիշեր երբեք չի եղել նրա կյանքում: Տղամարդը նրան ստիպել է ուրախությունից ու հաճույքից գոռալ, իսկ սիրուց նրանց սիրտն ավելի արագ է բաբախել: Տղամարդու սիրտն ավելի արագ է բաբախել, քան պետք էր: Շատ ավելի արագ: Ու նա մահացել էր:

Բայց հիմա, ծախ թեւի երկրորդ հարկի պատուհանին հենված, Էրիկը բոլորովին չէր ուզում մտածել այդ մասին: Նրան սպասում էր Ալեքսանդերպլացը: Շատրվանը պատրաստվում էր իր գալստյանը: Ուզում էր մտածել հրապարակի սրճարանի մասին, մատուցողուհու, որը սպասարկել էր իրեն: Ուզում էր գտնել բացովի բազմոց-մահճակալով այն բնակարանը: Ուզում էր, որ այն նորից բացվի իր համար, ուզում էր ասես փշերի վրա նս-

տել մահճակալին, գտնել նրան՝ արցունքն աչքերին, թեւերը լայն տարածած, ուզում էր, որ նա հեկեկալով, համարյա ոռնալով հարցուփորձ անի, թե երկար սպասված հոկտեմբերն ինչու այսքան ուշացավ: Ալեքսանդերպլաց: Մարցան: Արեւելյան Բեռլին: Ի՞նչ գեղեցիկ խոսքեր են պտտվում նրա բերանում, ինչպես սառնաշաքարը, որ հալչում է ու քաղցրություն տարածում: Բեռլին: Ալեքսանդերպլաց: Արեւելք: Մարցան: Անցակետ: Sie verlassen den Amerikanischen Sektor[16]: «Շտադտ Բեռլին» հյուրանոց: Բեռլին: Յուտա: Յուտա Հայմ:

«Յուտա: Հիշու՞մ ես ինձ: Հիշի՛ր, շա՛տ տարիներ առաջ հանդիպեցինք «Մոկաբայում», դու ինձ քո տուն հրավիրեցիր, ու գիշերը միասին անկացրինք: Պիտի վերադառնայի: Մոտ մի ամսից քեզ մոտ կլինեմ: Այնքա՛ն եմ գրել քեզ, այնքա՛ն: Նույնիսկ հաշիվն եմ կորցրել: Երբեք չես պատասխանում: Բայց այնպե՛ս եմ ուզում, որ այս մի նամակին պատասխանես: Քո պատճառով եմ Բեռլին եկել, ուզում եմ նորից տեսնել քեզ: Սա գուցե մեր վերջին հնարավորությունն է: Գոնե այս անգամ պատասխանիր ինձ: Հաստատ ստանում ես նամակներս, այլապես դրանք հետ կգային: Յուտա: Այսքան տարի հետո նորից կհանդիպենք»:

Յուտա Հայմից պատասխան չկար:

-Էրիկ, բայց ինչու՞ ես ուզում մենակ գնալ: Թույլ տուր գամ քեզ հետ: Մի՛ անհանգստացիր, երբ տեղ հասնենք, կգնաս ուր ուզում ես, իսկ ես ինչ-որ տեղ կսպասեմ քեզ: Չէի ուզի, որ մենակ գնաս, որովհետեւ անհանգստանում եմ քեզ համար:

-Հենց նոր ինքդ ասացիր, որ լավ եմ, առողջական խնդիր չունեմ:

-Այո, բայց մի բան է, երբ այստեղ ես, եւ բոլորովին այլ է, երբ մենակ ես, ուրիշ քաղաքում: Վերջերս ես լուրջ վիրահատության ենթարկվել ու չես կարող մենակ գնալ: Նկատի ունեմ, բոլորովին մենակ: Հասկանու՞մ ես:

-Անհանգստանալու կարիք չկա:

-Ինչպե՞ս չանհանգստանամ:

-Չէ, իսկապես, մի՛ անհանգստացիր: Գնա՞նք:

-Կամ էլ Միլդրեդը կգա քեզ հետ: Մենակ մի՛ գնա, Էրիկ:

-Միլդրե՞դը, լու՞րջ: Խնդրում եմ, մի՛ խառնվիր իրար: Գնա՞նք:

Ռոզալին սովորականի պես ժպտալով հրաժեշտ է տալիս, նրանք ի պատասխան ժպտում են, ու Էրիկը նրան է թողնում ամբողջ մանրը: Մեքենայի մեջ ոչ մի բառ չեն փոխանակում: Էրիկը թողնում է, որ նա լուռ վարի մեքենան, ու ճանապարհին ուսումնասիրում գրեթե բոլոր անկյուններում կանգնած ամբարձիչները. նշանակում է՝ առաջընթաց կա, երկիրը կա-

ռուցվում է, արդիականացվում: Ուզում էր հաշվել ամեն քայլափոխի հանդիպող հսկայական գովազդային վահանակները, բայց մոռացավ: Հետո, երբ հայտնվում են դժոխային խցանման մեջ, կինը խոր շունչ է քաշում, ասես ուզում է ինչ-որ ծանր բան հանել կրծքավանդակից:

-Էրիկ, գիտե՞ս, որ սիրում եմ քեզ:

Իսկ Էրիկը չգիտի, թե ինչ ասի: Աջ ձեռքը դնում է նրա ծնկին ու թեթեւ սեղմում:

-Թո՛ղ:

-Ի՞նչը:

-Ձեռքդ: Թող, թող այդտեղ: Գիտեմ, չես ուզում խոսել այդ մասին:

Ու Էրիկը տեսնում է, թե կնոջ դեմքն ինչպես է արցունքներով ողողվում:

Երբ վերադառնում են, նա բացում է փոստատուփն ու փնթփնթում, որ էլի նոր կտրոն կա:

-Անիծված հոսանքի վարձն անընդհատ թանկանում է: Տե՛ս է՛:

Բայց հիմա ժամանակը չէ լսել նրա դժգոհությունները մերթ հոսանքի կտրոնների մասին, մերթ դեղամիջոցների, որոնք պիտի գնի, որովհետեւ հիվանդանոցում անհրաժեշտ քանակ չկա, մերթ ծառերի մասին, որոնք արագ անհետանում են, մերթ որ ավտոբուսներն այլեւս կարգին չեն աշխատում, եւ հատկապես նախարարների եւ նրանց մտերիմ շրջապատի կոռուպցիայի ու սկանդալների կամ անարդյունավետության մասին: Հիմա ժամանակն է, որ ա՛յ այսպես պառկեն, ցերեկը, երբ կինն իջեցնում է վարագույրներն ու միացնում օդափոխության համակարգը, հանում իր շորերը, հետո Էրիկի շորերը ու հիշեցնում նրան, որ կյանքում ամեն ինչ հեշտ է, նույնիսկ ապրելը երիտասարդ աղջկա հետ, որը կարող էր եւ իր դուստրը լինել: Պատմությունը պատմում է մի շնչով, հին ռիթմով, հեշտ ու գեղեցիկ, ինչպես հարկն է: Մեքենայի մեջ այնպես ասաց, որ սիրում է Էրիկին, ասես սրտից քար ընկավ, ասես թեթեւացավ ու մի քիչ ամաչելով՝ ինչ-որ բեռից ազատեց իրեն: Հիմա արդեն երեկոյան հինգը կամ վեցն է: Արեւն էլ ներս չի ընկնում, արդեն թաքնվել է վերջերս հայտնված դատարկ բնակարաններով բազմաբնակարան շենքի հետեւում: Ձեռք ձեռքի լուռ պառկած են, ծածկոցով ծածկված, որովհետեւ մրսում են սենյակով մեկ տարածված սառն օդից: Կինը լուռ պառկած է, երջանիկ է, որ ասել է, որ ցույց տվել, թե ինչքան է սիրում Էրիկին, իսկ Էրիկը նորից կտրում-անցնում է Ալեքսանդերպլացը, ու առաջին անգամ հրապարակը, ինչպես երբեք, փայլում է արեւի լույսից: Ու նորից նայում է վերեւ՝ ութերորդ հարկ: Այնտեղ մի կին կա, որի անկողնում ինքը քնել է, ու որին երբեք չի ճանաչել: Համարյա չգի-

տի, թե ինչ տեսք ունի, որովհետեւ երբ ուզում էր ուսումնասիրել նրան, կինն անջատեց լույսը: Թանձր խավար էր, ու այդ օրը Էրիկի աչքերը ոչ մի կերպ չէին կարողանում հարմարվել խավարին: Այդ բնակարանում երեւի այն կինն էր, որի անկողնում ինքը քնել էր, ու որին այդպես էլ երբեք չէր ճանաչել: Ներսում, ինչ-որ տեղ, դարակում կամ պահարանի մեջ, նամակների տրցակն էր, որ իր ձեռքով էր գրել, նամակներ, որ անպատասխան էին մնացել: Մի ժամանակ մոխրագույն պատով բաժանված այս քաղաքը հիմա վերականգնվում է, վերագտնում իրեն:

Գիշերը, հենց որ համոզվում է, որ կինը քնած է, իջնում է ներքեւ: Նորից դժվար է շնչում: Գուցե կպչուն մտքեր են, գուցե չափից շատ է անհանգստանում, իսկ անհանգստանալը նրան վնաս է: Ու ձախ ոտքն էլ կարծես թե ուռած է: Լավ կլինի վիրակապ դնի: Մի բաժակ ջուր:

Վաղը, եւ վաղը, եւ դարձյալ վաղը
Սողում է այսպես, հուշիկ, օրեցօր,
Մինչեւ վերջին վանկը հիշատակագրած գալիք դարերի:
Եվ այսպես բոլոր մեր երեկներս
Լուսավորել են խենթերի ուղին դեպի փոշոտ մահ:
Հանգիր դու, կարճ մոմ: Կյանքը մի քայլող ստվեր է միայն,
Մի խեղճ դերասան, որ բեմի վրա իր ժամին փքվում
Եվ բորբոքվում է, ու այնուհետեւ ձայնը չի լսվում.
Մի հեքիաթ է նա, հիմարի պատմած,
Լցված շառաչով եւ կատաղությամբ, առանց իմաստի[17]:

Աչքերը լցվում են արցունքներով, երբ հասնում է «առանց իմաստի» տողին, հետո շրջվում է ներքեւում հավաքված մարդկանց կողմը, որոնք մերթ երեւում են, մերթ չեն երեւում բեմից տարածվող լույսով աղոտ լուսավորված դահլիճի խավարում: Այդ լռությունն ավելի ահարկու է, քան մոտեցող անտառը, որը հառնում է նրան ընդառաջ, ավելի, քան իր շուրջ անվերջ պար բռնող ուրվականները: «Հետո էլ կարող էր մեռնել: Կգար ժամանակ այդ բառի համար»[18]: Ահա թե ինչի մասին է մտածում կուլիսներում, երբ սպասում է, թե երբ կբարձրանա վարագույրը. հիմա հիմարն ասաց իր տողերը, իր ժամն անցկացրեց բեմի վրա եւ շուտով, շատ շուտով մոմը կհանգչի: Բեմին մոտիկ փոքրիկ օթյակում երկու կին է նստած, ու կուլիսների հետեւից նայելիս գլխի է ընկնում, որ այսքան տարի ճանաչել ու միեւնույն ժամանակ երբեք չի ճանաչել նրանց: Ու նաեւ գիտի, որ մեղավորն ինքն է: Ու նաեւ հասկանում է. ամենից շատ չէր ուզի, որ այս երկու

կանայք այստեղ լինեն: Մեկն իր քույրն է, որի տարօրինակությունները մինչեւ հիմա հասկանալ չի կարողանում, թեպետ նա ամեն ինչ անում է՝ իր կյանքը հեշտացնելու համար. ծեր չամուսնացած կին, երբեմնի գեղեցիկ երիտասարդ աղջիկ, որին կարծես ոչ ոք ուշադրություն չէր դարձնում, կամ գուցե նա ոչ ոքի ուշադրություն չէր դարձնում. կին, որ անսասան հավատ ուներ խաչված Քրիստոսի հանդեպ ու միեւնույն ժամանակ խոր ատելությամբ էր լցված հոգեւորականության հանդեպ հոր վրա դրված բանադրանքի պատճառով: Միշտ ծառայել էր սիրելիներին ու հիմա, միայնակ մնալով, դիտում իր վեսթերներն ու հին հոլիվուդյան բլոկբասթերները: Եվ ահա նա սպասում է, որ Էրիկը վերջին անգամ բեմ դուրս գա, ու դեմքը դալուկ է, ինչպես Գրետա Գարբոյի նկարը, որ կախած է այն սենյակում, որտեղ նա հագուստ է կարում ու ապրում իր կյանքի մնացած օրերը: Իսկ Միլդրեդը... թեեւ առաջինը նրան տեսավ, Էրիկն այնքան քիչ ժամանակ էր անցկացրել նրա հետ ու երբեք չէր տեսել նրա կյանքի լավագույն օրերը: Օրինակ, չգիտի, թե Միլդրեդը երբ է կին դարձել, երբ է սովորել, առաջին անգամ երբ է համբուրվել տղայի հետ, առաջին անգամ երբ է քնել տղամարդու հետ, քանի տարեկանում, ու ինչու այդպես էլ երբեք չապրեց իր դստեր հոր հետ: Էրիկը ոչինչ չգիտի: Օթյակում առնվազն եւս երկու մարդու տեղ էլ կար, բայց աթոռները դատարկ էին. դատարկ աթոռները շատ պերճախոս են: «Հետո էլ կարող էր մեռնել: Կգար ժամանակ այդ բառի համար»: Գիտեր, որ Լիզայի օրերը հաշված են, իրեն հայտնել էին: Զանգել էր նրա աղջկան, հարցրել, ու աղջիկը սկսել էր լաց լինել, ասել էր, որ մայրիկն ուրվական է դարձել: Ուրվականը շրջանաձեւ պտտվում էր նրա ու իր մտերիմների շուրջ: Վերջին շրջանում նրա համար տեղ էր պահում այն նույն օթյակում, որտեղ տարիներ առաջ Ալեքսանդրան էր նստում, մյուս դատարկ աթոռին, պրեմիերայի օրը: Բայց այսօր օթյակը զբաղեցնում էին միայն այս երկու կանայք, որոնց նա չէր ճանաչում, իսկ այն աթոռները, որոնք շատ կուզեր զբաղված տեսնել, հրել էին հետ, թողել խավարի մեջ: Կրծքավանդակի ճնշումը, շնչառությունը, որ երբեմն ավելի դժվարացած էր, քան հիվանդ սրտի բաբախյունը, այս հոգնածությունը, որ հետապնդում է ամբողջ օրվա ընթացքում: Ժամանակն է, որ հեռանա բեմից, դուրս գա մուտքի դռնից: Վերջին անգամ սպասում է կուլիսներում: Եվ ահա մոտենում է այն պահը, որին շատ վաղուց էր սպասել: Ոմանք արդեն մոտեցել են իրեն, թփթփացրել ուսին, գրկախառնվել: Հանկարծ խոր լռություն է տիրում: Լռություն, որ նրան ստիպում է պատրաստվել բեմի վրա վերջին քայլերին: Հետո Աստծուն աղերսում են փրկել Արքային, վարագույրն

արագ ընկնում է, հանդիսատեսը սկսում է ծափահարել: Ու մարդիկ ավելի բարձր են ծափահարում, երբ հայտնվում է նա՝ արքայի հագուստով բռնակալը, որին տապալում են երեք ահարկու վիուկները: Հանդիսատեսը մի մարդու պես ոտքի է կանգնում, ծափահարում, հետո նույնիսկ բղավում, երբ բեմ է բարձրանում Ազգային թատրոնի տնօրենը եւ Էրիկին՝ Էրիկ Արքային կարմիր վարդերի մեծ փունջ տալիս: Վերջին անգամ է բեմ դուրս գալիս, վերջին անգամ է ուրախ ժպտում: Հայացքը թափառում է օթյակի կողմը, որտեղ քույրը փորձում է ծափահարել ու սրբել արցունքները, իսկ Միլդրեդը բարձրացնում է ձեռքերն ու թափահարում, ինչպես փոքր ժամանակ, տանը, ծծակը բերանին, առավոտյան Էրիկին ճանապարհելիս: Բայց Ալեքսանդրան ու Լիզան դեռ նստած են հետեւի նստարաններին, քրոջ ու դստեր թիկունքում. նրանք չեն ծիկրակում, նույնիսկ առաջ չեն գալիս: Մի քանի անգամ բեմից դուրս գալուց ու բեմ բարձրանալուց հետո, որի ընթացքում հանդիսատեսի ծափահարությունները չեն լռում, Էրիկ Սերին գնում է ուղիղ իր հանդերձարան, որտեղ նրան սպասում է դերասանական խումբը. նրանք գրկում են, թփթփացնում ուսին:

Շնորհավորանքներից ու նրա պատվին կազմակերպված խնջույքից հետո Էրիկը կեսգիշերին քայլում է տուն ու ի տարբերություն նախորդ այսպիսի արքայավայել գիշերների՝ բանալիով բացում դուռը, մեկնում ձեռքը՝ առաջին իսկ լույսը միացնելու, իր հետեւից փակում դուռն ու գիշերը ոչ մեկի հետ չի կիսում: Իհարկե, կարող էր ինչ-որ մեկի հետ տուն գալ: Տանյան մի քանի անգամ ժպտաց նրան, այլ կանայք նույնպես ժպտացին, ու նրանց համբույրներն այս անգամ սովորականից ավելի տեւական էին: Այդ օրը կրծքավանդակում ճնշում էր զգում, քունքերը քրտնում էին, հոգնել էր բեմում անցկացրած մի ժամից հետո, որը հիմա անցյալում էր:

Մենակ, ներքեւում, խավարի մեջ փորձում է պատկերացնել, թե հիմա ինչ տեսք ունի Յուտա Հայմը: Այնքա՜ն ժամանակ է անցել, ինչպե՞ս կճանաչի նրան: Նույնիսկ Ալեքսանդերպլացն է անճանաչելի, էլ ուր մնաց...

-Էրիկ:

Էրիկը նայում է ուսի վրայից. շեմին կանգնած մռայլ կերպարանքը վախեցնում է նրան:

-Վախեցրիր ինձ:

-Էրիկ, էլի չե՞ս քնել գիշերը:

-Քնել եմ: Քիչ առաջ արթնացա ու ներքեւ եկա:

-Էրիկ, ախր լավ գիտես, քեզ հանգիստ է պետք: Ի՞նչ ես անում այստեղ:

Մռայլ կերպարը մոտենում է: Դեմքը թաքնված է, նույնիսկ երբ այնքան

է մոտենում, որ Էրիկը նկատում է նրա պարանոցի ու կրծքավանդակի վրա քրտինքի բարակ, թափանցիկ կաթիլները:

-Միլդրեդը պիտի որ ավելի ուշ գա:

-Լավ: Հիմա վեր կկենամ ու կգնամ: Երեկոյան կհանդիպենք, եթե կուզես:

-Չէ, սպասի՛ր: Մի օր միեւնույն է հանդիպելու եք, չէ՞:

-Առայժմ ոչ:

-Ինչու՞:

-Նախ խոսի՛ր նրա հետ: Տար նրան այնտեղից:

-Ճիշտ ես: Ես պիտի պատմեմ նրան Բեռլինի մասին:

-Ուրեմն գնում ես, հա՞:

-Գնում եմ:

-Մենա՞կ:

-Մենակ: Սա իմ վերջին ուղեւորությունն է:

-Էրիկ, լսիր ինձ: Վերջ տուր, խնդրում եմ, հերիք է ասես, որ վերջինն է: Հիվանդանոցում քեզ ասացին, որ ամեն ինչ կարգին է, լավ ես զգում: Չեմ հասկանում, թե հիմա ինչու ես այդպես խոսում:

-Սա իմ վերջին ինքնուրույն ճանապարհորդությունն է: Հետո միասին կմեկնենք: Սիրակուզայում եղե՞լ ես:

-Ինչու՞ ես մենակ գնում Բեռլին:

-Հենց այնպես:

-Էրիկ, չեմ ուզում միջամտել: Գիտեմ, դու միշտ արել ես այն, ինչ ուզել ես, ամբողջ կյանքդ քո ուզածով ես ապրել: Գիտեմ: Միայն անհանգստանում եմ, որ մենակ ես լինելու, ոչ ոք հոգ չի տանելու քո մասին: Այդքան բան:

-Հիվանդանոցում ասացին, որ լավ եմ, ու իսկապես լավ եմ զգում: Չե՞ս տեսնում:

Վեց ժամ հետո Էրիկը դեռ նստած է նույն բազկաթոռին: Արեւոտ օր է, շոգ, քամին զզվեցնում է: Միլդրեդը նստած է նրա դիմաց, ձեռքին մի բաժակ սառը ջուր ու սիգարետ:

-Եթե ուզում ես, կգամ քեզ հետ: Դեռ այնքան լավ չես զգում, որ մենակ մեկնես Բեռլին, հայրի՛կ: Ինչու՞ չես լսում:

-Միլդրեդ, բաներ կան, որոնք դու չգիտես:

-Ես շատ բան չգիտեմ, հայրի՛կ: Այնքա՛ն շատ: Լավ կլիներ իմանայի, բայց երբեք չեմ հարցրել քեզ:

-Օրինակ ի՞նչ:

-Կարեւոր չէ: Հիմա դրա ժամանակը չէ:

-Չէ, խոսիր, Միլի:

-Օրինակ, մայրիկն ինչու՞ հեռացավ:

Էրիկը երբեք չէր լսել այդ հարցը ու միշտ մտածել էր, որ այս օրը գալու է: Եվ ահա հիմա, երբ այն հնչեց, պիտի մտածի, թե ինչպես պատասխանի: Մի պահ լռում է, համարյա թատերական դադար տալիս, հետո հայացքը հառում սենյակի անկյանը:

-Մայրիկը չհարմարվեց այս վայրին: Այդքան բան:

-Չհամոզեցիր: Եթե այդպես է, ինչու՞ բոլորս միասին չմեկնեցինք:

-Չգիտեմ:

-Ինչպե՞ս թե չգիտես: Ախր ինչպե՞ս կարող ես չիմանալ: Ինչպես կա, այդպես էլ ասա: Իսկ եթե չես ուզում, ասա, որ չես ուզում:

-Նրա հեռանալուց հետո ես Բեռլինում էի, Միլ: Հիշու՞մ ես այն փափուկ արջուկը, որի անունը Կառլ դրեցինք: Այնտեղից էի բերել քեզ համար:

-Գիտեմ: Հիշում եմ Կառլին: Գիտե՞ս՝ ինչ եղավ նրան:

-Երեւի պատռեցիր:

-Չէ, խաղահրապարակում կորցրի:

-Բեռլինից էի բերել:

-Դու գնացիր Բեռլին, այնտեղ հանդիպեցիր մի կնոջ, ու հիմա վերադառնում ես՝ նորից նրան տեսնելու: Սա է պատմությունը, չէ՞:

Միլդրեդը: Միլդրեդի խելքը: Զարմանալի է, որ խելքը չօգնեց նրան կյանքում:

-Մոտավորապես:

-Դե, մայրիկն էլ հեռացավ, որովհետեւ իմացավ այդ մասին: Այդպե՞ս է:

-Չգիտեմ՝ իմացավ թե ոչ: Չե՞ս հարցրել նրան, դե, երբ այցելել էիր:

-Մայրիկը չի ուզում խոսել քո մասին, հայրիկ: Գիտես, նա կապված է մեկի հետ, բայց այդ մարդը քեզ նման չէ:

-Այսինքն, ինչպե՞ս թե ինձ նման չէ:

-Նա անցյալի մասին չի մտածում: Գտել է մի տղամարդու, որը սիրում է նրան, ու նրանք ամբողջ աշխարհով մեկ շրջագայում են:

-Հրաշալի է:

-Իսկ դու անդադար մտածում ես տատիկի մասին, քաղաքականության մասին. շատ նման ես հորաքույր Թեսին: Պապիկն այսպես, պապիկն այնպես, արքեպիսկոպոսն այսպես վարվեց նրա հետ, նացիոնալիստներն այնպես վարվեցին...

-Հորաքույր Թեսն այդպես էլ չներեց նրանց, չէ՞:

-Լավ կլիներ՝ հորաքույր Թեսն ամուսնանար:

-Ես էլ եմ այդպես կարծում: Ու չեմ հասկանում, թե ինչու այդպես էլ չամուսնացավ: Ախր բավական գեղեցիկ է, չէ՞: Նույնիսկ եթե հաշվի առնենք նրա տարիքը:

-Չգիտե՞ս, թե ինչու չի ամուսնացել:

-Մի քանի անգամ հարցրել եմ, բայց չի պատասխանել:

-Իսկ ես գիտեմ:

-Գիտե՞ս:

-Իհարկե գիտեմ: Հայրիկ, հորաքույր Թեսի կյանքում ինձնից բացի ոչ ոք չի եղել: Սկզբում ես նրա համար աղջիկ էի, հետո, երբ մեծացա, փոքր քույր դարձա: Հորաքույր Թեսն ինձ ամեն ինչ պատմում է: Նա երբեք չկարողացավ ամուսնանալ:

-Ինչու՞:

-Ուզում ես, որ բացատրե՞մ:

-Ուրիշ ինչպե՞ս պիտի իմանամ:

-Ուղղակի որպեսզի կինն ամուսնանա, պետք է տղամարդ լինի: Ահա թե ինչու:

-Մի՛լ, հորաքույր Թեսը մեր փողոցի, եթե չասեմ ամբողջ գյուղի ամենագեղեցիկ աղջիկներից էր: Չէ, չեմ հասկանում, թե խնդիրն ինչն է:

-Չգիտեմ, հայրիկ, երբեմն մտածում եմ՝ դու իմ պատկերացրա՞ծն ես, թե մի քիչ դմբո ես:

-Դու հաստա՞տ հորաքույր Թեսի մասին ես խոսում:

-Այո, հորաքույր Թեսի: Այսինքն՝ քրոջդ: Ուրիշ քույր էլ չունես: Դե, մի քիչ մտածիր:

-Բայց ախր երբեմն հանդիպում էր այն տղայի հետ, չէ՞: Անունն ի՞նչ էր:

-Տղան, որի անունը դու նույնիսկ չգիտես, ի դեպ, անունը Ֆրեդ է, նրա ամենամոտ... ինչպե՞ս էինք նրան անվանում... ամենահարազատ ընկերուհու... եղբայրն է: Հասկացա՞ր: Եվ հորաքույրը նրան սիրում է ինչպես եղբորը կսիրեր, որովհետեւ հարազատ եղբայրը երբեք ուշադրություն չի դարձրել նրան: Մորն ու հորը, իսկ հետո ընկերուհուն խնամելուց հետո նա հասկացավ, որ այս տղան մենակ է, ու որոշեց նրա մասին էլ հոգ տանել, ինչպես ինձ էր խնամում: Ահա թե ինչպիսին է մեր հորաքույրը: Հասկացա՞ր:

-Հասկացա:

-Հիմա ասա՝ ինչու ես Բեռլին գնում, եւ ինչու ես մենակ գնում:

-Մենակ եմ գնում, որովհետեւ շատ հնարավոր է, որ սա իմ վերջին ուղեւորությունն է:

-Վերջին ուղեւորությանը կարող էիր մեկնել դստերդ հետ, չէ՞: Դու երբեք նման բան չես արել, հայրի՛կ:

-Դու գիտես, որ միշտ էլ մենակ եմ ճամփորդել:

-Գուցե որովհետեւ միշտ ինչ-որ մեկին պիտի հանդիպեիր:

-Չէ, պատճառը դա չէ: Միլդրեդ, գործի բերումով բոլորն ինձ ճանաչում են: Ես գնում եմ խանութ, մարդիկ բարեւում են, նույնիսկ երբեմն կանգնում են, որ զրուցեն, թեեւ ես նրանց չեմ ճանաչում: Ուր գնում եմ, բոլորն ինձ ճանաչում եմ: Ինձ պետք էր կտրվել այս ամենից: Ախր ես միշտ եմ այդպես արել: Հիշո՞ւմ ես՝ ինչպես եմ ծանոթացել մայրիկիդ հետ:

-Լավ, ուրեմն Բեռլինում հանդիպել ես մի կնոջ, ու հիմա, քանի որ սա կարող է քո վերջին ուղեւորությունը լինել, գնում ես՝ նորից նրան հանդիպելու: Հնարավոր է, որ սա ձեր վերջին հանդիպումը լինի, որովհետեւ միշտ հեռու եք ապրել իրարից: Այս պատմությունը ֆիլմ է հիշեցնում, կամ այն պիեսներից, որոնցում դու խաղում էիր:

-Միլդրեդ...

-Սպասիր, հայրիկ... Ինքդ ասացիր, որ այն ժամանակ քեզ պետք էր կտրվել առօրյայից: Բայց հիմա էլ չես աշխատում, ու այստեղից փախչելու անհրաժեշտություն չկա:

-Անհրաժեշտություն չկա՞: Այդպե՞ս ես կարծում: Կարծում ես՝ ես կարո՞ղ եմ դիմանալ այն ամենին, ինչ կատարվում է իմ շուրջ: Քո կարծիքով՝ այս երկրում ամեն ինչ կարգի՞ն է:

-Թեման մի՛ փոխիր: Երկիրն ինձ չի հետաքրքրում: Միեւնույն է, գնալու եմ այստեղից:

-Դե ապրես: Իսկ ու՞ր ես գնալու:

-Նախ քեզնից կլսեմ այն, ինչ ուզում եմ լսել, իսկ հետո կպատմեմ այն, ինչ ուզում եմ պատմել, հայրի՛կ: Չեմ միջամտի, չեմ ասի, թե ուր գնաս: Դու միշտ արել ես այն, ինչ քեզ դուր է եկել: Չեմ խառնվի: Բայց, ուզում ես հավատա ինձ, ուզում ես ոչ, անհանգստանում եմ քեզ համար, որովհետեւ հայրս ես:

-Եթե նույնիսկ մենակ լինեմ, ամեն ինչ կարգին կլինի:

-Հայրիկ, ես գիտեմ, որ մենակ չես լինի: Հիմար չեմ: Ու հերիք է փորձես թաքցնել ինձնից, լա՞վ: Գիտեմ, կա մեկը, ով կխնամի քեզ: Գիտեմ նաեւ, որ դու իմ կամ հորաքույր Թեսի կարիքը չունես: Գիտեմ, որ երեկ պիտի հիվանդանոց գնայիր, գիտեմ նաեւ, որ մենակ չես գնացել: Հորաքույր Թեսն էլ գիտի եւ հիմա շատ նեղացած է, որովհետեւ երբ ես փոքր էի, դու հորաքույր Թեսին տարբեր բաներ էիր խնդրում, բայց հիմա էլ ոչ մի հարցով չես

դիմում: Եվ հիմա, երբ բոլորը գիտեն, որ քեզ չի կարելի մենակ թողնել, ոչինչ չես ասում մեզ: Ամեն անգամ այստեղ գալուց առաջ պիտի ասեմ, թե որ ժամին եմ գալու, որպեսզի հանկարծ պատահաբար չհանդիպեմ նոր միսս Սերիին: Գրողը տանի, հայրիկ, չե՞ս հասկանում, որ ես կին եմ, ոչ թե վեց տարեկան երեխա, որին ինչ սուտ էլ ասես, կուլ կտա: Հասկանու՞մ ես, մեծացել եմ: Գիտե՞ս, որ ես էլ երեխաներ ունեմ: Դե ուրեմն, ամեն ինչ հերթով: Ո՞վ է այդ կինը, որն ապրում է Բեռլինում: Անունն ի՞նչ է:

-Յուտա Հայմ:

-Ու ինչքան հասկանում եմ, հենց նա քո մասին հոգ կտանի, երբ Բեռլինում լինես:

-Չէ: Չգիտեմ էլ՝ կտեսնե՞մ նրան, թե չէ:

-Մի որպե: Միայն թե չասես, որ...

-Ի՞նչ չասեմ, Միլդրեդ:

-Չասես, որ այս ֆիլմում, այս երկար ներկայացման մեջ կա մի ուրիշ հերոս, որին մենք երբեք չենք ճանաչել:

-Ի՞նչ ուրիշ հերոս:

-Դե, օրինակ, իմ քույրիկը կամ եղբայրը:

1980 թվականից Էրիկ Սերիի գլխում այդպիսի միտք չէր ծնվել: Գուցե հենց հիմա, ինչ-որ տեղ Ալեքսանդերպլացում, մի երիտասարդ տղա սուրճ է խմում ու ծրագրում ուղեւորություն, որի նպատակն առաջին անգամ հորը հանդիպելն է: Բարձրահասակ է նա, սեւահեր, թեպետ մայրը շիկահեր էր, հագնված է իր տարիքի երիտասարդների պես, հուշեր է գրում մոր մասին՝ հասարակ մատուցողուհու, որն ապրում էր հրապարակի պես գորշ շենքում, ութերորդ հարկի մի բնակարանում, որտեղ մի անգամ, ընդամենը մի անգամ անկողին էր բացել Էրիկ Սերիի համար՝ հայտնի դերասանի, որն իր շրջանակներից դուրս մեծ հաշվով անհայտ էր: Միջին գլուխը սկսվում է այս նախադասությամբ. «Երբեք չեմ ճանաչել հորս: Երբ մորս հարցնում էի նրա մասին, միշտ թեման փոխում էր: Տեւական ժամանակ երկարաշունչ նամակներ էինք ստանում Միջերկրական ծովի հակառակ կողմից, մի փոքրիկ կղզուց: Նամակները կարդալու համար մայրս գնում էր լոգարան, իմ հետաքրքրասեր աչքից հեռու: Ու ամեն անգամ, երբ մայրիկս նամակ էր ստանում, տրամադրությունը փոխվում էր: Երբեմն արտասվում էր. ոչ շատ հաճախ, բայց արցունքներ լինում էին, իսկ հետո, երբ նկատում էր, որ իրեն եմ նայում, խոր շունչ էր քաշում ու իրեն ստիպում ժպտալ: Ինձ ասում էր, որ հեռուստացույց նայեմ: Երբ ութ տարեկան էի, ու շուտով պիտի իննամյակս լրանար, տեսա, թե ինչպես է փլվում Պատը, ու մայրս

ասաց, որ կարող ենք հանգիստ տեղաշարժվել ուր ուզում ենք, մտածեցի, որ վերջապես կհանդիպեմ հայրիկիս, որին երբեք չեմ տեսել: Բայց չստացվեց: Հայրս այդպես էլ չհայտնվեց»:

-Չէ:

-Վստա՞հ ես:

-Չէ: Չեմ կարող վստահ լինել: Միայն մի անգամ եմ հանդիպել Յուտային: Եվ այո, մեկնում եմ Բեռլին, որ փորձեմ գտնել նրան: Ուզում եմ ասել՝ բարեւ ու մնաս բարով: Ու հուսով եմ, կհասցնեմ նույն խոսքերը նաեւ մորդ ասել:

-Հայրիկ, ողբերգություններդ թո՛ղ հուշագրություններիդ համար: Մենք ուրիշ դարում ենք ապրում: Ինչ վերաբերում է այն անհեթեթ մտքերին, որ պատմում ես բոլորին, դե, որ իբր շուտով մեռնելու ես, վերջ տուր: Եվ այսպես, հարց երկու, հիմա ու՞մ հետ ես:

-Նրա անունը Մոնիկ է:

-Դերասանուհի՞ է:

-Բոլորովին:

-Քո հին երկրպագուների՞ց է, ինչպես Լիզան:

-Լիզա՞ն:

-Պետք չէ, հայրիկ: Ի՞նչ իմաստ ունի շարունակել այս ֆարսը: Սկզբում ողբերգություն էր, հիմա ֆարս դարձավ: Հայրիկ, ես չգիտեմ քո պատմությունը, բայց այստեղից-այնտեղից պատառիկներ եմ որսացել: Կարծում ես՝ թատրոնի քո ընկերները կլռեի՞ն այդ պատմության մասին: Կարծում ես՝ ինքը Լիզան կլռե՞ր, երբ նրան բախտ էր վիճակվել լինել մեր ժամանակների մեծագույն դերասանի կողքին: Դա նույնքան իրատեսական է, որքան այն միտքը, թե նրա ամուսինը չգիտեր այդ մասին: Իհարկե գիտեր քո, գիտեր նաեւ Լիզայի մյուս տղամարդու մասին: Եվ չէի զարմանա, եթե բոլորդ ներկա լինեիք նրա թաղման արարողությանը, մոտենայիք, ձեռք սեղմեիք ու երկար տարիների առողջ կյանք մաղթեիք իրար:

Փոքր տարիքում Էրիկ Սերին լավ տղա էր: Դպրոցում բոլոր առարկաներից դասարանի առաջատարը չէր, բայց միշտ լավագույնների մեջ էր: Ուշադրություն էր գրավում, որովհետեւ անուշիկ էր, եւ ուսուցիչները շատ էին սիրում նրան, հատկապես նրանք, որոնք Մարիոնի պես ամուսնացած չէին ու կյանքում չունեին մեկը, ում կարելի էր գրկել, համբուրել, գուրգուրել: Բայց նա գերում էր նաեւ ուրիշ ուսուցիչների: Ու երբ մեծացավ ու սկսեց չարաճճիություններ անել, նրանք, չնայած վատ վարքին, ասում էին, որ անուշիկ տղա է, պատրաստ էին աչք փակել նրա չարությունների վրա՝ հիմ-

նավորելով, թե տղան օժտված է ապագա դերասանի խառնվածքով: Բոլորը համոզված էին, որ ի վերջո դերասան է դառնալու: Ոչ ոք չէր պատկերացնում նրան իրավաբանի կամ բժշկի դերում. նախ, իր հոր տղան էր, եւ երկրորդ, միտքը միշտ ուրիշ տեղ էր թափառում, բացառությամբ գրականության ու հատկապես Շեքսպիրի դասերի: Փոքր տարիքում արդեն կարողանում էր օգտվել իր հմայքից, նախ որպեսզի հաճոյանա մեծերին, եւ երկրորդ, որ մնա ուշադրության կենտրոնում, իսկ ընկերները նախանձեն նրան: Գիտեր, թե բոլորն ինչքան են սիրում իրեն՝ ուսուցիչները, ընկերները, ավելին, ընկերների քույրերը: Մինչ կսկսեր սափրվել, ժամերով կանգնում էր հայելու առաջ, կրկնում այն հատվածները, որոնց շնորհիվ հետո ճանաչում էր ձեռք բերելու, նայում էր ինքն իրեն, երեւակայական ծափահարություններ ստանում, ուղղում մազերը, ու եթե հանկարծ դեմքին ինչ-որ հետք էր հայտնվում, ձեռքի տակ ընկած ամեն տեսակ քսուք ու յուղ գործի էր դնում: Մազերին հոր յուղաքսուքն էր քսում, այնքան, մինչեւ մի գեղեցիկ օր որոշեց թողնել, որ երկարեն, հաստանան ու գզգզվեն: Արքայազն Էրիկը: Բայց այն հազվադեպ պահերին, երբ նկատողություն էր ստանում ուսուցչից, քաշվում էր իր պատյանի մեջ, գլուխը կախում ու չէր իմանում, թե ինչպես արձագանքի: Հիմա էլ այդ վիճակում էր դստեր առաջ: Միշտ կարծել էր, թե իր կյանքը միայն իրենն է եւ ուրիշ ոչ մեկինը, բացի կանանցից, որոնք հայտնվում ու անհետանում էին ըստ կարիքի կամ անհրաժեշտության: Բայց հենց նոր հասկացավ, որ Միլդրեդը բավական երկար ուսումնասիրել է իրեն, որ հեռվից ճանաչի, ու թեկուզ հեռվից, բայց լավ է ճանաչում իրեն: Միլդրեդը կին էր, ավելին, մայր էր, նրա դեմքը, ի տարբերություն Էրիկի, վկայում էր հասունության մասին: Այսպես նստած, ծխախոտը հանգցրած, երկու ձեռքով բաժակը բռնած՝ Միլդրեդը մորն էր նման:

-Արի ամեն ինչ մոռանանք, հայրի՛կ: Դու արտիստ ես եւ պետք է արտիստի կյանքով ապրեիր: Մայրիկն էլ էր նույնն ուզում: Վերջիվերջո, դուք ոչ եկեղեցում եք ծանոթացել, ոչ էլ աղոթքների խմբում: Ոչ դու էիր սուրբ, ոչ էլ նա: Միակ սուրբն այստեղ ես եմ, դա էլ՝ հորաքույր Թեսի շնորհիվ:

-Դու մեզ բոլորովին նման չես, Մի՛լ:

-Ինչպե՞ս կարող էի նման լինել, եթե ամբողջ ժամանակս անցնում էր չամուսնացած հորաքրոջ հետ, որի ուշք ու միտքն աղոթքներն էին ու իր հայրը: Չնայած պիտի ասեմ, որ ես ամեն ինչ փչացրի, երբ տնից հեռացա ու միայնակ մայր դարձա:

-Վերջերս անընդհատ մտածում եմ, որ կարելի է միասին գնալ ինչ-որ տեղ հանգստանալու, Միլ:

-Այդ ե՞րբ մտքովդ անցավ, վերջին հինգ րոպեի ընթացքո՞ւմ:

-Չէ չէ, շատ ավելի վաղուց: Երկար ժամանակ է, ինչ մտածում եմ: Դու, պստիկը, հորաքույր Թեսը...

-Կարծում եմ՝ Մոնիկին էլ կտանենք մեզ հետ, ի՞նչ կասես: Վերջիվերջո, նա էլ է դարձել Էրիկ Սերիի երջանիկ ընտանիքի անդամ: Հուսով եմ՝ սիրում ես նրան ու չես օգտագործում, որովհետեւ կյանքում էլ ոչ ոք չունես:

-Միլդրեդ, գիտես, ինձ երկար կյանք չի մնացել:

-Հայրիկ, վերջացրու: Տանել չեմ կարողանում այդ խոսակցությունները, չեմ ուզում լսել: Հիվանդանոցում ի՞նչ ասացին:

-Ասացին՝ վիճակը վատ չէ:

-Վատ չէ, այսինքն՝ լա՞վ է:

-Լավ է:

-Ե՞րբ եմ նրան հանդիպելու:

-Ուզո՞ւմ ես հանդիպել:

-Ուզում եմ տեսնել, թե հայրս ում հետ է ապրում: Իհարկե ուզում եմ: Այդ դեպքում կկարողանամ խորհուրդ տալ՝ հարմար է քեզ, թե ոչ:

Նրանք ժպտում են, նույնիսկ մի քիչ ծիծաղում են, ու Միլդրեդը եւս մի ծխախոտ է վառում ու ընկղմվում բազկաթոռի մեջ:

-Կարծում եմ՝ կամուսնանամ:

-Կարծո՞ւմ ես:

-Այո: Եվ հույս ունեմ՝ ծնողներիս ճանապարհով չեմ գնա:

-Կեցցես:

-Ու գուցե հորաքույր Թեսին էլ տանեմ ինձ հետ:

-Բոլորովին պարտադիր չէ, որ հորաքույր Թեսն ուրիշի տանն ապրի:

-Ուր էլ գնամ, նրան ինձ հետ կտանեմ: Ես այստեղ չեմ մնալու, հայրի՛կ:

-Մորդ կողքի՞ն ես ապրելու:

-Մորս կողքի՞ն: Որտե՞ղ նկատի ունես: Չեսթերու՞մ, թե՞ զբոսանավի վրա:

-Այդ դեպքում որտե՞ղ:

-Այստեղից շատ հեռու: Ընկերս Մալթայից է, մենք հեռու կգնանք: Հիմա սոված եմ, ուզում եմ մի բան ուտել: Քո ընկերուհին կարո՞ղ է ինչ-որ բան պատրաստել:

-Գիտես, ես ուտելիքի հարցում շատ պահանջկոտ չեմ:

-Իսկ ե՞րբ ես մեկնում Բեռլին:

-Դեռ պիտի որոշեմ, բայց մոտ ժամանակներս:

-Իսկ մինչ այդ չես մեռնի, չէ՞:

Նրանք նորից ժպտում են, նույնիսկ մի քիչ ծիծաղում են:

-Ասացիր՝ անունն ի՞նչ է:

-Մոնիկ:

-Չէ, բեռլինցի կնոջ անունը:

-Յուտա:

-Երբ հասնես, հարցրու՝ եղբայր կամ քույր ունե՞մ:

-Չգիտեմ էլ՝ կտեսնե՞մ նրան:

-Զանգիր նրան, հայրիկ, կամ նամակ ուղարկիր: Ասա, որ կհանդիպեք, գուցե կամարների տակ, կամ Ալեքսանդերպլացի կենտրոնում: Սքանչելի, ռոմանտիկ տեսարան է, ի՞նչ կասես: Կարծես ֆիլմից լինի: Դերասանը հանդիպում է վաղեմի մտերմուհուն: Տեղը տեղին սիրային տեսարան կլիներ: Հետո էկրանին դանդաղ կհայտնվեին դերասանների անունները: Հորաքույր Թեսն այնքան լաց կլիներ, որ աչքերը կկարմրեին. միշտ այդպես է լինում, երբ «Քամուց քշվածներն» է նայում:

-Գուցե եւ լիներ, բայց չի լինի:

Նստած է տաքսու հետեւի նստարանին: Մեքենան անցնում է Բլումբերգեր Դամմով: Վարորդը ռադիո է լսում: Արեւը շողում է, բայց շոգ չէ: Գարուն է: Տաքսին թեքվում է Ալտ-Բայսդորֆ, Ալտ-Ֆրիդրիխսֆելդե, Ֆրանկֆուրտեր Ալեե, Կարլ Մարքս Ալեե, գնում դեպի Ալեքսանդերպլաց: Ձախից շիկահեր կին է քայլում, շատ էլեգանտ է: Էրիկ Սերիի սիրտն ուժեղ բաբախում է: Հետեւից նայում է, թե ինչ նրբագեղ է քայլում շիկահերը. աջ ձեռքին պայուսակ է: Տաքսին դանդաղեցնում է ընթացքը դեպի Ալեքսանդերպլաց գնացող երթեւեկության մեջ: Շիկահերը շարունակում է միայնակ քայլել, մեջքն ուղիղ է, այս գարնանային եղանակին քայլում է մանրիկ ու թեթեւասահ, գուցե գնում է Քաուֆհոֆ՝ գնումներ կատարելու, կամ գուցե պատրաստվում է որդուն հանդիպել այն սրճարանում, որտեղ տարիներ առաջ սպասարկում էր մարդկանց, զբոսաշրջիկների, մի քանի զբոսաշրջիկի, մի զբոսաշրջիկի, որը չգիտես որտեղից էր հայտնվել: Ահա այս շիկահեր կնոջ վրա է Էրիկ Սերին կենտրոնացրել է հայացքը, եւ հանկարծ տաքսին նորից տեղից պոկվում է: Սիրտը սկսում է մի քիչ արագ բաբախել, հետո ավելի արագ, հետո ավելի ու ավելի արագ, քունքերին, ապա ամբողջ ճակատին քրտինքի կաթիլներ են հայտնվում: Տաքսին նորից կանգ է առնում, ու նա կողքից տեսնում է կնոջը. նա մեղմիկ քայլում է, աջ ձեռքում մեղմորեն ճոճում է պայուսակը: Էրիկը վարորդին խնդրում է կանգ առնել, բայց վարորդը չի լսում նրան. ռադիո է լսում: Էրիկը թակում է պատուհանը, բայց Կառլ Մարքս փողոցը շատ լայն է ու աղմկոտ, ու շիկահեր կինը շարունակում է ճանապարհը, քայլում է ու ուշադրություն չի

դարձնում նրան: Էրիկն ավելի ուժեղ է թխկթխկացնում ապակուն, ու հիմա վարորդը հայելու մեջ նայում է նրան, ձայնը բարձրացնում, քշում, հետո նորից կանգնեցնում մեքենան, ու Էրիկը փորձում է բացել դուռը, թեեւ մեքենան դանդաղ է շարժվում. արձակում է անվտանգության գոտին, բացում դուռը: Տաքսին արգելակում է, Էրիկը դուրս է գալիս մեքենայից, ձեռքը բարձրացնում՝ փորձելով նշան անել նրբագեղ ու թեթեւասահ քայլող շիկահեր կնոջը, որն աջ ձեռքում մեղմ ճոճում է պայուսակը: Էրիկը փորձում է ավելի արագ քայլել, բայց ոտքերը կարծես չեն ենթարկվում, ու երբ խոր շունչ է քաշում ու փորձում բղավել, կանչել շիկահեր կնոջ հետեւից, թվում է, թե կրծքավանդակն ուր որ է կպայթի. գլուխը հանկարծ ծանրանում է, ու նա ընկնում է, ընկնում գետնին, ու գետնին ընկած՝ դեռ աչքերով հետեւում է բարձրակրունկներին ու շիկահեր կնոջ կերպարին, որ ավելի է հեռանում՝ քայլելով դեպի Ալեքսանդերպլաց, հրապարակ, գուցե կենտրոն, գուցե սրճարան: Աչքերի առաջ սեւանում է:

-Հայրիկ, ինձ թվում է՝ այսօր շատ խոսեցինք, ես կասեի՝ չափից շատ:

-Մի քանի րոպեում կարողացանք ասել այն ամենը, ինչ երբեք չէինք ասել, Միլի:

-Ճիշտ է: Անցանք կյանքիդ ճանապարհով, հայրի՛կ:

-Կարո՞ղ եմ քեզնից ներողություն խնդրել:

-Հայրիկ, դու արտիստի կյանք ես ապրել: Ու ես սիրում եմ քեզ, չսիրել չեմ կարող: Գիտես, ինձ իսկապես թվում է, թե հորաքույր Թեսի ֆիլմերից մեկի վերջին տեսարանն է, իսկ ես առանձնապես այդ ֆիլմերի սիրահար չեմ: Ամեն դեպքում, պիտի գնամ աղջկաս հետեւից: Գուցե նորահայտ տիկին Սերի՞ն քեզ հետ Բեռլին գա: Հրաշալի մեղրամիս կանցկացնեք: Ալեքսանդերպլաց: Օ՛, ոչ, սպասիր, դու գնում ես այնտեղ, որ հանդիպես... անունն ի՞նչ էր: Հիշեցրու՛:

-Յուտա...

-Ճիշտ է, Յուտա: Ուրեմն տիկին Սերիին ուրիշ ոչինչ չի մնում, քան սպասել, ինչպես առաջին տիկին Սերին կամ Լիզան: Եվ ինչպես Միլդրեդն ու հորաքույր Թեսը: Բոլորս կսպասենք, մինչեւ վերադառնաս: Ի՞նչ հրաշալի պատմություն է: Հետո մեր հայտնի դերասանը բոլորիս շրջագայության կտանի. Էրիկ Սերիի վերջին շրջագայությունն իր կյանքի բոլոր կամ համարյա բոլոր կանանց հետ: Իսկ մե՞զ ուր կտանես, հայրի՛կ:

-Ու՞ր ես ուզում գնալ:

-Կարեւոր չէ: Օրինակ, Սիցիլիան վատ չէր լինի: Կամ գուցե Սիրակուզա:

Եկել է ժամանակը, որ դադարենք հանդիսատես լինել: Ժամանակն է, որ բոլորս միասին դառնանք գլխավոր հերոսներ: Այս շարժման գլխավոր հերոսներ ու միավորվենք՝ հանուն փոփոխության: Եկել է ժամանակը, որ միավորվենք հանուն փոփոխության, դառնանք փոփոխության գլխավոր հերոսներ: Մենք պատմական հնարավորություն ունենք, մի բան, որ մարդու կյանքում միայն մեկ անգամ է լինում. միասին գրել մեր երկրի պատմության նոր էջը: Եվ ահա ուզում եմ շնորհակալություն հայտնել բոլոր նրանց, ովքեր ընդունեցին մեզ միանալու հրավերը, եւ մյուսներին, որ դեռ կմիանան մեզ: Շնորհակալություն, որ քաջություն ունեցաք գնալ այս քայլին: Հատկապես շնորհակալ եմ բոլոր նրանց, որ պայքարեցին մեր դեմ մյուս կուսակցությունների հետ: Գիտեմ, թե ինչ բարդ էր շատերիդ համար, բայց նաեւ գիտեմ, որ հիմա, երբ արել եք այս քայլը, զգում եք, որ շարժումը ձեր տունն է: Մենք միասին, ուս ուսի փորձում ենք նոր ճանապարհ սկսել: Ովքեր միացել են այս շարժմանը, դռները բաց են ձեզ համար: Եկեք մեր երկիրը վերադարձնենք ժողովրդին:

Իր սովորական բազկաթոռին նստած՝ Էրիկ Սերին լսում է կուսակցության նոր առաջնորդի զգացմունքային ելույթը: Հազարավոր մարդիկ, հազարավոր դրոշներ, անդադար բղավոցներ, գոռոցներ ու ծափահարություններ: Եվ ահա նա, առաջնորդը, կանգնած բեմի կենտրոնում, մեծ ոգեւորությամբ ողջունում է ոգեւորված մարդկանց: Մոնիկը, փայլող աչքերը լայն բացած, մեկը մյուսի հետեւից հաղորդագրություններ է ուղարկում ֆեյսբուքյան պատին:

-Ի՞նչ ես կարծում, Էրիկ:

-Ինչի՞ մասին:

-Ի՞նչ կարծիքի ես:

Էրիկը դեռ մտածում է հեռախոսազանգի մասին, որ մի շաբաթ առաջ ստացել էր կուսակցության գլխավոր գրասենյակից: Զանգողն ասում էր, որ եկել է ճշմարտության պահը, պետք է երկիրը ոտքի կանգնեցնել:

-Մենք ճանաչում ենք ձեզ,-ասաց բարեհամբույր ձայնով մարդը. անմիջապես զգացվում էր, որ քոլեջում հանրային հարաբերություններ է ուսումնասիրել,-ու կցանկանայինք ձեզ հրավիրել միանալ շարժմանը: Խնդրում ենք ձեր ներդրումն ունենալ,-շարունակեց ձայնը,-ու հավատացած ենք, որ կարող եք օգտակար լինել շարժմանը: Սա այլեւս այն կուսակցությունը չէ, որը ձեր հայրը համակրում էր դեռ այն ժամանակ, երբ նրան բա-

նադրել էին: Այս շարժմանը մասնակից մարդիկ կյանքի տարբեր ոլորտներից են, տարբեր պատմություններ ունեն: Կուզեի, որ դուք էլ ձեր նպաստն ունենաք այդ գործում:

-Հասկանու՞մ եք,-պատասխանել էր Էրիկը,- իմ անձնական պատմությունը գունագեղ է, բառիս բոլոր իմաստներով:

Զրուցակիցը միաժամանակ լուրջ ու բարեհամբույր ձայնով պատասխանել էր, որ հասկանում է, դրա համար էլ նրա ներդրման կարիքն ունեն: Սա այլեւս ոչ թե պարտիզանական, այլ համաժողովրդական պայքար է:

-Ես ձեզ հետ խոսում եմ՝ որպես չափավոր ու առաջադիմական շարժման ներկայացուցիչ, այլ ոչ թե կուսակցության անդամ: Ու խնդրում ենք, որ դառնաք շարժման գլխավոր հերոս:

Այն օրվանից, երբ դահլիճում մարդիկ ոտքի կանգնեցին՝ իրեն ողջունելու, մոտ չէր գնացել Ազգային թատրոնին: Բավական ժամանակ է անցել: Տաքսին կանգնում է անմիջապես թատրոնի փակ դռան առաջ: Այնտեղ հանդիպում է իրեն սպասող չորս մարդու. իրեն զանգած տղամարդն արագ բացում է դուռը, հրավիրում ներս, սեղմում ձեռքն ու ինքնավստահությամբ, որ բիզնես դպրոցում է ձեռք բերել, շնորհակալություն հայտնում շարժման հրավերն ընդունելու համար, ապա ներկայացնում է մյուս երեք մարդկանց՝ լուսանկարչին, որի տեսախցիկի վրա հեռադիտակի չափ օբյեկտիվ կա, մի ուրիշ երիտասարդի, որը ժպտում է ու ամաչելով տմբտմբացնում գլուխը, եւ երիտասարդ կնոջ, որի ձեռքին դիմահարդարման պարագաների մեծ պայուսակ կա: Երիտասարդ կինն անմիջապես մի քանի թեթեւ վրձնահարվածով շտկում է նրա դեմքը. դա տեւում է երկու րոպե: Ամաչկոտ երիտասարդն ուղղում է պիջակի դարձածալերը, վերնաշապկի օձիքն ու վզին կապած մուգ կարմիր թաշկինակը: Ընդհանուր առմամբ մոտ հիսուն լուսանկար են անում Ազգային թատրոնի շենքի առաջ: Հետո Էրիկին զանգած տղան իրեն հատուկ բարեհամբույր ձայնով նրան հրավիրում է թատրոնի դիմացի փողոցի սրճարան՝ խմելու, իսկ հետո գալիս է տաքսին, որը նրան տանում է հետ, տուն. այնտեղ հանդիպում է մարդկանց մի փոքր խմբի: Նրանք հիշում են փորձերից առաջ նրա այցելությունները: Պատերը ծածկված են թատերական հին լուսանկարներով ու հին ներկայացումների տեսարաններով: Էրիկ Սերիի լուսանկարն է, որտեղ նա երեսուն էլ չկա. ահա Էրիկը խոսում է գանգի հետ, ավելի երիտասարդ Էրիկ Սերին, որը կանգնած է, կիսամերկ է, իսկ շուրջը ծիերի գլուխներ են, Էրիկ Սերին՝ Տանյա Բարտոլոյին գրկած. դեմքին ծանր տառապանք է. Էրիկ Սերին՝ սեւ դիմակով, հսկայական կեռ քթով. դա անհնար է

չնկատել. Էրիկ Սերին՝ գլխին արքայական թագ, ակնհայտորեն հուզված, թեւերը լայն բացած, վարագույրի իջնելուց առաջ վերջին անգամ բեմ դուրս գալու օրը: Այս լուսանկարների մեջ տասնյակ ազդագրեր կան, եւ դրանցից առնվազն կեսի վրա Էրիկ Սերիի անունն է: Երիտասարդի ելույթը բնավ չի հետաքրքրում նրան: Բեռլինից վերադառնալուց հետո կրծքավանդակում ավելի հաճախ է ճնշում զգում, ու հիմա ամեն անգամ հայելու մեջ նայելիս տեսնում է մի դեղնավուն ծամածռված դեմք: Բեռլինը հասկացրեց նրան, որ դեռ շատ երկար ժամանակ հետ չի գալու: Ալեքսանդերպլացում անցկացրած առավոտներից, Գալերիա Քաուֆհոֆի դիմաց նստելուց եւ ավելին, Կառլ Լայբնեքթի փողոցի այդ գրասենյակի առաջ նստելուց հետո նա տուն վերադարձավ՝ սրտում մի այնպիսի ծանրություն, որ առաջ երբեք չէր զգացել: Երբ Բեռլինից վերադարձավ, դատարկ ու ծանրացած էր, ու նկատեց դա, հենց որ վերադարձի օրը Տեգել օդանավակայանում թրմփոցով նստեց ինքնաթիռի իր նստարանին: Երբ ինքնաթիռն իջավ համարյա դատարկ օդանավակայանում, ու Էրիկը քայլեց Շենգենյան վիզա ունեցողների համար նախատեսված միջանցքով, ոտքերը կարծես քարացան: Նույնիսկ այստեղ տեղը չի գտնում: Ամեն անգամ վերադառնալիս, երբ հայտնվում էր տերմինալում, մի ելքից մյուսը քայլելիս, գլխում միշտ նույն միտքն էր: Բեռլինից հետո նրան թվում էր, թե էլ երբեք չի հեռանա տնից: Անվտանգության գոտին անցնելուց հետո տեսավ Միլդրեդին ու Մոնիկին. երկուսով իրեն էին սպասում ու ժպտում էին: Գրկեցին Էրիկին, որովհետեւ հիվանդը ողջ-առողջ էր վերադարձել: Մոնիկն ու Միլդրեդը՝ միասին, երիտասարդ ու գեղեցիկ. երկուսն էլ սիրում էին նրան, երկուսին էլ սիրում էր, երկուսն էլ իրեն էին պատկանում, երկուսն էլ կանգնած էին իր կողքին: Հոգնածություն կար Բեռլինում կատարվածից,երկար օրերից ու ավելի երկար գիշերներից հետո, երբ գրեթե չէր քնել: Ու երբ տեսավ նրանց միասին, ձեռքով անելիս ու ժպտալիս, լացը եկավ: Ուրեմն տանն ամեն ինչ հանգիստ է, ամեն ինչ կատարյալ է, ինչը սազում է Արքա Էրիկին: Բայց բռունցքի մեջ ամուր սեղմել էր փշերը, որ հավաքել էր Բեռլինում՝ Ալեքսանդերպլացում, Մարցան-Հելերսդորֆում, Կառլ Լիբկնեխտ փողոցում, կենտրոնական կայարանում, «Փարք Ինն» հյուրանոցի սենյակում, այլ տեղերում: Չի ուզում փշերը ցույց տալ որեւէ մեկին, հատկապես Միլդրեդին կամ Մոնիկին: Հոգնած ու ուժասպառ՝ թույլ է տալիս, որ գրկեն իրեն, նախ դուստրը, հետո՝ սիրած կինը: Ամեն անգամ, երբ հարցնում են, թե ինչպես անցավ, պատասխանում է, որ ամեն ինչ լավ էր, թեեւ դեմքը մատնում է հոգնածությունը, որն ուզում է թաքցնել:

-Ուզու՞մ ես հանգստանալ, Էրիկ:
-Վատ չէր լինի: Ծուտ եմ դուրս եկել հյուրանոցից, քունս տանում է:
-Դե ուրեմն գնա, պառկիր:
-Ինչպե՞ս հանդիպեցիր Միլդրեդին:
-Վաղը կխոսենք: Ձանձրացա՞ր:
-Չէ, բոլորովին: Հակառակը:
-Հավանեցի՞ր:
-Ի՞նչը: Բեռլի՞նը:
-Այո:
-Շատ է փոխվել: Պատն այլեւս չկա:
-Պատի համա՞ր էիր գնացել:
-Գիտեի, որ այլեւս չկա, բայց միեւնույն է, սպասում էի, որ կտեսնեմ:
-Ուրիշ էլ ի՞նչ կար:
Հենց այդ պահին հոսանքն անջատում են:
-Ահա, նորից:
-Հիմա ի՞նչ ենք անելու:
-Պահած մոմ ունե՞ս, Էրիկ:
-Չգիտեմ:
-Ու դեռ ուզում ենք եվրոպացի դառնալ: Անհամբեր սպասում եմ, թե երբ կթերթենք այս էջը:
-Քո կարծիքով ի՞նչ կլինի, եթե թերթենք, Մոն:
-Բայց կթերթենք, չէ՞:
-Հոգնել եմ. էջերը թերթում ենք, իսկ հետո... Էհ, կարեւոր չէ:
-Երեկ նույնիսկ ջուրն էին անջատել:
Էրիկը չի ուզում լսել հին մեղեդիները, որ վերջերս ավելի ու ավելի հաճախ են հնչում: Ճիշտ է. վաղուց, շատ վաղուց էր, երբ նոր էջ բացեց, ու հիմա ժամանակն է նորից թերթել այն. գուցե մի գեղեցիկ օր բոլոր էջերը թերթեն, ու այս գիրքը մոտենա ավարտին: Բայց Մոնիկն այլ կարծիքի է:
Նրանք նայում են խավարի մեջ:
-Բեռլինն ինչպե՞ս էր:
-Հրաշալի: Նոր: Աշխույժ, շա՛տ աշխույժ:
-Ուրեմն քեզ դուր է եկել:
-Շատ:
-Հրաշալի է: Իսկ մնացա՞ծը:
-Մնացած չկա: Ուզում էի Բեռլին գնալ, գնացի: Համոզվեցի, որ պատն

իսկապես էլ չկա, որ մարդիկ փոխվել են, փողոցներն էլ են փոխվել, ու նույնիսկ եղանակն է կարծես թե փոխվել: Չգիտեմ:

-Բայց լավ ժամանակ անցկացրիր, չէ՞:

-Շատ լավ:

-Օրերդ ինչպե՞ս էին անցնում:

-Նախաճաշում էի, դուրս գալիս զբոսանքի, հետո գնում թանգարաններ, ֆիլմ նայում: Թատրոն չէի գնում, երեկոյան վաղ պառկում էի քնելու: Ճիշտն ասած՝ շատ եմ քնել:

-Կեցցես, Էրիկ:

-Քեզ մի բան եմ բերել: Հուսով եմ՝ կհավանես, բայց հիմա ուզում եմ քնել:

Հետո հեռախոսը զանգում է, ու հնչում է այն ձայնը, որ հիմա իր դիմաց է. կենտրոնացած կապուչինո է խմում ու խորասուզվում բոլոր մանրամասների մեջ՝ պատմելով, որ չափավոր ու առաջադեմ շարժումը երկրի համար այս վճռական պահին Էրիկի կարիքն ունի, հատկապես Էրիկի: Այս դատողությունները լսելիս Էրիկը պատուհանից նայում է Ազգային թատրոնի ճակատային մուտքին ու հասկանում, թե ինչքան ժամանակ է անցել այն օրվանից, երբ լողում էր լուսարձակների լույսի, դահլիճում ու բոլոր օթյակներում նստած մարդկանց ոգեւորված ծափահարությունների մեջ: Հեռախոսազանգից ու երեկոյան հանդիպումից առաջ սկսել էր կասկածել, որ գուցե իրեն մոռացել են: Հեշտ ու հանգիստ: Հաջողությունն ինչպես հեշտ տրվեց, այնպես էլ հեշտ փակվեց-մնաց ցուցափեղկի մի անկյունում: Բայց ահա այստեղ նրան ասում են, որ շարժումն իր կարիքն ունի, որ ազգն իր կարիքն ունի, ազգը պիտի միավորվի:

Ահա եւ լուսանկարը. Էրիկ Սերին կանգնած է Ազգային թատրոնի առաջ: Մի քիչ տարիքն առած է, բայց առաջվա պես թարմ տեսքով: Այս աչքերը՝ տարիքի համեմատ դեռ խոշոր ու աշխույժ, մուգ կապույտ բաճկոնը, սպիտակ վերնաշապիկն ու վզին փաթաթած բոսորագույն թաշկինակը: Ձախ ձեռքով իր կողմ է հրավիրում իրեն նայող բոլոր մարդկանց, ասում է, որ մոտենան, ավելի մոտենան շարժմանը, մոտենան երկրին, որը վերակառուցման կարիք ունի: Ազգային թատրոնի ճակատին խոշոր տառերով գրված է Էրիկ Սերիի նոր կարգախոսը. «Գլխավոր հերոսնե՛ր եղեք», իսկ ներքեւում՝ «Էրիկ Սերի, դերասան: Էրիկ Սերի, դերասան»: Արքա Էրիկի լուսանկարն է՝ ի ցույց ամբողջ երկրի, խոշոր, մոնումենտալ. Էրիկը նայում է քեզ, երբ աշխատանքի ես գնում, տուն ես գնում, գնում ես Ազգային թատրոն՝ օպերա նայելու: Մոնիկը ջանասիրաբար լուսանկարել

էր Էրիկի նկարն ամբողջ կղզով մեկ տարածված ահռելի գովազդային վահանակների վրա:

-Այս մե՞կը որտեղ է:

-Սա համալսարանի մոտ է: Հասկանում ես, չէ՞, ինչ կարեւոր է համալսարանի մոտ գովազդային վահանակ տեղադրել:

-Ուզում ես ասել՝ հիվանդանոցի՞:

-Դե, համարյա:

-Ինչ էլ ճիշտ են գուշակել. շուտով այնտեղ կհայտնվեմ:

-Նորից նույն ե՞րգն ես երգում, Էրիկ: Մի քանի օր առաջ մենակ Բեռլին էիր մեկնել, ինչ է, մոռացա՞ր: Ոչ ոք քեզ ոչինչ չասաց, հիմա երջանիկ վերադարձել ես: Գոնե գիտե՞ս, թե ինչ լավ տեսք ունես: Լսիր, քո նկարն ամենալավ տեղում են կախել, Ֆլորիանայում, Վալետա թեքվելուց անմիջապես առաջ:

-Ես գիտեմ, թե որտեղ է Ֆլորիանան:

-Ուզում եմ ասել՝ ամենակարեւոր տեղն է, հասկանու՞մ ես: Նույնիսկ թատրող գնացող մարդիկ կտեսնեն նկարդ:

-Ու քեզ թվում է՝ թատրոն գնացող մարդկանց համար դա այդքան կարեւո՞ր է:

-Իհարկե կարեւոր է: Կարծում ես՝ մարդիկ էլ չե՞ն հիշում քեզ:

-Մոնիկ, դու չես կարողանում զսպել զգացմունքներդ:

-Էրիկ, չե՞ս հասկանում, թե ինչ կարեւոր պահ է: Ի դեպ, ուզում էի հարցնել, Բեռլինում լուսանկարներ արե՞լ ես:

Բեռլինում միայն մի լուսանկար էր արել: Նայում էր տարբեր մարդկանց, օրինակ, գնչուհու, որը շաքար էր գողանում «Ամ Ալեքս» բիստրոսրճարանի սեղաններից՝ իրենից կախված երեք երեխաներին կերակրելու համար: Ուշադիր նայում էր մոտավորապես իր տարիքի բոլոր շիկահերներին, որոնք դուրս էինք գալիս Քաուֆհոֆից կամ մտնում կայարան, իսկ Բրանդենբուրգյան դարպասի տակ զբոսաշրջիկներն ուշադիր լսում էին գորշ պատի պատմությունը, որը մի ժամանակ դարպասից այն կողմ էր: Նայում էր ոստիկաններին, որոնք շրջում էին կիտրոնի ծառերի տակ՝ սպասելով, որ ինչ-որ բան կպատահի, թեեւ այնտեղ երբեք ոչինչ չէր պատահում: Կանգնում էր փողոցի անկյուններում, անհամբեր նայում ժամացույցին ու սպասում, սպասում:

Եվ ահա ժամանակը եկավ: Նստել է, թփթփացնում է աջ ոտքը: Կողքին այս շիկահերն է, մոտավորապես իր տարիքի. անուշաբույր, բայց բույրը հոգնեցնում է: Երբ Էրիկը ներս մտավ, կինը ներկայացավ որպես համալսարանի դասախոս, բայց Էրիկը, որն օծանելիքի պատճառով առանձնապես ուշադրություն չդարձրեց նրան, մոռացավ, թե ինչ պրոֆեսոր է ու անունն էլ կարգին չի հիշում: Բարեհամբույր ձայնը, մուգ կապույտ բաճկոնը. ժպտում է, ողջունում հանդիսատեսին ու հեռուստադիտողներին ու նրանց հրավիրում հեռուստատեսային հաղորդաշարի մյուս մասերը դիտելու: Այսօր մեր ականավոր հյուրերի շարքում դիմավորում ենք Էրիկ Սերիին:

Հասել ենք մեր պատմության հանգուցալուծմանը: Եվ հենց դա է պատճառը, որ այսօր այստեղ եմ, ձեզ հետ, բարի մարդկանց հետ, որոնք ինձ պես հավատում են, որ երկիրը կարիք ունի արմատական փոփոխությունների [ծափահարություններ], նոր ուղու, որը մեզ կհասցնի նոր հորիզոններ: Ես աշխատավորի ընտանիքից եմ: Շատ տարիներ առաջ հորս բանադրեցին իր քաղաքական հայացքների համար [ծափահարություններ], եւ ցավոք նա հիասթափված մահացավ: Բայց այսօր չեմ եկել՝ հին վերքերը փորփրելու: Հակառակը, պատգամը, որ այսօր ուզում եմ հղել ձեզ, այն է, որ այս երկիրն արմատական փոփոխությունների կարիք ունի, եւ այդ փոփոխությունը պետք է սկսվի մեզնից, այստեղ հավաքված յուրաքանչյուր մարդուց: Համոզված եմ, որ մեր տարաձայնությունները, մեր տարբերությունները շատ երկար տարիների պատմություն ունեն [ծափահարություններ]: Ու ահա այսօր ես այստեղ եմ: Երբեք չեմ զբաղվել քաղաքականությամբ ու հիմա էլ չեմ զբաղվում: Բայց ընկերներ, զգացի, որ պարտավոր եմ իմ համեստ ներդրումն ունենալ այս գործում: Այո, իմ ընկերներ, հանուն մեզ եւ մեր երեխաների, հանուն մեր երկրի պիտի ասենք՝ այո, այո նոր ճանապարհի հեռանկարին: Մեր երկրում նորից պիտի թագավորի ներդաշնակությունը, ներդաշնակությունն այս հրաշք երկրի քաղաքացիների միջեւ: Ու քանի որ խոսում եմ մեր հրաշալի երկրի մասին, սիրելի՛ ընկերներ, հայրենակիցներ, եկեք աղոթենք, այո, աղոթենք մեր Տեր Աստծուն, որ իմաստություն, այո, իմաստություն պարգեւի կառավարողներին: Իմաստություն նրանց, ովքեր կառավարում են, իմաստությո՛ւն, իմաստությո՛ւն: Ու թող Աստված գոտեպնդի աշխատավորին: Որովհետեւ աշխատավորը գոտեպնդման կարիք ունի, որ անի իր գործը, որ պահպանի մեր

թանկ հայրենիքը: Այո, աղոթում եմ տոկունության համար, տոկունություն աշխատավորին: Եվ հետո, ամենակարեւորը, թող Աստված միասնություն սերմանի, ընկերներ, միասնություն մալթացիների միջեւ, միասնություն բարի մալթացիների միջեւ, առհասարակ բոլոր մալթացիների միջեւ, առանց բացառության, առանց խտրականության, ընկերներ, միասնություն սերմանիր, օ՜ Աստված, մալթացի ժողովրդի մեջ, քանզի միայն միասին կարող ենք համախմբվել ու նոր ճանապարհ սկսել: Ու թող խաղաղություն իջնի բոլորիս վրա, խաղաղությու՛ն, խաղաղությու՛ն:

Վերջին մի քանի բառերը խեղդվում են, խեղդվում են Էրիկ Սերիի առաջ հավաքված մարդկանց ծափահարությունների ծովում, զգացմունքները ոտքի են հանում բոլորին. մարդիկ անկեղծորեն ուրախ են որ այս կարեւոր իրադարձության մի մասն են, այնքան կարեւոր, որ բառերով անհնար է նկարագրել: Այս լուսարձակները, շոգից հալչող շպարի հոտը, քունքերից հոսող ու այտերից դնչին հասնող քրտինքի առվակը. այսպես էր նաեւ տարիներ առաջ, երբ աջ ձեռքով գանգն էր բռնում կամ աչքերը փակ կանգնում էր բեմի կենտրոնում. ահա ուր որ է վարագույրը կիջնի.

Հայրենակից թեբեացի՛ք, տեսե՛ք, ահա՛, Էդիպուսին,
Որը լուծեց հանելուկը հռչակավոր: Այր էր հզոր,
Նրա բախտին նախանձով էր նայում ամեն քաղաքացի:
Սակայն ահեղ դժբախտության ի՜նչ հորձանքի մեջ հայտնվեց:
Ուստի մարդիկ մահկանացու, մինչ սպասում են վերջին օրվան,
Պիտի տեսնեն, որ բարեբախտ մեկը չկա, նախքան հատի
Նա սահմանը իր գոյության եւ անհաղորդ մնա վշտին:

Խլացնող ծափահարություններ: Բեմի կենտրոնում կանգնած է Արքա Էրիկը՝ հուզված ու շփոթված. չգիտի, թե որը պիտի լինի հաջորդ քայլը: Քույրը նայում է նրան ու ծափահարում. նրա դեմքը պայծառանում է այն մտքից, որ վերջապես, վերջապես Էրիկը զգում է, ինչպես ձուկը ջրում: Արքան հենվում է իր գահին, իսկ մյուսները շրջապատում են նրան: Նույնիսկ կուսակցության, շարժման առաջնորդն է հոտնկայս ծափահարում. երեւում է՝ նա էլ է հուզված ելույթից, որ դեռ մի քանի անգամ հեռարձակվելու է լուրերի թողարկումներում, լսվելու է ռադիոյով, հեռուստատեսությամբ ու բոլոր լրատվամիջոցներով: Էրիկը նայում է շուրջը, դեմքերին, որ, թվում է, ուր որ է ինչ-որ բան կասեն, բայց չգիտեն, թե ինչ ասել. Էրիկի խոսքից հետո նրանք այլեւս անկարող են խոսել: Հետո հաղորդավարը նրան առաջարկում է նստել, որ եզրափակեն երեկոյան հաղորդումը: Եզրափակիչ

թեմայի սկսվելուն պես առաջնորդը մոտենում է Էրիկին ու ամենայն անկեղծությամբ շնորհակալություն հայտնում ոգեշնչող ելույթի համար:

Հիմա մութ է: Աղոտ դեղին լույս: Լռություն: Դիմացի պատուհանի ապակու արտացոլանքի մեջ տեսնում է, որ իր գլխավերեւում էկրան կա, ու ինչ-որ բան, որ ալիք է հիշեցնում, բարձրանում է, իջնում, թրթռացող կարմիր լույս գցում, որը ժամանակ առ ժամանակ փոխվում է: Զգում է, որ ինչ-որ պլաստմասե առարկայով փակել են քիթն ու բերանը: Դիմակ է: Հաստատ թթվածին է: Նույնիսկ լսում է, թե թթվածինն ինչպես է ֆշշոցով լցվում գլանից: Նրանից ձախ՝ բազկաթոռին նստած է մի կին. խոր քնած է: Մոնիկն է կամ Միլդրեդը: Լռություն: Ծափահարությունները կարծես շատ անսպասելի ընդհատվեցին: Նույնիսկ լույսերն անջատվեցին: Երանի՛ կարողանար մի քիչ շարժվել:

-Էրիկ:

Կին է: Կանգնել է կողքին, փակել աղոտ դեղին լույսը: Մռայլ, մռայլ կին է: Կամ գուցե նրա մարմինն է փակում լույսը: Ոչ կնոջ դեմքն է տեսնում, ոչ մազերի գույնը: Բայց հաստատ կին է:

-Ո՞վ եք:

-Մոնիկն է: Ինչպե՞ս ես, քալբի:

-Միլդրե՞դն ես:

-Միլդրեդը դրսում է: Կանչե՞մ:

-Մոնի՞կն ես:

-Ինձ չե՞ս ճանաչում:

-Մութ է: Լույսը միացրու՛:

-Չեմ կարող: Գիտե՞ս որտեղ ենք:

-Մարցանու՞մ:

-Էրիկ, լսու՞մ ես ինձ:

-Մարցանու՞մ ենք:

-Չէ: Քեզ հիվանդանոց ենք բերել: Բայց լավ ես, չէ՞: Հը՞:

-Ինձ թվաց՝ ուրիշ տեղ ենք:

-Հիմա կկանչեմ բուժքրոջը, թող զննի քեզ, լա՞վ: Մի՛ շարժվիր, Էրիկ:

Լռություն: Հետո վարորդը կտրուկ կանգնում է ու դուրս թռչում մեքենայից: Կինը շարունակում է ճանապարհն ու չի էլ նկատում, որ իրենից չորս քայլ այն կողմ գետնին տղամարդ է ընկած: Վարորդը մոտ է վազում, չոքում նրա կողքին: Էրիկը մատով ցույց է տալիս կնոջը, որն արդեն անհետացել է, հավանաբար թեքվել է փողոցի անկյունում կամ ինչ-որ կողմ գնացել:

-Բան չկա: Լավ եմ զգում:

-Ես ձեզ կլինիկա կտանեմ: Այդպես ավելի լավ կլինի: Ապահովագրություն ունե՞ք:

-Չէ, չէ, կլինիկայի կարիք չկա: Արդեն լավ եմ: Անցավ:

-Պարոն, կարո՞ղ եք գոնե բացատրել, ի՞նչ պատահեց, ինչու՞ մեքենայից դուրս թռաք: Ախր կսպանեիք ձեզ:

-Այն կինը, որ քայլում էր հրապարակում...

-Կի՞նը: Ո՞ր մեկը, պարոն: Հրապարակում հազար ու մի կին է քայլում: Ավելի ճիշտ չի՞ լինի, եթե ձեզ կլինիկա տանեմ կամ հետ, հյուրանոց:

-Ալեքսանդերպլաց:

-Ինչպես կուզեք:

Հետո սենյակում լույս է միանում, ու ներս է մտնում բուժքույրը, նրա հետ էլ՝ պրոֆեսոր Սավոնան: Պրոֆեսոր Սավոնան կանաչ հագուստով է: Նա մոտենում է:

-Պարոն Սերի, ինչպե՞ս եք:

-Հիվանդանոցու՞մ եմ:

-Այո, հիվանդանոցում: Գիտակցության կորուստ եք ունեցել, պետք է հետազոտենք: Թեթեւ նոպա եք ունեցել:

-Սրտի նոպա՞:

Պրոֆեսոր Սավոնան մոտենում է նրան, կրծքադիտակը փորձում է որսալ խնդիրը: Նրա թեւերից օծանելիքի ու օճառի թարմ բույր է տարածվում:

-Ստիպված կլինեք որոշ ժամանակ այստեղ մնալ: Ինչքան հասկանում եմ, ձեզ թեթեւ սթրեսի եք ենթարկել:

-Չէ, բոլորովին:

-Լսել եմ՝ Բեռլինում եք եղել: Ժամանակն ինչպե՞ս անցկացրիք այնտեղ:

-Բեռլինում էլ առանձնապես լավ չէի զգում: Սիրտս կարծես շատ արագ էր խփում:

-Ու՞մ հետ էիք գնացել:

-Ես...

-Մենակ էիք, պարոն Սերի: Տեսնում եմ՝ չեք լսում ինձ: Երբ Բեռլինում էիք, ու՞ր գնացիք: Ծա՞տ էիք քայլում:

-Մի քիչ: Յուտային էի փնտրում:

-Յուտայի՞ն:

-Յուտա Հայմին:

-Հիմա մի քիչ հանգստացեք:

-Բայց հիվանդանոցում եմ, չէ՞:

-Այո: Խոսում էիք հեռուստատեսությամբ, հետո ձեզ շատ արագ տեղափոխեցին այստեղ: Այս ի՜նչ օրն եք գցել ձեզ: Ոչ մի վայրկյան չենք կարող աչք կտրել ձեզնից:

-Իսկ ե՞րբ կարող եմ տուն գնալ:

-Տեսնենք: Առայժմ հանգստացեք: Երեխաները դրսում են: Ձեր երեխաներն են, չէ՞:

-Նրանցից մեկը՝ այո:

-Հիմա պետք է մի քիչ քնեք: Վիճակն արդեն բարելավվել է, բայց դեռ որոշ ժամանակ կմնաք այստեղ, հետո կասեմ: Ձեր երեխաներին կասեմ, որ տուն գնան, իրենք էլ մի քիչ հանգստանան, իսկ վաղը կգան ձեզ տեսնելու: Համաձա՞յն եք, պարոն Սերի:

Հիմա է հասկանում, որ շրջապատված է սարքերով, որոնց վրա գունավոր թրթռացող տարօրինակ թվեր են՝ բաց կանաչ, բաց դեղին, նարնջագույն եւ սպիտակ: Լույսեր են միանում, սուր էլեկտրոնային ձայներ են լսվում: Կարծես Ալեքսանդրպլացը լինի մութն ընկնելուց հետո: Մարդիկ սպասում են տրամվային: Ամենաբարձր աշտարակը ողողված է սպիտակ լույսով: Աշխարհի ժամացույցը: Քաուֆհոֆը կարծես ոսկու ձուլակտոր լինի: Գուցե հենց նա էր, իրենից երկու քայլ հեռու, քայլում էր նրբագեղ քայլվածքով, պայուսակը ճոճելով: Գուցե աշխատանքի էր գնում: Կամ հնարավոր է, որ թոշակի է անցել ու հիմա վայելում է կյանքը նոր Գերմանիայում, Բեռլինում, որտեղ ոչ պատը կա, ոչ գորշ կոստյումներով տղամարդիկ: Պրոֆեսոր Սավոնան դուրս է գալիս սենյակից, բուժքույրը ստուգում է խոզովակները, կաթոցիկը, նորից է նայում խոշոր էկրանին: Հետո նայում է Էրիկին, որն ուշադիր նայում է իրեն, ու թեթեւ ժպտում է:

-Ինձ թվում է՝ ծարավ եմ:

Բուժքույրը ձեռքը տանում է մահճակալի կողքին դրված պլաստմասե շշին, վարդագույն ձողիկ է դնում շշի մեջ, հանում դիմակն ու ձողիկը հարմարեցնում երկու գունատ շուրթերի միջեւ:

-Ես կպահեմ ձեր գլուխը, մի՛ անհանգստացեք: Դանդաղ խմեք:

Ջրի կեսը հոսում է բարձի վրա:

-Մի քիչ էլ կուզե՞ք:

-Կարծում եք՝ նա՞ էր մայթին կանգնած: Թիկունքից շատ նման էր նրան: Դեմքը կարգին չտեսա: Առավոտյան գնացի նրա փողոց: Մի քիչ փոխվել է, քիչ էր մնում մոլորվեի ու մտածեցի, որ չեմ գտնի շենքը: Քայլեցի, քայլեցի, սկզբում չգտա, բայց հետո ի վերջո գտա:

-Ուրեմն գտել եք, հա՞: Ի՜նչ լավ է: Դե հիմա մի քիչ քնեք, խնդրում եմ: Քնեք, իսկ վաղը երեխաները ձեզ այցի կգան, ու դուք ավելի լավ կզգաք, լա՞վ, սիրելիս:

-Բայց նրան չգտա: Բնակարանի դռան վրա, որտեղ նա մի ժամանակ ապրում էր, ուրիշ անուն էր: Անկե Ռոթ:

-Ուրեմն այնուամենայնիվ գտաք նրան:

-Չէ: Ես Անկե Ռոթի հետեւից չէի գնացել:

-Չէ՞:

-Յուտա Հայմի հետեւից էի գնացել:

-Նրան էլ կգտնենք: Միայն թե հիմա մի քիչ քնեք, անուշիկս: Հաստա՞տ ջուր չեք ուզում:

-Ե՞րբ:

Բուժքույրը նորից նայում է էկրանին ու հեռանում:

Արեւոտ օր էր: Երկնքից կրակ էր թափվում: Տաքսին շարժվում էր դեպի Տիեզերագնացների փողոց: Թվում էր՝ փողոցը վերջ չունի: Մեծ շենքերն այլեւս գորշ չէին. դրսից մի քիչ դեղնասպիտակավուն ներկ էր լցոված: Անվերջ քայլում էր արեւի տակ: Ուր որ է պիտի թեքվի: Էլ չի դիմանում: Սիրտն արագ բաբախում է կրծքում, ու թեթեւ հուսահատություն է զգում: Բայց հետո հենց իր դիմաց նկատում է բազմաբնակարան շենքը: Ահա տեսնում է բազմաբնակարան շենքն ու նայում վերեւ՝ ութերորդ հարկ: Հենց այդտեղից, փոքրիկ բնակարանի այդ պատուհանից մի գիշեր նայեց դուրս: Այդ երեկո սիրտը բոլորովին չէր ցավում: Մոտեցավ փոստատուփերին, որոնց վրա անուններ ու համարներ էին գրված. Փոլ Բաուման, Քերոլին եւ Գերդ Լյովեներ, Ռիտա Քոլ, Հորսթ Ֆինկել, Հորսթ եւ Մարիա Բաուեր, Ֆրանց Բրաուն, Գուստավ եւ Մարթինա Ադլեր, Նինա Ծոլց, Ալբերտ եւ Գիսա Սաուրներ, Մարիա եւ Առնե Գոթլիբներ, Բրիջիտ եւ Մարթին Քոխեր, Հելմա Թրաուգոտ: Աչքերը մի անգամ էլ վազեցին բոլոր թվերի, թվերի կողքին գրված անունների վրայով: Նրանցից մեկնումեկը երեւի կհիշի Յուտային: Գուցե առաջին իսկ պատահած կոճակը սեղմի ու հարցնի, միգուցե հարեւանները ճանաչեն նրան, կամ գուցե հիշեն, կամ գուցե հուշեն, թե որտեղ է, ուր է գնացել, որտեղ է ապրում, ինչ է եղել նրան: Նայեց նույն համարին, որը միշտ գրում էր ծրարների վրա, ու կնոջ անուն տեսավ՝ Անկե Ռոթ: Ոչ թե Յուտա Հայմ, այլ Անկե Ռոթ: Նա սեղմում է կոճակը: Լռություն է: Ավելի ուժեղ է սեղմում: Եվ ահա մի կին է խոսում: Խռպոտ ձայնով կին է:

-Յուտա՞:

-Լռություն:

-Յուտա Հա՞յմ:

Լռություն: Չխկոց: Լռություն: Սեղմում է կոճակը: Լռություն: Նորից է սեղմում: Եվ դարձյալ նույն կինն է խոսում, նույն խռպոտ ձայնը:

-Յուտա Հա՞յմ:

Որոշ դադարից հետո կինն ասում է, որ ինքը ոչ թե Յուտա Հայմն է, այլ Անկե Ոթը: Ասում է, որ չի ճանաչում Յուտա Հայմին, երբեք չի լսել Յուտա Հայմի մասին, եւ այս շենքում ոչ մի Յուտա Հայմ էլ չկա:

Յուտա Հայմ չկա:

Էրիկն ասում է, որ փնտրում է ոմն Յուտա Հայմի, որը մի ժամանակ հենց այս բնակարանում էր ապրում: Ուզում է խոսել նրա հետ: Դադարից հետո հնչում է Անկե Ոթի ձայնը՝ փոքր-ինչ ավելի խռպոտ, ու նրան վերեւ է հրավիրում: Սիրտը սկսում է արագ խփել, շուրթերն էլ կարծես մի քիչ դողում են: Վերելակն ուղիղ նրա դիմաց է: Հիշում է վերելակը: Հիշում է, թե ինչպես էր վերելակ նստում այս շիկահեր երիտասարդ կնոջ հետ, որին առավոտյան էր հանդիպել: Սեղմում է ութ համարի կոճակը: Վերելակը բարձրանում է, կարմիր թիվը փոխվում է, ավելանում մեկով, մինչեւ որ հանկարծ անսպասելի կանգ է առնում ութ թվի վրա: Վերելակի դուռը բացվում է, հայացքը թեքվում է դռան կողմը, որտեղ կանգնած է մի կին, իրենից փոքր-ինչ ավելի երիտասարդ, սպիտակ կարճ մազերով, մուգ շրջանակավոր ակնոցով, մատներով սիգարետը բռնած, սպասում է բաց դռան առաջ:

-Ողջույն: Անկե Ոթ:

-Անունս Էրիկ Սերի է, հեռվից եմ եկել: Շատ տարիներ առաջ այս բնակարանում էի:

Կինը չի շարժվում ու ուշադիր զննում է նրան:

-Նկատի ունեք՝ իմ բնակարանու՞մ:

-Այո, կարծում եմ՝ այստեղ:

Էրիկ Սերին ակամայից գլուխն իջեցնում է, որ ուսումնասիրի միջանցքը:

-Ներս եկեք: Ներս եկեք: Բնակարանս մեծ չէ:

-Գիտեմ: Հիշում եմ, որ մեծ չէր:

-Ներս եկեք:

Այստեղ, այո, հենց այստեղ է գիշեր անցկացրել: Մի գիշեր, բազմոցմահճակալի վրա: Առաջ խոհանոցը նարնջագույն ալյումինից էր, իսկ հիմա՝ փայտից: Փոքրիկ հյուրասենյակում հարթ էկրանով մեծ հեռուստա-

ցույց կա. պատից կախած՝ տեղեկատվություն է հեռարձակում էժան գնումների մասին:

-Ուրեմն այստեղ եք եղել, հա՞:

-Այո, հենց այս բնակարանն է. սա է որ կա: Այո, ես եղել եմ այստեղ:

-Երեւի շատ վաղուց:

-Ներեցե՞ք:

-Շատ վաղուց եք եղել:

-Այո, վաղուց էր:

-Պատը քանդելուց առաջ:

-Իհարկե: Տիկին Ռոթ, եթե դեմ չեք, մի հարց տամ. դուք երբեւէ ոմն Յուտա Հայմին հասցեագրված նամակներ ստացե՞լ եք:

Անկե Ռոթը տեղ է փնտրում, որ դնի ծխախոտը, հետո գնում է խոհանոց ու գտնում մոխրամանը:

-Ես ամեն օր բազմաթիվ անցանկալի նամակներ եմ ստանում, պարո՛ն: Դե գիտեք, էլի, գովազդներ, ծանուցումներ, ամենատարբեր աղբ:

-Հասկանալի է, իսկ նամակնե՞ր: Ծրարի մեջ դրված նամակներ:

-Իսկ այդ նամակները որտեղի՞ց էին գալիս:

-Մալթայից:

-Մալթայի՞ց:

-Այո, Մալթայից: Մալթան...

-Գիտեմ, մի քանի տարի առաջ հանգստանալու էի մեկնել այնտեղ: Ես, դուստրս ու նրա աղջիկը: Նստեք: Սուրճ կխմե՞ք:

-Չէ, շնորհակալություն:

-Մալթայից ոչ ոքի չեմ ճանաչում: Չգիտեմ, թե ինչու ինչ-որ մեկն այնտեղից պիտի նամակ ուղարկեր ինձ:

-Չէ, չէ, իմ ասած նամակները ոչ թե ձեզ են հասցեագրված, այլ Յուտա Հայմին, որը մի ժամանակ այստեղ էր ապրում:

-Նստեք: Ուրեմն ասացիք Յուտա Հա՞յմ:

-Այո, Յուտա Հայմ: Երկար շեկ մազեր ուներ: Իմ տարիքին է կամ գուցե մի քիչ երիտասարդ:

-Ես վաղուց եմ ապրում այստեղ, բայց ոչ մի Յուտա Հայմ չեմ ճանաչում: Դուք լա՞վ էիք ճանաչում նրան:

-Ճանաչում էի:

-Լա՞վ:

-Ճանաչում էի:

-Պարզ է: Ճանաչում էիք նրան, բայց չգիտեիք, որ այլեւս չի ապրում այստեղ:

-Ուրեմն երբեք չեք հանդիպել Յուտա Հայմին:

Անկե Ոթը նոր ծխախոտ է վառում:

-Չէ, կներեք: Գուցե այս բնակարան չեք եկել:

-Չէ, չէ, վստահ եմ, որ հենց սա էր,-Էրիկը նորից նայում է շուրջը: Չէ, հաստատ սա է որ կա: -Վստահ եմ, որ այստեղ եմ եղել: Նույնիսկ կարող եմ սենյակների դասավորությունը նկարագրել:

-Պարո՛ն, բոլոր բնակարանները նույն ձեւով են կառուցված: Համարյա թե տարբերություն չկա: Միայն կահույքը կարող է այլ լինել, բայց մնացածը, բոլոր բնակարանների նախագիծը նույնն է: Այն ժամանակ ամեն ինչ իրար նման էին անում. բոլորը հավասար էին, բոլորը մեկ էին:

-Լավ, իսկ նամակնե՞րը: Նկատի ունեմ Մալթայից եկած նամակները, ծրարի մեջ ու կնիքը վրան: Ոչ մեկը չե՞ք ստացել: Գուցե հիշու՞մ եք:

-Ոչ, ոչ: Ես երբեք ոչ մի նամակ չեմ ստացել: Ես ոչ ոք չունեմ, պարոն, ո՞վ պիտի ինձ նամակ գրի: Միայն գովազդներ ու վճարման կտրոններ եմ ստանում: Ուրիշ ոչինչ:

-Իսկապե՞ս ոչ մի նամակ չեք ստացել:

-Ես դուստր ունեմ, բայց նա ինձ շաբաթական երկու անգամ զանգում է, գրելու կարիք չունի: Ուրիշ ոչ ոք չունեմ: Ինչպես ասացի, ինչ էլ ստանում եմ փոստով, աղբ է:

-Ուրիշ ոչ մի բա՞ն:

-Դե, եթե ձեր ասած Հուտա Հայմն իսկապես ժամանակին այստեղ է ապրել, չի բացառվում, որ նրա նամակները գնացել են նոր հասցեով: Վստահեցնում եմ ձեզ, այստեղ երբեւէ ինձ չհասցեագրված ոչ մի նամակ չի եկել: Ինչպես ասացի, ինձ ոչ ոք չի գրում: Միակ բանը, որ ստանում եմ, գովազդներն ու հաշիվներն են: Վստա՞հ եք, որ հենց այս բնակարանն էր:

-Այո, վստահ եմ: Տեսեք, խոհանոցն ա՛յ այնտեղ էր, որտեղ եւ հիմա է, բայց նարնջագույն ալյումինից էր:

-Նարնջագույն:

-Այո, նարնջագույն:

-Մի ժամանակ նարնջագույնը շատ տարածված էր:

-Իսկ այստեղ, որտեղ ես եմ նստած, բացվող բազմոց-մահճակալ էր:

-Վերջին անգամ ե՞րբ էիք այստեղ:

-1980-ին:

Խոհանոցի կահույքին հենված՝ Անկե Ոթը մեկնում է ձեռքն ու թափ

տալիս սիգարետի մոխիրը: Նայում է Էրիկին, մի քանի անգամ հազում, ծուխը ներս քաշում ու արտաշնչում:

-Պարոն, գիտե՞ք, թե ինչքան բան է փոխվել 1980-ից: Չեմ զարմանա, եթե պարզվի, որ տիկինը հեռացել է: Ախր վաղուց է եղել:

-Ուրեմն այստեղ տեղափոխվելուց հետո Յուտա Հայմի մասին չեք լսել, ճի՞շտ է:

-1980 թվականից Գերմանիան փոխվել է: Չեմ կարող ասել՝ մենք փոխվել ենք, թե ոչ: Շատ մարդիկ են տեղափոխվել: Ոմանց կյանքը դասավորվել է, մյուսներինը՝ ոչ: Մենք՝ թոշակառուներս, այնքան էլ լավ չենք ապրում: Օրինակ, հենց ես: Երբեք լավ գործ չեմ ունեցել: Մի ժամանակ աշխատում էի...

-Կներեք, որ նորից եմ հարցնում, բայց այն նամակները...

-Այստեղ արտասահմանից երբեք ոչ մի նամակ չի եկել:

-Անցած կամ նախանցած շաբաթ եւս մի նամակ եմ ուղարկել ձեր հասցեով, տիկի՛ն:

-Իսկապե՞ս: Գուցե հասել է Յուտա Հայմին: Ես այն չեմ ստացել:

-Բայց ախր Յուտա Հայմն այստեղ էր ապրում:

-Բայց ինչպես տեսնում եք, հիմա ես եմ ապրում: Միակ մարդը, որ այստեղ ապրել է ինձ հետ, դուստրս է: Դուստրս էլ վերջին տասնհինգ տարիներին այս տանը չի եղել, ու անունն էլ Յուտա Հայմ չէ: Որտեղի՞ց գիտեք Յուտա Հայմին:

-Ալեքսանդերպլացում եմ հանդիպել: Այնտեղ էր աշխատում: Մատուցողուհի էր:

-Ու գեղեցիկ էր, երկար շեկ մազերով:

-Ճիշտ է: Հիշու՞մ եք նրան:

-Չէ, հիմա այնքա՛ն շատ կանայք երկար շեկ մազեր ունեն:

-Ճիշտ որ:

-Ու մի օր նա աշխատանքից հետո ձեզ բերեց այստեղ:

-Այո, մենք եկանք այստեղ ու հաջորդ օրն էլ պիտի հանդիպեինք, բայց...

-Բայց չհանդիպեցիք: Հետաքրքիր է՝ ինչու՞: Ու սկսեցիք գրել նրան, բայց նա այդպես էլ չպատասխանեց:

-Ճիշտ է:

-Եվ հիմա եկել եք, որ գտնեք նրան:

-Ճիշտ է:

-Շատ չե՞ք ուշացել:

-Ճիշտն ասած՝ խոստացել էի, որ կվերադառնամ, բայց... բայց չվերադարձա:

-Ափսոս: Եթե շուտ գայիք, գուցե գտնեիք նրան: Հաստա՞տ սուրճ չեք ուզում:

Երկինքը մուգ կապույտ է: Ամպի ծվեն անգամ չկա, համարյա շոգ է: Բայց Էրիկը քայլում է գլուխը կախ, հայացքը հառած երկար, երկար մայթին, որը տանում է մեկը մյուսին հաջորդող մի քանի խաչմերուկի կողքով: Հետո ավտոբուս է նստում ու գլխի ընկնում, որ վերջին անգամ հենց այս փողոցով է քայլել: Գուցե Միլդրեդն իրավացի է: Ո՞վ գիտի, գուցե այս լայն աշխարհում, ինչ-որ տեղ, կա մի երիտասարդ, որն իր շարունակությունն է: Կամ երիտասարդ շիկահեր կին: Գուցե դա է պատճառը, որ նամակներն անպատասխան են մնացել: Անկե Ռոթն անընդհատ ասում էր, որ Մալթայից երբեք նամակներ չի ստացել: Ասաց, որ արձակուրդներին կցանկանար վերադառնալ Մալթա, որովհետեւ շատ է հավանում այնտեղի եղանակը: Եվ կրկնեց, թե չի ճանաչում Յուտա Հայմին: Ինչպես եւ Ալեքսանդրային: Այն օրը, երբ նրա հայրը մահացավ, ասաց, որ ուզում է Մալթա մեկնել արեւի ու ծովի համար: Իսկ Վալենտինան ասաց, որ մի օր կցանկանար վերադառնալ: Նելան՝ նույնպես: Ու Էրիկը սպասում էր, որ նրանցից մեկը կհայտնվի: Բայց մենակ մնաց: Ավելի ճիշտ՝ մենակ չէր, կային մարդիկ, ովքեր նրա կողքից ոչ մի տեղ չէին գնում: Օրինակ, Միլդրեդը, քույրը, իսկ հիմա՝ Մոնիկը:

Վաղուց մենակ ավտոբուս չէր նստել: Շատ վաղուց: Հիմա: Նելան՝ նույնպես: Նորությունը հայտնելուց հետո մի քանի անգամ գրեց, ու նամակները միշտ ավարտվում էին այսպես՝ «մինչ նոր հանդիպում»: Այս պահին չի հիշում, թե իրենցից ով առաջինը դադարեց նամակ գրել: Նույնիսկ հասցեն է մոռացել ու հավանաբար՝ նաեւ դեմքը:

Ավտոբուսի մեջ աչքերը փակ էին, բայց ժամանակ առ ժամանակ բացում էր, որ հասկանար, թե որտեղ է: Ալեքսանդերպլաց: Ալեքսանդերպլացը մարդաշատ էր. մարդիկ լուսանկարվում էին աշխարհի ժամացույցի առաջ: «Փարք Ինն» հյուրանոցի իր համարում նայում է պատուհանից, իսկ սիրտը տարօրինակ ռիթմեր է նվագում, որոնք վերջերս է սովորել: Լեզվի տակ փոքրիկ սպիտակ հաբ է դնում ու նստում բազկաթոռին, հայացքը դեպի դուրս, աչքերը փակ, սպասելով լուսաբացին, տարօրինակ հանդիպմանը, որը նշանակել է վերադարձի թռիչքից առաջ:

Երեւի արդեն արեւածագ է: Հիմա տեսնում է պատուհանը, որի միջով աղոտ մանուշակագույն լույս է ներս ընկնում: Լռություն: Կրծքավանդա-

կում ճնշումը թուլացել է: Նույն զգացողությունն է, ինչ այն ժամանակ, երբ վարագույրի հետեւից մի քանի քայլ հեռանում էր ու հասնում կուլիսներ, իսկ հետո՝ հանդերձարան, որտեղ վերջապես կարող էր հանել բեմական կոստյումն ու սրբել շպարը: Դռնից մի քանի քայլ այն կողմ մարդկանց մեծ խումբ է. քայլում են: Նա փակում է աչքերն ու հանգստանում: Հիմա լույսն ավելի գեղեցիկ երանգ ունի: Զգում է, ինչ-որ մեկը ներս է գալիս, մոտենում նրան: Շրջում է գլուխն ու տեսնում երիտասարդ բուժակին:

-Բարի լույս, պարո՛ն: Լա՞վ եք զգում: Ամեն ինչ կարգի՞ն է:

-Ավելի լավ:

-Ձեր դուստրն էր զանգել, ձեր մասին էր հարցնում: Դեռ չի անջատել, հարցնում է՝ տնից ինչ-որ բան պե՞տք է:

-Ե՞րբ եմ գնալու այստեղից:

-Դա պրոֆեսորն է որոշում: Ինչպե՞ս եք:

-Ավելի լավ:

-Հրաշալի է: Տնից ինչ-որ բան պե՞տք է:

-Ոչ: Նա գալու՞ է:

-Մոտ մեկ ժամից բժիշկները կգան՝ ձեզ հետազոտելու, լա՞վ:

-Ոչ, ուզում էի ասել՝ աղջիկս... աղջիկս գալու՞ է:

-Իհարկե գալու է: Բայց այս ժամին ոչ ոքի ներս չենք թողնում:

-Պիտի խոսեմ նրա հետ:

-Քիչ ավելի ուշ կգա, լա՞վ: Այցելությունները սկսվում են մոտավորապես կեսօրին: Նա կգա:

-Հիմա ժամը քանի՞սն է:

-Յոթն անց կես:

Գեղեցիկ օր է: Համենայն դեպս այդպես է թվում՝ դատելով պատուհանից ներս ընկնող լույսից: Շտապ հագնվում է եւ իջնում նախաճաշելու: Այսօր ավելի լավ է զգում, քան երեկ: Ցածր յուղայնությամբ կարագով տոստի մի քանի կտոր է վերցնում, մի քիչ հացահատկի փաթիլներ, մի բաժակ թեյ ու նարնջի հյութ: Նայում է Բեռլինի քարտեզին ու իր նշած վայրերին: Կարմիր նշանը մի քանի գիշեր առաջ է արել: Ծոցագրպանում մաքուր էջերով փոքրիկ նոթատետր ունի ու սրած մատիտ: Մի ժամ չանցած՝ տաքսին նրան հասցնում է մեծ շենքի մոտ: Մեքենայից դուրս գալուց առաջ վարորդին խնդրում է մի երկու ժամից իրեն վերցնել նույն տեղից: Երկու ժամը բավարար է: Հենց որ ներս է մտնում, սպան խնդրում է ինչ-որ փաստաթղթեր ցույց տալ: Էրիկ Սերին հանում է մուգ կարմիր անձնագիրը, ու սպան գրի է առնում Էրիկի տվյալները: Փաստաթուղթ է ստորագրում ու

հրահանգներ ստանում: Հսկայական սենյակ է՝ լայն պատուհաններով ու սպիտակ լույսով, ինչպես հիվանդասենյակում, որտեղ ստիպված է մոտ մեկուկես ժամ սպասել պրոֆեսոր Սավոնային: Ծերմակը քիչ է մնում կուրացնի նրան: Կատարյալ լռություն է: Քայլում է ուղիղ դեպի գրասեղանը, որի առջեւ նստած կինը բարի լույս է մաղթում: Էրիկն ասում է իր անունն ու մի տառ, որն ուրիշ ոչ ոքի ցույց չի տվել: Կինն Էրիկի անունը գրանցում է իր առաջ դրված համակարգչի մեջ:

-Ցավում եմ, բայց ոչնչով չենք կարող օգնել ձեզ: Ուզում եմ ասել, որոնել ենք ձեր անունը, բայց այն ոչ մի տեղ չկա:

-Վստա՞հ եք:

-Ձեր անունը չկա մեր գրացուցակի թղթապանակներից եւ ոչ մեկում: Նաեւ փորձեցինք գտնել անուններ, որոնք նման են ձեր անվանը, նույնիսկ մտածում էինք, որ գուցե սխալ ենք գրել, քանի որ ուրիշ երկրից եք, բայց միեւնույն է, չգտանք:

-Դա ի՞նչ է նշանակում:

-Նշանակում է, որ «Շտազի»-ում ձեր մասին տեղեկություններ չկան:

-Հնարավո՞ր է, որ կորած լինեն:

-Ամեն ինչ էլ հնարավոր է: Բայց ձեր նշած ժամանակ, երբ ըստ ձեզ եղել եք Բեռլինում, գրառումները շատ ուշադիր ու խնամքով էին կատարվում: Հազվադեպ է պատահում, որ ինչ-որ անձնական գործ կորչի: Կարող եմ միանգամայն վստահ ասել, որ «Շտազի»-ում ձեր մասին տեղեկություններ չկան:

-Իսկ Յուտա Հայմի մասի՞ն ինչ կասեք: Գտա՞ք նրա անունը:

-Այդտեղ էլ ուրիշ խնդիր կա, պարոն: Պահոցի կանոնները մեզ թույլ չեն տալիս տեղեկատվություն տրամադրել երրորդ անձին, բացառությամբ ժառանգների, այն էլ՝ մահվան դեպքում: Ի՞նչ կապ ունեք այդ անձնավորության հետ:

-Լսեք, տիկի՛ն, Յուտա Հայմի հետ ծանոթացել եմ Արեւելյան Բեռլինում, 1980 թվականին: 1980-ի մարտին: Դրանից հետո այլեւս երբեք չեմ տեսել:

-Շատերը չեն կարողանում կապ պահպանել իրենց ծանոթների հետ:

-Ճիշտ եք: Արդեն մի քանի տարի է, ինչ գրում եմ Յուտա Հայմին ու երբեք նրանից նամակ չեմ ստացել:

-Կան մարդիկ, որոնք չեն պատասխանում ստացած նամակներին:

-Դարձյալ ճիշտ եք: Բայց իմ նամակները հետ չէին գալիս: Երեկ անձամբ գնացի այն հասցեով, որտեղ ժամանակին ապրում էր Յուտա Հայմը. պարզվում է՝ հիմա այնտեղ ուրիշ մարդ է ապրում:

-Պարոն, մենք խոսում ենք մոտավորապես երեսունհինգ տարվա մասին: Մարդիկ հաճախ փոխում են իրենց բնակության վայրը:

-Ճիշտ է: Բայց ինչու՞ հիմա Յուտայի բնակարանում ապրող անձնավորությունը հետ չէր ուղարկում իմ նամակները:

-Գուցե պատռել է:

-Իսկ գուցե «Ծտազի»-ն է պահել դրանք:

-Մենք փնտրել ենք նաեւ տեղ չհասած նամակների պահոցում:

-Ե՞վ:

-Եվ ձեր անունը ոչ մի տեղ չկա: Մալթայից Բեռլին ուղարկված նամակներ այստեղ նույնպես չկան: Նշանակում է՝ նամակները հասել են հասցեատիրոջը:

-Բայց ես մի քանի շաբաթ առաջ էլ նամակ եմ ուղարկել այս նույն հասցեով, ու այն կարծես թե տեղ չի հասել: Կնոջ հետ, որը հիմա ապրում է այստեղ... երեկ անձամբ խոսեցի... եթե այդպիսի բան լիներ, կասեր, չէ՞:

-Պարոն, հնարավոր է, որ անձնավորությունը, որին գրել եք, ինչ-որ պայմանավորվածություն ունի փոստատան հետ, եւ փոստատունը նամակներն ուղարկում է նոր հասցեով: Այդ դեպքում չենք կարող օգնել ձեզ: Վախենամ՝ նույնիսկ փոստատունը չկարողանա օգնել գաղտնիության կանոնների պատճառով:

-Բայց գոնե կարո՞ղ եք ասել, այդ անունը, Յուտա Հայմ անունը կա՞ ձեր պահոցի որեւէ թղթապանակում: Խնդրում եմ, փորձեք մտնել իմ դրության մեջ, տիկի՛ն. ես հիվանդ եմ, շուտով մեռնելու եմ ու կյանքին հրաժեշտ տալուց առաջ կցանկանայի գտնել այս մարդուն: Ուրիշ երկրից հատուկ եկել եմ նրան գտնելու, ու համոզված եմ, որ ինչ-որ տեղ պետք է որ փաստաթղթեր լինեն նրա ու իմ մասին:

-Պարոն, ներեցեք, որ հարցնում եմ, ինչու՞ եք այդքան վստահ, որ ձեր մասին թղթապանակ կա: Երբ 1980 թվականին Բեռլին եկաք, գործո՞վ էիք եկել, թե՞ դիվանագիտական առաքելությամբ:

-Ոչ:

-Այդ դեպքում ո՞րն էր ձեր այցի նպատակը:

-Հանգստանալու էի եկել:

-Իսկ Միսս Հայմն ի՞նչ կապ ունի այս պատմության հետ: Նկատի ունեմ՝ այստեղ գալուց առաջ ճանաչու՞մ էիք նրան:

-Ոչ, ոչ, այստեղ ենք հանդիպել:

-Դե, ամեն ինչ կախված է նաեւ նրանից, թե որքան ժամանակ եք շփվել: Որքա՞ն ժամանակ եք ճանաչել իրար:

Դա միակ գիշերն էր Բեռլինում, որ կիսեցին երկուսով: Մարտ ամիսն էր: Էրիկը նստած էր սրճարանում, երբ տեսավ կնոջը, որը որպեներ անց գրավեց նրա սիրտը: Նկատեց, որ կինն էլ մի քանի անգամ իր կողմ նայեց, ուստի սպասեց՝ իրար վրա մի քանի բաժակ վատ սուրճ խմելով: Մարտ ամիսն էր: Ալեքսանդերպլացում ցուրտ էր, գորշ ու տխուր: Հետո մի քիչ համարձակություն հավաքեց ու հարցրեց նրա անունը: Ահա այսպես սկսվեց ուղեւորությունը դեպի Մարցան, ութերորդ հարկի բնակարան, բազմոց-մահճակալ, դեպի կինը, որին տեսնելու էր վերջին անգամ, երբ նա շտապ-շտապ կանցներ Ալեքսանդերպլացը՝ նույն ճանապարհով, որ անցել էր նախորդ գիշեր, միայն թե այս անգամ՝ առանց Էրիկի:

-Պարո՛ն, հասկանում եմ ձեր ցանկությունը, բայց ձեր մասին այստեղ տեղեկություններ չկան: «Շտազին» զարմանալիորեն արդյունավետ գործիք է. դժվար է հավատալ, բայց այստեղ տեղեկություններ են պահվում բոլոր զբոսաշրջիկների մասին: Եվ նաեւ, եթե ճիշտ եմ հասկանում, դուք այդ անձնավորությանը միայն մեկ անգամ եք տեսել:

-Այո, բայց այդ մի հանդիպումից հետո շարունակել ենք նամակագրությունը... դե, այսինքն, ես եմ շարունակել: Ու չգիտեմ, թե նամակներն ուր են գնացել:

-Դրանք հաստատ մեր պահոցներում չեն: Ձեր նամակները չեն պահպանվել «Շտազիում»: Ձեր հասցեն այստեղ գրանցված չէ:

-Ուրեմն երբեք կասկած չի ծագել, որ ոչ կոմունիստական երկրից ինչ-որ մեկը կանոնավոր կերպով գրում է Բեռլինում ապրող մի անձնավորության:

-Փաստորեն՝ ոչ:

-Բայց հնարավոր է, որ Յուտա Հայմի անունով տվյալների թղթապանակ կա, եւ իմ նամակները հայտնվել են այնտեղ, այլ ոչ թե իմ անվան տակ:

-Յուտա Հայմը ձեզ հետ կապ չունի, մենք չենք կարող նրա մասին տեղեկատվություն տրամադրել ձեզ: Ինչու՞ եք կարծում, որ «Շտազին» կարող էր կապ ունենալ ձեր պատմության հետ:

Երկու սեղան այն կողմ՝ իր դիմաց, նստած է մոխրագույն կոստյումով մի տղամարդ: Նա ուշադրություն չի դարձնում Էրիկին եւ կենտրոնանում է միայն, երբ Յուտա Հայմը շտապ քայլում է Ալեքսանդերպլացով մի ուրիշ երիտասարդ կնոջ հետ, հետո փորձում է ավելի արագ քայլել, որ հասնի նրան:

-Պարոն, միայն «Շտազիի» պաշտոնյաները չէ, որ մոխրագույն համազգեստ են հագնում: Չեմ կարող վստահ ասել, որ ձեր տեսած մարդը «Շտա-

զիի» սպա չի եղել: Պարզապես տեղեկացնում եմ, որ ձեր անունը չկա մեր պահոցում:

-Բայց նամակներս...

-Այդ հարցում չենք կարող օգտակար լինել ձեզ, պարոն: Գուցե հարցնեք ձեր փոստային ծառայությունում, բայց, ինչպես ասացի, հասցեների մասին նրանք տեղեկատվություն չեն տրամադրում: Վստա՞հ եք, որ նամակները դուրս են եկել Մալթայից:

-Իհարկե վստահ եմ:

Սիրտը: Այդ պահին զգում է, որ սիրտը նորից խաղում է: Քունքերը խոնավ են, ու վերջին նախադասությունը մեծ ջանքով է արտաբերում. հավանաբար այդ պատճառով էլ բարձր է խոսում, որովհետեւ իր դիմաց նստած կինը նշան է անում, որ չաղմկի: Այս բարձրահարկ շենքը, հսկայական սրահը, որտեղ փոքրիկ մարդիկ թաքնվում են սեղանների հետեւում, լուռ, ամեն ինչ լուռ է, ինչպես Ալեքսանդերպլացն այն օրը:

-Տիկին, չգիտեմ՝ կարողանու՞մ եմ ասելիքս հստակ ասել: Սա կնոջը գտնելու իմ վերջին հնարավորությունն է: Մի բան հաստատ գիտեմ. առողջությունս թույլ չի տա, որ նորից Գերմանիա վերադառնամ: Ես այստեղ եմ եկել, չնայած բժիշկներս արգելում էին, թույլ չէին տալիս ճանապարհորդել: Միակ խնդրանքս է, որ մի քիչ հասկանաք ինձ, մի քիչ օգնեք:

Կնոջ աչքերը, որոնք մոխրագույն են թվում, անհաղորդ նայում են նրան: Նկատում են շուրթերի թեթեւ դողը, նկատում են, որ ճակատը խոնավացել է, ու հանկարծ արցունքներ են հայտնվում: Նրա առաջ շփոթված տղամարդ է, որը չի կողմնորոշվում, թե ինչ անի ու հերթով արձակում է վերնաշապիկի կոճակները: Հետո աչքերը թեքվում են դեպի համակարգչի էկրանը:

-Լսեք, պարոն, ես ձեզ համար բացառություն կանեմ ու կխնդրեմ, որ ոչ ոքի չասեք: Չեմ կարող տեղեկատվություն տրամադրել երրորդ անձի մասին, բայց ուզում եմ, որ հանգիստ լինեք եւ իմանաք, որ ձեզ երբեք չեն լրտեսել, եթե դա է ձեզ անհանգստացնում: Բացի այդ, մենք մեր գրանցամատյանում փնտրել ենք Յուտա Հայմ անունը: Փնտրել ենք այն մարդկանց ցուցակում, ովքեր աշխատել են «Շտազիի» համար, աշխատել են «Շտազիի» հետ, նրանց ցուցակում, ում «Շտազին» հետեւել է: Կոնկրետ այս դեպքի համար ես լուրջ բացառություն եմ անում: Յուտա Հայմ անունը չկա ցուցակներից եւ ոչ մեկում: Այստեղ պահվող ոչ մի փաստաթղթում այդ անունը չկա:

-Դա ի՞նչ է նշանակում:

-Նշանակում է, որ Յուտա Հայմը ոչ մի կապ չի ունեցել «Շտազիի» հետ՝

ոչ որպես գործընկեր, ոչ որպես տուժող: Յուտա Հայմ գոյություն չունի:

Էրիկ Սերին քայլում է Ալեքսանդերպլացի կենտրոնով: Ամբողջ օրը քայլել է: Քայլել է լայմի ծառերի շարքի տակ, հասել արցունքների պալատին՝ երկաթուղային կայարանին, հսկայական դռնից ներս մտել, քայլելանցել մոխրագույն լաբիրինթոսով, որն արձագանքում է գազով թունավորվածների համր ճիչերը, քայլել այստեղ, այնտեղ ու այլուր՝ անցնելով մարդկանց կողքով, որոնց նույնիսկ չէր նկատում: Կամ լսում: Մի պահ պատրաստվում էր հանել բաճկոնը. սպիտակ վերնաշապիկը կպել էր մարմնին. թեեւ արեւը ջերմ էր, բայց շատ տաք չէր: Քայլում էր այնպես, ասես տուն էր գնում. թեքվում էր անկյուններում՝ ուշադրություն չդարձնելով փողոցների անուններին, չնայելով ձեռքի քարտեզին: Ու հետո հանկարծ հայտնվեց այստեղ, Ալեքսանդերպլացում. հիմա մանր անձրեւ էր մաղում, ու մարդիկ, որոնք վերջապես սկսել էին երեւալ, բացել էին անձրեւանոցները: Ինքն անձրեւանոց չուներ, բայց մի՞թե դա կարեւոր է: Ոչինչ այլեւս կարեւոր չէ: Մինչ այս պահն ամեն ինչ այնքա՛ն հեշտ էր: Հիմա նույնիսկ շնչելն է դժվարացել: Ոտքերը ցավում են, բայց գիտի, որ շատ է քայլել, անտանելի՛ շատ: Կգնա իր սենյակ, կփռվի բազկաթոռին ու կնայի հրապարակին, կամ աչքերը կփակի ու կքնի: Մի ժամանակ հաճախ էր հարցնում իրեն, թե արդյոք երբեւէ դժվարությունների հանդիպե՞լ է կյանքում, արդյոք հնարավո՞ր է, որ ամեն ինչ միշտ այսքան հեշտ դասավորվի: Ահա եւ պատասխանը: Իրականում պատասխանը տվեց մոխրագույն աչքերով այն աղջիկը, որի հաստ շուրթերն արտաբերեցին մի նախադասություն, որն ինքն անգամ երազում չէր պատկերացնի. «Յուտա Հայմ գոյություն չունի»: Նկատում է, թե գնչուհին, որի երեխաները քայլում են նրա ստվերում, ինչպես է ներս մտնում, սրճարանի սեղաններից հավաքում շաքարի փաթեթներն ու բաժանում երեխաներին. նրանք պատռում են թուղթը, լեզուները մտցնում ու լպստում: Լսում է մի ձայն, որն ասում է. «Մի փոքր փաթեթ սառնաշաքար ունեմ, արի գցենք սուրճի մեջ: Մեկը ես, մեկը դու: Երկար չմնաս, թե չէ կմրսես»: Հիվանդանալու է. մազերը թրջվել են անձրեւից: Մրսելու է. հագին միայն բարակ վերնաշապիկ է, վրայից՝ բաճկոն: Մրսելու է հրապարակում: Նա ժպտում է, զգում կնոջ համբույրը, զգում, թե ինչպես է մեկնել թեւը, որ շոշափի ու գտնի ծխախոտի տուփը: Լուցկին վառվում է կնոջ դեմքի դիմաց, ու խավարի մեջ լսվում է, թե նա ինչպես է արտաշնչում ծուխը, մինչ Էրիկը շոյում է նրա մերկ, թմբլիկ ուսը: Երբ մտնում է հյուրանոց, շրջվում է, որ նայի հրապարակին, որտեղ Մարիոնը զրուցում է պարոն Մագրիի հետ. Մարիոնի ձեռքին կանոլիի տուփ է: Փո-

ղոցի մյուս ծայրին երեւում է Բելան, հետույքը թափահարելով, իսկ ակումբի տղամարդիկ դուրս են գալիս աստիճանների վրա, որ նայեն նրան, ու մի քանիսը նույնիսկ սուլում են: Քայլում է նա, ու աչքերը հոգնածությունից փակվում են: Հանում է հագուստը, նստում բազկաթոռին ու մինչ կփակի աչքերը, տեսնում է մեծ բաճկոնը, որը կախած է ճաղատ Լիզայի վրա: Լիզան կանգնած է մուտքի դռան մոտ: Մոտենում է Տանյա Բարտոլոն, որի դեմքին դեռ պահպանվել է շպարը: Հիմա փակում է աչքերը, որ մի քիչ հանգստանա: Շուտով լույսը կբացվի, իսկ Վալենտինան ասում է, որ լավ կլինի՝ նա մի քիչ քնի, ու նրան թողնում է թղթի մի կտոր, որի վրա գրված է Նելայի համարը. Նելան ներքեւում սպասում է իրեն կարմիր «Ֆիատ Ունոյով»: Բայց Էրիկը չի իջնում նրա մոտ: Մնում է, սպասում երիտասարդ կնոջը, որի երկար մազերի մեջ փոքրիկ երիցուկներ կան, ու երբ շրջվում է, ժպտում է Էրիկին ու ասում, որ անունն Ալեքսանդրա է: Աչքերն այնքան են ծանրացել, կոպերը կախվում են, ու այնքա՛ն ծանր են, որ նույնիսկ բացել չի կարող:

-Հայրի՛կ: Հայրի՛կ:

Հաստատ Միլդրեդն է: Միլդրեդից բացի նրան ոչ ոք հայրիկ չի կոչում: Երանի կարողանար բացել աչքերն ու տեսնել նրան: Ճա՛տ կուզեր, բայց չի կարող:

-Հայրիկ, ո՞նց ես:

Նույնիսկ շուրթերը չի կարող շարժել: Իսկապես կուզեր պատմել Միլդրեդին: Պատմել նրան, որ նույնիսկ «Ծտազիի» պահոցներում նրա հետքը չգտավ: Կուզեր պատմել, որ մոխրագույն աչքերով աղջիկն իրեն ասաց, որ Յուտա Հայմ գոյություն չունի: Բայց չի կարողանում շարժել ոչ աչքերը, ոչ շուրթերը: Որովհետեւ քնած է: Շատ է քայլել: Չափից շատ: Պրոֆեսոր Սավոնան ասաց, որ ամեն ինչ սրտին մուտ չընդունի, զբոսնի, բայց ոչ այդքան շատ: Շատ է քայլել ու հիմա հոգնած է, այդքան բան: Պիտի քնի, թեեւ շատ կուզեր բացել աչքերն ու բերանը ու պատմել Միլդրեդին:

-Չե՞ս կարող խոսել ինձ հետ, հայրիկ: Մոնիկն այստեղ է: Չե՞ս ուզում բարեւել: Մոնիկն այստեղ է, հորաքույր Թեսը՝ նույնպես: Բարեւի՛ր, հայրիկ:

Ախ, այո, Մոնիկը: Մոնիկն էլ պիտի իմանա, որ Յուտա Հայմը գոյություն չունի: Ի դեպ, Թեսի, սիրելի՛ քույրիկ, վերադարձել եմ, տեսնու՞մ ես: Մի օր քո տուն կգամ, սուրճ կխմենք, կզրուցենք մայրիկի ու հայրիկի մասին: Խոսելու շատ բան կա, հատկապես հայրիկի մասին: Բայց մայրիկից էլ կուզեի խոսել: Խե՛ղճ կին, նրան երբեք ոչ ոք ուշադրություն չէր դարձնում. միշտ փակված էր իր խոհանոցում, իսկ մենք նրան չէինք նկատում, ճի՞շտ

է: Տանն ամեն ինչ հայրիկի շուրջ էր պտտվում: Նրա մասին էլ կխոսենք, Թես. խե՛ղճ կին, նա ավելի մեծ ուշադրության էր արժանի, չէ՞: Մի օր քո տուն կգամ, Թե՛ս: Շատ նեղություն չքաշես, միայն մի գավաթ սուրճ, որովհետեւ ոչ ոք քեզ պես սուրճ չի եփում, Թե՛ս: Ու կզրուցենք այն մարդկանց մասին, որոնք մի ժամանակ ապրում էին մեր փողոցում: Հիշու՞մ ես Մարիոնին՝ տարրական դասարանների ուսուցչին: Այո, նա Կաթոլիկ շարժման անդամ էր: Եվ Բելան: Այդպես էլ երբեք չհասկացա՞ր, թե Բելան ուր գնաց այդ գիշեր: Գիտես, Թես, դու շատ միամիտ ես: Գիտես, մի ժամանակ նա Վալետայում էր: Հիմա պիտի մի քիչ քնեմ, Թես, բայց վաղը կամ ամենաուշը մյուս օրը կգամ մեր տուն:

-Էրիկ, ինչպե՞ս ես, քալբի:

Հաստատ Մոնիկն է: Միայն նա է Էրիկին քալբի անվանում: Մի քիչ քունս է տանում, Մոնիկ, այդքան բան:

-Էրիկ, ճանաչու՞մ ես ինձ, քալբի:

-Մոնիկն այստեղ է, հայրի՛կ, խոսում է քեզ հետ: Լսու՞մ ես նրան:

-Էրիկ: Էրի՛կ, լսու՞մ ես մեզ: Ես սիրում եմ քեզ, Էրիկ, գիտե՞ս: Գիտե՞ս: Մենք այստեղ ենք՝ Միլդրեդը, Թեսին ու ես: Կանգնած ենք քո կողքին, Էրի՛կ:

Հիմա պառկած եմ: Ուժասպառ եմ: Լույսերը մարում են: Աչքերս փակվում են: Շարժվել չեմ կարող: Մնացածը լռություն է: Ինձնից ոչ հեռու, հենց կողքիս ոտնաձայներ եմ լսում: Հորացիոն բարձրացնում է ձայնը. «Մի ազնիվ սիրտ պայթեց: Բարի գիշեր քեզ, անուշիկ իշխան: Թող հրեշտակների դասեր խմբովին քեզ հանգիստ երգեն»[19]:

Քիչ անց լույսերը մարում են: Մնացյալը լռություն է: Հետո լսվում են ծափահարություններ, վառ լույսերը դարձյալ միանում են: Ես նայում եմ դահլիճում ծափահարող հանդիսատեսին, լայն բացում թեւերս ու խոնարհվում:

Էրիկ Սերին մահացավ 2013 թվականի սեպտեմբերի 1-ին, սրտի կաթվածից: Հուղարկավորությունը տեղի ունեցավ երկու օր հետո, Աթարդի Սուրբ Մարիամ եկեղեցում: Նա թաղված է Ադդոլորաթայի ընտանեկան գերեզմանոցում: Այն օրը, երբ հայտարարվեց նրա մահվան լուրը, ինչ-որ մեկը ստեղծեց ֆեյսբուքյան էջ՝ www.facebook.com/farewellerikxerri, որը շուտով ողողվեց նրա հարազատներին ուղղված ցավակցական հաղորդագրություններով եւ նրա թատերական կարիերայի վերաբերյալ կարծիքներով: Մշակույթի նախարարությունը հանդես եկավ հայտարարությամբ՝ սգալով երկրի թատերական պատմության մեծագույն արտիստներից մեկի կորուստը: Հուղարկավորությանը ներկա էին մեծ թվով մարդիկ, հատկապես դերասաններ ու արտիստներ, ինչպես նաեւ վարչապետը՝ կառավարության այլ անդամների հետ: Որոշ հեռուստատեսային ալիքներ հատուկ հաղորդումներ եւ վավերագրական ֆիլմեր են հեռարձակում նրա կարիերայի մասին:

Ալեքսանդրա Ուոլքոթ Սերին ապրում է Անգլիայի Չեսթեր քաղաքում եւ ամեն տարի բավական երկար ժամանակ է անցկացնում ընկերոջ հետ Պալմա դե Մայորկայում: Էրիկ Սերիի հուղարկավորության օրը նա արտասահմանում էր եւ Սերիի մահվան մասին իմացավ միայն մեկ շաբաթ անց:

Մոնիկ Գաթը ներկրող ընկերության ղեկավար է, որը մասնագիտացած է օծանելիքի եւ բարձրակարգ կոսմետիկայի ոլորտում: Էրիկ Սերիի հուղարկավորության հաջորդ օրը նա հարցազրույց տվեց պետական հեռուստաընկերությանը, որտեղ խոսեց Էրիկի վերջին ամիսների մասին: Ներկայում աշխատում է Սերիի կենսագրության վրա:

Միլդրեդ Սավրիդիս Սերին հոր մահից չորս ամիս անց ամուսնացավ կիպրացի ձեռնարկատիրոջ հետ: Ունի դուստր՝ Էլլա անունով, իսկ Դեմետրիս Սավրիդիսի հետ ամուսնությունից որդի ունի: Այժմ նրանք ապրում են Լիմասոլում: Ամեն տարի նա հորաքրոջ հետ մի քանի օր է անցկացնում Մալթայում, իսկ մոր՝ Ալեքսանդրայի հետ՝ Չեսթերում:

Թերեսա, Թեսի Սերին այդպես էլ չամուսնացավ եւ մինչ օրս ապրում է հայրական տանը: Երկու շաբաթը մեկ այցելում է ընտանեկան գերեզմանոց՝ մոմ վառելու եւ ծաղկեջուղջ դնելու:

Լիզա Օվերգաարդը հուղարկավորվել է ընտանեկան գերեզմանոցում՝ նույն հատվածում, որտեղ հուղարկավորված է Էրիկ Սերին: Նրա մահից հետո գտնվեցին կարճ նամակներ ու բացիկներ, որոնք հասցեագրված էին նրան նույն Էրիկ Սերիի կողմից. նրա դուստրը՝ Լաուրան, Սերիի մահից հետո նամակները փոխանցեց դերասանի ընտանիքին:

Վալենտինա Ռուսոն մահացավ ավտովթարից 12 տեղանոց մինիավտոբուսով Միլանի մոտակա գյուղ գնալու ճանապարհին: Դժբախտ պատահարի հետաքննության արդյունքում պարզ դարձավ, որ տրանսպորտային միջոցի արգելակները խափանվել էին, եւ այն բախվել էր արգելապատնեշին: Բոլոր ուղեւորներին, այդ թվում եւ վարորդին, տեղափոխեցին հիվանդանոց. պատահարի միակ զոհը նա էր:

Նելա Սանտագատան շարունակեց ապրել Սիրակուզայի մոտակայքում. նա ապահովագրական ընկերության հաշվապահ էր: Պարզ չէ, թե արդյոք իմացել է Էրիկ Սերիի մահվան մասին:

Տանյա Բարտոլոն թատերական երկարատեւ կարիերայից եւ մի շարք անհաջող սիրավեպերից հետո տեղափոխվեց փոքր բնակարան, որտեղ հեռուստացույց չկար: Նրան վերջին անգամ բեմ հրավիրեցին «Բեռնարդա Ալբայի տունը» ներկայացման համար, որտեղ նա Բեռնարդայի դերն էր խաղում: Նա ժամանակն անցկացնում է համացանցում, զրուցում է պատահական մարդկանց հետ ու ճգնակյացի կյանք վարում: Վերջին անգամ Էրիկ Սերիին տեսել է նախընտրական վահանակի վրա, հիվանդանոցի ճանապարհին, ուր երկու ամիսը մեկ գնում է՝ աչքերը բուժելու:

Մարիոն Պիզանին գյուղի տարրական դպրոցի ուսուցչի իր երկարատեւ կարիերայից հետո վաթսուն տարեկանում թոշակի անցավ: Շատ ակտիվ էր համայնքում ու մահից մեկ շաբաթ առաջ Աստվածաշունչ էր ընթերցում տեղի ծխական եկեղեցում, պատարագի ժամանակ: Մահացավ Մատեր Դեի հիվանդանոցում, կարճատեւ հիվանդությունից հետո:

Բելա Ֆալցոնը երկու երեխա ուներ երկու տարբեր տղամարդկանցից: Ավագը մահացավ տասնինը տարեկանում, ավտովթարից: Երբ դադարեց աշխատել Վալետայում, որոշ ժամանակ եկեղեցու դպրոցում աշխատում էր որպես մաքրուհի: Մահացավ 2003 թվականին:

Ծանոթագրություններ

1. Սոֆոկլես: Ողբերգություններ: Հին հունարենից թարգմանությունը, առաջաբանը եւ ծանոթագրությունները՝ Ա.Թոփչյան: Խմբագիր՝ Գ.Մուրադյան: Գրախոս.՝ Հ.Էդոյան.- Երեւան: Զանգակ, 2016.- 320 էջ:

2. «Պաշտում ենք քեզ, օ՛ աստվածային հաց, սուրբ սիրո պտուղ». Դուն Կարմ Պսալիայի օրհներգից:

3. «Մայիսյան քաղցրիկ առավոտներ». Մարիամ Աստվածածնին նվիրված օրհներգ, որ երգում էին մայիս ամսին:

4. Գյուղական ակումբ, որը ծառայում էր միաժամանակ որպես հասարակական վայր եւ տեղի փողային նվագախմբի գրասենյակ: Այդպիսի ակումբները հաճախ անվանում էին tal-Istilla, Աստղ:

5. Il-Helsien, «Ազատություն», ձախական թերթ, որը համակրում էր Աշխատավորական կուսակցությանը:

6. Վերին եւ Ներքին Բարակաները հանրային այգիներ են, որտեղից բացվում է Վալետա նավահանգստի տեսարանը:

7. It-Torca, «Ցահը», Մալթայի աշխատավորական կուսակցության թերթը:

8. Rai Uno, իտալական պետական հեռարձակողի հեռուստատեսային ալիքներից մեկը:

9. Is-Salvatur. «Փրկիչը». աջակիցները հաճախ այդպես էին դիմում Դոմինիկ Մինտոֆին. 1949-1984 թթ. նա Աշխատավորական կուսակցության առաջնորդն էր, 1955-1958թթ., իսկ հետո դարձյալ 1971-1984թթ.՝ Մալթայի վարչապետը:

10. Lehen is-Sewwa. «Ճշմարտության ձայնը». պահպանողական կաթոլիկ թերթ:

11. Իբսեն Հ. Պիեսներ/ Ռուսերենից թարգմանեց՝ Ս.Պայազատ: Երեւան: «Հայաստան» հրատ., 1968: Էջ 119:

12. Իբսեն Հ. Պիեսներ/ Ռուսերենից թարգմանեց՝ Ս.Պայազատ: Երեւան: «Հայաստան» հրատ., 1968: Էջ 124-125:

13. «Գուցե էլ երբեք չհանդիպենք, ամեն մեկս իր խնդիրներով, ամեն մեկս իր ճանապարհով: Ճանապարհները տարբեր են, ու ամեն ոք կորչում է իր պատմության մեջ» (Վասկե Ռոսսի, «Ռոքսի բար»):

14. ԷՍԳ-էլեկտրասրտագրություն:

15. Քալբի - արաբ.՝ իմ սիրտ:

16. Գերմ.՝ Դուք լքում եք ամերիկյան հատվածը:

17. Շեքսպիր, «Մակբեթ», Արարված հինգերորդ, Տեսարան հինգերորդ: Թարգմ.՝ Հովի. Մասեհյանի:

18. Շեքսպիր, «Մակբեթ», Արարված հինգերորդ, Տեսարան հինգերորդ: Թարգմ.՝ Հովի. Մասեհյանի:

19. Շեքսպիր: Համլետ: Թարգմ.՝ Հովի.Մասեհյանի:

Հեղինակի մասին

Իմանուել Միֆսուդը ծնվել է 1967թ.: Հրատարակել է պատմվածքների մի քանի ժողովածու, վեպեր ու բանաստեղծական ժողովածուներ: 2002թ. նրա պատմվածքների գիրքը արձակի ժանրում արժանացել է Գրքի ազգային մրցանակի: 2015թ. «Յուտա Հայմ» վեպն արժանացել է նույն մրցանակին. ինքնադիտողական այս վեպը պատմում է 1980-ականներին Բեռլինում մի անհետացման, իդեալիստական սիրո ու ծերացող մարդու տառապանքների մասին, որը սիրել ու հավատացած էր, որ սերը փոխադարձ է եղել: Հետագայում վեպը հրատարակվել է սլովեներեն, արաբերեն, սերբերեն, ռումիներեն: 2014թ. Միֆսուդը Գրքի ազգային մրցանակի է արժանացել պոեզիայի ժանրում՝ «Պենելոպեն սպասում է» գրքի համար, որն Անգլիայում հրատարակել է «Արք», իսկ Ռումինիայում՝ «Էդիտուրա Մաքս Բլեչեր» հրատարակչությունը: 2017թ. նրա «Ձուկ» վեպը հրատարակվել է Սերբիայում, ապա նաեւ Սլովենիայում եւ Եգիպտոսում: Նա առաջին մալթացի գրողն է, որն իր «Հանուն հոր (եւ որդու)» գրքի համար արժանացել է գրականության ոլորտում Եվրոպական Միության մրցանակի: Գիրքը հրատարակվել է անգլերեն(Parthian), ֆրանսերեն(Gallimard), ռումիներեն(Polirom), չեխերեն(Vetrne Mylny), մակեդոներեն(Goten Publishers), արաբերեն(Masr El Arabia), սերբերեն(Kontrast) եւ ալբաներեն(Fa Noli):

2020թ. երկու տարբեր հրատարակչություններ արաբերեն հրատարակել են հեղինակի երկու նոր գիրքը՝ պոեզիայի ամբողջական ժողովածուն եւ պատմվածքների ընտրանին, իսկ ԵՄ մրցանակակիր գիրքը կհրատարակվի Խորվաթիայում: Միֆսուդի վերջին գործերից են «Երկնքից մոտ երկուսուկես ժամ հեռու» բանաստեղծական ժողովածուն (Klabb Kotba Maltin, 2019թ.) եւ «Լավագույն ժամանակներ» քաղաքական էսսեների ժողովածուն (Klabb Kotba Maltin, 2019):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Յուտա Հայմ 5

Հեղինակի մասին 135

Իմանուել ՄԻՖՍՈՒԴ

ՅՈՒՏԱ ՀԱՅՄ

Անգլերենից թարգմանությունը՝
Աստղիկ ԱԹԱԲԵԿՅԱՆԻ

Մալթերենից անգլերեն թարգմանությունը՝
Ալբերտ ԳԱՏԻ

Ստեփանակերտ 2021

Հրատ. խմբագիր՝ Հ. Ալեքսանյան
Սրբագրիչ՝ Ա. Գրիգորյան
Էջադրումը՝ Թ. Հարությունյանի
Կազմի ձեւավորումը՝ Ա.Խաչատրյանի

Թուղթը՝ օֆսեթ, չափը՝ 60x84 1/16: Ծավալը՝ 9 տպ. մամուլ
Տպաքանակը՝ 500:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում
ԼՂՀ, Ստեփանակերտ, Հ. Հակոբյան 25

«ԳԵՂarm» հանդեսի մատենաշարով լույս են տեսել

«Թատերախաղեր Արեւմտյան գրականությունից» - 2010
Իոսիֆ Բրոդսկի. «Տեղատարափի շաչյունը» - 2011
Մ. Բախտին. «Դոստոեւսկու պոետիկայի խնդիրները» - 2012
«Սիրիուսի սրնգահարները»/Վ.Խլեբնիկով, Ն.Գումիլյով,
Վ.Խոդասեւիչ/ - 2012
Սերգեյ Դովլաթով. «Միայնակների երթը» - 2012
Յուրի Լոտման. «Միֆ.Անուն.Մշակույթ» - 2012
Վառլամ Շալամով. «Կոլիմյան պատմվածքներ»- 2012
Ժարկո Միլենիչ. «Լեոնը՝ հրաշագործի աշակերտը»- 2013
Պավել Ֆլորենսկի. «Իկոնոստաս» - 2014
Ռուս կոնցեպտուալ պոեզիա/ Դ.Պրիգով, Վ.Նեկրասով,
Լ.Ռուբինշտեյն/ - 2014
Հենրիխ Սապգիր. «Ջուգահեռ մարդը» - 2014
Վասիլի Գրոսման. «Կյանք եւ ճակատագիր» - 2014
«Կամուրջների խռովությունը.
մետամետաֆորիստներ» - 2015
Ալեքսանդր Սոլժենիցին. «Մատրյոնայի կալվածքը»- 2015
Անդրեյ Պլատոնով. «Չեւենգուր. Գուբը.
Պատմվածքներ» - 2015
Արդի ռուսական վերլիբռ (անթոլոգիա) - 2015
Չինաստանի մշակույթի քրեստոմատիա - 2015
Ջիդի Մաջիա. «Հրեղեն խոսքեր» - 2015
Մա Քայ. «Սրտի արձագանքներ» - 2015
Եվգենի Վոդոլազկին. «Լավր» - 2015

Քայ Տյանսին. «Խաղաղ կյանքի երգը» - 2015
Ռուս այլախոհական պոեզիա (անթոլոգիա) - 2015
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 1) - 2016
Յու Ջիան. «Անձրեւից պատսպարվող թռչունը» - 2016
Պավել Բասինսկի. «Լեւ Տոլստոյ.
Փախուստ դրախտից» - 2016
Չժան Ցզի-յան. «Երազ ծովի մասին» - 2016
Վան Ջենչկի. «Երիտասարդ վանականի սիրո
պատմությունը» - 2016
Լյուդմիլա Պետրուշեւսկայա. «Սեր. երջանկություն.
ռեքվիեմ» - 2016
Անդրեյ Բելի. «Պետերբուրգ» - 2016
«Դիկոռոսներ. Անհայտ պոետների ապաստան»
(անթոլոգիա) - 2016
Ռուս մինիմալիստներ (անթոլոգիա) - 2016
Իձյե Թան. «Կոնֆուցիականությունը, ուղղայականությունը,
դաոսիզմը, քրիստոնեությունը եւ չինական
մշակույթը» - 2016
Սյուն Ճի-ի. «Երկնային կամուրջը» - 2016
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 2 եւ 3) - 2016
Դոնգ Քիանգ. «Ամուսնություն» - 2017
Դոնգ Քիանգ. «Կացարաններ» - 2017
Ինգեբորգ Բախման. «30-րդ տարին» - 2017
Ջիդի Մաջիա. «Ընձառյուծից մինչեւ Մայակովսկի» - 2017
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 4) - 2017

Անդրեյ Վոլոս. «Վերադարձ Փանջիռուդ» - 2017
Դոնգ Քիանգ. «Թաղում» - 2017
Դոնգ Քիանգ. «Փառատոներ» - 2017
Դոնգ Քիանգ. «Ուտեստներ» - 2017

Սյաո Ցյան. «Վիշապի մորուքներն ընդդեմ նախագծերի» - 2017
Ուան Ցուոլիան. «Մերձակցության աստիճաններ» - 2017
Ֆյոդոր Սոլոգուբ. «Ցնչադեւը» - 2018
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ (հատոր 5) - 2018
Ու Չուն. «Չինական մշակույթ. փիլիսոփայություն» -2018
Ուեյսին Սյուընն, Սյուն Ճու. «Չինաստանի յուրահատկությունները: Չինաստանի համաշխարհային ժառանգությունը»- 2018
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ (հատոր 6) - 2018
Աղի ձայնը (20-րդ դարի հետուբսունական թվականների սերնդի չին գրողների պատմվածքներ) -2019
20-րդ դարի ռուսական պատմվածք (անթոլոգիա) - 2019
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ (հատոր 7) - 2019
Գվինեթ Լյուիս. «Քառսի հրեշտակները» - 2020
Պավել Բասինսկի. «Լեւ Տոլստոյ. Ազատ մարդը» - 2020
Ցերինգ Նորբու. «Փրկված գառը» - 2020
Չժան Յավեն. «Դարերի կանչը» (Մտորումներ Հոնկոնգի մասին. իրական պատմություն) - 2020
Կոնֆուցիոս. «Զրույցներ» - 2020

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 8) - 2021
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 9) - 2021
Մարիա Գրեչ Գանադո. «Երիզվածք» - 2021
Էլիզաբեթ Քրիստին Յոկուլսդոտիր. «Սեր, նյարդերի քայքայում.
ոչ մի պար ձուկ-քարի վրա» - 2021
Ալեքսեյ Վառլամով. «Մտագայլը» - 2021
Միխալ Այվազ. «Այլ քաղաք» - 2021

Ոգի-Նաիրի
Vogi-Nairi

www.vogi-nairi.am
Էլ. հասցե՝ vogi.nairi@mail.ru
հեռ.: +374 97252323, +374 94259161